The implementation of digital tools and resources is also a fundamental aspect in developing foreign language competence among the aspiring lawyers. “The today-society is being informatised and the relevance of using multimedia technologies in the educational process is increasing. Due to the dynamic progress of information technologies, there is a need to change the educational process, clarify the goals and objectives in the development of new technologies, and introduce more effective teaching methods and tools. Multimedia has become one of the leading learning tools in the period of distance learning. Multimedia is a technology that combines information (data), sound, animation, and graphics. A multimedia product is an interactive software that can include music and speech accompaniment, visual range, animation, graphic images and slides, databases, text, etc.” [5]. Teachers should utilize technology to its fullest potential to enhance dynamic and interactive experiences, integrating language learning apps, virtual reality simulations, and online resources to complement traditional teaching methods. They should also adopt online teaching tools and media to offer visual aids and foster a more immersive learning environment. This will keep students engaged in lessons and motivate them to continue their learning beyond the classroom. “Using the information resources of the Internet allows integrating the students into the educational process to more effectively solve a number of didactic tasks in a practical lesson: to form reading skills and abilities, directly using the materials of the network of varying degrees of complexity; improve listening skills based on authentic audio texts on the Internet; improve the skills of monologue and dialogical utterance based on a problematic discussion of the materials

presented by the teacher or one of the students; fill up students' vocabulary, both active and passive, with the vocabulary of a modern foreign language; get acquainted with cultural knowledge, including speech etiquette, features of speech behaviour of different peoples in the context of communication, features of culture and traditions of the country of the language being studied" [5].

Presentations are a regular part of both the education and professional life of legal students and practitioners, occurring in a range of settings – including presenting individual projects, attending conferences, meeting with clients, or fulfilling everyday classroom assignments and activities. The ability to deliver clear, impactful, and persuasive presentations, using multimedia technologies is essential in the process of learning Legal English. Frequent challenges in presentations generally arise from two main factors:

- the speaker's proficiency in captivating the audience, coupled with the display of confidence and a commanding presence;
- the overall design, organisation, and content quality of the presentation.

"Creating multimedia presentations optimal. The use of computer presentations in the classroom allows introducing new material in the most exciting way, the principle of visibility is implemented, which contributes to the solid assimilation of information. Independent creative work of students to create computer presentations is the best way to expand the stock of active vocabulary" [5].

Educators should also foster ongoing professional growth and nurture lifelong learning mindset in their students. They are expected to inspire students to keep honing their Legal English skills outside the classroom. Teachers should prioritize assisting and encouraging self-study, involvement in legal writing competitions, and participation in workshops and seminars to promote consistent professional competency building and a lifelong dedication to mastering the language. "Law students, faculty, staff, and administrators want to increase the probabilities of better academic performance, bar passage, and meaningful post-graduation employment for each student. Strong empirical data show that student growth toward later stages of ownership of continuous professional development (as reflected in self-directed //self-regulated learning) enhances student academic performance" [6]. Students may choose to take TOLES (Test of Legal English Skills) exam, which enables them to demonstrate their expertise and proficiency in specialized Legal English. The exam assesses the specific essential draft cross-border contracts in English, as well as the language needed to confidently handle international commercial liabilities and financial issues.

2. Major Barriers in Instructing Legal English to Non-native (specifically Armenian) Law Students

The Legal English course I teach is designed for students who are currently enrolled at the Department of Law and require proficiency in English for their future legal careers. VSU (Vanadzor state University) introduced Legal English into curriculum of the Department of Law in response to the increasing demand of today's priorities, encouraging non-native English-speaking students to specialize in this field. Students undertake Legal English over the course of six semesters of their study. As the course demands a solid linguistic foundation, only those with at least an intermediate level of English are capable of meeting the academic and linguistic challenges of the course. Consequently, one of the primary barriers in teaching Legal English to non-native law students is their limited proficiency in General English. Poor General English skills hinder their ability to grasp complex legal terminology, interpret complicated and overwhelming legal texts, and construct clear, precise arguments – key components of legal communication. Without a strong foundation in grammar, vocabulary, and comprehension, students often struggle with understanding legal concepts, following case studies, and participating in discussions or simulations. Moreover, Legal English demands mastery of subtle linguistic nuances, formal syntactic patterns,

and advanced abstract reasoning, all of which require a strong foundation in General English. When students lack these basic skills, instructors may need to spend additional time reviewing General English content, which slows down the progression of the Legal English syllabus and reduce the overall effectiveness of the course. Therefore, bridging the gap between General and Legal English becomes essential for successful learning outcomes.

Teaching Legal English in Armenian tertiary establishments involves a distinct set of challenges that require careful attention and strategic planning:

A) Insufficient practice in Legal English

Proficiency in Legal English is essential for success in the global legal arena. Nevertheless, many non-native speakers pursuing legal studies struggle with this specialized language due to inadequate practice. A significant number of Armenian law students begin their university studies with little to no background in Legal English. As a result, they often find it challenging to navigate complex legal texts that are overwhelmed with highly formalized language. In countries where English is not the official language, legal studies are conducted in the native language, and dedicated instruction in Legal English is rare, or is offered as elective. Consequently, students are exposed to Legal English in limited forms, such as readings or optional lectures, which fail to immerse them in practical applications like drafting agreements, simulating court hearings, or participating in legal negotiations. This gap of immersive instruction slows the development of essential language competencies.

B) Gaps in General English proficiency

Deficiencies in General English skills can present considerable difficulties, especially for learners whose first language is not English, and who aim for specialized educational or career objectives. Moreover, limited competence in General English, particularly in grammar, vocabulary, and comprehension, hampers students' ability to understand and articulate legal concepts accurately in English. This lack of foundational skills creates a real barrier to mastering legal language.

An insufficient vocabulary can obstruct the learner's capacity to articulate thoughts with clarity and accuracy. In academic or professional environments, a limited vocabulary bank might cause confusion, diminish the clarity of writing, and make it difficult to engage in intricate discussions. Non-native law students frequently encounter difficulties in mastering English grammar rules and sentence patterns. This leads to mistakes like improper word order, tense errors, and misinterpretation of words (e.g. party – in legal context means “a part of legal dispute”; in social context it refers to a gathering of individuals, typically organized for enjoyment, or to celebrate a special occasion; in political setting, it means “a structured group of individuals who share identical political beliefs and objectives”). Such difficulties may influence spoken, as well as written communication, creating greater barriers in conveying thoughts comprehensibly and effectively.

C) Shortage of specialized resources

There is a notable lack of localized and contemporary Legal English resources designed specifically for Armenian law students. This lack of specialized resources is a significant obstacle that limits their ability to participate effectively in international legal practice. A key obstacle is the absence of comprehensive textbooks and resources specifically designed for Armenian law students learning Legal English.

The lack of specialized resources restricts the students' ability to communicate effectively within global legal contexts. Furthermore, much of the available material is either outdated, or irrelevant to the legal system of Armenia. The main textbook we use during our Legal English classes which is published by Yerevan State University (Apresyan M., Asikyan S., and others, “English Law”, Yerevan, 2023), provides a comparatively relevant foundation tailored to the needs

of Armenian law students. As authors have mentioned: “The textbook is aimed at law students, legal professionals, and other persons who have a genuine motivation to improve their English language knowledge in the field of Law and those related to it. It constitutes a practical reference and self-study resource which will help learners to both understand Legal English as it appears in contemporary written and oral context and to use clear, accurate English in everyday situations. The students are challenged by a variety of exercises which develop reading, speaking, translating, listening and writing skills to progress through the course. The Armenian-English, English-Armenian vocabulary presented at the end of the textbook is a handy reference source for the students to expand their professional lexis” [2].

Most existing textbooks and materials are based on UK or US legal systems which may not reflect Armenian legal contexts or terminology accurately. Academic institutions and publishers should join their forces to create textbooks and materials specifically designed for Armenian law students, focusing on legal terms and vocabulary relevant to both national and international legal frameworks.

D) Teacher training and resources

Many teachers may not have specialize training in both law and language education, which is necessary for effective Legal English teaching. Additionally, access to modern teaching tools, multimedia resources, or legal simulation platform is limited. Although numerous professors are well prepared in either Law, or General English, they frequently do not possess the advanced expertise necessary to instruct Legal English successfully. Legal English represents a specialized branch of the language that demands familiarity with specific legal vocabulary, formalized linguistic patterns, and a clear grasp of the legal contexts where it is applied.

Effective instruction in Legal English depends on strong collaboration between language departments and law faculties; however, such cooperation is often absent in Armenian universities. Frequently law professors and language instructors operate independently, with minimal communication, resulting in a gap between students’ language development needs and the legal material presented in their courses.

Addressing the challenges related to teacher preparation and the availability of resources in Legal English instruction is vital for improving the language competencies of Armenian law students. By offering specialized training for educators, creating tailored instructional materials, and fostering stronger cross-departmental collaboration, Legal English teachers can more effectively prepare their students to thrive in the dynamic and international legal landscape.

E) Student motivation and perception

Some students may not immediately recognise the value of Legal English, especially if they plan to work domestically. Motivating them to engage with the subject and helping them see its relevance to International Law and professional development can be a challenge. The selection of effective teaching methods is also of primary importance for motivating students and enhancing their perception, both in teaching Law and Legal English. “One major barrier to creating an engaging classroom atmosphere is the “old-fashioned” way of teaching. Traditional methods are not inherently negative, but as education evolves, students are looking for more interactive and informal teaching methods. Many students suggested methods like debates, moot courts, interactive quizzes, case studies, and problem-solving tasks during classes, would be beneficial and increase their interest in lessons. However, some lecturers may not be willing to introduce or implement these new teaching methods, and their approach may not always be in step with the times” [1].

A significant number of students encounter difficulties stemming from low self-confidence in their capacity to acquire Legal English. This results in a cycle of decreased motivation, causing students to question their abilities and feel discouraged about reaching language proficiency.

Instructors should support students by providing supplementary resources like language workshops, tutoring sessions, and individualized feedback to help students build their confidence in Legal English. When students feel encouraged and observe tangible improvement, they are more likely to stay motivated and engaged in the learning process.

Fundamentally, the instruction of Legal English to non-native learners, especially Armenian law students, presents numerous complex challenges. They stem from limited opportunities to engage with authentic legal settings, insufficient General English proficiency, a scarcity of specialized teaching materials, and notable differences in legal traditions and cultural contexts that complicate the understanding. Without conscious and structured support, these difficulties can significantly impede students' ability to understand international legal frameworks and confidently participate in legal discourse. Thus, implementing a more personalized, student-centered, and interdisciplinary teaching approach is essential for equipping Armenian law students with the language skills and legal expertise necessary to succeed in a globalized legal environment.

Conclusion

Teaching Law students Legal English, whether they are native or non-native speakers, requires a well-organised and flexible approach that takes into account the varied linguistic backgrounds and specific challenges each group faces. For native speakers, the focus should be on improving their knowledge of legal terminology, boosting their ability to interpret complex legal texts, and enhancing their skills in legal writing and reasoning. Despite their strong command of English, these students need targeted instruction to effectively apply their language skills within the legal field. Conversely, non-native speakers face additional challenge of learning a new language and mastering the specialized vocabulary and structures of legal English simultaneously. Therefore, their curriculum should be designed to address both their general language proficiency, and the acquisition of legal language.

Focusing on core language skills, like grammar, pronunciation, and listening comprehension, along with mastering legal terminology, is essential for helping these students bridge the gap between their current language abilities and the demands of the legal profession. The key to successful Legal English instruction is the combination of a solid linguistic foundation with a thorough understanding of legal principles. This integrated approach enables the comprehensive development of legal communication skills. Furthermore, applying experimental teaching methods, such as working with case studies, interpreting legal texts, and engaging in legal writing activities, enables students to convert academic knowledge into practical abilities, effectively preparing them for the challenges they will face in the legal profession.

Ultimately, the teaching of Legal English should remain flexible, offering programs that merge language development with legal studies and prioritize engaging, experience-based instruction. This method prepares law students, whether or not they are native English speakers, to excel in a legal profession that is growing more globally interconnected and culturally complex. Strengthening their command of legal terminology and communication skills enables them to face the challenges of their future careers with assurance.

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-30>

Bibliography

1. Abgaryan N. Unveiling the Challenges of Legal Education in Armenia, 2024. <https://evnreport.com/opinion/unveiling-the-challenges-of-legal-education-in-armenia/>
2. Apresyan M., Asikyan S., and others, English Law, Yerevan University Press, 2023, 286 p.
3. Cambridge Learner's Dictionary, Cambridge University Press, 2021, 960 p.
4. Cowles Kathryn M. Communication in Courtroom, Coastal Carolina University, 2011.
5. Guryanova T., Zaitseva E. Multimedia Technologies in Professional Language Education of Law Students, Paradigms of Management, Economics and Law, 2021, p 170.
6. Hamilton Neil W. and Bilonis Louis D. Law Student Professional Development and Formation, Cambridge University Press, 2022, 186 p.
7. International Journal of Social Science and Human Research, Volume 07, Issue 08.
8. Law Dictionary Collection, University of Texas, <https://tarlton.law.utexas.edu//law-dictionaries/intro>
9. Oxford Learner's Dictionary, OUP Oxford, 2020, 1820 p.
10. Šarčević S. New Approach to Legal Translation. The Hague: Kluwer Law International, 1997, 35 p.
11. Stevens P. ESP after twenty years: a re-appraisal.
12. Vorenberg A. Strategies and Techniques for Teaching Legal Analysis and Writing, Wolters Kluwer Law & Business, 2012, 62 p.
13. <https://www.lawandbar.com/how-to-improve-your-legal-englishs-listening-speaking/>
14. <https://mondaysmadeeasy.com/classroom-mock-trial/?v=c04cd38aeb30>

Ակնարկային դիտարկումներ լեզվակիր և ոչ լեզվակիր իրավաբան ուսանողներին իրավաբանական անգլերենի ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ

Մարիկյան Նունե

Ամփոփում

Հանգուցային բառեր և արտահայտություններ. *իրավաբանական անգլերեն, իրավական տերմինաբանություն, դատավարություն, դատական պրոցեսի կողմ, իրավական համակարգ, պրակտիկ իրավաբան, իրավական հայեցակարգ, իրավական համատեքստ*

Լեզվակիր և ոչ լեզվակիր իրավաբան ուսանողներին իրավաբանական անգլերենի ուսուցումն ունի իր առանձնահատկությունները և պահանջում է անհատական մոտեցում: Լեզվակիր ուսանողների դեպքում հիմնական շեշտադրումը ուղղված է մասնագիտական տերմինաբանության յուրացմանը և զարգացմանը, ինչպես նաև իրավական ոլորտում անգլերեն լեզվով իրավական գիտելիքների կատարելագործմանը: Ոչ լեզվակիր ուսանողները ուսուցման ընթացքում բախվում են լրացուցիչ դժվարությունների, քանի որ միաժամանակ պետք է հաղթահարեն ընդհանուր լեզվական խոչընդոտները և յուրացնեն մասնագիտական բառապաշարը: Ուստի նրանց համար նախատեսված ուսումնական ծրագիրը պետք է ներառի ինչպես ընդհանուր լեզվական կարողությունների (քերականության, բառապաշարի, արտասանական և լսողական հմտությունների զարգացում), այնպես էլ իրավաբանական տերմինաբանության և իրավական բնույթի տեքստերի կառուցվածքների ուսումնասիրություն: Այդ պատրաստությունն էականորեն նպաստում է ժամանակակից սովորողների կայուն մասնագիտական հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Դիտարկումներ-

ըը վկայում են, որ իրավաբանական անգլերենի արդյունավետ ուսուցումն իրենից ներկայացնում է լեզվական պատրաստվածության և իրավաբանական գիտելիքների ներդաշնակ համադրում: Ուսուցման արդյունավետությունը մեծացնում է այնպիսի գործնական մեթոդների կիրառումը, ինչպիսիք են քեյսերի վերլուծությունը, իրավական (իրավաբանական) փաստաթղթերի ուսումնասիրությունը և գրավոր առաջադրանքների կատարումը: Դրանք նաև նպաստում են ուսանողների մասնագիտական բառապաշարի ամրապնդմանն ու հաղորդակցական հմտությունների զարգացմանը իրավական համատեքստում:

Некоторые наблюдения об особенностях преподавания юридического английского студентам-юристам – носителям и неносителям языка

Мариян Нуне

Резюме

Ключевые слова: *юридический английский, юридическая терминология, судебное разбирательство, сторона судебного процесса, правовая система, практикующий юрист, правовая концепция, правовой контекст*

Преподавание юридического английского языка для носителей и не носителей языка среди студентов юридических факультетов имеет свои особенности и требует индивидуального подхода. Для носителей языка основной акцент делается на развитие профессиональной терминологии и углубление знаний в области права на английском языке. Преподавание направлено на освоение специфической лексики, юридических текстов, а также на улучшение навыков юридического письма и аргументации в английском языке. Для неносителей языка преподавание юридического английского языка требует дополнительных усилий в области языковой подготовки. Важно уделять внимание базовым аспектам языка, таким как грамматика, лексика, произношение, а также изучение терминологии и структуры правовых текстов. Такая подготовка существенно способствует формированию устойчивых профессиональных коммуникативных компетенций у современных обучающихся. Наблюдения показывают, что успешное преподавание юридического английского языка требует сочетания языковой подготовки и знания юридических дисциплин. Использование различных методов обучения, таких как практические задания, анализ кейсов, а также работа с юридическими документами, позволяет студентам лучше освоить правовую лексику и совершенствовать навыки общения в юридическом контексте.

Ներկայացվել է 14. 04. 2025 թ.
Գրախոսվել է 22. 04. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

12-16-րդ դարերի հայերեն վիմագիր արձանագրությունների գոյականների որոշ իմաստային խմբեր

Չոփուրյան Գայանե

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-41>

Հանգուցային բառեր. *անձնանուն, տոհմանուն, տեղանուն, ուղեկցող բառեր, հաճախականություն, մասնակադապար*

Նախաբան

Վիմագիր բնագրերը հայոց լեզվի պատմության կարևոր, անփոխարինելի աղբյուրներ են, առանց որոնց դժվար է պատկերացնել միջին հայերենի և բարբառների նախնական փուլերի վիճակը, առավել ևս՝ նրանց ուսումնասիրության տարածամասնակյա քննությունը: Սակայն արձանագրված լեզվական փաստերը դեռևս ամբողջությամբ չլեզվաբանական քննության չեն ենթարկվել՝ պայմանավորված դրանց ավելի ուշ հրատարակությամբ: Վերջիններիս թվին է դասվում 12-16-րդ դդ. հայերեն վիմագիր արձանագրությունների (այսուհետ՝ Արձանագրություն) բառապաշարը, որն առայսօր կարոտ է համակողմանի քննության, որով էլ պայմանավորված է մեր աշխատանքի արդիականությունը:

Արձանագրություններում գերակշռում են նյութական խոսքի մասերը, մասնավորապես՝ գոյականները: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ սույն աշխատանքում անդրադարձել ենք Արձանագրություններում հիշատակված գոյականների առավել հաճախադեպ իմաստային խմբերի՝ անձնանունների, դրանց ուղեկցող բառերի և տոհմանունների, տեղանունների, տոհմանունների, դրանց կիրառության հանգամանքների, կազմության և արտահայտության առանձնահատկություններին:

Ուսումնասիրությունը կատարել ենք նկարագրական, վերլուծական և վիճակագրական մեթոդներով:

Արձանագրություններն ունեն հստակ կառուցվածք. սովորաբար առաջին հատվածում պատվիրատուն (հեղինակը) ներկայացնում է իրեն՝ հաճախ հիշատակելով նաև ընտանիքի անդամների, հարազատների անունները և նրանց առնչվող տվյալները: Հաջորդիվ ներկայացվում է բուն բովանդակությունը, ապա արձանագրությունն ավարտվում է անեծքագրերով կամ օրհնանք-աղաչանքներով:

Արձանագրությունների բառապաշարը բազմաշերտ է, որը պայմանավորված է դրանց տարաբնույթ բովանդակությամբ: Առավել հարուստ և բազմաբովանդակ արձանագրությունները պահպանվել են տաճարների, եկեղեցական շինությունների պատերին: Դրանք մեծ մասամբ պաշտոնական վավերագրեր են հուշարձանի կառուցման, հավատացյալների նվիրատվությունների, վանքին շնորհված արտոնությունների, գանազան գործարքների օրինականացումների, պայմանագրերի և այլնի մասին:

Արձանագրությունների բառապաշարը թույլ է տալիս պատկերացում կազմել նաև միջնադարյան Հայաստանում տարածված սովորությունների ու հավատալիքների, կրոնական պատկերացումների մասին, ինչպես նաև՝ հետևել լեզվի պատմական զարգացման ընթացքին, հնչյունական և քերականական համակարգերի փոփոխություններին:

Աշխատանքը հնարավորինս համակարգված ներկայացնելու համար նպատակահարմար ենք համարել Արձանագրությունների բառապաշարն ուսումնասիրել՝ ըստ խոսքիմասային պատկանելության, սակայն հաշվի առնելով հոդվածի սահմանափակ ծավալը՝ ստորև կանոնադառանք միայն գոյականների որոշ իմաստային խմբերի՝ մասնավորապես քննելով

1. անձնանունները, դրանց հետ գործածվող ուղեկցող բառերն ու տոհմանունները, որոնց թվում նաև՝ վերծանողների կողմից առանձնացված նորահայտ բառերը,
2. տեղանունները, որոնց թվում նաև՝ այգիների, հողատարածքների, հանդամասերի և այլ անուններ,
3. տոնանունները:

Կքննվեն նաև վերոհիշյալ բառախմբերի կիրառության հանգամանքներն ու գործածության հաճախականությունը, ինչպես նաև՝ արտահայտության առանձնահատկությունները:

Նշված իմաստային խմբերում ընդգրկված բառերի հնչյունական տարբերակները քննության չենք ենթարկի, քանի որ դրանց կադապարային արտահայտությունները ներկայացրել ենք այլ հոդվածում:

Ստորև առանձին-առանձին կանոնադաշտանք վերոնշյալ իմաստային խմբերի գոյականներին:

1. Անձնանունները, դրանց հետ գործածվող ուղեկցող բառերը և տոհմանունները Արձանագրություններում

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արձանագրություններում անձնանունները առավել հաճախ կիրառվել են ուղեկցող բառերի հետ, քան միայնակ, մինչդեռ տոհմանունները, որոնք հանդես են եկել անձնանունների փոխարեն կամ նրանց կից կիրառությամբ, այդքան էլ հաճախադեպ չեն:

Արձանագրություններում անձնանունները վկայվել են տարբեր առիթներով՝ հիշատակվելով որպես՝

1. պատվիրատուի անուն՝ *ես Մամխաթուն դուստր Բաջերեսին Լաւեցո, շինեցի զբուրճոս յիշատակ ինձ առ Քրիստոս* [Դ. 1, ՈԿԸ, 3],
2. արձանագրություն կազմողի անուն՝ *Յուսէի Գրիչ* [Դ. 1, ՉԲԴ, 6],
3. նվիրատուի անուն՝ *ես Աստուածայտուր Էզնեցի զԼուսեթին զայգին ընծայեցի սր Ածածինս* [Դ. 6, 1291, 131],
4. եկեղեցու աշխատավորի անուն՝ *Աբուսեդ սուրբ եկեղեցոյս աշխատավոր* [Դ. 2, 15-րդ դ., 67],
5. հանգուցյալի անուն, որ գերազանցապես հանդիպում է տապանագրերում՝ *Լույսն և զԳիրակոս յիշեցեք* [Դ. 6, 19],
6. պատարագ ստացողի անուն՝ *Ի տաւնի սր Առաքելոյն Թադէոսի :Բ: սեղանի պատարագ Հովասափ վարդապետին և Սերոբին* [Դ. 6, 81]:

1.1. Միայնակ գործածված անձնանունները Արձանագրություններում

Անձնանունները գրեթե առանց բացառության հանդիպում են բոլոր Արձանագրություններում, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու միջնադարյան հայ մարդկանց սոցիալական տարբեր շերտերի տրամադրությունների, նրանց փոխադարձ հարաբերությունների մասին: «Միայն վիմագրական տվյալների շնորհիվ հաջողվել է պարզել այն հետաքրքրական փաստը, որ XI դարում և դրանից հետո հայ ազնվականության ներկայացուցիչները, ունենալով սեփական մկրտության անունները, սիրում էին կենցաղում կրել մուսուլմանական, մեծ մասամբ արաբական անուններ: Մինչդեռ ցածր խավերի ներկայացուցիչներին վերաբերող արձանագրությունների մեջ երևան են գալիս, սովորաբար միայն տոմարական քրիստոնեական անուններ, իսկ վերջին շրջանում միայն սիրված ժողովրդական անուններ» [6, 6]: Անձնանունների կիրառության սոցիալական շերտերի այս տարբերությունը հասկանալի կլինի, «եթե նկատի ունենանք ազնվականության ձգտումը ամեն ինչի օտարը, իսկ ստորին խավերինը՝ դեպի հայրենին (լինի դա լեզուն, տների արտաքին հարդարանքը կամ կահկարասին)» [6, 6]: Օրինակ՝ Անիի տարածաշրջանի արձանագրություններում *Պոտուղը* հիշատակվում է որպես գրիչի անուն,

իսկ ահա *Ապլղարիպը*՝ որպես մարգպանի, ինչպես՝ *Պտուղ գրիչ* [Դ. 1, 246, 27] հմմտ..... ես *Ապլղարիպ մարգպան* [Դ. 1, 44]

Արձանագրություններում՝ տարբեր առիթներով հանդիպում են նաև օտարագրի ներկայացուցիչների անուններ, ինչպես՝ *Ես թագուոր Խերան Սուրբան կանգնեցի խաչս փրկութիւն հոգւոյն մերում*. [Դ. 2, 269, 120], *Սիրկանց այգին գինն Բուրդա թուրքին պարտքն տվին* [Դ., 3, 1367, 145], *ի թագաւորութեանն Փատլոնոյ* [Դ. 1, 108, 2]: Վերջին հիշատակության մեջ *Փատլուն*-ը թագավորի՝ թուրքական արական անհայտ ծագման անուն է [3, 193]:

Արձանագրություններում հիշատակված մի շարք անձնանուններ աշխարհագրական սահմանափակություն չունեն. հանդիպում են քննվող գրեթե բոլոր տարածաշրջանների Արձանագրություններում: Այդպիսի անձնանուններ են՝ *Աբրահամ* [Դ. 4, 383], *Գրիգոր* [Դ. 5, 1217, 27], *Հովան* [Դ. 4, 1546, 180], *Հասան* [Դ. 6, 1197, 65] և այլն: Ասվածին հակառակ՝ որոշ անձնանուններ բնորոշ են միայն որևէ տարածաշրջանի: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Գորիսի, Ղափանի և Սիսիանի շրջաններին բնորոշ անձնանուններ՝ ա) արական՝ *Աբուսեդ* [Դ. 2, 67], *Ալանկիր* [Դ. 2, 107], *Ալն* [Դ. 2, 226, 82], *Ասուր* [Դ. 2, 26, 136], *Ելամ* [Դ. 2, 26, 136], բ) իգական՝ *Գինեկ* [Դ. 2, 114, 118], *Շահիլ* [Դ. 2, 20, 103] և այլն,

2. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններին բնորոշ անձնանուններ՝ ա) արական՝ *Բոլիկ* [Դ. 3, 16], *Ինանիկ* [Դ. 3, 1346, 56], *Թաճեր* [Դ. 3, 14-րդ դ., 98], *Խուշիթ* [Դ. 3, 1291, 172], *Թրինջ* [Դ. 3, 181], բ) իգական՝ *Աժգուն* [Դ. 3, 1471, 185], *Գլխաթուն* [Դ. 3, 249, 68], *Ղոփ* [Դ. 3, 137] և այլն,

3. Գեղարքունիքի շրջանին բնորոշ անձնանուններ՝ ա) արական՝ *Ապայե* [Դ. 4, 382], *Ասուկան* [Դ. 4, 272], *Ասլեր* [Դ. 4, 13-րդ դ., 317], *Բալաթ* [Դ. 4, 1486, 137], *Գավհար* [Դ. 4, 16-րդ դ., 347], *Էվատ* [Դ. 4, 1547, 329], բ) իգական՝ *Հիտիկ* [Դ. 4, 13-րդ, 317], *Ջալր* [Դ. 4, 1577, 274] և այլն:

Առանձին շարք են կազմում այն անձնանունները, որոնց մի մասին վերծանողները անդրադարձել են որպես նորահայտ կազմությունների, որոնք տեղ չեն գտել Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանում»: Դրանք մեծաթիվ են հատկապես Վայոց ձորի արձանագրություններում, ինչպես՝ *Ջառնամ* [Դ. 6, 84], *Ամիգատ* [Դ. 6, 1273 դ., 215], *Աշուն* [Դ. 6, 43], *Բազազ* [Դ. 6, 12-րդ դ., 159], *Բանտան / Բանուան* [Դ. 6, 13-րդ դ., 172], *Բիսուս* [Դ. 6, 1267 դ., 211-212], *Գժուս* [Դ. 6, 181]¹, *Գորեսեր* [Դ. 6, 221-222], *Երանջահ* [Դ. 6, 13-րդ դ., 190], *Խարստեշիկ* [Դ. 6, 13-րդ դ., 172], *Սիթար* [Դ. 6, 13-րդ դ., 177], *Շաստուժ* [Դ. 6, 221-222], *Սիթինա* [Դ. 6, 222], *Վաշ* [Դ. 6, 182], *Վաշըմբեր* [Դ. 6, 32], *Աղեկյաճորտ* [Դ. 6, 30-31], *Նուրնոր* [Դ. 6, 13-րդ, 50]:

Առանձնացնում ենք նաև *Լոյս* անձնանունը, որում տեղի է ունեցել սեռային վերագրելիության փոփոխություն: Բերենք բնագիրն ամբողջությամբ՝

ՏԻՐԱՄԱՅՐՆ ԼՈՅՍՆ ԵՒ ԶԿԻՐԱԿՈՍ ՅԻՇԵՑԵՑԻՔԷ:

[Դ. 6, 19]

Ըստ վերծանողների՝ *Լոյս*-ը իգական անձնանուն է, որը հասկացվում է *տիրամայր* լրացումից, մինչդեռ ըստ Հ. Աճառյանի՝ այն հայերեն *լոյս* բառից առաջացած արական անուն է [1, 435]: Սակայն բերվածում կարելի է դիտարկել նաև *լոյս Տիրամայր* իմաստը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ունենք *Տիրամայր* վկայված իգանուն [3, 155]:

Դիտարկելով քննվող բառերը՝ պարզ է դառնում, որ Արձանագրություններում անձնա-

¹ Վերծանողը ենթադրում է. «թերևս առաջացած լինի *գիժ* կամ *գուժ բառերից»* [Դ. 6, 13-րդ դ., 181]:

նունները կազմությամբ երկու տեսակ են՝ պարզ և բաղադրյալ: Պարզ են՝ *Աշուն, Վաշ, Բիսուն, Բազազ* և այլն: Բաղադրյալ անձնանունները արտահայտվում են հետևյալ մասնակազմայարներով.

1. «Արմատ + արմատ», ինչպես՝ **Նուրնոր, Ջառննալ**, որոնցից առաջինը «հավանաբար ծագում է արաբ. *nur-լույս* և հայերեն *նոր* բառերից՝ «նոր լույս» նշանակությամբ [11, 51]: *Ջառննալ* անձնական դեպքում կարծում ենք, որ առաջին բաղադրիչը կարող է առաջացած լինել «Գոհար» անձնական արաբական «Ջուհար» ձևից, որը վկայված է նաև «Ջալ» և «Ջօր» ձևերով, որի **ը** ձայնորդը բառաբարդման ժամանակ **ն** ռնգայինից առաջ կարող էր դառնալ **ը**: Իսկ երկրորդ բաղադրիչը հավանաբար իրանական **nām** բառն է, որ նշանակում է «անուն» [13, 202, 363]:

2. «Արմատ + ա հոդակալ + (յ) + արմատ», ինչպես՝ **Աղեկյաճորտ** անձնանունը, որը վիմագրերում հաճախ է հանդիպում և վկայված չէ Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանում»:

3. «Արմատ + ընդ նախդիր + արմատ». վկայված է **Վաշըմբեր** անձնանունը, որի *ըմբեր* բաղադրիչը, ինչպես արձանագրության վերծանողն է նշում, «կարող էր ծագել *ընդ* նախդիրից և *բեր* արմատից և նշանակել, ինչ որ մեկի բերած կամ տված, ըստ այդմ Վաշըմբեր կարելի է հասկանալ, Վաշի բերած կամ տված» [11, 31-36]: Ասվածին համակարծիք լինելով՝ առանձնացնում ենք նաև վերոնշյալ մասնակազմապարբ: Նշված մասնակազմապարբով են արտահայտվել նաև *Գորգըմբեր* և *Վարդըմբեր* անձնանունները:

4. «Արմատ + ածանց», որը ձևավորվում է *-իկ* նվազափաղաքական ածանցի միջոցով՝ **Խարտեչիկ**:

1.2. «Անձնանուն + ուղեկցող բառ» կաղապարով կապակցությունները Արձանագրություններում

Արձանագրություններում անձնանունները ոչ միայն միայնակ են կիրառվում, այլև ուղեկցող բառերի հետ², որոնք ցույց են տալիս անձի կամ անձերի՝

▪ ազգակցություն [4, 187-189]՝ արտահայտված դուստր, որդի, արեղա բառերով: Օրինակ՝ *....ես Պենա, որդի Սմբատա, թոռն Լիպարտի* [Դ. 3, 1348, 81], *Ես Բայտիարի որդի Սարսի խանս* [Դ. 3, 1348, 109], *Խոշին, դուստր Դոփենց Վարհամին* [Դ. 3, 1333, 110], *Մխիթար որդի Սարքիսի* [Դ. 3, 1289, 24], *Ես Ովանես արեղես կանգնեցի խաչս* [Դ. 3, 1543, 194], *Այս է հանգիստ Ջալրհապին, որ է որդի Փիրիբեկին, եղբար պարոն Մեհրապին* [Դ. 3, 1556, 31], *....ես Գոնցե ամուսին Վարհամայ, որդոյ Շահռունեցոյ, դուստր Խոստրովկա յազգե Տարսայիձանց* [Դ. 3, 1346, 56], *....ես Ջումէս, թոռն Հասանայ, որդի Հաչո եւ կողակիցն Խոանդզէն* [Դ. 3, 14-րդ դ., 80], *Ես Մամբան դուստր Հասանա* [Դ. 3, 1318, 56], *Ես Սարգիս Օիլենց....* [Դ. 1, 3],

▪ աստիճան, տիտղոս, պաշտոն՝ արտահայտված *մելիք, հեջուբ, ամիր սպասալար, իշխանաց իշխան, քահանա, վարդապետ, երեց, տէր, արքայիսկոպոս, ծառա, մարզպան, աղա, խաթուն, պարոն* բառերով, ինչպես՝ *Մեկիք Ասան* [Դ. 5, 16-րդ դ., 161], *....հեջուբ ամիր սպասալար Ասազին* [Դ. 6, 70], *տէր Փանթաժաղին* [Դ. 3, 1348, 81], *Ես Տարսաիձ իշխանաց իշխան....* [Դ. 3, 1275, 234], *Սարգիս քահանայ*, [Դ. 3, 1288, 146], *Մխիթար վարդապետս* [Դ. 6, 69], *Աշխէն Գագիկ իրիցոյ եւ քոր ինք* [Դ. 3, 1149, 49], *Ես տր Յովանէս Աւրպել Միւնեց արքեպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս յիշել աղաչեմ* [Դ. 3, 1321, 29], *Ես Սեւծի, ծառայ մարզպանա* [Դ. 3, 13-րդ դ., 171], *Ես Աւղլար աղա* [Դ. 4, 73], *Ջնաբուղա աղին* [Դ. 3, 1297, 71],

² Արձանագրություններում անձնանունների և ուղեկցող բառերի քերականական կապակցությունները մանրամասն քննության է ենթարկել Գ. Խաչատրյանը «Անձնանունների և ուղեկցող բառերի կապակցման քերականական կաղապարները Կամենիցի հայկական դատարանի արձանագրություններում (ժգ. դար)» հոդվածում (<https://arar.sci.am/Content/270116/91.pdf>)

Գոհար **խաթուն** [դ. 1, 56], **Գոնցա խաթուն** [Դ. 6, 1260, 82], **Խոնդի խաթուն** [Դ. 5, 16-րդ դ., 161], **պարոն Սուլթանդուլին** [Դ. 3, 1543, 17],

▪ տեղանվանական ծագում – **վրաց Լաշահին** [Դ. 3, 1220, 123], **Ես Մամխաթունս** դուստր **Խաչերեսին Լառնեց** [Դ. 1, ՈԿԸ, 3]: **Տուսե Խաչէնաց** [Դ. 9, 1184, 110]:

Լեզվական փաստերը վկայում են, որ անձնանունների հետ ուղեկցող բառերը կիրառվում են բավական հաճախ: Հատկապես առանձնանում են ազգակցություն և տիտղոս անվանող ուղեկցող բառերի իմաստային խմբերը: Վերոնշյալից նկատվում է նաև, որ միևնույն վիմագրության մեջ կարող են վկայվել ուղեկցող բառերի նույն իմաստային խմբին պատկանող տարբեր բառեր (*թոռն, որդի, կողակից*): Սակայն կան դեպքեր էլ, որոնցում ուղեկցող բառերը տարբեր իմաստային խմբերից են, ինչպես՝ **որդի Տուսե Խաչէնաց** [Դ. 9, 1184, 110]:

1.3. Տոհմանունները Արձանագրություններում

Արձանագրություններում վկայված տոհմանունների որոշ հիշատակություններ ծանոթ են դեռևս դասական հայերենից, ինչպես՝ **Արշակունի, Բագրատունի** [Դ. 9, 12-րդ դ., 20] և այլն: Տոհմանունները Արձանագրություններում հիմնականում կիրառվել են անձերի հավաքականություն նշելու համար: Դրանք կազմվել են *-անք, -է/ենք, -ոնք* վերջավորություններով, ինչպես՝ **Սկանդարանց հողն գնեցի** [Դ. 6, 1206, 24] **Վասուրանց հողն** [Դ. 1241, 13], **ես Գրիգոր թոռն Խաչէնիսեց** [Դ. 6, 1293, 203], **գնեցի էշո քարոյ զՇառեկն և Մարգարտա այգին** [Դ. 6, 1312, 239], **Փշոնց այգին** [Դ. 6, 26]: Վերջինս անձանք է հայ մատենագրությանը և ըստ վերծանողի՝ «կարող էր առաջանալ **եանք, եանց-ենք, ենց** վերջավորությունները առնմանության ազդեցությամբ **ոնք, ոնց** փոխակերպելով (Հմմտ. այլ բնագրերում՝ Աշոտոնք, Տորոզնոնք, Թորոտոնք)» [11, 26]:

2. Տեղանունները Արձանագրություններում

Տեղանունները հանդիպում են շինարարական, հիշատակագրային և նվիրատվական բնույթի Արձանագրություններում, որոնցից առաջինում հիմնականում հիշատակվում են որպես խաչքարերի, եկեղեցիների, վանքերի, մատուռների անվանումներ, ինչպես՝ **շինեաց Բանե գվանքս Մորո ձորո** [Դ. 6, 1197, 135], **Ստեփաննոս պատանին շինեց զԱրատես** [Դ. 3, 1303, 130]: Շինարարական բնույթի արձանագրությունները սովորաբար տեղեկություններ են հաղորդում տվյալ տեղանքում կառուցված կամ նորոգված շինության վերաբերյալ: Դրանով պայմանավորված՝ այս բնույթի արձանագրություններում հազվադեպ են վկայված գյուղերի, քաղաքների կամ այլ բնակավայրերի անվանումներ, որոնցից են Լոռու և Գեղարքունիքի տարածաշրջանների հետևյալ հիշատակությունները՝ **Ես՝ Գրիգոր, որդի Մարծպանայ, յետ մահուան հար իմո, շինեցի զԳրիգորաշէն և էտու յիմ վանքս և զՄեղեկագոմուց տափն, և զմեծ կոռավարն յագաղակն, զՓայտաշինու կէսն, զավագ Սր նշանն, աւետարան, պատուական գրեան և զարդ էկեղեցո և այլ արդիւնք ի գաւիթս** [Դ. 9, 1241, 373]: **եկինք Գաւառն, շինեցինք Արծիաքարս, կապեցինք կարմունջս. կանկնեցի յաչս** [Դ. 4, 1544, 108]:

Արձանագրություններում տեղանուններ հիշատակվել են նաև տվյալ հոգևոր կենտրոնին նվիրաբերվող առարկայի կամ տարածքի՝ որևէ (նույն/տարբեր) բնակավայրին պատկանելու հանգամանքը ընդգծելու նպատակով, ինչպես՝ «.... **ես Վարդան կրանավոր շինեցի Քարհատին ջաղաց և էտու սր Առաքելոյս**» [Դ. 2, 20] հիշատակության մեջ հասկանալի է դառնում, որ կառուցողական վիմագրերը տեղեկություններ են հաղորդում նաև նվիրատվությունների մասին:

Հիշատակագրային Արձանագրություններում տեղանունների վկայվածության տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում գերեզմանոցների խաչարձանների և տապանաքարերի հիշատակությունները, որոնցում տեղեկատվությունը խիստ համառոտ է.

դրանք նպատակ են հետապնդում մատնանշելու հանգուցյալներին կամ խաչքար կերտողներին: Սակայն վերջիններից բացի՝ հազվադեպ հանդիպում են նաև տեղանուններ, որոնք արձանագրվում են հանգուցյալների որտեղացի լինելու հանգամանքը հիշատակելու նպատակով, որը, ինչպես նշեցինք, հաճախադեպ երևույթ չէ, օրինակ՝ *Աւագն է Տէրն Եղիվարդա* [Դ. 9, 1434, 67]: Վերջինս վկայվել է Լոռու Թումանյանի տարածաշրջանի տապանագրերից մեկի վրա:

Տեղանունների ճնշող մեծամասնությունը հիշատակված է նվիրատվական Արձանագրություններում. վկայվել են այն վայրերի անունները, որոնք նվիրաբերվել կամ գնվել են: Դրանք Արձանագրություններում հիշատակվել են որպես այգու, բնակավայրերի, հողատարածքների, հանդի և այլնի անուններ: Բերենք օրինակներ՝ *Էտու զԹեղրկա այցին* [Դ. 5, 1216, 114], *Ես Աթանաս որ զԳոգին երկիրն գնեցի ի Հատոց Պտուկ տվի* [Դ. 12-րդ դ., 33], *ես Ազատշահս, միաբանեցա վանիցս եւ Էտու զՄովստեղացն հողն* [Դ. 9, 404], *տվաք ի Սանահինս ի Օաղերոյն Շտարաբեանք ամեն շահով մին արաւարա հող* [հանդամաս, Դ. 9, 1221, 61]:

Որոշ Արձանագրություններում նշվում են անուններ, որոնք լրացուցիչ քննության կարիք ունեն՝ *Ես Սեւադա տվի զԲինապատառ նշխարացու. վասն հոգոյ Թաճերին* [Դ. 5, 1364, 226], *եւ տվի զՎաղադին զՆշահորին զգումեր* և *զԳիրդի վանս ազատ ի մեր յամեն յարկէ* [Դ. 2, 22Ե, 101], *ինձ կատարի պատարագ զամեն եկեղեցիքս. որ և տվի զմեր խաս հողն զԳրիի հանդի զՆենեկպան* :Ա: բահի ջուր [Դ. 5, 129]:

3. Տոնանունները Արձանագրություններում

Արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վանքերի կամ եկեղեցիների օգտին կատարվող նվիրատվությունների դիմաց նվիրատուներին կամ այլ անձանց եկեղեցական որևէ տոնի ժամանակ պատարագ էին խոստանում՝ *գնեցի զսբ Նշանս և զճեղացա ակն տվի ի վանքս տրս և միաբանքս խոստացան ի տարումն* :Բ: ժամ *Առաքելոց տաւնին* [Դ. 5, 1293, 16], *Ես Բզնատիոս միաբանեցա սբ ուխտիս տքա տվին* :Ա: պատարագ *ՍԲ Գեորգա տաւնին* [Դ. 5, 13-14-րդ դդ., 62]:

Տոնանունները առավել հաճախ վկայված են նվիրատվական արձանագրություններում, ընդ որում՝ վկայված են տարբեր տոնանուններ: Նշենք դրանցից մի քանիսը նույնպես՝ *Յովանու տաւնին* [Դ. 5, 1272, 16], *ի տաւնի սրբոյն Սանդիստո* [Դ. 9, 1240, 59], *Փիլիպոս առաքելո տաւնի* [Դ. 9, 13-րդ դ., 63] և այլն:

Տոնանունների ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ պատարագը տվյալ նվիրատուի ցանկությամբ պիտի մատուցվեր սկզբում ծնողների հիշատակին, իսկ իր մահից հետո՝ իր, ինչպես՝ Ես *Առլար աղա տւի զիմ Ոսկէդին ի սբ Ստեփանոսս եւ միաբանքս տւին* :Զ: ար ժամ *ի տաւնի սբ Խաչին*. որչափ կենդանի եմ վարդապետին անեն, և յետ մահու :Դ: ինձ, :Դ: նրա [Դ. 4, 73], *միաբանքս* :Գ: ար ժամ տվին *Յայտուրթեան տն մերոյ ՔԲ*. որչափ ես կենդանի եմ իմ մարն առնեն և յետ անցման ինձ առնեն [Դ. 5, 13-րդ դ., 16]: *եկի մեծ յուտով ի սբ ուխտս Գանձասարա ես եւ որդի իմ Վախտանգ եւ տքա խոստացան ժամ զՎարդապատին տաւնին* զամեն եկեղեցիքս պատարագն քանի ես կենդանի եմ զժամն իմ հարն եւ իմ մարն կատարեն եւ յետ իմ փոխման ինձ կատարեն [Դ. 5, 1280, 41]:

Եզրակացություն

12-16-րդ դարերի հայերեն վիմագիր արձանագրությունների բառապաշարը բազմաշերտ է: Դրանք արտահայտության և բովանդակության պլաններում բնորոշվում են մի շարք առանձնահատկություններով:

Նշված ժամանակահատվածի արձանագրությունների բառապաշարից անդրադարձել ենք միայն գոյականների որոշ իմաստային խմբերի, որոնց քննությունից պարզ է դառնում, որ դրանցից.

1. անձնանունները Արձանագրություններում վկայվել են տարբեր առիթներով՝ որպես պատվիրատուի, արձանագրություն կազմողի, նվիրատվություն կատարողի, եկեղեցու աշխատավորի կամ պաշտոնյայի, հանգուցյալի անուններ: Անձնանունների կիրառությունները հաճախ հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու սոցիալական տարբեր շերտերի ու նրանց փոխադարձ հարաբերությունների մասին: Տարբեր առիթներով հայերեն արձանագրություններում հիշատակվում են նաև օտարազգիների անուններ:

2. Արձանագրություններում վերծանողների կողմից առանձնացվել են նորահայտ անձնանուններ, որոնք կազմությամբ լինում են պարզ և բաղադրյալ: Վերջիններս արտահայտվել են *«արմատ + արմատ»*, *«արմատ + ա հոդակապ + (յ) + արմատ»*, *«արմատ + ընդ նախդիր + արմատ»*, *«արմատ + ածանց»* մասնակաղապարներով:

3. Անձնանունները կիրառվում են նաև ազգակցություն, տիտղոս, աստիճան, պաշտոն, տեղանվանական ծագում ցույց տվող ուղեկցող բառերի հետ, որոնցից բավական հաճախադեպ են առաջին երկուսը:

4. Տոհմանունները Արձանագրություններում կազմողների կողմից հիմնականում կիրառվել են տվյալ կառույցի, աշխարհագրական տարածքի (և այլնի) որևէ անձի պատկանելու հանգամանքը կամ արձանագրության մեջ հիշատակվողի սերումը, ծագումը ընդգծելու համար: Դրանք, ի տարբերություն անձնանունների, հաճախադեպ չեն:

5. Տեղանունները հիշատակված են շինարարական, նվիրատվական և հիշատակագրային բնույթի Արձանագրություններում: Դրանցից առաջինում հազվադեպ վկայված են գյուղերի, քաղաքների կամ այլ բնակավայրերի անվանումներ: Տեղանունների ճշող մեծամասնությունը հիշատակված է նվիրատվական բնույթի Արձանագրություններում: Հիշատակագրային Արձանագրություններում տեղանուններ նշվում են հանգուցյալների որտեղացի լինելու հանգամանքը հիշատակելու համար:

6. Տոնանունները Արձանագրություններում հիշատակվում են որևէ անձի համար որևէ տոնի ժամանակ պատարագ մատուցելու նպատակով: Դրանք կատարվում էին և՛ կենդանի, և՛ մահկանացուն կնքած մարդկանց համար:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-41>

Գրականություն

1. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1944, Հատոր 2, էջ 634:
2. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1948, Հատոր 4, էջ 686:
3. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1962, Հատոր 5, էջ 383:
4. Ավետիսյան Տ., Հայկական ազգանուն, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987, 322 էջ:
5. Խաչատրյան Գ., Անձնանունների եւ ուղեկցող բառերի կապակցման քերականական կաղապարները Կամենիցի հայկական դատարանի արձանագրություններում (ծգ. դար): Էջմիածին: Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: 2021: Հատոր ՀԸ: Համար Ա: Էջ 91-105 (<https://arar.sci.am/Content/270116/91.pdf>)
6. Դիվան հայ վիմագրության, Անի (Գլխ. խմբ.՝ Հ. Օրբելի, հատորի խմբ. Բ. Առաքելյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965, պրակ 1, էջ 177:
7. Դիվան հայ վիմագրության, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ (Գլխ. խմբ.՝ Հ. Օրբելի, հատորի խմբ. Բ. Առաքելյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1960, պրակ 2, էջ 242:

8. Դիվան հայ վիմագրության, Վայոց Ձոր, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1967: պրակ 3, էջ 430:
9. Դիվան հայ վիմագրության, Գեղարքունիք (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1973, պրակ 4, էջ 530:
10. Դիվան հայ վիմագրության, Արցախ (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան): Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982, պրակ 5, էջ 348:
11. Դիվան հայ վիմագրության. Իջևանի շրջան (Կազմ.՝ Ավագյան Ս., Ջանփոլադյան Հ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977, պրակ 6, էջ 333:
12. Դիվան հայ վիմագրության, Լոռու մարզ (Կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012, պրակ 9, էջ 612:
13. Martirosyan H., Iranian personal names in Armenian collateral tradition. (ed. by Rüdiger Schmitt, Heiner Eichner, Bert G. Fragner, and Velizar Sadovski). Vienna: Austrian Academy of Sciences Press, 2021.

Некоторые семантические группы существительных армянских эпиграфических надписей XII–XVI вв.

Чопурян Гаяне

Резюме

Ключевые слова. антропоним, родовое имя, топоним, сопровождающие слова, частотность, словообразовательная модель

Создание серии сборников «Свод армянских эпиграфических надписей» значительно способствовало развитию эпиграфики. Представленные в них материалы являются важными и основополагающими для синхронного и диахронного изучения явлений в рамках таких дисциплин, как этнография, историография, лингвистика и др. В данной статье рассматриваются лишь некоторые семантические группы существительных в лексике армянских эпиграфических надписей XII–XVI вв. (антропонимы, родовые имена, топонимы, названия праздников). В этих надписях зафиксирован ряд новых слов, изучение которых представляет интерес с точки зрения всестороннего исследования лексики среднеармянского языка. В статье сделаны выводы, вытекающие из содержания исследуемого материала. Среди семантических групп существительных особое внимание уделяется антропонимам, встречающимся как самостоятельно, так и в сочетании с сопровождающими словами. Последние чаще всего обозначают титулы и звания. Некоторые личные имена рассматриваются как новые и требуют дополнительного изучения. Родовые имена встречаются в конструкциях, где необходимо указать происхождение (род или нацию) лица, совершающего сделку – покупателя или дарителя. Топонимы не ограничены в употреблении и варьируются в зависимости от содержания надписей, однако наиболее часто они встречаются в дарственных и строительных надписях. Названия праздников выделяются среди указанных групп тем, что упоминаются преимущественно в связи с пожертвованиями, сделанными в пользу монастырей или церквей, – в частности, с целью совершения литургии в память о дарителях или их родственниках во время определённого церковного праздника.

Some Semantic Groups of Nouns in Armenian lithographic inscriptions of the 12th-16th centuries

Chopuryan Gayane

Summary

Key words: *anthroponym, generic name, toponym, accompanying words, frequency, word-formation model*

The creation of the multi-volume series *Corpus of Armenian Epigraphic Inscriptions* has significantly contributed to the development of epigraphy. The materials presented in these volumes are essential and foundational for the synchronic and diachronic study of phenomena within disciplines such as ethnography, historiography, linguistics, and others. This article examines only several semantic groups of nouns found in the vocabulary of Armenian epigraphic inscriptions of the 12th-16th centuries (anthroponyms, family names, toponyms, and names of holidays). These inscriptions contain a number of new words whose study is of interest for a comprehensive investigation of the lexicon of the Middle Armenian language. The article presents conclusions derived from the examined material. Among the semantic groups of nouns attested in the 12th-16th centuries, anthroponyms are used both single and with accompanying words. Among the latter, those indicating title and rank are especially common. Some personal names are considered as new and need additional research. Generic names occur in constructions where it is necessary to indicate the origin of the person performing the transaction: the buyer or the donor. Toponyms have no restrictions regarding the contents of inscriptions, but they are most often found in donation and construction inscriptions. Holiday names are distinguished from the above-mentioned semantic groups by the fact that they are mainly mentioned in exchange for donations made to monasteries or churches in order to perform a liturgy in memory of them or their relatives.

Ներկայացվել է 15. 04. 2025 թ.

Գրախոսվել է 21. 05. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

Թարգմանության դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում

**Ջադիկյան Նինա,
Մարգարյան Կարինե**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-50>

Հանգուցային բառեր. *կրթություն, օտար լեզու, համարժեքություն, հաղորդակցություն, հաղորդակցային գործառույթ, տեքստ, մեթոդ, թարգմանիչ*

Նախաբան

Մարինե Պետրոսյանի կողմից որպես անտիպոեզիայի «ամենացայտուն» ներկայացուցիչներ բնորոշված Արմեն Շեկոյանի և Վիոլետ Գրիգորյանի պոեզիայի գնահատման առումով ևս Բեկյանը անհամաձայնություն է հայտնում՝ նշելով, որ Շեկոյանը իր «Բախտ» (1987) գրքից հետո իջեցրել է «բանաստեղծի նշանդը». «Ես ավստոսանքով եմ ներկայացնում իմ բանաստեղծ ընկերոջ պոետիկայի՝ վայրենթացի այս «քրոնիկոնը»: Գուցե ամեն ինչ կորա՞ծ չէ, գուցե «հանա ք է անում», գուցե դառնացա՞ծ է այս դառը ժամանակներում և չի կարողա-

² Հոդվածի վերահիստարակության մեջ Բեկյանը «պոետիկա» բառը դարձրել է «պոեզիա» [4, 69]:

նում զսպել նման բաներ տպագրելու մղումը... Խոստովանեն՝ նման բաներ ես էլ ունեմ գրած, թղթերիս մեջ, բայց չեմ տպագրում: Իսկ եթե գրագ եկող լինի, երեք ամսում անտիպոեզիայի մի գիրք կարող եմ ներկայացնել տպագրության: Ես սպասում եմ Ա. Շեկոյանի պոեզիային» [3, նույնը 4, 69]:

Շեկոյանի պոեզիայի «վայրենացը» մատնանշող և այն, մեծ հաշվով, պոեզիա չհամարող Բեկյանը անկեղծ չէ իր դիտարկումներում. հողվածի հրապարակումից ընդամենը երեք տարի առաջ նա ևս չի կարողացել «զսպել նման բաներ տպագրելու մղումը».

«Ստանդարտ հայացքներ

ջինսավորված հետույքի պես ուռուցիկ:

Ազգային Հին Արժեքը դրամի պես կենակցում է

դուլարի հետ, ուժասպառ փոխում մի գրպանում՝

ազգային բանկ չհասած:

Նոր՝ շփոթված աչքերով տեղական պոռնիկների մի սերունդ է աճում...»:

Կամ՝

«Ես չեմ համագործակցել սրիկաների հետ:

Մափրվել եմ ժամանակին և կանոնավոր...

Ես մաքուր եմ, մաքուր եմ, մաքուր – շնորհիվ

«Բարֆի»...

Գովազդով չեմ զբաղվել» [5, 2-3]:

Այս առնչությամբ գրականագետ Սեյրան Գրիգորյանը գրում է. «Սա էլ թերևս կարելի էր համարել «անտիպոեզիային» ուղղված ծաղրանմանություն, եթե հայտնված չլիներ բանավեճից երեք տարի առաջ» [9, նույնը 8, 221]:

Ըստ էության, Զավեն Բեկյանը Մարինե Պետրոսյանին հակադրվում է երկու հարցում՝ անտիպոեզիան ժամանակի բանաստեղծության գլխավոր ուղղություն ներկայացնելու և Շեկոյանի ժողովածուն բարձր գնահատելու:

«Գրական թերթը» նույն համարում՝ Զավեն Բեկյանի հողվածից անմիջապես հետո, տպագրում է Արմեն Շեկոյանի մի քանի բանաստեղծություն՝ խմբագրության կողմից գրված հետևյալ նախաբանով. «Գրական թերթը» առայժմ ձեռնպահ կմնա իր տեսակետը ներկայացնելուց՝ հնարավորություն տալով արտահայտվել ինչպես բանաստեղծներին, այնպես էլ քննադատներին: Զավեն Բեկյանի հրապարակման առթիվ միայն կասենք, որ «Գրական թերթը» ընդունում է նրա առաջարկած գրազը, և որպեսզի խթանենք պոետի գուտ պատվաարկածախնդրությունից բխող ազնիվ մղումը, տպագրում ենք Արմեն Շեկոյանի բանաստեղծություններից մի ծաղկաքաղ» [11]:

Հետաքրքիր զուգադիպությամբ, թե՛ բանավեճին ուղղություն տալու ակնհայտ միտումով «Գրական թերթի» հաջորդ համարում հրապարակվում է հարցազրույց Արմեն Շեկոյանի հետ: Շեկոյանը, ի թիվս այլ հարցերի, վերջում անդրադառնում է նաև Զավեն Բեկյանի «գրագին». «Կարողում և զարմանում եմ, միթե՞ այդ մարդկանց հետ նույն միության մեջ եմ գտնվում: Նույնն է, որ ես ասեմ, թե Զավեն Բեկյանի նման գրելու համար ինձ երեք ամիս ժամանակ տվեք: Երեք թույլ էլ տան կգրեմ. ի՞նչ դժվար բան նմանվելը, հասկապես, որ Զավեն Բեկյանը միշտ էլ նմանակել է Հակոբ Մովսեսին և Աշոտ Ավդալյանին, հիմա էլ ինձ կնմանակի, նա այդ բաները լավ է անում, էլ ինչո՞ւ է գրագ գալիս» [14]:

Զավեն Բեկյանը հանդես եկավ նոր հողվածով, որն առավելապես անդրադարձ էր Արմեն Շեկոյանի սուր ձևակերպումներին, մասնավորապես նմանակումների խնդրին: Իսկ բանավեճի բուն էությունը կարծես թե մոռացվեց [6, նույնը 4, 71-76]:

Մի քանի տարի անց ժամանակակից հայ բանաստեղծության վերաբերյալ մեկ այլ հողվածում Բեկյանը արդեն հետույսաց կրկին անդրադառնում է այս բանավեճին. «Ըստ էության, բանաստեղծության այս տեսակի նկատմամբ որևէ կանխակալ վերաբերմունք, վատ նախապաշարում չունենալով, ես ժամանակին մամուլում փոքր բանավեճ եմ ունեցել նախ՝

Մ. Պետրոսյանի, իսկ այնուհետև՝ ակամա Ա. Շեկոյանի հետ (քանի որ Մ. Պետրոսյանը «անտիպոեզիայի» մասին խոսում էր Ա. Շեկոյանի գրքի առիթով): Ես դա արել եմ ոչ թե բանաստեղծության այդ տեսակին դեմ լինելու, այլ այն պատճառով, որ Մ. Պետրոսյանն իր հոդվածում ինչ-ինչ հավակնություններով «անտիպոեզիան» հռչակում էր արդի հայ բանաստեղծության... գլխավոր ուղղությունը...» [7, նույնը 4, 80-81]:

«Գրական թերթի» նույն համարում տպագրվում է նաև Դավիթ Պետրոսյանի «Մնացյալը լռություն է...» հոդվածը, որը, լինելով սկզբած քանավե՛հ արձագանք, ըստ էության, մտորում է պոեզիա-անտիպոեզիա երևույթի շուրջ առանց անունների և օրինակների. «Պոեզիայի մասին մտորումները, ինչպես և ինքը պոեզիան, անսպառ են: Դրանք մշտապես ուղեկցում են Բանաստեղծին ու ընթերցողին: Եվ շարունակելու են ուղեկցել, անկախ այն բանից մատուցվող նյութը պոեզիա՞ կլինի, թե՞ անտիպոեզիա: Մինչև ո՞ր կարող են տանել այդ մտորումները, հայտնի չէ...» [16]: Պետրոսյանը ընդունում է «անտիպոեզիա» երևույթի գոյությունը և տալիս է «ներսի և դրսի» կամ՝ «մաքուրի և կեղտոտի» իր մեկնաբանությունը. «Եվ եթե դիտարկելու լինենք երկինքը՝ որպես պոեզիայի ակունք, իսկ երկիրը՝ անտիպոեզիայի (նշենք, որ սրանք սոսկ պայմանական որակումներ են), ապա կարելի է ընդհանրացնել, որ Բանաստեղծը երկնքի ու երկրի, իսկ ավելի նեղ որակումով՝ պոեզիայի և անտիպոեզիայի հանդիպման վայրն է: Ընդ որում, դրանց բնորոշ է շրջելիությունը (ինվերսիան). մի դեպքում առաջին պլան կարող է մղվել պոեզիան, մեկ այլ դեպքում՝ անտիպոեզիան» [16]: Թե՛ Զավեն Բեկյանի, թե՛ Դավիթ Պետրոսյանի հոդվածները արձագանք չեն ունենում:

Ամիսներ անց ՀԳՄ 13-րդ համագումարում «Հայաստանի պոեզիան անկախության շրջանում» զեկուցմամբ հանդես եկավ գրականագետ Մելյան Գրիգորյանը: Ծավալուն զեկուցման մեջ գրականագետը անդրադարձ կատարեց նաև անտիպոեզիայի հարցերին և դրա շուրջ կայացած բանավե՛հին, որը, ըստ գրականագետի՝ «ուշադրության է արժանի թեկուզ այն պատճառով, որ ողջ տասնամյակի ընթացքում կարծես թե միակ բանավե՛հ-քննարկումն է, որ անդրադառնում է հատկապես պոեզիային» [9, նույնը՝ 8, 219]: Մարինե Պետրոսյանի ընդհանրացումը, թե անտիպոեզիան արդի հայ բանաստեղծության գլխավոր ուղղությունն է, ըստ Գրիգորյանի, «որքան հավաստի, նույնքան էլ կտրուկ է: Միաժամանակ այն միջնորդավորված է իր՝ Մ. Պետրոսյանի ստեղծագործական փորձով» [9, նույնը՝ 8, 220]:

Որոշ ժամանակ անց «Գրական թերթում» տպագրվեց գրականագետ Զավեն Ավետիսյանի «Այս ժողաշատ «Անտիպոեզիան» հոդվածը, որը, ըստ էության, գրախոսություն էր: Ավետիսյանը չի անդրադառնում Մարինե Պետրոսյանի ու Զավեն Բեկյանի հոդվածներին, Վիովետ Գրիգորյանի ժողովածուին, այլ Շեկոյանի գրքի միջոցով փորձում է հասկանալ շեկոյանական «պարականոն բանաստեղծության» էությունը. «Խնդիրը դուրս է բանարվեստի շրջանակներից, ինչը և ստիպում է պատասխանը փնտրել կամ բանաստեղծության մտասերտումների ենթատեքստում, կամ էլ հեղինակի կերպարի մեջ» [2]: Ըստ Ավետիսյանի, բանաստեղծության այս տեսակի՝ «գրավոր խոսքին «անհարիր» ձևակերպումները, «երևույթը խտացող՝ «քյասա» բնութագրումները» միայն կարող են ներկայացնել իր ժամանակին հատուկ «հասարակական իրականության համակեցության կոմֆորտը»։ «Ուրեմն, այս բանաստեղծության պատվիրատուն բոլորս ենք, մեր հասարակությունը, մեր բարքերը, և բանաստեղծն էլ հյու-հնազանդ իրականացնում է այդ պատվերը» [2]: Տպավորություն է, որ գրականագետը կողմ է ոչ այնքան հենց անտիպոեզիային, որքան երկրում տիրող հոգեմտավոր ճգնաժամը և դրան հարմարված հասարակական «կոմֆորտը» վերացնելու ցանկացած փորձի՝ անկախ միջոցներից: Հետաքրքիր է նաև այն, որ գրականագետն իր հոդվածում օգտագործում է խոսակցական ոճին բնորոշ տարրեր. «**Հ**ս արդեն սովորական խաղ չէ», կամ՝ «Բոլորս մի կողմ քաշված սպասում ենք, թե ինչ պիտի լինի **Հ**ս աշխարհի վերջը» [2] և այն (ընդգծումները մերն են- Ա. Խ.):

Գրականագետ Սուրեն Արքահամյանը իր «Անտիպոեզիա, թե՞ գրոտեսկային ֆոկլոր-րիզմ» հոդվածում հանդես է գալիս ժխտողական դիրքերից՝ փորձելով գրականագիտական

սահմանում տալ «անտիպոեզիա» երևույթին: Աբրահամյանը նախ դժգոհում է քննադատությունից՝ «սպասարկուի, երբեմն հովանավորողի» կեցվածք ընդունելու և «այսպես կոչված, «անտիպոեզիա» երևույթը «օրինականացնելու» համար միաժամանակ չընդունելով Ջավեն Ավետիսյանի այն միտքը, թե «անտիպոեզիայի» խնդիրը դուրս է բանարվեստի շրջանակներից»: «Վերոհիշյալ հրապարակումները (նկատի ունի բանավիճային հոդվածները- Ա. Խ.) ապացույցների նախադրյալները որոնում են ապրիորի մտածական տպավորությունների փորձի վրա», - գրում է նա, ապա ավելացնում. «90-ականների հասարակական մետամորֆոզները, որոնք թերևս անավարտ են կեցության և գիտակցության առումով, մղել են կերպարին մի պարադոքսալ, ծայրահեղորեն հակադիր բախման և կերպափոխության, որ հնարավոր է բացատրել հակակերպարի ստեղծման՝ նրա խոսքը վկայելով բանահյուսական «սև հումորի» ոչ դասական լիցքով: Կարելի է ասել, որ այն հակակերպարի վերածնունդն է տարփողում, որի լեզուն ոչ թե խոսակցական-բանավորին մոտ է, այլ բանահյուսական-ժարգոնային է՝ կուտակումներով ու բառաբարդումներով (Վ. Գրիգորյան) կամ պարզ-պատկերային (Ս. Շեկոյան)... այնպես որ, ոչ թե անտիպոեզիա, այլ յուրատեսակ ֆոլկլորիզմ՝ ժանրային և ձևակառուցվածքային իր պարագծով» [1]:

Արմեն Շեկոյանի և Վիոլետ Գրիգորյանի պոեզիան բնորոշելով որպես «յուրատեսակ ֆոլկլորիզմ»՝ Աբրահամյանը տալիս է անտիպոեզիայի էության իր սահմանումը. «Անտիպոեզիայի հասկացությունը ներառում է բանաստեղծական խոսքի բոլոր ոլորտները, որ ընդհանուր առմամբ պոեզիայի համակարգի խոսքի, ավանդույթի, կերպարի ներքին մեծ վերափոխություն է ենթադրում, ինչպես, ասենք, Նարեկացու, 20-րդ դարում՝ Չարենցի ստեղծագործությունը, Պ. Սևակի «բանաստեղծական անբանաստեղծության» տեսությունը և այլն» [1]:

Անտիպոեզիայի նման ընդհանրական բնորոշումը ընդունելի չէ առնվազն այն պատճառով, որ անտիպոեզիան որպես գրական երևույթ ամենևին նոր չէր և մինչև Արմեն Շեկոյանի կամ Վիոլետ Գրիգորյանի ժողովածուների ի հայտ գալը, ուներ շուրջ կեսդարյա պատմություն, նաև որոշակիորեն ձևավորված կերպ, բովանդակություն և գրականագիտական սահմանում: Ըստ այդմ, անտիպոեզիան չպետք է նույնացնել հակաբանաստեղծական այն դրսևորումների հետ, որոնք առկա են բանաստեղծության ձևավորման առաջին շրջանից: Նման բնորոշման արդյունք կարող է լինել այն սխալ միտումը, որ դասական բանաստեղծությանը հակադրվող յուրաքանչյուր գործ բնորոշվում է անտիպոեզիա եզրույթով:

«Անտիպոեզիա» եզրույթը տարածում գտավ չիլիացի բանաստեղծ Նիկանոր Պարայի՝ 1954 թվականին հրատարակված «Բանաստեղծություններ և հակաբանաստեղծություններ» («Poemas y antipoemas») ժողովածուի շնորհիվ: Այն միտված էր կազմաքանդելու դասական պոեզիայի ավանդական ձևերը, լեզուն, չափածո կառուցվածքը: Անտիպոեզիայի առաջացման համար հիմք հանդիսացան մի քանի կարևոր գործոններ.

1. Պատմական և սոցիալական հիմքերը: Երկրորդ աշխարհամարտը և հետպատերազմյան շրջանը առաջացրին հիասթափություն ու ճգնաժամ:

2. Խոսակցական լեզվի տարածումը գրականության մեջ: 20-րդ դարի կեսերին գրականության մեջ ավելի մեծ տարածում գտավ առօրյա-կենցաղային խոսքի կիրառումը:

3. Պոեզիայի ժողովրդայնացման փորձը: Անտիպոեզիան դեմ էր պոեզիայի էլիտար բնույթին՝ ձգտելով այն հասկանալի դարձնել հասարակ մարդկանց:

4. Քաղաքական և սոցիալական փոփոխությունները: Աշխարհում ընթանում էին հեղափոխություններ, հասարակական բախումներ և պայքար իշխանությունների դեմ: Անտիպոեզիան դարձավ բողոքի ձև ընդդեմ պաշտոնական մշակույթի: Օրինակ՝ սփյուռքահայ գրող, գրականագետ Գրիգոր Պրլտյանի «Հակաքերթում» ժողովածուն (1972) պետք է դիտարկել այս համատեքստում:

5. Մոդեռնիզմի, դադայիզմի և սյուրռեալիզմի ազդեցությունը: Այս ուղղությունները նույնպես մերժում էին ավանդական ձևերը և փնտրում նոր արտահայտչամիջոցներ:

Եզրափակելով խոսքը՝ Աբրահամյանը գրում է. «Իրականում հայ պոեզիան 90-ականներին կարող է շնչել Արտեմ Հարությունյանի վիթխարի կոլաժներով, Հովհաննես Գրիգորյանի ներընթաց հակադրություններով, Հենրիկ Էդոյանի, Ա. Ավագյանի, Սարուխանի, Սևակ Հովհաննիսյանի և այդ սերնդի պոեզիայով: Կրտսեր սերունդը, թերևս, պետք է վերաբժնորի իր համար 80-ականներին, ինչպես երբեմն դա հաջողվում է այդ սերնդի մի քանի պոետների, որոնց մասին դեռ կխոսի քննադատությունը և պետք է խոսի...» [1]:

Վիճելի համարելով Աբրահամյանի հոդվածի «որոշ կարծիքները»՝ «Գրական թերթը» այս թեմայով բանավեճի հրավիրեց, սակայն արձագանքներ չեղան՝ բացառությամբ բանաստեղծ Թադևոս Տոնոյանի մի կարճառոտ անդրադարձի: Բանաստեղծը անտիպոեզիայի շուրջ ծավալված բանավեճը համարում էր «ոչնչից մեծ աղմուկ»։ «Անտիպոեզիայի վերաբերյալ «բանավեճը» նման է ոչնչից մեծ աղմուկի: Նախ՝ արձանագրեմ. Արմեն Շեկոյանը կապ չունի «անտիպոեզիայի» հետ: Արմենն ընդամենը իր ինքնատիպ ժողովածուի վերնագիրը գրեց, ու հանկարծ հայտնվեցին ամբողջ մի «սերնդի» տեսաբաններ» [18]:

Այսպիսով, 1990-ական թվականների հայ բանաստեղծության համատեքստում անտիպոեզիայի առկայությունը իրողություն է, որը որոշակիորեն զարգացավ նաև հետագա տասնամյակներում ամենատարբեր դրսևորումներով և եզրույթներով՝ «փսնդո-բանաստեղծություն» (Մհեր Արշակյան), «մեմաստեղծություն» (Գարեն Անտաշյան) և այլ: Անտիպոեզիայի շուրջ սկսված շահեկան բանավեճը միտված էր բացահայտելու երևույթի էությանն ու խնդիրները, սահմանելու վերջինիս դիրքը և դերը արդի հայ բանաստեղծության մեջ: Սակայն այս բանավեճը ցավալիորեն զարգացում չստացավ: Բանավիճող կողմերը անտիպոեզիա երևույթը փորձեցին մեկնաբանել հետանկախության շրջանի պոեզիայի համատեքստում, և փորձ չարվեց երևույթին անդրադառնալ՝ հաշվի առնելով նաև համաշխարհային բանաստեղծական միտումները:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-80>

Գրականություն

1. Աբրահամյան Ս., Անտիպոեզիա, թե՞ գրոտեսկային ֆոլկլորիզմ, «Գրական թերթ», 2001, թիվ 25:
2. Ավետիսյան Զ., Այս հոգսաշատ «անտիպոեզիան», «Գրական թերթ», 2001, թիվ 17:
3. Բեկյան Զ., Անտիպոեզիայի ժամանակը, «Գրական թերթ», 2000, թիվ 13-14:
4. Բեկյան Զ., Բանաստեղծության «ներսը» և «դուրսը», Երևան, «Անտարես», 2024, 168 էջ:
5. Բեկյան Զ., Բանաստեղծություններ, «Գարուն», 1997, թիվ 8, էջ 2-3:
6. Բեկյան Զ., Մի բումբերանգ դիս թավուտներից, «Գրական թերթ», 2000, թիվ 23-24:
7. Բեկյան Զ. Մտորումներ ժամանակակից հայ բանաստեղծության մասին, «Գրական թերթ», 2004, թիվ 32:
8. Գրիգորյան Ս., Բանասիրություն և բանավեճ, Երևան, «Զանգակ-97», 2002, 240 էջ:
9. Գրիգորյան Ս., Հայաստանի պոեզիան անկախության շրջանում, «Գրական թերթ», 2001, թիվ 9-10:
10. Eugen Rosenstock-H. Speech and Reality, Argo books, Inc, 1988, p. 51-57.
11. Խմբագրության կողմից, «Գրական թերթ», 2000, թիվ 13-14:
12. Շեկոյան Ա., Անտիպոեզիա, Երևան, «Վան Արյան» հրատ., 2000, 191 էջ:
13. Շեկոյան Ա., Խոստովանություններ «Անտիպոեզիա» գրքից, «Գրական թերթ», 1996, թիվ 3:
14. Շեկոյան Ա., «Զարենցից հետո մեծ բան չենք ստեղծել», «Գրական թերթ», 2000, թիվ 21-22:
15. Շեկոյան Ա., Ուշահաս երգեր «Անտիպոեզիա» գրքից, «Գրական թերթ», 1997, թիվ 10:
16. Պետրոսյան Դ., Մնացյալը լռություն է..., «Գրական թերթ», 2000, թիվ 23-24:
17. Պետրոսյան Մ., Անտիպոեզիա կամ երբ բանաստեղծը չի փնտրում ալիքի, «Գրական թերթ», 2000, թիվ 10:
18. Տոնոյան Թ., Ոչնչից մեծ աղմուկ, «Գրական թերթ», 2002, թիվ 3:

Дискуссия на тему «антипоэзии» в литературной прессе 2000-2001 гг.

Хачатрян Арам

Резюме

Ключевые слова: современная литература, литературная дискуссия, антипоэзия, Армен Шекоян, литературная пресса, поэзия, поэт

В статье рассматривается дискуссия, развернувшаяся в армянской литературной прессе в 2000-2001 гг. вокруг феномена «антипоэзии». Несмотря на сравнительно небольшой объем откликов, обсуждение затронуло ключевые аспекты явления и обозначило круг его проблем. Дискуссию условно можно разделить на два этапа: на первом этапе активность проявили писатели, публиковавшие статьи и критические отклики, на втором – к обсуждению присоединились литературоведы. Проблема антипоэзии в контексте армянской поэзии 1990-х годов представляет собой значимое явление, развитие которого в последующие десятилетия привело к появлению различных форм и терминологических обозначений – «псевдопоэзия» (Мгер Аршакаян), «мемапоэзия» (Карен Анташян) и др. Дискуссия об антипоэзии была направлена на выяснение сущности этого феномена, определение его функций, места и роли в современной армянской поэтической традиции. Однако обсуждение не получило полномасштабного развития и завершилось, не выйдя за рамки отдельных полемических высказываний. Участники дискуссии стремились интерпретировать антипоэзию преимущественно в контексте армянской литературы постсоветского периода, однако попыток рассматривать ее в более широком – международном – поэтическом и теоретическом контексте предпринято не было. В настоящей работе использованы аналитический и сравнительный методы; предпринята попытка реконструировать дискуссию и представить ее в более широком культурно-историческом контексте на основании анализа публикаций армянской прессы конца 1990-х – начала 2000-х гг..

The Debate on “Antipoetry” in the Literary Press in 2000-2001

Khachatryan Aram

Summary

Key words: contemporary literature, literary discussion, anti-poetry, Armen Shekoyan, literary press, poetry, poet

The article examines the discussion that unfolded in the Armenian literary press in 2000-2001 around the phenomenon of "anti-poetry". The discussion partially took place and even despite the small number of responses, they essentially touched on the essence of the phenomenon and its problems. The discussion is conditionally divided into two stages: first, writers came forward with articles and responses, and later literary scholars responded. The presence of anti-poetry in the context of Armenian poetry of the 1990s is an event that, to a certain extent, developed in the following decades in a variety of forms and with the use of various terms - "pseudo-poetry" (Mher Arshakyan), "mema-poetry" (Karen Antashyan), etc. The discussion on antipoetry aimed to clarify the nature of the phenomenon and its key issues, as well as to establish its place and role in contemporary Armenian poetry. However, unfortunately, the discussion did not receive the necessary development. The parties involved in the discussion sought to interpret the phenomenon of antipoetry in the context of post-independence poetry; however, no attempts were made to examine it in light of world poetic trends.

Ներկայացվել է 20. 02. 2025 թ.

Գրախոսվել է 04. 05. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

**Հայ մնալու համառումը մեր այն կողմերում
(Մկրտիչ Մարկոսյանի «Մեր այդ կողմերը» և «Տիգրիսի ափերեն» ժողովածուները)**

Փիլոյան Վալերի

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-87>

Հանգուցային բառեր. եղենից հետո վերապրողներ, հավատ, սովորություններ, հուշի ու սիրտ խմորում, ժառանգորդություն, ավարտ, Հայոց պատմության ընտանեկան տարբերակ, երգիծանք

Ներածություն: Արաքսից անդին՝ մինչև Եփրատ ու Տիգրիս, սրանցից անդին՝ մինչև Կիլիկիա ու Զմյուռնիա և անդին, մարդիկ կան՝ սակավ կամ բազում, որ իրենց դեռ հայ են համարում: Հարյուր կամ ավելի տարիներ առաջ տեղի ունեցածը մինչև վերջ չիմաստավորելով՝ պիտի փաստենք իրողությունը և ասենք, որ «գաւառներուն մէջ Հայեր կ'ապրէին, կը յամառէին ապրիլ եւ ապրիլ իբրեւ Հայ, եւ Սփյուռքը բացարձակապէս կ'անգիտանար անոնց գոյութիւնը» (Անահիտ Կարմիրյան) [3]: «Կ'անգիտանար» ոչ միայն սփյուռքը, և միայն հավատավոր խենթեր էին զգում տեր լինելու պատասխանատվությունը:

Արամ Հայկազի «Չորս տարի Քուրդիստանի լեռներու մէջ» երկը ակնարկում էր Թուրքիայի գավառներում ապրող հայերի գոյությունը, Մկրտիչ Մարկոսյանի «Մեր այդ կողմերը» և «Տիգրիսի ափերեն» գրքերը հաստատում են այս իրողությունը, և նրա պատմությունները, որ Դիարբեքիր-Տիգրանակերտի հայերի մասին են, հիշում են նաև այլ բնակավայրերում ապրող հայերի: «Տէր Արսէն, հայերու միակ քահանան, երկու օր վերջ պիտի մեկնի Խարբերդ, հոնկէ պիտի անցնի Մալաթիա, հոն հաւաքական մկրտութիւններ, հարսնիք պիտի ընէ, պատարագ պիտի մատուցանէ, քանի մը օր, թերեւս ալ քանի մը շաբաթ՝ հոն պիտի մնայ, այդ տեղի հայերը պիտի միխթարէ: Է՛հ, եթէ այդտեղի հայերը քահանայ մը իսկ չունին, հայ չէ՞ն, անոնք խունկի հոտը, խաչին համը չէ՞ն գիտեր...» [2, 55]:

Մ. Մարկոսյանը հիշողության մեջ ամբարված ամեն ինչը պատմելու խնդրառություն ունի: Թվում է՝ միագիծ պատմություններ են, սակայն արդյունքում ձևավորվում են այնպիսի պատմվածքներ, որոնք ներառում են թեմային վերաբերող, զուգահեռ կամ հավելվող պատմություններ, մանրամասներ ու մանրադետալներ, և ամբողջանում է Խանչլեք (Գյավուր թաղ) թաղամասն իր մարդկանցով ու դեպքորդիպվածով, ազգագրությամբ ու սովորությոներով, նաև թուրք, հրեա, քուրդ, ասորի հարևաններով:

Մկրտիչ Մարկոսյանի «Մեր այդ կողմերը» ժողովածու: Մկրտիչ Մարկոսյանը գիտի ընթերցողին թակարդելու, իրենով անելու գաղտնիքը: Ահա «Մեր այդ կողմերը» գրքի առաջին իսկ՝ «Եկեղեցին» պատմվածքը, որ սկսվում է կիրակի օրվա պատկերմամբ: Կիրակի, ասել է՝ պատարագ, ասել է՝ եկեղեցի, ուրեմն անցնենք եկեղեցի տանող ճանապարհով, տեղ հասնենք, մտնենք եկեղեցու ընդարձակ պարտեզը, որ «գրաւումա՛ծ է դարձեալ աղքատ հայ ընտանիքներու կողմէ: Հոն տուն-տեղ եղած են Պայտար Հէնուշը, Զուլիակ Սարգիսի երկու յիմար աղջիկները, Երկաթագործ Տիգրանի ութսունամեայ պառու մայրը՝ Ռէհան, Խել Ուսոն եւ ընտանիք մը որ դեռ վերջերս եկեր է Տալվորիկէն: Սա քանի մը հոգիի վրայ, երեք խենթերու համեմատութիւնը, պարզ դիպուածի արդիւնք չէ բնաւ» [1, 15]: Ու քանի որ խոսքը հասել է խենթերին, մասնակի անդրադարձ կա նրանց. «Այստեղ կան վաւերական խենթեր, կան կէս խենթեր, կան խենթուկներ, կան նաեւ խենթ ձեւացողներ, որոնք կը կազմէն այս քաղաքին պելլաներու՝ փորձանքի դասակարգը» [1, 16]:

Եկեղեցին պատերազմի տարիներին գորանոց է եղել, «եւ դեռ նոր պաշտամունք կը կատարուի հոն. պատերը դեռ չեն յազգեցած խունկի հոտէն» [1, 16]: Համեստ է եկեղեցու կահավորանքը. «Եկեղեցիին պատերէն վար կախուած են քանի մը սուրբի դէմքեր, որոնց

երեսէն ժամանակը լիզեր է իւղաներկը» [1, 16]: Պատարագի ենք եկել, ուրեմն լսենք քահանայի քարոզը. «Ըսօր Սուրբ Լուսէւորչի տօն է: Գրիգոր Լուսէւորիչէ միր ըմմունին մինծն է: Ըն Էտին Տրդէտ թեգնուր իկէ. ընի Գրիգոր Լուսէւորչին ըսեց կրօնքդ ինքար էրէ, չէ վըր չէ քըզի խոր վիրապ կը նետեն, եանէ, զընտան կը թեպիւմ... Գրիգորի Լուսէւորիչ լէ հեւետքը ինքար չէրից, գնեց խոր վիրապ նստէ և իննը տերի հօն մնեց աչ տուտուգ...<անոթի, ծարաւ>» [1, 17]:

Պատարագը թե վերջացավ, հանդիպումը չվերջացավ, և ընթերցվում է նվիրատվությունների ցուցակը, ի մասնավորի՝ «Գասպար Եմենիճեան մէկ օսկի ժէմուն, տասը օսկի տերտերին, մէկ օսկի լէ լուսերերին...

Եւ այսպէս կը կարդա երկար շարք մը...

Քահանային այս բարբառը ժողովուրդին համար պաշտօնական հայերէն աշխարհաբարն է: Իսկ երբ պատահի որ վարդապետ մը քանի մը տարին անգամ մը գայ, նախագահէ արարողութեան եւ խոսի մաքուր աշխարհաբարով, ժողովուրդը զայն երկիւղածութեամբ մտիկ կ'ընէ իբրեւ գրաբար, որմէ բան մը չի հասկնար թէւէ, բայց չէ՝ որ Աստուծոյ խոսքը գրաբարով իջաւ իրկինքէն...

Նախանձելի հաւատք, երանելի ժողովուրդ» [1, 17-18]:

Այսպէս մտնում ենք մի գրաշխարհ, որից անմիջապէս ելքը հակացուցված է, պիտի հասնենք գրքի վերջին հանգրվանին, ասել է ճանապարհ ենք անցնելու: Նախ հասնելու ենք Տիգրանակերտից մեկուկէս ժամ հեռու գտնվող Սաթի գյուղ: «Գիւղին ամբողջ հարստութիւնը՝ փոքր աղբյուրի մը գլուխը, թզենիի մը հողէն դուրս ելած երկու խաչաձէւ արմատներն են» [1, 19]: Այստեղ հասնում են ոչ միայն ծեր ուխտավորները, այլև երիտասարդները, քանի որ հարմար ժամադրավայր է, հանդիպավայր, ուրեմն և ասեկոսեի առիթ, կովատեղ, քանի որ «երիտասարդ Նաւօ մը եւ երիտասարդ Աւօ մը առանց գիտակցութիւնը ունենալու՝ սիրահարած կ'ըլլան Սաթիի մը», և քիչ անց «Ճշոցներու մէջ կ'աւ Աւօն, եւ կ'աւ Նաւօն կը վիրաւորուի: Այսպէս՝ սուրբի պատկերը անգամ մը եւս կը լուացուի արինով: <...> Սուրբը կը խմէ արինը մարդոց... կը խմէ արինը աքլորներուն... կը խմէ արինը ոչխարներուն եւ դէռ անյագ կը մնայ եւ կը սպասէ յաջորդ տարուն անթիւ զոհերուն» [1, 22]:

Հաջորդում է «Հարսանիքը», որ ծեսի նկարագրությունն չէ, այլ սիրահարների, ապագա հարսների ու առկա հարսների գնահատությունն է տարիքն առած կանանց կողմից՝ համով-հոտով, բարբառախառն պատմված: Ու արդեն տեսանելի է դառնում «Մեր այդ կողմերը» ժողովածուի մեջ ներառված պատմվածքների թեմատիկ հերթագայության հեղինակային նախասիրություն-սկզբունքը՝ ծնունդից մինչև մահ, մանկական նախնական տպավորություններից մինչև ավելի հասուն տարիների հիշողություններ: Նույն սկզբունքը կա նաև «Տիգրիսի ափերէն» ժողովածուի «Գաւառական» բաժնում:

Մարկոսյանի գործերին հարաբերվելիս այն տպավորությունն է ձևավորվում, թե գործ ունեն ոչ թե պատմվածքների, այլ պատկերների հետ, քանի որ արտաքին գործողության նկատելի պակաս կա, սակայն երբ շփումը շարունակվում է, և տեսանելի է դառնում հուշի ու սիրո սքանչելի խմորումը, այլևս հարցը գլխիկոր հեռանում է՝ զգալով իր ավերորդությունը:

Մարկոսյանը Մանուրու աշակերտն է և օրինական իրավահաջորդը: Եվ Մարկոսյանը թերևս Մանուրուց է սովորել պատմվածքն ավարտելու արվեստը, էրբ մեկ-երկու նախադասությունը հավաքում, ամբողջացնում և վերջակետում է պատումը՝ նրա համար ապահովելով նորավեպին բնորոշ հանգուցալուծում: Օրինակներ հիշենք Մանուրուց, «Առջինեկ» պատմվածքում դաշտում մեն-մենակ ծննդաբերած հարսը մի կերպ հայրական տուն է հասնում և ուշաթափվում. «Երբորդ օրը մայրս կիմանա, որ չեմ մեռեր, ողջ եմ, աղջիկ չեմ, տղա եմ» [4, 360]: «Փշատիին ծաղիկը» պատմվածքում արդեն նշանված սիրահարների անմեղ հանդիպման վկան փշատի ծաղիկն է եղել, որ «մատնել է» հանդիպման փաստը, և «Փշա-

տիին ոսկեգույն ծաղիկը գետինը ինկած տեղը մնացեր էր» [4, 236]: «Մինաս քեռիին հինգ կնիկները» պատմվածքում Մինաս քեռու կանայք հերթով մահանում են, և նա հինգերորդ անգամ է ամուսնանում, սակայն «Այդ տարին դեղնություն մը եկավ Մինաս քեռիին վրա: Այս անգամ կարգը Մինասինն է ըսին: Անանկ ալ եղավ: Ինք մեռավ, Խնկո քեռկինը ապրեցավ» [4, 286]:

Եվ վերադառնանք Մ. Մարկոսյանի գործերին. «Ու սկսանք լալ» պատմվածքում տասնամյա հեղինակն իր հորաքրոջ մանկահասակ տղայի՝ Զավենի հետ գնում է թոչունի որսի, որ որսը բերի հիվանդ տատի համար: Որսում են երկու թոչուն՝ մի ճնճղուկ և մի թուրթի թոչուն, սակայն խախտել են հայրական պատվերը՝ արևը մայր չմտած տանը լինել: Այդ պատճառով էլ պատժվում են, և որսը բաժին է հասնում տան Մեստան կատվին. «Մեր արցունքներուն մէջ Մեստանը փորը կշտացուց: Այդ օրէն վերջ չսիրեցի մեր Մեստանը... Երկու օր վերջն ալ մեծ մայրս մեռաւ» [1, 47]: «Թումասին աղջիկը» պատմվածքն առաջին սիրահարության մասին է, իսկ առաջին սերն առաջին հացի պէս միշտ կուտ է գնում: Տարիներ անց «Կինս յոյ է, եղէ աղջիկ ծնի, անունը Շուշան դնէ մ...» [1, 67]: «Քը յս Սիլվա» պատմվածքն էլ է պատանեկան հրապուրանքի մասին. հրապուրանքը փոխադարձ է, և աղջիկը մի թաշկինակ է նվիրում՝ «չորս անկյունն ալ իմ անունիս գլխագիրը՝ «Մ» տառը կար. չորս կողմը մէյմէկ մէն... Հասկցայ... Հսել էր, թէ Սիլվան ինծի չորս անգամ անելի գարնուած էր» [1, 157]: Բայց թաշկինակը՝ մարխաման, օգտագործվում է իր ամենատղղակի նշանակությամբ, այնինչ «պէտք էր չորս անգամ համբուրէ մ ու սրտիս վրան սեղմէ մ»: Եվ ավարտը. «Մեր սիրոյ խաղը, մեր գերկուելու խաղը արեան կարմիր գոյն ունէր, մոխրագոյն դարձաւ: Այդ մոխրներէն որպէս յիշատակ երկու բան միայն մնաց. մեր անունները

– Եալանչի Մկօ...

– Քըյս Սիլվա...» [1, 159]:

«Էրթէ չէրէ, իգէ բերին» պատմվածքում Քեժոն վեց աղջիկ ունի, և սպասում են յոթերորդին: Վեց աղջկա դեպքում այն օրերին (և հիմա) դիմում են աղոթքի գործությանը, հմայախոսության, գրբացության, կախարդանքի... «Օր մըն ալ Փրուշ Պաճօն, Թովալ Թիւմէն եւ Էդսօ Պաճօն որոշեցին, թէ Խաչխաթունը այդ գարնան պէտք է անպայման «տղէ մի» ծնի: <...> Ելան գացին խենթ Աղանիին. սա պառաւ մըն էր, կատարյալ խենթ <...> խենթի մը աղօթքը երբեմն հազար խելացիի աղօթք կ'արժէր» [1, 118]: Եվ սկսվում է գործողությունը. Աղավնին եկավ, «նախ իր փորը կշտացուց Խաչխաթունի եփած մալէգով, յետոյ ալ պաստեղով», ապա պահանջեց հմայության համապատասխան պարագաներ՝ «Սուխ տուեցէ՛ք», «Դենէկ մի բերեցէ՛ք», «Բրդօ մի հեց տուեցէ՛ք» (հացն անպայման պիտի չոր լինի), «Բուռ մի էղ բերեցէ՛ք», «Թէ՛գ կրէկ վառեցէ՛ք»: Այս ամենից հետո երկար աղոթում է Աղավնին: «Ու աղօթքի ավարտին՝ Աղանին գնաց բուռին մէջի աղը կրակին վրայ նետեց: Աղը չգրտաց: Աղանին այս անգամ լսելի ձայնով խոսեցաւ:

– Էրթէ չէրէ, իգէ բերին... Էրթէ չէրէ, իգէ բերին...

<...> «Երթա չարը, գայ բարին» մաղթանքը երբ լմնացաւ, հացն ու սոխն ալ՝ Աղանիի գրպանը մտած էին արդեն:

Աղանին վերջին պահուն իր խենթությունը անգամ մըն ալ փաստեց ու դանակը տարաւ հորին մէջ նետեց: <...> Բայց «չէրէ չգնէց, բերին լէ չէկէ...»: Յաջորդ գարնան Խաչխաթունի եփերորդ գաւակն ալ աղջիկ ծնաւ... Իսկ Քեժօն այս արարողությունն երբեք լուր չունեցաւ:

Մեր Տիգրանակերտի երկինքին վրայ բազմած Մեծն Աստուած այս անգամ Քեժօյի ականջը ինչ ըսաւ կամ ինչ «գուրցից», չենք գիտեր, բայց Քեժօն «հերիք է», ալ կը բաւէ ըսաւ ու վերջին աղջկան անունը Աղանի դրաւ» [1, 121]:

«Կեալուր Մեհլէ» պատմվածքը, ինչպէս շատ ուրիշներ, իսկական գլուխգործոց է: Այստեղ իրար են նարոտվում դիպվածք, պատմողի վարպետությունը, նրբին հումորը,

ավարտի գերագույն ներդաշնությունն ու անհուն տխրությունը, մարդասիրությունը, իրողություններ, որ իրավ անբաժանելի են խոսքարվեստի գործերից:

«Խչէ Պաճօն» «Կիւզէկէնց Մարիամի» սկետսին է, սակայն «Մարիամը Խչէն առաջ մեռաւ» [1, 39]: Եկեղեցու ժամկոչ Ուսոն, երբ իմանում է բոթը, կոչնակ է զարկում, և «կոչնակին խուլ ձայնը սկսաւ տարածուիլ ամբողջ Տիգրանակերտի նեղ փողոցներով <...> կոչնակի դողանքը կ'երթար բոլոր հայերուն ականջը, կը կախուէր անոնց պաղէն կարմրած բլթակներէն ու կ'ըլլար հարցում» [1, 40]: Ապա «Ուսօն իր կարճուկիկ հասակովը ձիւներու մէջ կը գլորուէր, կ'երթար մինչեւ ***Կէափուր Մէշէ՛՛ երբեմնի թաղը հայերուն, ուր մնացած էին մի քանի ընտանիք եւ մեկ մըն ալ անունը՝ Կէափուր Մէշէ՛՛***» [1, 42]:

Երկու օր տնած սգո արարողությունից հետո «Մարիամի դիակը յանձնուեցաւ հողին» [1, 42]: Պատմվածքի ավարտը հյուսելիս հեղինակն ինչպես է կարողանում ամեն ինչ ներդաշնակել իրար՝ չնոռանալով ոչինչ. «Հաստ բազմութիւն կար եկեղեցոյ մէջ: Տիգրանակերտի բոլոր հայութիւնը ներկայ էր, բացի Տէխտեկէ՛ Պէկէն Վանէսին: Ան կ'իրակիէն զատ երբեք խանութը չէր գոցեր...»

Ու Մարիամը տարին թաղեցին իր վեցամսեայ աղջկան թարմ գերեզմանին քով, քիչ մըն ալ քուրտ անվարտի փոքրիկներուն հաց ու հրուշակ բաժնելով...

Մարիամը, Կիւզէկէնց նազելի Մարիամը, երբ հողին հետ մնաց առանձին, կոշկակար Թումաս սկսաւ կրկին տրեխ կարել, երկաթագործ Տիգրան՝ կղպանք շինել, կլայագործ Նշան՝ նարտ խաղալ իր դրացի կնքահայր Յակոբի հետ... Այդ գիշեր անքուն էին երկու հոգի: Մէկը վարպետ Սգոն էր, Մարիամին ամուսինը, միւսը՝ Խչէն...

Սգոն երբ գիշերը անկողին մտաւ, մէկ կողմը պզտիկ տղան Տիգրօն, միւս կողմը ուրբամայ աղջիկը Մէթօն կը քնանային: Իսկ ինք, մօրը հետ միասին, իր պառկած տեղէն, սենեակին աղոտ լոյսին մէջ կը դիտէր պատէն կախուած, դեղնած նկարը Մարիամի... Դուրսը, Տիգրանակերտի նեղ փողոցներուն մէջ, երբ Սուրբ Սարգիսը իր ճերմակ մօրուքը կը սանտրէր, Մարիամը իր տաք անկողինը, վարպետ Սգոյի տաք գիրկը կը փնտռէր...» [1, 43]:

Մկրտիչ Մարկոսյանի «Տիգրիսի ափերէն» ժողովածուն: Միանշանակ երգիծական բնույթ ունի «Օսկերիչ Մերթըր» պատմվածքը: Բայց ամեն ինչ իր հերթով. «Այդ առաւօտ երբ Գառնոյնէնց էջը ամեն ատենուան պէս զոաց, Լուսիե պաճօն հասկցաւ թէ առտուան ժամը վեցն էր: Լուսիե պաճօն փորձով գիտէր նաև, եւ երբ իշուն նոյն ժամուն զօալը վերջանար, անոր անմիջապէս պիտի հաջորդէր Գառնոյի ծերացած եւ տեղ-տեղ ալ կուրծքի փետուրները թափած դեղին կտուցով ալքորին աղոթքը՝ «Առաւօտ լուսոյն»» [2, 15]:

Ավանակի և աքաղաղի այս փոխասացությունից հետո Լուսիե պաճոն գործ ունի՝ Մշակ Սարգսի և Լուսիե պաճոյի չորրորդ և առաջին մանչ զավակի «ակոռահետիկը»-ատամ-նահատիկն է նշվելու, որին ներկա են լինելու բոլոր ազգականները, դուռ-դրացիները. «Էնսօ պաճօն, Թոփալ Թիւմէն, Կիւզէկէնց Մէլթօն, Նալպանտենց հարսը՝ Աղկիկ Խանըմը, Հեճի Մաման, Փռուշ պաճօն, Լաստիկցի Էդուշին պուլտցի կինը, կամ շարքաւած երեսուկ պատու-լուն պատճառաւ, բուն անունովը՝ Երեսը պոյալի Ժանթօ Խանըմը, Ոօգանենց Ալմաստը, Տէր Արսէնի կինը՝ գիրուկ երեցիկն ու աղջիկները, պայտար Խեւ Հենուշին կինը՝ Կլոր Էննէն, Խլինքոտ Ռոզինը, Խեւ Մարօն, Աղաճանենց Վերժին քոյրիկը, դեղագործ Քելտանի Հիւր-Հիւսին կինը՝ Էրշէլուս պաճօն, Սուրեանի Ֆէիիմէ Խանըմը, դրացիներէն Վերգօ պաճօն, օղորմած-հոգի Թումեսին կինը՝ Էստղիկ պաճօն, Իսփիրթօճի՝ ալքօլամու Մերգիսին կինը՝ Դեղրէր Մերգիտը, Հրէտանցի Խալոյի հարսը՝ Էրուս պաճօն, Լուսարար Էստուրին կինը՝ Վերգօն ու մայրը՝ Փոթորիկ պաճօն եւ վերջապէս՝ Ֆաթմա պիպին: Այս վերջինը Լուսիե պաճօյին մօտիկ ազգականն էր: Առաջին աշխարհամարտի այդ անիծեալ եւ մութ օրերուն, տեղահանութեան ու Մեծ Եղեռնի օրերուն Աննա անունով փոքր աղջիկ՝ ճամբայ ելլելէ յետոյ... Եւ ի՛նչ ճակատագիր. տարիներ վերջ երեսն կ'էլլէ այս անգամ որպէս մօլլայի մը կրօնամուկ քուրդ շէյխի մը կինը եւ անունով՝ Ֆաթմա: Ան սեւ չարշաֆի մը, սեւ լաչակի մը

ետին իր ճերմկած մազերուն եւ ճմրթկած՝ ակօսացած ճակտին, սեւ ճակատագրին մէջ թաղած էր իր մութ անցեալը: Տարին մէկ-երկու անգամ, Զատիկին կամ Գաղանդին կ'այցելէր իր ազգականներուն եւ տան մէջ մեծ խնամքի ու յարգանքի առարկայ կը դառնար» [2, 18-19]:

Որքէ մեկին չմոռանալով իրականացված այս մարդահամարն ասեւ սկզբունքային է հեղինակի՝ Մկրտիչ Մարկոսյանի համար. նրանք մարդիկ են, անհատականություններ, նրանք ժողովուրդ են: Այս սկզբունքը պարտադիր է նաև մյուս գործերում, մասնավորապես «Մեր Անունները» պատմվածքում, որտեղ հիշվում է «մեր այդ կողմերում» երեխաներին անվանակոչելու իրողությունը. «Երբ կարգը կու գար երեխայի անունը ճշդելու, մենք գիտէինք թէ, անիկա եթէ մանչ է, առհասարակ կ'անուանուէր Տիգրան» [1, 123]: Եվ հիշվում են Տիգրանները՝ Խեւ Տիգրէն, Նոնյենց Տիգրէն, Վանէսենց Տիգրէն, Տիգրայենց Տիգրէն..., «Տիգրաններէն վերջ երկրորդ կարգի վրայ Տիրանները կու գային: Թիւմէսենց Տիրէն, Էրկան Տիրէն, Բօթբեր Տիրէն, Յէխէկի Տիրէն, Հերատտ Տիրէն եւ ուրիշներ...» [1, 124], ապա հերթը գալիս է Խաչոսներին՝ Տեմըրճի Խաչօ (հեղինակի մորեղբայրն է), Դոնում զուլխ Խաչօ, Եւմէնճի Խաչօ (կոշկակար Խաչօ), Օսկերիչ Խաչօ, Քոռ եւ Քեչէլ Խաչօ, Խնամի Խաչօ... Չմոռանանք հայոց թաղամասի գլխավոր տատներ-մանկաբարձ Քուրե Մամային՝ «իւր կարմիրի ներկուած երկար մազերուն իւրաքանչիւր թելին չափ հայ մանուկներու ծնունդը իրականացուցած դասակը» [1, 125]:

Ինչպէս այդ կողմերում, այնպէս էլ այս կողմերում ատամնահատիկի արարողությունը համարյա նույնն է, և «կարգը եկած էր շատ աւելի կարեւոր միւս, բուն գործին» [2, 20]: «<...> Մերոքին առջեւը այս անգամ դրին զանազան առարկաներ՝ ինչպէս՝ մատիտ, գիրք, սանտր, հայելի, ոսկի ապարանջան, մանեակ, սղոց, գամ, ծեփիչ, պայտ, մկրատ, ունելի, մախաթ, ասեղ եւ դէռ ուրիշներ» [2, 21]:

Եվ Սերոբս ընտրում է ոսկի ապարանջաններից մեկը: Հյուրերի մեկնելուց հետո Լուսիե պաճոն սպասում է Գառնոյի էշի գոռալուն, որովհետև փորձով գիտի, որ նույն պահին իր ամուսին Մշակ Սարգիսն է փողոց հասնելու, իսկ ինքը նրան աչքալուսանք է տալու՝ երբ Սերոբը մեծանա, նրան ոսկերիչի մոտ աշկերտության են տալու: Պատմվածքը վերնագրված է «Օսկերիչ Սերոբը», ասեւ սա արդէն կատարված-ավարտված գործողության արդյունք է: Բայց ինչքա և սեր ու ժպիտ կա, քչով ապրելու համառություն:

Հրանտ Մաթնոսյանն իր մանկության տարիների մասին խոսելիս հաճախ է օգտագործում «ժամանակներն աղբատ էին» կապակցությունը: Մաթնոսյանն ու Մարկոսյանը համարյա տարեկիցներ են, և Արաքսի այս ու այն ափերին նույն աղբատ ժամանակի մէջ ապրած մարդկանց համար կարևոր է դառնում աղքատությունից, դառնությունից, մութից լույս կորզելու կարողությունը:

...Հրետանը հեղինակի նախնիների ծննդավայրն է, հեղինակի սովորած երրորդ բառը «պու»-ջրից և «փեփե»-հացից հետո: Հրետան հատուկ անունը սովորեցրել է հեղինակի Սարգիս հայրը, որովհետև «հայրս՝ Սգեն, մայրս՝ Խնօն, մեծ հայրս՝ Խալօն, մեծ մարիկներս՝ Սենեմն ու Մարօն, էմմէս՝ հօրաքոյրս Միրյէն, տայիս՝ մօրեղբայրս Խաչօն եւ Առաջին Աշխարհամարտի այդ անիծյալ օրերուն՝ Մեծ Եղեռնին կորսուած, միմիայն իրենց անուններով ինձի ծանօթ մեծ հայրս Մկրտիչը, հօրեղբայրներս Աբրահամը, Նշանն ու Խաչատուրը, բռնուն ալ հոն ծնած էին, հոն՝ Հրետանի մէջ, ու յետոյ ցիրուցան եղած... կամ մօրս ապրուածքով պերտան-պերտան եղած էին, այսինքն՝ կտոր-կտոր, հոս ու հոն... Յետոյ այդ կտորներէն միմիայն մէկ մասը ճակատագրական անիմաստ, լեղի եւ դառն խաղերէ, ինչ ինչ ելեւէջներէ յետոյ, այս անգամ ալ կրկին բողոն բողոն զիրար գտած էին տարիներ, տարիներ յետոյ... ու Հրետանը իրենց համար մնացած էր անուն մը որպէս մասունք, որպէս սուրբ...» [2, 27-28]: Հրետանը նաև դարձել է համեմատության կայուն եզր ամեն ինչի համար՝ թզի, թթի... Հրետան պապենի երկիրը դարձել է համբույր, կարոտ, դարձել է խաչքար...

«Իմ անունս...» պատմվածքը ընտանիքի համառման և կայացման պատմություն է:

«Հայրս՝ Սգեն, երբ «Էստծոյ օրէնքն է» կ'ըսէ ու կ'ամուսնանայ մօրս՝ Խնոյի հետ, կը ծնի Մարկոսեան գերդաստանի առաջին կամ ինչպէս մենք կ'ըսենք, Էղջընէկ զաւակը՝ աղջիկ մը» [2, 54]: Փորձառու պատավները շատ շուտ հասկանում են, որ աղջիկը գնացական է, այդ պատճառով էլ «Տէր պապան միւռնով, խաչով եւ Աւետարանով կ'օծէ երախան եւ անունը Էրեքսի՝ Արաքսի կը դնեն:

Եւ փորձառու պատաները մասնագիտութեան... կարգին նոյնպէս իրապէս մասնագէտ բժիշկներու տուած դեղերուն կու գայ կը յաջորդէ մեր Տէր Արսէնի աղօթքը՝ «հոգւոցն հանգուցելոց Քրիստոս Աստուած...» [2, 54-55]:

Հաջորդիկ «կը ծնի մանչ մը», տեղի է ունենում մկրտությունը, և, բնականաբար, անվան ընտրության խնդիր կա:

«Եւ երբ Տէր Արսէն կը հարցնէ.

– Ի՞նչ մըն եղնէ տղուն էնունը...

Կնքահօր ձայնին կու գայ, կը միանայ մեծ մօրս եւ հօրս միաբերան, զի՛լ ուժեղ ձայնը.

– Մկրտի՛չ...» [2, 56]:

Այս երեխան էլ գնացական է: «Առաջին ամառն ալ կ'առնէ կը տանի Մկրտիչը իր մեծ հօրը մօտ... անոր անյայտ գերեզմանին շուքին դրացի...»

Եւ Տէր Արսէն կրկին ձայնին է տուած. «Հոգւոցն...» [2, 56]:

«Իսկ մա՛յրս... Դորէն յոյ է անշուշտ. յուսահատիլ, վիատիլ կ'ըլլայ, կ'եղնէ՞, չէ, չ'ըլլար, չ'եղնի:

Այքերնիդ լոյս, այս անգամ ալ երախան տղայ է: Սա ինքնին արդէն լա՛ւ, շատ լա՛ւ նշան է» [2, 56-57]: Դորից մկրտության և անվան ընտրության խնդիր կա, սակայն «Տէր Արսէն ալ այդ օրերուն կրկին մեկնած է Խարբերոյ, ուրկէ պիտի անցնի ու երթայ մինչեւ Տէրիք՝ հայաշատ գիւղաքաղաք մը Մարտինի մօտ, ու ալ Աստուած գիտէ թէ երբ պիտի վերադառնայ Տիգրանակերտ: <...> Կը վագեն կ'երթան Հայունէ Խորէին: Սա՛՝ քելտանի վարդապետ մըն է <...> ան ալ քրիստոնէայ եկեղեցական մըն է, վերջապէս ան ալ խաչով, մոմով եւ Աւետարանով քանի որ կ'աղօթէ՝ ուրեմն նորէն ալ լաւ է առանց միւռնի թաղելէ» [2, 58]:

Անվան ընտրությունը վաղուց է կատարվել. «<...> մեծ հօրս անունը կրկին կու գայ երախայի մը անունով յարություն կ'առնէ, մեծ մայրս հպարտ է իր ամուսնով, հայրս՝ կրկին իր հօրը յիշատակովը երջանիկ» [2, 59]: (Նմանություն կամ նույնություն տեսնենք այս պատմության և Մ. Գալշոյանի Ջորի Միրոյի, իր Հարություն որդիների միջև):

Ու տեղ է գտնում «հօրը սակարկությունը... Աստուծոյ հետ: <...> Երբ Աստուած հայրիկն ալ մէկ նժարին մէջ կը դնէ վոխտ նորածինը, կամ մեր բարբառով՝ **լղպուրը**, եւ միւս նժարին ալ եօթը հատ ոչխար՝ կը նախընտրէ առնել ոչխարները...» (ՏԱ, 59):

Այս Մկրտիչն արդէն մնացական է:

«Այս Մկրտիչը եօթը ոչխարի փոխարէն ապրեցնելու իրաւունք շահեցաւ իր անբախտ եւ տարաբախտ մեծ հօրը յիշատակը...:

Գիտէ՞ք, այս Մկրտիչը ես եմ:

Մկրտիչէն յետոյ հայրս Սգեն եւ մայրս Խնօս միասնաբար աշխատեցան որպէսզի գրեն հայոց պատմութիւնը... Իրենց զաւակներուն անունովը: Աղջիկներուն տուին մեր թագուհի-ներուն անունները եւ մանչերուն ալ՝ թագաւորներուն:

Մեր եօթներորդ եղբայրն ալ Արտաշէս թագաւորի անունով մկրտելէ յետոյ երբ հասկցան, թէ մեր պատմութեան հազիւ թէ կ'էսը հասած են, եւ մեր Հայոց պատմութեան մնացյալ մասն ալ շա՛տ երկար է, «ալ հերիք է, ալ կը բաւէ» ըսին, իրենց աշխատանքին վերջ տուին...» [2, 60]:

Մեջքերված նախադասություններում և հատվածների մեջ հորդում է երգիծանքը: Մրանց հավելենք մեկ-երկուսը. «Ներս մտանք: Պօզանն ալ ձեռքը զըմպօ <քարյուղի

լապտեր» մը ունէր: Երբ Պօզանի զըմպոյին լոյսը, երբ իմ զըմպօյիս լոյսը եւ Պօզանին ճերմակ վարտիքին լոյսը իրար միացան, կ'ըսես արեւ կը ծագէր...» [1, 137], «Մեստանը երկու հատ պոչ ունէր... Կատունները երկու պոչ կ'ունենան՝ այո՛, մեր Մեստանը ունէր: Հատ մը երկար, դեղին իր սեփական պոչը, հատ մըն ալ գունտի պէս կլոր, սեւ մը: Այդ սեւ պոչը ես էի: Մեստանը ուր որ երթար՝ ես ալ ետեւէն կ'երթայի» [2, 12]:

Վերջաբանի փոխարէն: Մ. Մարկոսյանի պատմվածքներում միշտ ինչ-որ բան ավարտվում է, կամ մարդու (մարդկանց) երկրային կյանքը հասնում է հանգրվանին, սակայն նրանք մշտական ներկայություն են: Եվ ինքն իր ընտանիքն ու կորսված մանկությունն է փնտրում՝ մեկ անգամ ևս հաստատելով, որ սփյուռքահայ գրականությունը նախկին (կարոտի) ու ներկա (նահանջի) կորուստների արտահայտություն է, նաև 1915-ին կանգ առած ժամանակի ու հարափոփոխ տարածք «կեղծ հայրենիք»-սփյուռքի (ձևակերպումը Ն. Մարաֆյանինն է) գրականություն: Մկրտիչ Մարկոսյանի գրականության մեջ նախնիների ծննդավայր Հրետանը փոխվում է Տիգրանակերտի Խանչեբեք (Գյավուր թաղ) թաղամասի, ապա «եկած է Ստամբուլ», ապա հասել է անդենական աշխարհ՝ Պուսի Շիշլի թաղամասի հայկական գերեզմանատուն: Այսօր ինքը ներկաների մեջ չէ. ինքը հավերժական ներկայություն է, Հակոբ Մնձուրուն հաջորդածը և վերջինը: Վերջինը լինելն էլ մեծ պատասխանատվություն է: Այլևս չկան նրա կերպարները ձևավորած մարդիկ. նրանք որպես կերպար ապրում են գրի պայմանականության մեջ, բայց կան այդ մարդկանց հաջորդած սերունդները: Բայց ո՞րն է այս մարդկանց հայ մնալու առեղծվածը: Մի կարգին լեզու չունեն. խոսում են բարբառով, որ կամաց-կամաց ծվատվում է թրքերենի, քրդերենի, զազայերենի ներգործությունից, մի կարգին պատարագ չունեն. եկեղեցին հանդիպավայր է, ինչ-որ խորհրդավորի հետ հաղորդակցվելու ասպարեզ. մեր օրերում «<...> եկեղեցական արարողություններ ալ տեղի կ'ունենան տաղաւար տօներուն եւ բացառիկ այլ առիթներով» [2, 189]: Եկեղեցում գլխավոր գործող անձը «Հէյր Էբրեհէմ» է, որն էլ կերպափոխվում է այլուր Աստծո՝ հացի, կամ էլ վերափոխվում է անձրևի: Այս մարդիկ լույսի պաշտամունք ունեն, մի կարգին կենցաղավարություն չունեն. աղքատ ժամանակը դրա հնարավորությունը չի տալիս, բայց ունեն ապրելու համառություն և վերարտադրվելու բնագոյ, ունեն ծննդավայրի և արմատների հիշողություն, ունեն ոգի, այնինչ «Այստեղ գիրքը փակւած է վաղուց: Երեսի վրայ թողած: Դարձրած: Ալիքը խուժել է քարերի տակ: Ոչինչ չի ծփում: Ոչ ոք չի կանչում» [5, 249]: Այդ թաքնված, ներս գցած ոգին արթնացնելու պահանջը կա, այդ ոգին արթնանալու ցանկություն ունի, այլապես քնով կանցնի ու կմարի, այդ ոգին արթուն պահելու համար կանչող Ձեռով Հովան է պետք:

...Սոցցանցերն ակնարկում են, թե այսօր Դիարբեքիքում ապրում են սոսկ 10 հայ ընտանիքներ: Նախ կասկածելի է թիվը, ապա գավառաբնակներից շատերը մեկնել են Պոլիս՝ «հեղրեն սորվելու» և հայերեն ապրելու, մի մասն ապրում է մեկուսացած և՛ հայերից, և՛ այլազգիներից (նկատի ունենք իսլամացած հայերին և հավատքի խնդիրը չկարևորողներին), մի մասն աստիճանաբար ձուլվում է քրդա-, թրքա-, զազայական միջավայրին, և հարց է ծնվում՝ ո՞ր գեղը, ոգին կամ լեզուն է հաղթելու գլոբալացման վաղվա օրով: Եվ էլի հարց է ծնվում՝ «կ'անգիտանա՞նք» նրանց՝ Արաքսի այն ու այս ափերին անտեր մնացածներին՝ տիգրանակերտցիներին, մալաթիացիներին, ակնեցիներին, արցախցիներին, թե՛ միայն հավատավոր խենթեր են գգալու տեր լինելու պատասխանատվությունը: Իսկ այս պահին նրանք աստ ու անդ, նաև ներկայիս Թուրքիայի ամենատարբեր բնակավայրերում ապրում են սպասումով, որ իրենց կհիշեն:

Գրականություն

1. Մկրտիչ Մարկոսյան, Մեր այդ կողմերը, «Արաս» հրատարակչություն, Է տպագրություն, Ստանպոլ, 2023:
2. Մկրտիչ Մարկոսյան, Տիգրիսի ափերեն, «Արաս» հրատարակչություն, Գ տպագրություն, Ստանպոլ, 2023:
3. «Հառաջ»-միտք և արուեստ, Փարիզ, 1988, 63-րդ տարի, 5 յունիս, կիրակի, թիւ 128 (16765):
4. Մնձուրի Հ., Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
5. Զարեան Կ., Անցորդը եւ իր ճամբան, Երևան, «Սարգիս Խաչէնց. Փրիթինֆո», 2010:

Непоколебимость стремления оставаться армянами в тех наших краях (сборники Мкртича Маркосяна «Эти наши края» и «На берегах Тигра»)

Пилоян Валерий

Резюме

Ключевые слова: *выжившие после геноцида, вера, обычаи, бурление памяти и любви, наследование, финал, семейная версия армянской истории, сатира*

Даже спустя более ста лет после геноцида мы должны признать, что в Западной Армении продолжают жить армяне, и только лишь верующие безумцы ощущают ответственность быть там хозяевами. Книжки Мкртича Маркосяна «Эти наши края» и «На берегах Тигра» подтверждают существование этих людей и сохраняют о них память – это и есть народ. Этот принцип обязателен во всех делах. Сегодня Мкртич Маркосян – последний представитель «литературы тоски» – жанра, обремененного особой ответственностью. Прототипов его героев, живших в реальности и переосмысленных в художественном пространстве, больше не существует, но на смену им пришли новые поколения. В чем загадка того, что они продолжают оставаться армянами? Чтобы этого не случилось, нужен новый Ован-Горлан. Без него многие будут жить изолированно как от армян, так и от неармян (речь идет об исламизированных армянах и тех, кому безразличен вопрос веры), некоторые ассимилируются, и здесь возникает вопрос: какой ген, какой дух, какой язык победит в эпоху глобализации? Здесь возникает и другой вопрос: должны ли мы пренебрегать теми, кто чувствует себя покинутым по обе стороны Аракса: жителей Тигранакерта, Малатии, Акны, Арцаха? Или ответственность ощутят лишь верующие безумцы, вновь возомнившие себя единственными хозяевами? А сейчас они живут в ожидании того, что о них вспомнят.

The Persistence of Keeping the Armenian Identity in Our Regions (Mkrtich Markosyan's Collections "Our Regions" and "From the Banks of the Tigris")

Piloyan Valeri

Summary

Key words: *survivors of the genocide, faith, customs, the fermentation of memory and love, inheritance, ending, family version of Armenian history, satire*

Even after the genocide that took place a hundred or more years ago, we must acknowledge that Armenians still live in Western Armenia, and only the religious fanatics felt the responsibility of being the owner. Mkrtich Markosyan's books "Our Regions" and "From the Banks of the Tigris" confirm their existence and remember them: they are a people. This principle is essential in all his works. Today, M. Markosyan is the last representative of the "literature of longing," a genre burdened with a special responsibility. His characters' prototypes, who live as characters in the conventions of writing, no longer exist but generations of those people that followed are still here. What is the mystery of these people remaining Armenian? To keep that spirit alive, a calling voice like that of Hovan's is needed; otherwise, some of them live isolated from both Armenians and foreigners (referring to Islamized Armenians and those who disregard faith), some assimilate, and the question arises: which gene, spirit, or language will prevail in the face of globalization tomorrow? And another question emerges: should we ignore them – those abandoned on both banks of the Arax, the people of Tigranakert, Malatya, Akni, Artsakh – or will only the religious fanatics feel the responsibility of belonging? At this moment, they live in the hope that they will be remembered.

Ներկայացվել է 15. 05. 2025 թ.

Գրախոսվել է 30. 05. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИОВЕДЕНИЕ

HISTORICAL STUDIES

Բազելի Ավետարանական Քարոզչական ընկերության հայ քարոզիչ Աբրահամ Ամիրխանյանի հոգևոր և կրթական գործունեությունը

Էդիթյան Հայկ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-97>

Հանգուցային բառեր. *հայկական մամուլ, դպրոցներ, բողոքական, Շամախի, Թիֆլիս, քարոզչություն, «Արձագանք», «Մշակ»*

Նախաբան

1837 թ. վերջերին Բազելի Ավետարանական Քարոզչական ընկերության քարոզիչները թեև արդեն լքել էին Շուշին, այդուհանդերձ Քարոզչական ընկերության ազդեցությունը շարունակում էր երևալ արդեն իսկ ծավալված ավետարանական շարժման ընթացքի վրա մասնավորապես բանիմաց և գրագետ քարոզիչ-ուսուցիչներ պատրաստելու գործընթացի մեջ: Տարբեր տարիների ընտրվում էին հայ երիտասարդներ, ովքեր ուղարկվում էին Շվեյցարիայի Բազել քաղաք՝ Քարոզչական ընկերության դպրոցում համապատասխան կրթություն ստանալու և քարոզչական գործունեության պատրաստվելու համար, որոնց կենսական ծախսերը հոգում էր Բազելի Ավետարանական Քարոզչական ընկերությունը: Բազել ուղարկված հայ երիտասարդների առաջին խմբի մեջ հիշատակվում են Իսրայել Ղուլիսանյանը, Մովսես Ազնավուրյանը, Էմմանուել Փիրբուղայանը, ով Շամախու քահանաներից մեկի որդին էր [8, 96] և Հովակիմ Հովհաննիսյանը, ով հետագայում՝ 1866 թ., ցանկություն հայտնեց կրկին վերադառնալ Հայ Եկեղեցու գիրկը [41]: Բազելում ուսանած երիտասարդների մեկ այլ խումբ ներկայացնում են Գրիգոր Բաղդասարյանը, Կարապետ Ղազարոսյանը, Կարապետ Թումայանը և Հակոբ Ապուհայայանը [12, 356]: Բազելում կրթություն ստացած հայ երիտասարդների շարքում առանձնանում է շուշեցի Աբրահամ Ամիրխանյանը, ով որպես քարոզիչ, ուսուցիչ, թարգմանիչ և հասարակական գործիչ, տարբեր տարիների ընթացքում ակտիվ գործունեություն է ծավալել ինչպես Շուշիում և Շամախիում, այնպես էլ Թիֆլիսում, Թավրիզում, եվրոպական տարբեր երկրներում և Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններում:

Ա. Ամիրխանյանի կյանքի և գործունեության մասին հիշատակումները հիմնականում վերագրվում են 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ մամուլին, որոնցից «Մշակին» երկար տարիներ նա նաև թղթակցել է: Կենսագրական կարևոր տվյալներ է հաղորդում Վեր. Կ. Ատանալեանն իր աշխատության մեջ [1]: Բովանդակալից տեղեկությունների հանդիպում ենք նաև Հ. Ղուկասեանցի [8], ինչպես նաև Ա. Ղազարյանի և Ռ. Լևոնյանի համատեղ աշխատության մեջ [6]: Տեղեկություններ կան պահպանված նաև արխիվային նյութերի մեջ, որոնք վերաբերում են արևելահայերի շրջանում նրա կողմից «յուրօրենականություն տարածելու գործին», որոնք արտացոլվել են թեև ի առաջնորդներից Էջմիածնի սինոդին և հակառակ ուղղությամբ գրված մեղադրական գրությունների մեջ [42, 43]: Ա. Ամիրխանյանի անձի և գործունեության վերաբերյալ տրվել են խիստ հակասական և ծայրահեղ գնահատականներ ու որակումներ, որոնք բրեմն թվում են անհիմն և չափազանցված, որոնք առավելապես կապված են նրա՝ ավետարանական գաղափարների կրող և տարածող լինելու փաստի հետ: Այսպես օրինակ, «Նոր-Դարի» հոդվածագիր Սպանդար Սպանդարյանը, ով նաև թերթի խմբագիրն էր, նշում է, որ Շուշիում Ա. Ամիրխանյանի գործունեության հետևանքով տեղի հայերի մի մասը ծաղրում է եկեղեցուն, նրա խորհուրդներն ու շարականները՝ հավելելով, որ նրանք տգետ և մոլորված մարդիկ են, ովքեր հոգեբարության գոհ են [37, 1]: «Պսակն» իր հերթին գրում է, որ Ա. Ամիրխանյանը «հայառուս ավետարանական է, խաղաղ ընտանիքների սերն ու միությունը խլող գող է, ձեզ իր վարպետահիւս բառերով դիպեղով մի կախարդ է»

[38, 2]: Նման բացասական բնութագրումների կողքին նույն ժամանակահատվածում տրվել են նաև հակառակ որակումներ Ա. Ամիրխանյանի անձի և գործունեության վերաբերյալ: «Մշակի» հերթական համարներում կարդում ենք, որ միայն Սուրբ Գրքի թարգմանությունը հրեական և հունական բնագրերից բավական կլիներ հավերժացնել Ա. Ամիրխանյանի անունը, իսկ նրա՝ հայ ազգի նկատմամբ սիրուց դրդված գրած հոդվածները, ազգի միասնության և օգտի համար են, որ Ա. Ամիրխանյանը բացառիկ աշխատասեր, կրթված անձնավորություն է, ով մեծ ներդրում ունի աստվածաբանության, մանկավարժության և հայկական բանասիրության բնագավառներում [33, 2; 35, 3]: Մեկ այլ աշխատության մեջ Ա. Ամիրխանյանը ներկայացվում է որպես լեզվագետ-գիտնական, ով տիրապետում էր բազմաթիվ լեզուների, կատարել է ոչ միայն Սուրբ Գրքի, այլև մի շարք այլ գրքերի հայերեն թարգմանություններ [3, 81]: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ չնայած տրված բացասական և դրական գնահատականներն ուղղված են Ա. Ամիրխանյանին, այդուհանդերձ դրանք շոշափում են վերջինիս գործունեության ոլորտները առանձին վերցրած: Այսպես, «Նոր Դարը» և «Ոսակը» հիշատակում են Ա. Ամիրխանյանի հոգևոր գործունեության հետևանքները, որակելով նրան որպես մոլորեցնող, հոգեռս, գող և կախարդ, իսկ անհա «Մշակը» և Տիգրան Խրյուբեանը հիշատակում են Ա. Ամիրխանյանի թարգմանչական, հասարակական և կրթական գործունեությունը՝ ներկայացնելով նրան որպես աշխատասեր և կրթված անձնավորություն, գիտնական-լեզվաբան:

Նոդվածի նպատակն է ուսումնասիրել Ա. Ամիրխանյանի հոգևոր և կրթական գործունեությունը, դիտարկել տրված դրական և բացասական որակումներն ու գնահատականները, քաջահայտել գործունեության իրական նպատակներն ու շարժառիթները, ներկայացնել արդյունքները:

Նոդվածի թեման արդիական է՝ հաշվի առնելով, որ ներկայումս կան գործող ավետարանական համայնքներ Հայաստանի Հանրապետությունում, որոնց նախապատմությունը սկիզբ է առնում 19-րդ դարի երկրորդ կեսից սկսված ավետարանական շարժմամբ, որի անվանի գործիչներից մեկը Ա. Ամիրխանյանն է, և որի ուսումնասիրումը լույս է սփռում նաև այսօրվա ավետարանական համայնքների գործունեության սկզբունքների, ոլորտների և նպատակների վրա:

Ժամանակագրական հաջորդականության պահպանմամբ ուսումնասիրվել, վերլուծության է ենթարկվել և գնահատական է տրվել Ա. Ամիրխանյանի հոգևոր և կրթական գործունեությանը որպես Բազելի Քարգչական ընկերության քարոզիչ՝ հայ և օտարալեզու աղյուրների ուսումնասիրության, դրանց դիտարկումների, վերլուծությունների և համեմատությունների հիման վրա, որը կարևոր արժեք կարող է ունենալ 19-րդ դարի երկրորդ կեսի ավետարանական շարժման ուսումնասիրության համատեքստում:

Արքահամ Ամիրխանյանի կյանքն ու ուսումնառությունը

Ա. Ամիրխանյանը ծնվել է 1838 թ. նոյեմբերի 30-ին Շուշիում: Նա հայտնի ավետարանական գործիչ Միքայիլ Ֆարուխի (Հարություն Գալստյան) որդին է [1, 193], ով, ծնված լինելով Շուշվա գավառի Թաղուտ գյուղում, ժուս-պարսկական առաջին պատերազմի ժամանակ (1804-1813 թթ.) պարսկական զորքերի կողմից գերի էր տարվել, ընդունել էր մահմեդականություն, իսկ 20 տարեկանում դարձել էր կուսակալի քարտուղարը Թեհրանում: Տիրապետել է պարսկերեն և արաբերեն լեզուներին [8, 12; 35]: Արշակ Ալպոյաճեանը հայտնում է, որ 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո [17, 214-222] Միքայիլ Ֆարուխին հաջողվել է գերությունից վերադառնալ Շուշի, ընդունել քրիստոնեությունը, որոշ ժամանակ անց սերտ համագործակցություն է հաստատել Բազելյան քարոզիչների հետ, ովքեր այդ շրջանում սկսել էին իրենց գործունեությունը Շուշիում [25, 1]: Ակներն է, որ Ա. Ամիրխանյանը դեռևս վաղ տարիքից որոշակի տեղեկություններ է ունեցել ավետարանական գաղափարների, Շուշիում հաստատված քարոզիչների և նրանց գործունեության

վերաբերյալ իր հոր միջոցով, ով մինչև 1855 թ. զբաղվել էր որդու՝ Ա. Ամիրխանյանի խնամքով և կրթությամբ:

1856 թ. վերջերին Բազելի Ավետարանական Քարոզչական ընկերության քարոզիչ Ֆելիցիան Ջարեմբային հաջողվում է Պետերբուրգում ստանալ Անդրկովկաս մուտք գործելու անցաթուղթ՝ նախկինում իրենց հետ գործակցած մարդկանց հետ հանդիպելու և անձամբ շնորհակալություն հայտնելու պատրվակով, ովքեր աջակցել էին քարոզիչներին՝ Ռուսական կայսրության սահմաններում իրենց գործունեությունն անխոչընդոտ իրականացնելու հարցում: 1857 թ. կեսերին Գանձակում տեղի է ունենում Ա. Ամիրխանյանի և Ֆ. Ջարեմբայի առաջին հանդիպումը [8, 127]: Այս ընթացքում 19-ամյա Ա. Ամիրխանյանը հասցրել էր ուսում ստանալ հայկական և ռուսական վարժարաններում, ուներ լեզվագիտական մեծ կարողություններ՝ տիրապետում էր ընդհանուր առմամբ 16 լեզուների [1, 193; 27]: Գանձակում՝ Ջարեմբայի և Ամիրխանյանի միջև հանդիպումը բեկումնային նշանակություն ունեցավ վերջինիս կյանքում:

1858 թ. սկզբներին Ֆ. Ջարեմբայի ջանքերով և հանձնարարականով Ա. Ամիրխանյանն արդեն Ռևելում էր (Տալլին), որտեղ անցկացրել է շուրջ 8 ամիս՝ վերապատրաստվելով գերմանացի ուսուցչի մոտ, որից հետո ուղարկվել է ուսանելու Բազելի Ավետարանական Քարոզչական ընկերության դպրոցում, որտեղ ուսման տևողությունը 6 տարի էր [6, 136]: Գերմանացի ուսուցչի մոտ վերապատրաստումն իրենից ենթադրում է գերմաներեն լեզվի ուսուցում՝ Քարոզչական ընկերության դպրոցում ուսանելու համար, որտեղ ուսուցումը կատարվում էր գերմաներեն: Ուշադրություն դարձնելով Բազելյան քարոզիչներից Կարլ Պֆանդերի կյանքն ու գործունեությունը ներկայացնող աշխատության մեջ Բազելի Քարոզչական ընկերության դպրոցում դասավանդվող առարկաներին՝ աստվածաբանություն, միսիոներական գործունեության համար անհրաժեշտ լեզուներ ըստ այն տարածաշրջանի, որտեղ պետք է ծավալվեին իրենց միսիոներական գործունեությունը, այսպես կոչված աստվածաշնչյան լեզուներ՝ եբրայերեն և հունարեն՝ բնագիր Աստվածաշունչ կարդալու կարողություն ունենալու համար, ինչպես նաև հասարակության առջև ելույթ ունենալու հմտություն, որն իրենից ներկայացնում է հռետորական արվեստ [15, 5], կարող ենք եզրահանգել, որ Ա. Ամիրխանյանը նա Բազելում անցել է այս նույն պատրաստությունը քարոզչական գործի համար, որը հատուկ էր նաև ընկերության մյուս քարոզիչներին: Քարոզչական դպրոցն ավարտելուց հետո Ա. Ամիրխանյանն արդեն որպես Բազելի Ավետարանական Քարոզչական ընկերության քարոզիչներից մեկը, հանձն էր առել գործելու այն վայրերում, որտեղ կգործուղվեր Քարոզչական ընկերության կողմից, ինչպես մյուս քարոզիչների դեպքում էր:

Արախան Ամիրխանյանի հոգևոր և կրթական գործունեության մեկնարկը

Բազելում ուսումն ավարտելուց հետո Ա. Ամիրխանյանը վերադարձել է Շուշի, որտեղ 1865-1867 թթ. ընթացքում հիմնականում զբաղվել է ուսուցչությամբ՝ իր կողմից հիմնած դպրոցում: Ա. Ամիրխանյանի դպրոցն ու ուսուցչական գործը երկար կյանք չունեցան Շուշիում՝ հնչող բողոքների ու ամբաստանությունների պատճառով, որոնք կապված էին Բազելում նրա ուսումնառության, քարոզիչների հետ ունեցած սերտ հարաբերությունների, ինչպես նաև այնտեղ բողոքականությունը քարոզելու հետ, որոնք պատճառ հանդիսացան, որ շուրջ երկու տարվա գործունեությունից հետո Ա. Ամիրխանյանը թողնի Շուշին և հաստատվի Շամախիում, որտեղ ևս լայն թափով պայքար էր մղվում ավետարանականության և ավետարանական գործիչների դեմ: Այս ընթացքում Շամախիի ավետարանականների կյանքում տեղի էին ունեցել շրջադարձային իրադարձություններ, որոնց սկիզբը դրել էր բողոքականության դեմ պայքարի և այն արմատախիլ անելու ջատագով Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի (1858-1865 թթ.) 1861 թ. բանադրանքի կոնդակը, որով արգելվել էր բողոքականների մուտքը եկեղեցի և մասնակցությունը եկեղեցական խորհուրդներին [12, 230], իսկ 1863 թ. եկեղեցական իշխանությունների ջանքերով փակվել էր Շամախու ավետա-

քանականների առաջնորդ Սարգիս Համբարձումյանի հիմնած ուսումնարանը [11, 286], որին հաջորդել էր 1866 թ. օգոստոսի 22-ի Ռուսական կառավարության թույլտվությունը, ըստ որի՝ Շամախու ավետարանականներն իրենց ցանկությամբ, իրենց ընտանիքների հետ միասին պաշտոնապես մտել էին Մոսկվայի Ավետարանական-Լյութերական կոնսիստորիայի կազմի մեջ [40]:

1867 թ. սկզբին Ա. Ամիրխանյանը, հաստատվելով Շամախիում, զբաղվել է քարոզչությամբ և ուսուցչությամբ: Կ. Ատանայանը հաղորդում է, որ «ուսման ճոխ պաշարով ու մեղմ բնատրոյութեամբ» նա կարողանում էր իր կողմը գրավել մարդկանց, որոնց մի մասը, բողոքական չլինելով հանդերձ, այցելում էին նրա քարոզներին [1, 193], որից հետևում է, որ Ա. Ամիրխանյանի՝ Շամախի ժամանելուց հետո տեղի ավետարանական համայնքի անդամների թիվը աճել էր, այդ թվում նաև Մայր եկեղեցու հետևորդների հաշվին, որը բնականաբար ուժեղացրել էր եկեղեցու կողմից առկա դժգոհություններն ու մեղադրանքները՝ ուղղված Ա. Ամիրխանյանի և ավետարանականների դեմ: Որոշ ժամանակ անց տարաձայնություններ են առաջացել նաև համայնքի ներսում՝ մասնավորապես Ս. Համբարձումյանի և Ա. Ամիրխանյանի միջև, որն, ըստ Հ. Ղուկասյանցի, պայմանավորված է եղել Շամախու ավետարանականների շրջանում Ա. Ամիրխանյանի հեղինակության աճով, ի հակադրություն նրանց առաջնորդ Ս. Համբարձումյանի [8, 131]: Այսպիսով, առաջացած դժգոհություններն ու արտաքին ճնշումները, ինչպես նաև ներքին հակասությունները համայնքի ներսում, պատճառ են հանդիսացել 1868 թ. վերջերին Ա. Ամիրխանյանի՝ Շամախիից հեռանալու համար:

«Ավետաբեր» թերթի 1913 թ. համարներից մեկում տպագրված «Վեր. Աբրահամ Պեկ Ամիրխանեանց» հոդվածում տեղ գտած կենսագրական տվյալների մեջ հանդիպում ենք, որ Շամախին լքելուց հետո Ամիրխանյանը հաստատվել է Կ. Պոլսում, որտեղ անցկացրել է շուրջ 5 տարի՝ զբաղվելով ուսուցչական և քարոզչական գործունեությամբ, որից հետո Բազելի Ավետարանական Քարոզչական Ընկերության առաջարկով 1873 թ. իր ընտանիքի հետ միասին Կ. Պոլսից տեղափոխվել է Պարսկաստանի Թավրիզ քաղաք՝ շարունակելով կրթական գործունեությունն ու հոգևոր քարոզչությունը [24, 572]: Կ. Պոլսում Խրիմյան Հայրիկի հրավերով, ով այդ ժամանակ եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարքը, Ա. Ամիրխանյանն աշխատել է նաև Հայ Առաքելական եկեղեցուն պատկանող դպրոցում՝ որպես տնօրեն [6, 136], իսկ Կ. Պոլսի Խասգյուր թաղամասի Նուբար Շահնագարյան վարժարանում¹ որպես դասախոս Ա. Ամիրխանյանը նաև դասավանդել է Աշխարհագրություն և Բնական գիտություններ, ինչպես նաև թղթակցել է տեղում լույս տեսնող «Մասիս» շաբաթաթերթին²: 1872 թ. նախ Պեշկյթաշի Հայկական ընկերության աջակցությամբ Ա. Ամիրխանյանը տպագրել է Դասագիրքը, ապա նույն թվականին Խասգյուրում բացել է նաև երկսեռ վարժարան, որը սակայն կարճ կյանք է ունեցել [25, 1]: Թեև Կ. Պոլսում և Թավրիզում Ա. Ամիրխանյանի գործունեությունն ավելի շատ վերաբերվել է կրթական ոլորտին, այնուամենայնիվ մեջբերելով Բաֆֆու այն միտքը, որ «Եթե միսիոնարին հանձնում են հայոց դպրոցների տեսչությունը, հարկավ, այն դպրոցները ծառայեցնելու է յուր նպատակներին» [13, 218], որը գրել է Կ. Պոլսում ապրելու տարիների ակնհաստես լինելով տեղի միսիոներների գործունեությանը, կարող ենք եզրակացնել, որ վերը նշված վայրերում Ա. Ամիրխանյանը չի սահմանափակվել միայն կրթական գործունեությամբ:

¹ Վարժարանը գործել է 1866-1876 թթ., սկզբնական շրջանում կոչվել է Նուբար Շահնագարյան ժառանգավորաց գիշերօթիկ վարժարան, տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, 1 հատոր, «Հայկական Հանրագիտարան» հրատ., 2003, էջ 187:

² Լույս է տեսել 1852-1908 թթ., մինչև 1884 թ. թերթի խմբագիրը եղել է Կարապետ Ությունյանը, տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր», ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Գահիրե, 2006, էջ 231:

Աբրահամ Ամիրխանյանի գործունեության շրջանը Թիֆլիսում

Ա. Ամիրխանյանի առավել բեղուն և երկարատև գործունեության շրջանն ընդգրկում է Թիֆլիսում նրա անցկացրած շուրջ 15 տարիները, որոնք համընկել են այն ժամանակահատվածի հետ, երբ ակտիվ գործընթացներ էին տեղի ունենում տարբեր վայրերում գոյություն ունեցող արևելահայ ավետարանական խմբերի միավորման ուղղությամբ: Այդ գործընթացների համար նպաստավոր պայմաններ էին առաջացել հատկապես Ամերիկյան (*American Board of Commissioners for Foreign Missions*) և Բրիտանական (*British and Foreign Bible Society*) Աստվածաշնչյան ընկերությունների ակտիվ գործունեության հետևանքով, որոնք արդեն տարբեր վայրերում ունեին իրենց հայ գործիչները, ովքեր էլ, իրենց հերթին շրջելով արևելահայ տարբեր շրջաններում, ջանում էին միավորել ավետարանական հայերին մեկ ընդհանուր խմբի մեջ և կազմել առանձին եկեղեցի [7, 31]:

1804 թ. մարտի 7-ին Լոնդոնում իմանադրված Բրիտանական և Օտարերկրյա Աստվածաշնչյան ընկերությունը, որի նպատակը Աստվածաշնչի թարգմանությունն ու տարածումն էր [16, 17] (1880-ական թթ. դրությամբ Ընկերությունը թարգմանել էր Աստվածաշունչը 196 լեզուներով և բարբառներով), Ալ. Երիցյանի «Բիբլեական ընկերությունը և նորա հայ գործակատարները» հոդվածից տեղեկանում ենք, որ Անդրկովկասի իր բաժանմունքներից մեկը հաստատել էր Թիֆլիսում և սկսել էր ակտիվ գործունեություն ծավալել իր ներկայացուցիչների միջոցով, կապեր էր հաստատել Ա. Ամիրխանյանի հետ [19, 232], որոնց առաջին համագործակցությունը պայմանավորված է եղել Աստվածաշնչի թարգմանության գործով: Ընկերության ներկայացուցիչ Վաթթը, Թիֆլիսում հանդիպելով Ա. Ամիրխանյանի հետ, տեղեկանալով նրա լեզվագիտական կարողություններին, առաջարկել է նրան Աստվածաշնչի արևելահայ թարգմանության գործը երբայական և հունական բնագրերից [24, 572; 9, 33]: 1876 թ. Ա. Ամիրխանյանը նախաձեռնել է արևելահայերենով Աստվածաշնչի ամբողջական թարգմանությունը՝ ձեռքի տակ ունենալով հայատառ թուրքերեն և արևմտահայերեն Աստվածաշնչեր, օգտագործելով նաև եբրայերեն ու հունարեն բնագրերը: 1881 թ. Ա. Ամիրխանյանն ավարտել է թարգմանության գործընթացը, որը հրատարակվել է 1883 թ. Բրիտանական Աստվածաշնչյան ընկերության կողմից Լոնդոնում, ինչպես նաև Կ. Պոլսում [3, 81]: Ամիրխանյանի կողմից Աստվածաշնչի թարգմանության գործում Տ. Նյուլոյանը թեև հիշատակում է նաև բազելցի քարոզիչների կողմից թարգմանված Աստվածաշունչը [3, 81], այդուհանդերձ Ս. Պետոյանը նշում է, որ քարոզիչների կողմից թարգմանվել է ոչ թե ամբողջական Աստվածաշունչը, այլ առանձին Նոր Կտակարանը՝ Ավգուստ Դիտրիխի կողմից, ով արևմտահայերեն աշխարհաբարից այն փոխադրել էր արևելահայերենի [10, 302-316], որից էլ օգտվել է Ա. Ամիրխանյանը: Թարգմանչական գործունեության մեջ առանձնանում է նաև 1879 թ. Ա. Ամիրխանյանի կողմից գերմաներեն թարգմանված «Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւնը» վերնագրով Գրիգոր Արծրունու դասախոսությունը, որը տպագրվել է Սանկտ Պետերբուրգում՝ նպատակ ունենալով բարձրաձայնել և աշխարհին ցույց տալ արևմտահայերի ծանր դրությունը թուրքական լծի տակ [28, 2]: Հետագա տարիներին ևս Ա. Ամիրխանյանը պարբերաբար բարձրաձայնել է արևմտահայերի դեմ ահազանցող հալածանքներին և վրա հասած տվաճարության դեպքերի մասին՝ ձեռնարկելով նաև գործընթացներ առաջացած կարիքներին հաղորդակից լինելու և դրանք հնարավորինս բավարարելու նպատակով: Մասնավորապես Վանի սովյալներին օժանդակելու համար Ա. Ամիրխանյանը «Մշակ» թերթի միջոցով առաջարկել էր Կ. Պոլսից բացի օգնության կոմիտեներ բացել նաև Թիֆլիսում և Վանում, ունենալ գործակատար-սուրհանդակներ, որոնք զբաղված կլինեին ճշգրիտ տեղեկություններ փոխանցելով, դրամահավաքներ և այլ տեսակի հանգանակություններ կազմակերպելով, որոնք պետք է համախմբեին հայ վաճառականներին և հասարակության մյուս շերտերին՝ միահամուռ կերպով դիմագրավելու և հաղթահարելու վրա հասած ղեկարությունները [30, 1]:

Վերադառնալով Ա. Ամիրխանյանի հոգևոր գործունեությանը՝ կարևոր է նշել, որ նա

հանդիսանում է Թիֆլիսում կազմավորված Հայ Ավետարանական եկեղեցու հիմնադիրը, որտեղ նրա հայ գործակիցներից առանձնացել է Վերապատվելի Մարգար Տեր-Ասատուրյանը, ով ևս բավականին երկար ժամանակ եղել է Թիֆլիսում հիմնադրված եկեղեցու առաջնորդը [7, 32], 1886-1888 թթ. ուսանած լինելով շվեդ բողոքականների դպրոցում, ունենալով Շվեդական քարոզչական ընկերության հովանավորությունը [2, 75]: Ա. Ամիրխանյանը Թիֆլիսում քարոզել է հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով, անցկացրել է աղոթաժողովներ, գուգահեռաբար մի քանի տարի շարունակ ուսուցչություն անելով նաև Թիֆլիսում գործող Գերմանական վարժարանում [24, 572]: «Մշակի» համարներից մեկում Գրիգոր Արծրունին, անդրադառնալով Թիֆլիսի Ավետարանական եկեղեցու տոնին, որը տեղի է ունեցել 1879 թ. դեկտեմբերի 9-ին Վոդոնիի տան դահլիճում, նշում է, որ այնտեղ մեծ մասը եղել են ռուս ավետարանականներ, ինչպես նաև գերմանացի, հայ, վրացի, ասորի և թուրք ավետարանականներ: Նշվում է նաև, որ միջոցառմանը ներկա է եղել նաև մեկ ռուս ուղղափառ քահանա, մի քանի այլ ռուս ուղղափառներ, Հայ Առաքելական եկեղեցու որոշ հայ երիտասարդներ և ամերիկացի մեկ միսիոներ [29, 1]: 1880-ական թթ. կեսերից կրոնական հողի վրա Անդրկովկասի մի շարք շրջաններում սկսված հալածանքներից ու ձեռքարկություններից անմասն չեն մնացել նաև Թիֆլիսի ավետարանական գործիչները՝ այդ թվում Ա. Ամիրխանյանը: «Աւետաբերում» տպագրված նամակի մեջ Գ. Բաղդասարյանը, ով ներկայանում է որպես Ա. Ամիրխանյանի բարեկամ, ում նաև հիշատակել էինք Բագելում ուսանած երիտասարդների շարքում, մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ա. Ամիրխանյանի ձեռքարկական և աքսորի մասին, նշելով, որ 1887 թ. ապրիլի 8-ի առավոտյան ռուս քարոզիչ Վ. Պավլովը Ա. Ամիրխանյանին հայտնում է, որ իրենք հրավիրվել են ոստիկանություն, որտեղ վնասակար ճանաչելով նրանց հոգևոր գործունեությունը, կայացվում է աքսորի ենթարկելու որոշում: Շուրջ 10 օր բանտում անցկացնելուց հետո Ա. Ամիրխանյանը և նույն գործով մեղադրվողները ապրիլի 19-ին 4 տարով աքսորվել են Օրենբուրգ [23, 157-158]: Աքսորի տարեթվի հետ կապված թեև Թ. Միքայելյանը, ինչպես նաև Ա. Ղազարյանն ու Ռ. Լևոնյանն իրենց աշխատությունների մեջ հիշատակում են 1891թ. [6, 139; 9, 33], սակայն հաշվի առնելով, որ «Աւետաբերի» երկու տարբեր համարների մեջ, որոնցից մեկը տպագրվել է 1887 թ. մայիսի 14-ին, խոսվում է վերը նշված իրադարձությունների մասին, եզրակացնում ենք, որ Ա. Ամիրխանյանն աքսորվել է 1887 թ., իսկ 4 տարի անց՝ 1891 թ., նա տեղափոխվել է մոտ 7 տարի բնակություն է հաստատել Ֆինլանդիայում, որտեղ ևս զբաղվել է հոգևոր քարոզչությամբ՝ գերմաներեն և շվեդերեն լեզուներով [24, 573]: Այսպիսով պետք է փաստել, որ 1887 թ. աքսորով պայմանավորված Ա. Ամիրխանյանի գործունեության շրջանը Թիֆլիսում ավարտվում է, որտեղ կրթական և հոգևոր գործունեությունից զատ, շարունակ ուշադրության կենտրոնում է պահել նաև արևմտահայերի կյանքին վերաբերող գործընթացները, ինչպես նաև «Մշակում» տպագրված տարբեր հոդվածների կամ նամակների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, «Թիֆլիսի համալսարանի մասին» և «Աւետարանական հայերին, Բնամակ», բազմիցս անդրադարձել է կրթական գործին, կրոնի և խղճի ազատությանը և մի շարք այլ առանցքային հարցերի [31, 1; 32, 1; 34, 1]: Ա. Ամիրխանյանի թողած ժառանգության մեջ կարևոր տեղ ունի նաև «Փորձ» ազգային և գրական հանդեսի մեջ տպագրված նրա՝ «Նիւթեր Հայաստանի վիճակագրութեան համար» հոդվածը, որի տվյալները վերցված են Լոնդոնում 1818 թ. լույս տեսած մի գրքից³, որի հեղինակը, ճանապարհորդելով բազմաթիվ

³ Գրքում կարևոր այլ տվյալների հետ մեկտեղ ներկայացվում է այդ ժամանակաշրջանի քրիստոնյա հայերի թվաքանակը հեղինակի շրջած վայրերում, նկարագրություններ կան նաև հայոց գերեզմանատների և եկեղեցական ժամասացությունների վերաբերյալ: Նշվում է, որ հայ քրիստոնյաների թվաքանակը ներկայացված է առանձին Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների և առանձին հայ բողոքականների հաշվով, տե՛ս Rev. E. L. Cutts, Christians under the crescent in Asia, London, 1818.

վայրերում, այդ թվում Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում, եղել է նաև Երևանում և Թիֆլիսում: Հռոկվածում առկա վիճակագրական տվյալները կարևոր աղբյուր են այդ ժամանակաշրջանի հայկական եկեղեցիների, արևմտահայերի և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում նրանց տեղաբաշխման քանակի տվյալների ուսումնասիրման համար [39, 106-114]:

Աբրահամ Ամիրխանյանի գործունեության վերջին շրջանը Եվրոպայում

Աքսորում գտնվելու ժամանակահատվածում Ա. Ամիրխանյանը հանդիպում է շվեդ բողոքական քարոզիչ Լարս Էրիկ Հոգբերգին⁴, որը նրանց հետագա համագործակցության սկիզբն էր, մասնակցում է նաև Ստոկհոլմում կայացող արևելագետների համաժողովին, որտեղ հանդես է գալիս գեկույցով՝ Չագաթայ թյուրքական լեզվի մասին, որից մեկ տարի անց հայտնի դասախոսների և ակադեմիկոսների միջնորդությամբ թույլատրվում է քաքորից ազատ արձակել Ա. Ամիրխանյանին, ով իր կնոջ՝ Ագայի Բաղդասարյանի և յոթ երեխաների հետ 1891 թ. տեղափոխվել է Ֆինլանդիա, որտեղ դասախոսել է տեղի Աշխարհագրական ասոցիացիայում⁵, ինչպես նաև շարունակել է թղթակցել «Մշակին» և Ֆինլանդիայում լույս տեսնող Evangelisk Kristendom շվեդերեն ամսագրին [14, 69]: Ֆինլանդիայում Ա. Ամիրխանյանը հրատարակել է շվեդերեն 6 և գերմաներեն 1 գրքույկ, որոնք նախատեսված էին քարոզչական գործի համար [14, 70]: Ա. Ամիրխանյանի նախաձեռնությամբ Ֆինլանդիայում բացվել են նաև Երիտասարդաց և Օրիորդաց Քրիստոնեական Ընկերակցություններ, որոնք 20-րդ դարի սկզբին մեծ թվով միսիոներներ են ուղարկել Հնդկաստան, Չինաստան, և այլ երկրներ՝ Քրիստոնեության տարածման նպատակով [24, 573]: «Մշակում» տպագրված «Ա. Ամիրխանեանը Բոլգարիայում» հոդվածի մեջ Մ. Տեր-Ասատուրյանը գրում է, որ տեղեկանալով համիդյան կոտորածների հետևանքով Գերմանիայում հաստատված հայ գաղթականների մասին՝ Ա. Ամիրխանյանը նրանց օգնելու նպատակով տեղափոխվել է Գերմանիա, որտեղ անցկացրել է 3-4 ամիս, շրջել տարբեր շրջաններում, բարձրաձայնել արևմտահայերի ծանր վիճակի մասին, կատարել է հանգանակություններ, հիմնել բարեգործական ընկերություններ, որոնց նպատակը եղել է կոտորածներից փրկված հայերին օգնություն ցույց տալն ու նրանց կարիքների բավարարումը [36, 2-3; 18, 3-4]:

1897 թ. Ա. Ամիրխանյանը Գերմանիայից տեղափոխվել է Բուլղարիա՝ աջակցություն ցուցաբերելու նաև այնտեղ հաստատված հայ գաղթականներին: Ա. Ամիրխանյանի այս և սրան նախորդած գործունեությունը Գերմանիայում տարբեր կերպ են ընկալվել և ներկայացվել հայկական մամուլի էջերում: 1897 թ. լույս տեսած «Արձագանքի» համարներից մեկում անանուն հոդվածի հեղինակը, չհավատալով Ա. Ամիրխանյանի նպատակներին, գրում է. «... ազգիս աղետալի դրությանն Ամիրխանեաններին միայն մի բանի է դրդում՝ օգտուիլ աղետից պղտոր ջրում ձուկ որսալու համար» [20, 3]: Նույն թվականի մեկ այլ համարի մեջ «Յայտնի Ամիրխանեանցի չլազոդում սխրագործությունները» հոդվածի մեջ հոդվածագիրը հայտնում է, որ Ա. Ամիրխանյանը նպատակ է ունեցել շրջագայել Բուլղարիայում, հավաքել որք հայ տղաներին՝ Գերմանիա տանելու համար, սակայն հայ գաղթականների մի խումբ, դիմելով Վառնայի զինվորական հրամանատարին, խնդրել են չթույլատրել Ա. Ամիրխանյանին՝ տղաներին Գերմանիա տեղափոխելու [21, 3]: Մինչդեռ «Ավետաբեր» թերթը հայտնում է, որ Ա. Ամիրխանյանը, տեղափոխվելով Բուլղարիա, Վառնայում հիմնել է որբանոց-դպրոց, որը դարձել էր բազմաթիվ հայ որբերի խնամքի և կրթության կենտրոնը, ինչպես նաև հարյուրավոր հայ գաղթականների տարիներ շարունակ ցուցաբերել է նյութական, բարոյական և հոգևոր աջակցություն [24, 573]: «Մշակն» էլ հավելում է, որ չնայած մարմնավոր տկարու-

⁴ Լարս Էրիկ Հոգբերգի կենսագրությունը տե՛ս <https://collections.smvk.se/carlotta-em/web/object/1021702>

⁵ Ֆինլանդիայի Աշխարհագրական Ասոցիացիայի մասին մանրամասն տե՛ս <https://www.eugeo.eu/activities/25-geographical-society-of-finland.html>

թյուններին, լսելով հայ ժողովրդի անասելի տառապանքների մասին, գիտակցելով նրանց կողքին լինելու անհրաժեշտությունն ու նրանց կարիքներին հաղորդակից լինելու ձգտումը՝ Ա. Ամիրխանյանն անմիջապես ուղևորվել է Բուլղարիա, որտեղ բացել է որբանոց և գիշերօթիկ դպրոց երեխաների համար, բացել է նաև արհեստանոց՝ հնարավորություն ընձեռելով տղամարդկանց և կանանց տարբեր թեթև աշխատանքների միջոցով հոգավ իրենց ապրուստը ոչ թե որպես ողորմություն, այլ որպես իրենց աշխատանքի արդյունք [36, 2]: Չժխտելով «Ավետաբերի» և «Մշակի» հայտնած տեղեկությունները որբանոցների և գիշերօթիկ դպրոցների, ինչպես նաև ցուցաբերված այլ օգնությունների մասին՝ այդուհանդերձ պետք է ընդունել նաև «Արձագանքի» այն մտահոգություններն ու դժգոհությունները, որոնք առաջացել էին Ա. Ամիրխանյանի գործունեության նպատակների մեջ բողոքականության տարածման միտում տեսնելու հետևանքով, որոնց համար կային հիմնավոր պատճառներ: Ինչպես օրինակ, 1897 թ. Գերմանիայի Մարբուրգ քաղաքից «Արձագանքին» ուղղված նամակի մեջ հեղինակը, ով ներկայանում է Տեր Աբգարյան ազգանունով, հայտնում էր, որ Կ. Պոլսի որբանոցներից մեկում, որտեղ ապաստան էին գտել թուրքական կոտորածներից փրկված 102 հայ որբեր, բոլոր ուսուցիչները բողոքական էին, որոնք կատարում էին նաև կիրակնօրյա ժամերգություններ [22, 1]:

Ա. Ամիրխանյանն իր մահկանացուն կնքել է 1913 թ. Բուլղարիայի Վառնա քաղաքում, 75 տարեկան հասակում, որի մասին ևս հայկական մամուլի էջերում եղել են որոշակի անդրադարձներ՝ կրկին իրարամերժ գնահատականներով: «Կովկասի լրաբերը» օրաթերթը հայտնում է, որ մահացած բողոքական քարոզիչ Ա. Ամիրխանյանը 1870-1880-ական թթ. իր քարոզներով խառնակություններ է առաջացրել արևելահայերի շրջանում, և նա հայ ազգի մեջ եզակի տեսակ էր բացասական առումներով [26, 3]: «Մշակի» էլ արձանագրում է, որ մահացած հայ ավետարանական քարոզիչ և հովիվ Ա. Ամիրխանյանը հայտնի անձ էր հայ հասարակության և հայ գրականության մեջ, և միայն նրա կատարած թարգմանությունները, որոնց մեջ հատկապես առանձնանում է Վառնա քաղաքում կատարած Ղուրանի հայերեն թարգմանությունը, բավական են հավերժացնելու նրա անունը [35, 3]:

Եզրակացություն

Բազելի Ավետարանական Քարոզչական ընկերության քարոզիչ Աբրահամ Ամիրխանյանի կյանքի ողջ ընթացքը, նրա հոգևոր և կրթական գործունեությունները տարբեր վայրերում մշտապես ուղեկցվել են իրարամերժ գնահատականներով և որակումներով: Ա. Ամիրխանյանի կատարած թարգմանչական և հրատարակչական գործերը, նրա ջանքերով բացված ուսումնական հաստատությունները, հայ ժողովրդի ծանր վիճակի մասին շարունակ բարձրաձայնելն ու դրանց ուղղված գործնական քայլերը օգտակար են եղել հայության տարբեր շերտերի համար, պայմաններ են ստեղծել նրանց կրթական մակարդակի բարձրացման, ֆիզիկական գոյության պահպանման համար: Այդուհանդերձ դրանց խորքերում եղել են ավետարանականության տարածման միտումներ, որոնց արդյունքում ավելացել են ավետարանական գաղափարներին հետևողների թիվը՝ տարբեր վայրերում ձևավորելով ավետարանական համայնքներ: Բազելի Ավետարանական Քարոզչական ընկերության գործունեությունն ինքնին ենթադրել է տարբեր միջոցներով՝ մասնավորապես կրթական հաստատություններ հիմնելով և հոգևոր քարոզչություն իրականացնելով ավետարանական գաղափարների տարածում, որի իրագործողներից մեկը եղել է Ա. Ամիրխանյանը, որն էլ եկեղեցական իշխանություններին և նրա հետևորդներին շրջանում առաջացրել է դժգոհություններ, որոնք արտահայտվել են ենթեցված մեղադրանքներով և բացասական որակումներով՝ ուղղված ինչպես Ա. Ամիրխանյանի անձի, այնպես էլ ավետարանական գաղափարների տարածման դեմ:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-97>

Գրականություն

1. Ատանալեան Կ., Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոց, Ֆրեզնո, Կալիֆորնիա, 1952, 527 էջ:
2. Բախչինյան Ա., Հայությունը Սկանդինավյան երկրներում. Հայ-Սկանդինավյան մշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրեր), Երևան, Պատմ. ինստ. հրատ., 2010, 280 էջ:
3. Խրլորեան Տ. Ճ., Ոսկեմատեան: Ա հատոր: Պատմութիւն Մերձ. Արեւելքի Հայ Աւետ. Միութեան, Պէյրուք, Մերձ. Արեւելքի Հայ Աւետ. Միութեան հրատ., 1950: 504 էջ:
4. Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Գահիրէ, 2006:
5. Հայ Սփյուռք հանրագիտարան, 1 հատոր, Հայկական Հանրագիտարան հրատ., 2003:
6. Ղազարյան Ա., Լեոնյան Ռ., Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 1999, 248 էջ:
7. Ղանալանյան Տ., Վրաստանի հայ բողոքական համայնքը // Գլոբուս 1(17), 2011, էջ 30-37:
8. Ղուկասեանց Հ., Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ, Թիֆլիս, «Մեղու Հայաստանի» լրագրի հրատ., 1886, 173 էջ:
9. Միքայելյան Թ., «Վասն Քրիստոսի». Վերապատվելի Վահան Միքայելյանի հիշատակին, Երևան, Նյու Յորք, Կոչնակ հրատ., 2015, 265 էջ:
10. Պետոյան Ս., Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին, Բանբեր Մատենադարանի, 30, Երևան, 2020, էջ 302-316:
11. Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան. Հայպետուսմանկհրատ, 1964, 448 էջ:
12. Վեր. Քասունի Եղիա Ս., Լուսաշաւիղ, Պատմութիւն Հայ աւետարանական շարժման 1846-1946, Պէյրուք, Լիբանան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն հրատ., 1947, 603 էջ:
13. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր իններորդ, Երևան, Հայպետհրատ, 1964, 532 էջ:
14. Bakhchinyan A., Karttunen K. Armenia and Finland: Early contacts, Review of Armenian studies: International review of Armenian studies, N1 (28). Yerevan, 2022, p. 66-81.
15. Eppler C.F., D. Karl Gottlieb Pfander: Ein Junge der Wahrheit. Basel, 1888.
16. Owen J. The history of the origin and first ten years of the British and Foreign Bible Society, New York, 1817.
17. Юзефович Т. Договоры России с Востоком. Политические и торговые. Санкт-Петербург, 1869, с. 214-222.
18. Ազգ, N12(5559), մարտի 29, 2019:
19. Արձագանք, Թիֆլիս, N15, 1884:
20. Արձագանք, Թիֆլիս, N17, 1897:
21. Արձագանք, Թիֆլիս, N26, 1897:
22. Արձագանք, Թիֆլիս, N151, 1897:
23. Աւետաբեր, Կ. Պոլիս, հատոր 40, թիւ 20, 1887:
24. Աւետաբեր, Կ. Պոլիս, հատոր ԿԶ, թիւ 24, 1913:
25. Բիւզանդիոն, Կ. Պոլիս, N4990, 1913:
26. Կովկասի լրաբեր, Թիֆլիս, N41, 1913:
27. Հորիզոն, Թիֆլիս, N 172, 1916:
28. Մշակ, Թիֆլիս, N102, 1879:
29. Մշակ, Թիֆլիս, N216, 1879:
30. Մշակ, Թիֆլիս, N44, 1880:
31. Մշակ, Թիֆլիս, N60, 1880:

32. Մշակ, Թիֆլիս, N98, 1880:
33. Մշակ, Թիֆլիս, N 168, 1880:
34. Մշակ, Թիֆլիս, N173, 1880:
35. Մշակ, Թիֆլիս, N38, 1913:
36. Մշակ, Թիֆլիս, N51, 1913:
37. Նոր-Դար, Թիֆլիս, 1884, N 210:
38. Պսակ, Երևան, N27, 1880:
39. Փորձ, Տիֆլիս, N2, 1880:
40. ՀԱՍ, ֆ.56, ց.1, գ.2779, թթ.139,139շրջ.,140:
41. ՀԱՍ, ֆ.56, ց.1, գ.2779, թ.158,158շրջ.:
42. ՀԱՍ, ֆ.56, ց.1, գ.2859, թ.6, 6շրջ.:
43. ՀԱՍ, ֆ.56, ց.5, թղթ.35, վավ.132:
44. <https://collections.smvk.se/carlotta-em/web/object/1021702>
45. <https://www.eugeo.eu/activities/25-geographical-society-of-finland.html>

Духовная и просветительская деятельность Авраама Амирханяна, армянского проповедника Базельского евангелического проповеднического общества

Эдилян Айк

Резюме

Ключевые слова: *Армянская пресса, школы, протестант, Шамахи, Тифлис, проповедь, «Ардзаганк», «Мшак»*

Авраам Амирханян был одним из наиболее видных и влиятельных восточноармянских деятелей евангельского движения, внесшим значительный вклад в распространение евангельских идей как в различных регионах Восточной Армении, так и за ее пределами. Важные эпизоды его биографии, связанные с духовно-просветительской и параллельно общественно-политической деятельностью, охватывают более чем пятидесятилетний период, включающий преимущественно вторую половину XIX века и начало XX века. С учебных лет в Базеле и до самой смерти А. Амирханян последовательно выступал как многоязычный проповедник, учитель, переводчик, издатель, корреспондент и обозреватель. Период его деятельности в качестве евангельского проповедника и учителя начался после завершения обучения в Базеле. Первые шаги он сделал в Шуше и Шамахе, затем его миссионерско-просветительская деятельность распространилась на территории Османской империи и Персии, а позже – Финляндии, Германии и Болгарии. Проповеднический, образовательный и общественный путь А. Амирханяна зачастую сопровождался разноречивыми и порой взаимоисключающими оценками, различными интерпретациями его деятельности, а также постоянными недовольствами и критикой. Эти оценки наиболее ярко проявлялись на страницах армянской периодической печати, где высказывания в его адрес исходили как от отдельных авторов, так и от представителей духовенства.

The Spiritual and Educational Activities of Abraham Amirkhanyan, an Armenian preacher of the Basel Evangelical Preaching Society

Edilyan Hayk

Summary

Key words: *Armenian press, schools, protestant, Shamakhi, Tiflis, preaching, “Ardzagank”, “Mshak”*

Abraham Amirkhanyan was one of the prominent and influential Eastern Armenian figures of the evangelical movement, who contributed to the spread of evangelical ideas in various regions of Eastern Armenia and beyond. The important and distinctive episodes of Abraham Amirkhanyan's biography, which relate to his spiritual and educational activities, as well as his parallel socio-political activities, are summarized in more than fifty years, which chronologically cover mostly the second half of the 19th century and the beginning of the 20th century: from the years of his studies in Basel until his death, throughout the period, acting as a multilingual preacher, teacher, translator, publisher, press correspondent, and columnist.

Period of A. Amirkhanyan's activity as an evangelical preacher and teacher began after completing his studies in Basel, starting its way in Shushi and Shamakhi, also covering Turkey and Persia, reaching as far as Finland, Germany, and Bulgaria. This entire course of Amirkhanyan's preaching, educational, and public activities has been accompanied by contradictory and conflicting assessments, different perceptions, as well as constant waves of dissatisfaction and criticism, which have found their expression especially in the pages of the Armenian press, expressed by both individuals and church authorities.

Ներկայացվել է	12. 02. 2025 թ.
Գրախոսվել է	03. 04. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.

**«Խորία» հասկացության իմաստային փոխակերպումն
անտիկ Հունաստանում**

*Խորիկյան Հովհաննես,
Մանասյան Լուսինե*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-108>

Հանգուցային բառեր. Հուներոս, դասավոր, Հերոդոտոս, Թուկիդիդես, Քսենոփոն, մուսա, Արիստոտել, Մովսես Խորենացի

Նախաբան

Ցանկացած բառի հասկացության զարգացումն ըմբռնելու համար պետք է սկսել ստուգաբանությունից: Այս առումով հունիական «*խորία*» բառը վաղուց են կապել հնդեվրոպական «*wid-weid*» արմատի հետ, որն իմաստային տեսանկյունից կապված է լատիներեն «*video*», ռուսերեն «*видеть*», սանսկրիտերեն «*vettas*», հայերեն «*գիտենալ* (գիտելիք), գիտություն» [7, 181] բառերի հետ: Նշված արմատից են ծագում հունարեն *οἶδα* «*գիտեմ*» և *εἶδέναι* «*գիտենալ*» բառերը՝ նշանակելով ոչ միայն տեսողական ընկալումը, այլ նաև ճանաչողական գործընթացները, որոնք դժվար չէ նկատել նաև մտածողության ոլորտի հետ կապված ռուսերեն «*ведать*» և գերմաներեն «*wissen*» բառերում [19, 447; 13, 11-12]:

Տեսունակության (տեսնելու հնարավորությունը) ըմբռնումը՝ որպես գիտելիքի կամ իմացության էական աղբյուր, բերում է այն մտքին, որ *ἵστωρ*-ը նա է, ով և՛ տեսնում է, և՛ գիտի, ասել է թե՛ գիտի տեսնելով: *ἵστωρ*-ը հին հունարեն նշանակում է «տեղեկանալ, իրագեկվել (ձգտել իմանալ)», «տեղեկացնել որևէ մեկին», այսինքն՝ *ιστορία*-ն հարցուփորձով տեղեկանալն է [26, 101-102]:

Սկզբում առաջացել է ոչ թե «*ιστορία*» բառը, այլ՝ վերջինիս ազգակից «*ιστορ*» և «*ιστορέω*» բառերը: *ἵστωρ* բառը ցույց էր տալիս մեկին, ով հավաքում, վերլուծում, գնահատում և վերապատում էր որոշ տեղեկություններ [13, 12]: «*Ιστορέω*» բայածեր նշանակել է տեսնել, հավաքել վկայություններ կամ տեղեկություններ (լուրեր), պատմել տեսածը կամ վերապատմել եղած տեղեկությունները: Կարճ ասած, բառն ունի երկու հիմնական նշանակություն. ա) «*հարցնել*», «*հարցուփորձ անել*», «*փնտրել*» և այլն, բ) «*որպես ականատես՝ պատմել տեսածի մասին*» [13, 12]:

Նկատի ունենալով «*ιστορία*» եզրույթի իմաստային կիրառման նախնական և հետագա իմաստային փոփոխությունների տարածաժամանակային ընկալումները փորձել ենք անտիկ աղբյուրների և մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ցույց տալ բառի գործածման առանձնահատկությունները պատմություն (ιστορία)-տեքստի ընկալման տիրություն: Այս համատեքստում որոշակի համեմատություններ ենք կատարել նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի որոշ համադրելի դրվագների հետ:

**«Խորία» եզրույթի իմաստային կիրառման առանձնահատկությունները
հին Հունաստանում**

«*Ιστορία*» եզրույթը հին Հունաստանում վերաբերում էր ոչ միայն պատմական հետազոտություններին, այլ նաև առասպելներին, բանաստեղծական պոեմներին ու ընդհանրապես մարդկային մտածողության և ճանաչողության տարբեր ակտերին [19, 443-444]²: Այս

¹ Հինարևելյան ժամանակագիրը, որի համար աշխարհը, այդ թվում մարդկային հասարակությունը, մեկընդմիջ տրված է, նկարագրում է, իսկ հին հույն պատմագիրը՝ փնտրում [17, 13, 134]:

² Պատմության հասկացության համար հին հույներն օգտագործել են նաև այլ եզրույթներ. *στοργάματα* «երկ», «ստեղծագործություն», *ὑπόμνημα* «հիշողության համար գրված», *ὑπομύματα* «հուշագրություններ, տարեգրություն», *πραγματεία* «աշխատանք», «երկ», *σύνταξις* «կապ», «կառուցում», *ἀνάκρισις* «որոնում, փնտրում», *διήγησις* «շարադրանք», «պատմություն, պատմածը» և այլն [19, 443]:

առումով հատկանշական է, օրինակ, Պլինիոս Ավագի «Բնական պատմություն» («Naturalis historiae») երկը, որը պատմության ընկալման հետ որևէ կապ չունի և նշանակում է «բնագիտություն», այսինքն՝ հին Հունաստանում «պատմություն» եզրույթը և պատմություն հասկացությունը նույն բանը չեն նշանակել [19, 444]:

Հոմերոսի համար [միջնորդ] դատավորը կոչվել է Ծօթ, որը պետք է ուսումնասիրեր, լուծեր վեճը, այսինքն՝ դատավորը համարվել է բանիմաց, գիտակ, քննող, քաջատեղյակ մեկը, նաև վկա: «Ծօթ»-ը հեղինակավոր մեկն (կամ մի քանիսը) է, որն ընտրվում էր: Նա էր կայացնում առաջին վճիռը, որը պետք է հաստատեր ժողովրդական ժողովը [24, 324, 530]³: Հետագայում այս եզրույթով սկսեցին ներկայացնել ընդհանրապես բոլոր հետազոտողներին: Եվ պատմագիրը դարձավ դրա մասնավոր արտահայտություններից մեկը [7, 181]:

«Ողիսական»-ում Հերակլեսը «բազմաթիվ բռնությունների» ակնատեսն է կամ մասնակիցը (էռիսթոր) [25, 306]: Հոմերոսի համար մուսաները երգեցողության մեջ հասկացող կամ ստեղծագործող գործիչներ են [19, 448]: Հոմերոսի համար խնդրո առարկա եզրույթը ցույց է տալիս տեսողական ընկալումից բխող մտածական ուղղվածություն, հետևաբար նա, ով տեսնում է, ոչ թե պարզապես տեսնում է, այլ դատում է տեսածի մասին և համարվում է տեսողական ընկալման տվյալ ոլորտի վկան կամ հեղինակությունը [19, 448]:

Քննարկվող եզրույթը դասական ողբերգակների (Էսքիլոս, Սոֆոկլես, Եվրիպիդես) մոտ նշանակել է նաև «հմուտ, փորձված», «հարցնում եմ», «հարցուփորձ եմ անում», «փնտրում եմ», «գիտեմ» (ողբերգական նշանակությամբ) և այլն: Դատելով հին հունական էպոսի և հույն ողբերգակների եզրույթի իմաստային կիրառման տարբերություններից «իսթորեա» և «էթրեա» բառերի միջև կարելի է տեսնել պարզ տարբերակում. վերջինը սուսկ հարցադրում է, իսկ առաջինը հարցադրում է այն հիմքով, որ մեկ ուրիշն անձամբ է տեսել կամ ապրել ու զգացել [29, 62]:

Հին հույն փիլիսոփաների համար «iσtopia» («ուսումնասիրություն/հետազոտություն», «գիտենալ») եզրույթն օգտագործվում է բնափիլիսոփայական և տիեզերաբանական առումով՝ հակադրելով երկնքի ուսումնասիրությունը մարդկանց ու նրանց բարքերի ուսումնասիրությանը [19, 449], այսինքն՝ եզրույթը «պատմություն» նշանակությամբ գրեթե չի օգտագործվում:

«Iσtopia» եզրույթը ժամանակակից ընկալմամբ օգտագործում է Հեկատեոս Միլեթացին (մ. թ. ա. VI դարի 2-րդ կես-V դարի սկիզբ): Վերջինս բառն օգտագործում է հոգնակի թվով, ինչը խոսում է այն մասին, որ «պատմություններ» բառի հեղինակը նկատի է ունեցել պատմվածքներ, լեգենդներ, այլ ոչ թե պատմական հետազոտություն: Սակայն Հեկատեոսը ցուցաբերել է նաև անձնական մոտեցում և գրել է այն մասին, ինչը ճշմարիտ է համարել [15, 210]: Պոլիբիոսը ևս բառն օգտագործում է հոգնակի թվով [27, 10; 28, 72], երբ խոսում է պատմական իրադարձությունների մասին [19, 450]:

«Iσtopia» եզրույթը, այսպես կոչված, պատմության իմաստով կիրառում են լոգոգրափոսները (արձակագիրները կամ նախապատմագիրները [15, 202]) և Հերոդոտոսը [19, 450]: Հետաքրքիրն այն է, որ iσtopéω եզրույթը երկար ժամանակ օգտագործվել է առասպելաբանական-ծագումնաբանական (ծննդաբանական) նշանակությամբ՝ նույնացվելով առասպելաբանական գրույցին և պատմական ավանդությանը [19, 451]⁴, ըստ այդմ էլ՝ լոգոգրափոս-

³ «Ծօթ»-ի մասին մանրամասն տե՛ս 12, 39-40: Միջնորդ դատավոր (δαιτωτής) էր նաև Կորնթոսի տիրան Պերիանդրոսը, որը լուծում էր տարբեր պոլիսների սահմանային վեճերը [23, 116; 14, 117], այսինքն՝ Հերոդոտոսն այլ բառ է գործածում:

⁴ Ծննդաբանական գրականությունը տարբերայնորեն չէր առաջացել, ոչ էլ առասպելաբանությունն էր կապված բնագիտական հավատի հետ: Խնդիրը վերաբերում էր առասպելների համակարգված հավաքագրմանը, դրանք մեկ ամբողջի մեջ միավորելուն, հնուց մնացած հակասությունները մաքրելուն և գաղութացման դարաշրջանի հունական մտածողության փոփոխությանը [19, 455]:

ները համարվել են նաև առասպելագիրներ [21, XXVII-XXXVIII]⁵: Հերոդոտոսը նշված եզրույթն օգտագործում է որպես հարցումփորձի հումանիշ, ընդ որում՝ հարցախույզի և լուրջ իրավիճակների նկարագրության համատեքստում [19, 452, օրինակները տե՛ս նույն էջում]: Մակայն Հերոդոտոսի մոտ «ιστορία» եզրույթն օգտագործվում է նաև ժամանակակից իմաստով, երբ փորձում է բացատրել հույն-պարսկական պատերազմների պատճառները: Կլիոյի մշակ Հերոդոտոսը վերապատմում է պատմության մուսայի խոսքերը [12, 36-37]: Իր երկի նպատակը Հերոդոտոսը նախաբանում սահմանում է որպես ιστορίας ἀπόδεξις, ինչը մոտավորապես կարելի է հասկանալ «հիմնավորված (պատճառաբանված-Հ.Խ.) շարադրանք, փաստական ու տրամաբանական արդարացված պատմություն» կամ ուսումնասիրության/հետազոտության արդյունքների շարադրանք [19, 453]⁶, այսինքն՝ քաղաքացիական համայնքի ներկայացուցչի համար ճշմարտության ձգտման ճիգը նպատակ է:

Մեկ այլ տեղում խոսվում է պատմության նպատակի («...ιστορίας λόγον») մասին [23, 398]: Հերոդոտոսն ուզում է ասել, որ իր շարադրանքի նպատակը փյունիկյան առաջնորդների անունները նշելը չէ: Ակնհայտ է, որ λόγος-ն (բան, խոսք) այս համատեքստում նշանակում է «ծրագիր», «աշխատանք», «նպատակ» կամ նրա հետազոտության խնդիրը [19, 453]⁷: Իր շարադրանքում Հերոդոտոսը հետևում է որոշակի մեթոդի, ինչը նա չի պատկերացնում, բայց նրա համար «ιστορία»-ն արդեն կապված է ժողովուրդների ու ցեղերի, նրանց պատերազմների ու խաղաղության հետ [19, 453], այսինքն՝ պատմիչը վեր է կանգնում առոտին իրողություններից: Ի տարբերություն Հերոդոտոսի՝ Թուկիդիդեսը փորձում է գտնել ճշմարտությունը:

Հերոդոտոսի «ιστορίας ἀπόδεξις» բառակապակցությունը («հարցումներով ստացված տեղեկություններ», այսինքն՝ ստացվում է բանավոր ճանապարհով ձեռքբերված տեղեկություններ [հմտ. 20, 72-73]⁸) նշանակել է, որ պատմիչը դեռ չգիտի եզակի թվով «պատմության» մասին, բայց նրա հավաքած հսկայական փաստական նյութը, տարբեր իրադարձությունների շարադրանքը գոնե ինտուիտիվ մակարդակում թույլ է տալիս խոսել պատմության գաղափարի մասին [10, 6-7]: Հերոդոտոսի «Պատմությունը» (ιστορίη) կարելի է անվանել «Հարցումների շարադրանք կամ ներկայացում» [20, 8; 9, 9]: Համաձայն ավանդու-

⁵ Օնոկրատական առասպելագրությունը պահանջված էր արիստոկրատական միջավայրում, քանի որ անցյալը կապում էր ներկայի հետ [16, 13]: Նկատենք, որ Մովսես Խորենացին ևս, երբ պատմում է մեր նախնիների ծագման, հերոսական գործերի մասին («... սակայն բազում գործք արուբեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի...»: Տե՛ս 5, 10), հետևում է հունական առասպելագրության հիմնական ընկերային գործառույթին՝ անցյալը կապում է ներկային [16, 13]: Այստեղ տեղին է մեջբերել պատմության մասին Մարկ Բոլիի սահմանումը. «Պատմությունը հետազոտություն է, ուստի՝ ընտրություն: Նրա առարկան անցյալը չէ. «Ինքնին միտքը, թե անցյալը իբրև այդպիսին կարող է գիտության առարկա լինել, անհեթեթ է»: Նրա առարկան «մարդն» է կամ ավելի շուտ «մարդիկ», իսկ առավել ստույգ՝ «մարդիկ ժամանակի մեջ» [2, 20]:

⁶ «Պատմություն» հասկացության ընկալման փոփոխությունը նշանակում էր առասպելաբանական և վիպերգական (էպիկական) հերոսականության ժամանակներից անցում պոլիսային ժամանակի [11, 48-53, 88], այսինքն՝ տոհմական համայնքի փոխակերպում պոլիսային քաղաքացիության: Հստ որոշ կարծիքների՝ Հերոդոտոսի երկի նախաբանի հեղինակն այլ մարդ է եղել [15, 9], ինչը մեր քննության համար էական նշանակություն չունի: Ամեն դեպքում, նախաբանի հեղինակը ժամանակագրական առումով Հերոդոտոսին մոտ է եղել:

⁷ Հույների համար «μύθος», «έπος», «λόγος» եզրույթները նշանակել են «բառ», բայց ունեցել են իրենց բառօգտագործման նեղ ոլորտը [18, 7]:

⁸ Թուկիդիդեսը գրել է «վկայությունների հիման» (έχ τεχμηρίων) վրա, այսինքն՝ գրի է առել իրադարձություններ, որոնց ականատեսն է եղել կամ լսել է ուրիշներից, բայց հետազոտել է կամ ստուգել [13, 25]:

թյան՝ Հերոդոտոսն իր երկն անվանել է «Մուսաներ»⁹, և մ. թ. III դարում Լեքսանդրացի գիտնականները երկը բաժանել են 9 գրքերի, որոնցից յուրաքանչյուրն անվանել են մեկ մուսայի անունով, իսկ ամբողջ երկը՝ «Պատմություն ինը գրքից» [13, 18]: Ինչևէ, [պատմիչների] պատմության առաջացումը ևս հունական բանական մտքի զարգացման դրսևորումն էր:

Պատմությունը՝ որպես գրական առանձին ժանր

Առաջին անգամ հին տեքստերում «ιστορία» բառը՝ որպես գրական առանձին ժանր, մ. թ. ա. IV դարի կեսերին օգտագործում է Արիստոտելը, որը Հերոդոտոսին անվանում է պատմագիր՝ «պատմական երկի հեղինակ» նշանակությամբ: Այս նշանակությունը հելլենիզմի ժամանակաշրջանում արդեն տարածվում է, պատմագրությունը դառնում է հունական գրականության գրեթե հիմնական արձակ ժանրը: Հելլենիստական դարաշրջանում են առաջանում ստեղծագործություններ, որոնք արդեն վերագրվում են «ιστορία» բառով [13, 18-19]:

Թուկիդիդեսը և Քսենոփոնն իրենց պատմական աշխատությունների անվանումներին համար «ιστορία» եզրույթը չեն գործածում¹⁰, ինչը խոսում է այն մասին, որ նշված հեղինակներն իրենց ստեղծագործություններն ավելին են համարել, քան «պատմություն» է¹¹: Ըստ Էուլյան, «ιστορία» եզրույթը շատ վաղ ժամանակներից է նշանակել ցանկացած տեսակի կամայական մտացածին բան, պատում և պատմվածք, որոնք հավակնել են որևէ իրականության կամ պատմական փաստերի համապատասխանության [19, 454]: Հետաքրքիր է, որ Դեմոկրիտեսի հետևորդ Նավսիփանեսը համոզմունքի ուժը կապում էր ոչ թե «պատմության», այլ փաստերի (*πραγματα*) իմացության (*εἰδησις*) հետ, այսինքն՝ նրա համար «պատմությունը» հեքիաթ է, երևակայություն, առասպել [19, 454]: Թալեսի համար «ιστορία»-ն «հետազոտություն» է, Պլատոնի համար՝ «իմացություն» (օրինակ, բնության իմացություն), Արիստոտելի համար՝ «իմացություն» կամ «հետազոտությունը» որպես գործընթաց (օրինակ, «հոգու հետազոտությունը»), Դեմոսթենեսի համար՝ «ըմբռնում, հասկացում» և այլն: Ավելի ուշ «ιστορία»-ն արդեն ընկալվում է ոչ թե իմացության, այլ գիտելիքի գործընթաց, իսկ գիտելիքը վերաբերում էր ցանկացած բնագավառին, այդ թվում և բնությանը [13, 23]:

Անտիկ ժամանակաշրջանում «ιστορία» բառի գերիշխող նշանակությունը կոնկրետ «տեքստ» է՝ «պատում, պատմվածք, քննարկում» և այլն, մյուս նշանակությամբ՝ տեքստերի որոշակի տեսակը (գրական ժանրը): Պատմություն (*ιστορία*)-տեքստի հիմնական առաքելությունն օգուտ ստանալն է՝ ի տարբերություն գեղարվեստական գրականության, որը պետք է հաճույք պատճառեր, ինչի մասին գրել են հին հեղինակներից շատերը [13, 17, 24]: Հին Հունաստանում Կլիոյի հովանավորության տակ գտնվող պատմությունն ավելի շուտ ընկալվում էր ոչ թե որպես գիտություն, այլ արվեստ: Հետևաբար, պատմագիրները Կլիոյի քրմերը կամ մարգարեններն էին [15, 213]:

«Ιστορία» եզրույթը հայերենում չի պահպանվել և համարժեք է «պատմություն» բառի իմաստային ընկալման սահմաններին: Ըստ Էուլյան, խնդիրն այն է, որ հայ պատմագրությունը սկզբնավորվեց V դարում հայոց գրերի գյուտից հետո, երբ անտիկ պատմագրությունն արդեն ուներ հազար տարվա գրավոր ավանդույթ: Ալեքսանդրիայում հունարեն սովորած Մովսես Խորենացու համար «պատմություն» եզրույթի կիրառման իմաստային տիրույթը համարժեք է «ιστορία» բառի՝ առաջին հերթին հետազոտություն [իմաստ. 5, 11] սահ-

⁹ Հուներոսյան հիմների երգերում մուսաներն անվանվում են ἱστορες, այսինքն՝ գեղարվեստական ստեղծագործության մեջ նրանք համարվել են հավասարակշռության և ներդաշնակության տարր [19, 482]:

¹⁰ Թուկիդիդեսն իր երկն անվանում է Ξυνέγραφε, որը թարգմանել են «պատմություն», իսկ Քսենոփոնի աշխատությունը, որը թարգմանում են «Հունական պատմություն», իրականում հայտնի է «Հելլենիկա» անվանումով [13, 18]:

¹¹ Թուկիդիդեսն իր երկը համարում է χτήμα εις αἴ («հավերժության պիտույք»)՝ ի հակադրություն Հերոդոտոսի «Պատմության» [3, 568]:

մանմանը, ընդ որում՝ մեր Պատմահայրը ցուցաբերել է ակնհայտ պատմաքննական մոտեցում՝ տեսածի, լսածի մասին ունենալով քննադատական վերաբերմունք¹²: Հետաքրքիր է, որ Խորենացին անցյալի մասին գրված երկերն անվանում է նաև «...զիշատակս բանից» [5, 6] պատմական կամ գործերի հիշատակարաններ [4, 68-69], որոնց հեղինակներն իմաստուններն են եղել [5, 8]: Ընդ որում, ի տարբերություն պարսիկ ու քաղդեացի մատենագիրների՝ հույների համար գործածում է պատմագիր բառը [5, 9]՝ ընդգծելով հույների առավելությունը: Պատահական չէ, որ և՛ Խորենացին, և՛ Հերոդոտոսը [22, 2] գրում են մարդկանց գործերի մասին [5, 10-11]՝ նկատի ունենալով իմաստության և քաջության օրինակները:

Եզրակացություն

Ամփոփելով քննությունը՝ կարող ենք եզրակացնել որ՝ ա) «Խոր»-ը նա է, ով և՛ տեսնում է, և՛ գիտի, ասել է թե՛ գիտի տեսնելով, բ) ըստ Հումբրոսի դատավորը կոչվել է Խոր, որը պետք է հետազոտեր, լսեր կողմերին, լուծեր վեճը, գ) «Խորիա» եզրույթը, պատմության իմաստով կիրառում են լոգոգրափոսները և Հերոդոտոսը, դ) առաջին անգամ «Խորիա» բառը որպես գրական առանձին ժանր օգտագործում է Արիստոտելը, ե) Մովսես Խորենացու համար «պատմություն» եզրույթի կիրառման իմաստային տիրույթը համարժեք է «Խորիա» բառի՝ առաջին հերթին ուսումնասիրություն/հետազոտություն սահմանմանը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-108>

Գրականություն

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատոր Դ, Երևան, 1979, 674 էջ:
2. Բոլոկ Մ., Պատմության պաշտպանական, կամ պատմաբանի արհեստը, Երևան, 2018, XXXVIII+389 էջ:
3. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, 651 էջ:
4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխատասիրությամբ Սո. Մալխասյանցի, Երևան, 1997, 552 էջ:
5. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Ս. Աբեղեանի եւ Ս. Յարությունեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991, ԿԳ+485 էջ:
6. Սարգսյան Գ., Պատմագիտական հետազոտություններ, Երևան, 2006, 260 էջ:
7. Ստեփանյան Ա., Պատմության հետազոտություն: Գործք, գրույթ, իմաստ, Երևան, 2014, 496 էջ:
8. Քոչարյան Ռ., Պատմությունը և հերմենևտիկան. Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը (Մովսես Խորենացու մեկ-միասնական պատմագիտության ու պատմափիլիսոփայության և բուն պատմության իսկության բացարձակումը հերմենևտիկական մեթոդաբանությամբ), Երևան, 2016, 632 էջ:
9. Доватур А. И., Каллистов Д. П., Шишова И. А. Народы нашей страны в «Истории» Геродота. Москва, 1982, 455 с.
10. Кессиди Ф. Х. Философия истории Фукидида. Санкт-Петербург, 2008, 272 с.
11. Лосев А. Ф. Античная философия истории. Москва, 1977, 207 с.
12. Неретина С. С. Пауза созерцания, или о сослагательном наклонении в истории // Идеи и Идеалы, 2017, т. 1, № 3, с. 34-53.
13. Савельева И. М., Полетаев А. В. Теория исторического знания: Учебное пособие. Санкт-Петербург, 2007, 523 с.

¹² Պատմության խորենացիական ընկալման մասին տե՛ս 6, 18-22, 44; 8:

14. Суриков И. Е. Полис, логос, космос. Мир глазами эллина. Категории древнегреческой культуры. Москва, 2024, 400 с.
15. Суриков И. Е. Геродот. Москва, 2022, 439 с.
16. Суриков И. Е. Зарождение древнегреческой исторической мысли и архаическая ионийская наука // Вестник РГГУ. Серия «Литературоведение. Языкознание. Культурология», 2021, № 4, с. 10-29.
17. Суриков И. Е. Очерки об историописании в классической Греции. Москва, 2011, 504 с.
18. Тахо-Годи А. А. Греческая мифология. Москва, 1989, 304 с.
19. Тахо-Годи А. А., Лосев А. Ф. Греческая культура в мифах, символах и терминах. Санкт-Петербург, 1999, 717 с.
20. A Commentary on Herodotus Books I-IV, ed. by O. Murray, A. Moreno, New York, 2007, LVI+721 p.
21. Fowler R. L. Early Greek Mythography, Vol. I. Texts, Oxford, 2007, XLVII + 459 p.
22. Herodotus with an English translation by A. D. Godley, Vol. I, Books I-II, Cambridge-Massachusetts-London, 1975, XXI+504 p.
23. Herodotus with an English translation by A. D. Godley, Vol. III, Books V-VII, Cambridge-Massachusetts-London, 1938, XVIII+569 p.
24. Homer. The Iliad, with an English translation by A. T. Murray, Vol. II, London-New-York, 1925, 644 p.
25. Homer. The Odyssey, with an English translation by A. T. Murray, Vol. II, London-New-York, 1919, 455 p.
26. Le Goff J. History and Memory, New York, 1992, XXIII+239 p.
27. Polybius. The Histories, with an English translation by W. R. Paton, Vol. I, Cambridge, Massachusetts, London, 1998, XVI + 425 p.
28. Polybius. The Histories, with an English translation by W. R. Paton, Vol. II, Cambridge, Massachusetts, London, 1979, 522 p.
29. Snell B. Die Ausdrücke für den Begriff des Wissens in der vorplatonischen Philosophie, Berlin, 1924, 100 p.

Семантическая трансформация понятия «ἱστορία» в Древней Греции

*Хорикян Ованнес,
Манасян Лусине*

Резюме

Ключевые слова: Гомер, судья, Геродот, Фукидид, Ксенофонт, муза, Аристотель, Мовсес Хоренаци

Первоначально возникло не слово «ἱστορία», а родственные ему слова «ἵстор» и «ἱστορέω». Слово «ἵстор» указывало на того, кто собирал, анализировал, оценивал и пересказывал определенную информацию. Глагольная форма «ἱστορέω» означает видеть, собирать доказательства или информацию (новости), рассказывать об увиденном или пересказывать полученные сведения. Короче говоря, это слово имеет два основных значения: **а)** «спрашивать», «допрашивать», «искать» и т. д., **б)** «рассказывать о том, что видел сам, будучи очевидцем».

Термин «ἱστορία» в Древней Греции относился не только к историческим исследованиям, но и к мифам, поэтическим сюжетам и вообще к различным актам человеческого мышления и познания.

У Гомера судья назывался «ἵτωρ», который должен был расследовать и разрешить спор, то есть судья считался знающим, сведущим, проверяющим, хорошо осведомленным человеком, а также свидетелем.

Впервые в древних текстах слово «ἱστορία» как отдельный литературный жанр использовался Аристотелем в середине IV века до н. э., который называет Геродота «историком» в значении «автор исторического сочинения». Это значение распространяется уже в эллинистический период, когда историография становится едва ли не основным прозаическим жанром в греческой литературе.

Semantic Transformation of the Conception of “ἱστορία” in Ancient Greece

*Khorikyan Hovhannes,
Manasyan Lusine*

Summary

Key words: *Homer, judge, Herodotus, Thucydides, Xenophon, muse, Aristotle, Movses Khorenatsi*

Initially, it was not the word “ἱστορία” that arise, but its cognate words “ἵτωρ” and “ἱστορέω”. The word “ἵτωρ” indicated someone who collected, analyzed, evaluated and retold certain information. The verb form “ἱστορέω” means to see, to gather evidence or information (news), to tell one about what has been seen or to retell the information received. In short, this word has two main meanings: **a)** “to ask”, “to interrogate”, “to search”, etc., **b)** “to tell one about what one has seen oneself, being an eyewitness”.

The term “ἱστορία” in Ancient Greece referred not only to historical research, but also to myths, poetic plots and, in general, to various acts of human thinking and cognition.

For Homer, the judge was called “ἵτωρ”, who had to investigate and resolve the dispute, that is, the judge was considered a versed, knowledgeable, well-informed person, and also a witness.

The word “ἱστορία” as a separate literary genre was first used in ancient texts by Aristotle in the middle of the 4th century BC, who calls Herodotus a “historiographer” in the meaning of “author of a historical work”. This meaning spreads already in the Hellenistic period, when historiography becomes almost the main prose genre in Greek literature.

Ներկայացվել է	10. 05. 2025 թ.
Գրախոսվել է	30. 05. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.

**Զանգեզուրը Հայաստանին միացնելու ՀՀ քաղաքականությունը
(1918 թ. նոյեմբեր – 1919 թ. օգոստոս)**

Ղույան Յուրիկ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-115>

Հանգուցային բառեր. *Հայաստան, Ադրբեջան, Անգլիա, Անդրանիկ, Արսեն Շահնազյան, խորհրդարան, Զանգեզուր, Ղարաբաղ, շրջանային խորհուրդ, ներկայացուցիչ*

Նախաբան

Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս հանդիսացող Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի ներկայիս նկրտումները պատմականությունից գուրկ են ինչպես մեր օրերում, այնպես էլ հարյուր տարի առաջ: 1918-1920 թվականներին Զանգեզուրը գեներալ Ռուսթում Բեկբաբեկովի Ադրբեջանի քաղաքականությունը ձևափոխեց: Զանգեզուրցիների հերոսական պայքարի ու Հայաստանի Հանրապետության անգիջում ու հետևողական քայլերի շնորհիվ երկրամասը մնաց մայր հայրենիքի կազմում: Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմից հետո հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորում տեղի չունեցավ: Պատերազմը ոչ միայն չլուծեց հակամարտող կողմերի միջև առկա հարցերը, այլ նաև նոր խնդիրներ առաջացրեց: Այդ շարքում առանցքայինը «Զանգեզուրի միջանցքի» թեման է: Որքան էլ Ադրբեջանը հայտարարում է, որ Հայաստանի նկատմամբ տարածքային հավակնություններ չունի, սակայն նրա վարած քաղաքականությունն այլ բան է վկայում: Նրա կողմից «Արևմտյան Ադրբեջան», «պայմանական սահման», «սահմանագատում» հաշվի առնելով պատմական իրողությունները՝ եզրույթների կիրառումը ապացույցն են այն բանի, որ Ադրբեջանը նպատակ չունի ճանաչելու ՀՀ տարածքային ամբողջականությունը: Ներկայացվող հոդվածը նպատակ ունի վեր հանելու պատմական իրողությունները և ցույց տալու Հայաստանի անբաժանելի մաս հանդիսացող Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի ունեցած նկրտումների պատմականությունից գուրկ լինելը:

Զանգեզուրի հարցում ՀՀ կառավարության զգուշավոր քաղաքականությունից գործնականի անցնելը

1918 թ. հունիս-նոյեմբեր ժամանակահատվածում նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, Այսրկովկասում թուրքական ներկայության պայմաններում սեփական ժողովրդի վտանգված ֆիզիկական գոյությամբ մտահոգված, խուսափեց Ադրբեջանի հետ բացահայտ առճակատումից և սահմանային հարցերում, այդ թվում՝ Զանգեզուրի, իրականացրեց զգուշավոր քաղաքականություն: Այս շրջանում Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանները չորոշվեցին:

Առաջին աշխարհամարտը մտնենում էր ավարտին, և հոկտեմբերին սկսվել էր թուրքական զորքերի դուրս բերումը Անդրկովկասից: Անդրանիկի ջոկատի օգնությամբ Զանգեզուրը շարունակում էր իր պայքարը թուրք-ադրբեջանական ուժերի դեմ [12]: Զանգեզուրի պաշտպանությունը ստանձնած Անդրանիկը, իր ձեռքում կենտրոնացնելով երկրի ինքնապաշտպանական միջոցները, ստեղծեց բավարար մարտական ուժ, ինչի արդյունքում էլ ոչ մի թուրք զինվոր չկարողացավ մտնել Սյունիքի սահմաններից ներս [20, 171]: Ռազմաքաղաքական իրադրությունը Զանգեզուրում և Ղարաբաղում մինչև անգլիական զորքերի մուտքը տարածաշրջան մնաց անփոփոխ:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից ու Զանգեզուր-Ղարաբաղի սահմաններից նրա զորքերի հեռացումից հետո ՀՀ կառավարությունը Զանգեզուրի ու Ղարաբաղի հարցում նախկին զգուշավոր քաղաքականությունից անցավ գործնական քայլերի իրականացմանը: 1918 թ. նոյեմբերի 11-ին ՀՀ նախագահ-նախարար Հովհաննես Քաջազնունու, զինվորական, ներքին գործերի, արտաքին գործերի ու արդարադատության նախարար-

ների մասնակցությամբ ՀՀ կառավարության նիստում լավեց զինվորական նախարար Հովհաննես Հախվերդյանի հաղորդումը՝ հայկական տարածքները թուրքական զորքերից մաքրելու ու իրականացվելիք անհրաժեշտ միջոցների ձեռնարկման մասին: Որոշվեց զինվորական նախարարին հանձնարարել Ղարաբաղում ու Ջանգեզուրում զորքի կազմակերպման ու պահպանման համար ներկայացնել նախահաշիվ, որը հրապարակման ենթակա չէր [23, 623]: Կառավարության նոյեմբերի 16-ի նիստում լավեց զինվորական նախարարի նախնական դատողությունները Ղարաբաղի և Ջանգեզուրի համար զինական ուժեր կազմակերպելու մասին գեկուցումը, որի հիման վրա որոշվեց. «Ի նկատի ունենալով, որ Ադրբեջանը, չսպասելով Ղարաբաղի ու Ջանգեզուրի սահմանների վիճելի հարցերը փոխադարձ համաձայնությամբ խաղաղ լուծմանը, անցել է գործողությունների և բռնագրավելով Ղարաբաղի և Ջանգեզուրի լեռնային մասերը, ազգաբնակչության վերաբերմամբ գործադրում է բռնություններ, կազմակերպել զինական ուժեր վերոհիշյալ հայկական շրջաններում պահպանության, ինչպես և ազգաբնակչությունը ոտնձգություններից կասեցնելու համար» [1]:

Թուրքերի հեռանալուց հետո Այսրկովկասում ստեղծված նոր իրադրության պայմաններում Երևանի քաղաքական շրջանակները համառորեն պնդում էին, որ կառավարությունը պետք է շուտափույթ օգնության հասնի Արցախ-Ջանգեզուրին՝ դրանով փաստի առաջ կանգնեցնելով անգլիացիներին [15, 30]: Հ. Քաջազունու կառավարությունն ի վիճակի չեղավ ըմբռնելու պահի լրջությունը և օր առաջ չդիմեց վճռական քայլերի, որի կապակցությամբ Ջանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհրդի անդամ Եղիշե Իշխանյանը հետազայում գրում էր. «Այդ թուրքերը ճարպիկ են մեզնից և այդ կարծիքն էր տիրում բոլորի մոտ» [18, 356]: Եթե Հայաստանի կառավարությունը Ջանգեզուրում և Արցախում նշանակել իր ներկայացուցիչին, ապա նա, հենվելով տեղի հայության կազմակերպված ուժի վրա, հայկական այդ երկրամասերը կարող էր մեկնդմիշտ միացած համարել Հայաստանին: Բայց վարչապետ Հովհաննես Քաջազունին լսել անգամ չէր ուզում այդ մասին և համառորեն մերժում էր Արցախ և Ջանգեզուր Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչներ ուղարկելու բոլոր առաջարկները: Նա մշտապես պատճառաբանում էր, որ դաշնակիցների հետ հարաբերությունները փչացնելու ոչ մի առիթ չպետք է տալ և համբերատարությամբ պետք է սպասել Առաջին աշխարհամարտում հաղթանակած մեծ տերությունների՝ 1919 թ. հունվարին Փարիզում կայանալիք վեհաժողովի վճիռներին, որտեղ վճռվել էր նաև հայկական տարածքների, այդ թվում նաև Ղարաբաղի պատկանելության հարցը [25, 437]: Դա էր պատճառը, որ ՀՀ կառավարությունը շատ դեպքերում Ջանգեզուրի բնակչությանը բացահայտ չէր աջակցում՝ գտնելով, որ նման քաղաքականությունը կարող է առաջացնել Անտանտի ներկրների դժգոհությունը:

1918 թ. նոյեմբերի 17-ին Անտանտի զորքերը՝ ի դեմս բրիտանական զինված ուժերի մտան Բաքու: Սկիզբ դրվեց Անտանտի կողմից երկրամասի զինագրավմանը:

ՀՀ-ն դիտարկելով որպես ռուսական շահերի արտահայտիչ՝ հենց սկզբից անգլիացիները բացահայտ պաշտպանեցին մուսուլաթական Ադրբեջանի շահերը: Դեկտեմբերի վերջերին գեներալ Վ. Թոմսոնը Բաքվում հանդես եկավ մի պաշտոնական հայտարարությամբ՝ նշելով, որ մեծ Բրիտանիան Ադրբեջանի տարածքը համարում է միասնական ամբողջակամություն և այդ տարածքի վրա ճանաչում է մի իշխանություն՝ ադրբեջանականը: Միասնական տարածքում նա ընդգրկում էր նաև Ղարաբաղը և Ջանգեզուրը [16, 33]: Օգտվելով անգլիացիների աջակցությունից՝ Ադրբեջանի իշխանությունները շարունակեցին Ղարաբաղի և Ջանգեզուրի նկատմամբ վարվող իրենց գավթողական քաղաքականությունը: Հիշյալ ժամանակաշրջանում Ադրբեջանի ծրագրերին վիճակված չէր իրականություն դառնալու: Որքան էլ Ադրբեջանն իր ձեռքին էր պահում նյութական ուժի առավելությունը, բայց դրա դիմաց կար Ղարաբաղի ու Ջանգեզուրի ազգաբնակչության մեծամասնությունը կազմող հայ բնակչության Հայաստանի հետ միանալու վճռականությունը:

Ջանգեզուրում գտնվող գորավար Անդրանիկն անբնական ու անօրինական էր

գտնում, եթե տարածաշրջանի 35-40 հազար թրքության պատճառով Ադրբեջանին իրավունք վերապահվել իրեն ենթարկելու 300.000 հայությանը: Պահանջելով հարգել Ղարաբաղի ժողովրդի կամքը և Ջանգեզուրի հետ Ղարաբաղը կցել Հայաստանին, նա նշում էր, որ Ադրբեջանը կարող է իշխել Ասկերանից այն կողմ՝ Աղդամից մինչև Բաքու ընկած տարածքների վրա [25, 478]:

1918թ. նոյեմբերի 16-ին Ջորավար Անդրանիկը ուղղություն վերցրեց դեպի Շուշի: Բողոքելով Անդրանիկի գործողությունների դեմ՝ Ադրբեջանի կառավարության ղեկավար Ֆաթալի Նսան-Խոյսկին գեներալ Վ. Թումանյանի դիմեց հետևյալ գրությամբ. «Ջանգեզուրի գավառում հայերը Անդրանիկի գլխավորությամբ անխնա բնաջնջում են մահմեդականներին,... որոնք գուրկ են որևէ պաշտպանությունից: Խնդրում ենք շտապ և արագ միջոցներ ձեռք առնել»: Ապա շարունակում է. «Անդրանիկը, 5000 զինվորների գլուխ անցած, երրորդ օրն է պաշարում է Ջաբուլը, որպեսզի անցնի Շուշի... Աղերսում ենք զոնե այժմ անգլիական և ամերիկյան կառավարությունների ուշադրությունը դարձրեք դժբախտ մահմեդականների վրա» [35]: Գեներալ Վ. Թումանյան Բաքվից Անդրանիկին նամակով պահանջեց դադարեցնել զորաշարժը: Նամակում շեշտվում էր, որ արշավանքը չդադարեցնելու դեպքում հազիվ թե Փարիզի խաղաղության վեհաժողովը որոշում ընդունի հօգուտ հայերի, այդ թվում՝ Արցախի և Ջանգեզուրի պատկանելության հարցերը քննարկելիս [14]: Անդրանիկը տեղի տվեց և նոյեմբերի 21-ին (դեկտեմբերի 4-ին), թողնելով Ջաբուլի ձորը՝ վերադարձավ Գորիս: Խոջընդտեղով Անդրանիկի Ղարաբաղ մտնելուն՝ փաստորեն Անգլիան փրկեց Ադրբեջանին Ղարաբաղը կորցնելու վտանգից:

Ադրբեջանը, ոգևորված դեպի Շուշի Անդրանիկի արշավանքի կասեցումով, փորձում էր հասնել նաև Ջանգեզուրից նրա հեռացմանը: Այդ օրերի իրադարձությունների մասին «Մշակ»-ը գրում էր. «Ադրբեջանի կառավարությունը ուժեղ զորաբանակ է ուղարկում Ղարաբաղ և Ջանգեզուր Անդրանիկի դեմ» [36]: Սակայն ուժով Ջանգեզուրին տիրանալու Ադրբեջանի ջանքերը, հանդիպելով Անդրանիկի զորաբանակի ու զանգեզուրցիների ուժին, ձախողվեցին: Դա նկատի ունենալով՝ Ադրբեջանի նախարարների խորհուրդը որոշեց հետաձգել Ջանգեզուրի գավառում նորակոչիկների զորահավաքը, մինչև առանձին կարգադրություն կարվեր այդ մասին [37]:

Գորիս Անդրանիկին տեսնելու գնացած անգլիական զինվորական ներկայացուցչի գալուստով հայ-թուրքական ընդհարումը դադարեց [34]:

Սահմանային հարցերում Անդրկովկասյան հանրապետությունների հակադիր ձգտումները բացահայտորեն պարզ դարձան 1918 թ. վերջերին, երբ պետություններից յուրաքանչյուրը փորձում էր իր սահմանները ընդլայնել մյուսների հաշվին՝ արդարացնելով իր հավակնությունները: Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունները շարունակում էին մնալ լարված և թշնամական, քանի որ Ղարաբաղի և Ջանգեզուրի վերջնական կարգավիճակի հարցում կառավարություններից ոչ մեկը հնարավոր չէր համարում տեղի տալ կամ նույնիսկ փոխզիջման դիմել: Հայաստանի կառավարությունը Ջանգեզուրի նկատմամբ իր դիրքորոշումը հստակեցրեց, երբ 1919 թ. հունվարի 14-ին վարչապետ Ն. Քաջազնու-նուն և ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանին հանձնարարեց պատրաստել Ջանգեզուրում պետական վարչություն հաստատելու մասին որոշման նախագիծ [22, 205]:

Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունները, ցանկանալով օր առաջ իրենց իրավասությունը տարածել Ջանգեզուր-Ղարաբաղի վրա և փաստի առաջ կանգնեցնել Փարիզի վեհաժողովին, դիմեցին գործնական քայլերի: 1919 թ. հունվարի 15-ին գեներալ Վ. Թումանյանի հավանությամբ Ադրբեջանի կառավարությունը հիմնադրեց Ջանգեզուրի, Կարյազիի, Շուշիի և Ջելվանշիի գավառներն ընդգրկող գեներալ-նահանգապետություն՝ Խոսրով Բեկ Սուլթանովի գլխավորությամբ: Դրանով Անդրկովկասում անգլիական գործերի հրամանատարությունը Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցում բացահայտորեն գրավեց Ադրբեջանի կողմը: 1919 թ. հունվարի 26-ին Հայաստանի ԱԳՆ-ն բողոք հայտնեց Ադրբե-

ջանի այդ կարգադրության դեմ՝ համարելով այդ քայլը իր տարածքային իրավունքների ոտնահարում [24, 176]:

Ի պատասխան Ադրբեջանի ԱԳՆ-ին ուղղված ՀՀ ԱԳՆ 1919 թ. հունվարի 26-ի հայտագրի [29, 164], որում գեներալ-նահանգապետության հիմնումը որակվում էր որպես ՀՀ տարածքային իրավունքների խախտում, ադրբեջանական կողմը նշում էր, որ ՀՀ բողոքը միջամտություն էր իր ներքին գործերին և իր ինքնիշխան իրավունքների խախտում, իսկ Ղարաբաղը և Ջանգեզուրը դիտվում էր որպես անվիճելիորեն և անդառնալիորեն իրեն պատկանող [8], և որ Ադրբեջանի կառավարությունը գեներալ-նահանգապետության հաստատումով ոչ մի դեպքում չի խախտում Հայաստանի տարածքային իրավունքները, այլ, ընդհակառակը, Հայաստանի բողոքը խախտումն է իր գերիշխանության և մի փորձ՝ միջամտելու Ադրբեջանի ներքին գործերին [8]:

Որպես հակաքայլ թեկուզ և ուշացած ՀՀ Մինիստրների խորհուրդը, լսելով Ջանգեզուրի գավառի ներկայացուցիչների զեկուցումը, որոշում կայացրեց Ջանգեզուրում անհապաղ մտցնել Հայաստանի Հանրապետության վարչակազմ [2]: Նմանատիպ նամակ էր ստացվել նաև Անդրանիկից, որով նա խնդրում էր ՀՀ կառավարությանը անհապաղ Ջանգեզուր մտցնել հայկական վարչություն, իսկ դրա լինելուց հետո ինքը կհեռանա մի որևէ վայրում հանգստանալու [33]:

ՀՀ կառավարությունը 1919թ. հունվարի 21-ի նիստում ընդունեց Ղարաբաղում և Ջանգեզուրում ժամանակավոր վարչություն հաստատելու մասին ծրագիրը, ըստ որի՝ Ջանգեզուրը և Ղարաբաղի հայաբնակ շրջանները, կազմելով ՀՀ անբաժան մասը, կառավարվելու էին ՀՀ կենտրոնական կառավարության կողմից հաստատված մարմինների միջոցով և Հայաստանում գործող օրենքների հիման վրա: Հաղորդակցության դժվարությունների պատճառով ժամանակավորապես երկրի ընդհանուր վարչությունը հանձնվում էր գոյություն ունեցող Ջանգեզուրի հայկական ազգային խորհրդին, որը կոչվելու էր Ջանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդ և

ժամանակավորապես կառավարելու էր ՀՀ անունից և նրանից ստացած լիազորություններով [3]:

1919 թ. հունվարի վերջերին դրամ և ռազմամթերք ստանալու համար Ջանգեզուրի Ազգային խորհրդի կողմից Երևան ուղարկվեց Արշակ Շիրինյանը: Խորհուրդը խնդրում էր, որ Հայաստանի կառավարությունն արագացնի Ջանգեզուրի նահանգապետի ուղարկումը [28, 250]: Վերջինիս գալն անհրաժեշտ էր, որովհետև ձյունը հալելուն պես Անդրանիկը հեռանալու էր երկրամասից, և նրան պետք է փոխարիներ մեկ ուրիշը: 1919 թ. մարտին Հայաստանի կառավարությունը վճռական քայլերի անցավ ու իր կողմից Ջանգեզուրում ներկայացուցիչ նշանակեց, որպեսզի «անպաշտոն կերպով» կատարի այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ կհամարվեին գավառը Հայաստանին միացնելու [17, 262]: Հայաստանի կառավարությունը Ջանգեզուրում գեներալ-կոմիսար նշանակեց փոխգնդապետ Արսեն Շահինազյանին [41], ով իբրև Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ջանգեզուր եկավ 1919 թ. մարտի 10-ին: Ա. Շահինազյանը փաստորեն Հայաստանի ռազմական ներկայացուցիչն էր՝ կարգված ամբողջ Արցախ-Ջանգեզուրի վրա, սակայն, անգլիացիներից երկնչելով, պաշտոնի առաջին մասը չէին բացահայտում: Ա. Շահինազյանի պաշտոնը «կես գաղտնի» էր: Թեև Հայաստանի կառավարությունը Ջանգեզուրում իր գործունեությանը պաշտոնական ձև չէր տալիս, սակայն Ջանգեզուրը, երկրի մյուս մասերին հավասար օգտվում էր Հայաստանի պետական միջոցներից [28, 350]:

Ջանգեզուրի տեղական ռազմական ուժերի ղեկավարությունն անցավ Հայաստանից ժամանած ներկայացուցչին [26, 29]: Ստեղծվեց ռազմական մարմին: Ռազմական ուժերը կարգի դնելու համար գորահավաք կատարվեց: Միսիանի գինական ուժերի հրամանատար նշանակվեց գնդապետ Պողոս Տեր-Ղափիթյանը, իսկ նրա օգնական՝ գնդապետ Սմբատ Թորոսյանը [26, 29-36]: Նույն ամսի 25-ին Անդրանիկը, որը մոտավորապես 9 ամիս Սյուն-

յաց աշխարհում էր, նախ՝ կենտրոն ունենալով Գորիս քաղաքը, ապա՝ Միսիանի Անգեղակոթ գյուղը [27, 15], թողեց պատմական Զանգեզուրը [27, 15]:

«Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը այժմ մտնելով ՀՀ կազմի մեջ մթերքների առումով գտնվում է նորմալ վիճակում: Գավառում մտցվել է հայկական ադմինիստրացիա: Կառավարության կողմից գավառի կոմիսար է նշանակված Արսեն Շահմազյանը, որն արդեն սկսել է իր գործունեությունը այդ պաշտոնում» [40]: Աղբբեջանը, չիրաժարվելով Ղարաբաղին ու Զանգեզուրին տիրանալու իր ծրագրերից, Զանգեզուրի դեմ մեծ ուժերով մարտի 23-ին Մինքեղի, Ալիդուլի և Զիբբայիլի ուղղությամբ անցավ հարձակման: Վեցօրյա կռիվներից հետո Աղբբեջանի զորքը ետ շարավեց: Զանգեզուրի գյուղացիները, ճեղքելով ճակատը, գրավեցին Մալիբեկլուն [31]: Ապրիլի 15-ից սկսած մինչև նոյեմբերի վերջը տեղի ունեցած կռիվներին երկու կողմից մասնակցում էին 1500-3000 զինված ուժեր: Համարյա բոլոր դեպքերում նախահարձակը թուրքերն էին. նրանք էին և չարաչար պարսավողը: Թուրքերի ձգտումը Զանգեզուրը Աղբբեջանին միացնելն էր: Այդ ձգտմանը ուժ էին տալիս անգլիացիները [28, 350]:

1919թ. ապրիլի 14-ին ՀՀ ԱԳ նախարար Ս. Տիգրանյանը, Փարիզ հայկական պատվիրակությանը ուղարկված հեռագրում հայտնելով Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ մուսավաթականների ռոնձգությունների ու դավերի մասին, պահանջում էր դիմել դաշնակից երկրների կառավարություններին, որպեսզի նրանք անհապաղ վճռական միջոցներ ձեռնարկեն՝ կասեցնելու թաթարներին, կանխելու արյունահեղությունը:

Զանգեզուրի հարցում անգլիացիներին աջակցությունը Աղբբեջանին չէր կարող չտահուկել ՀՀ կառավարությանը: Վերջինս հարցում կատարեց անգլիական զորքերի ներկայացուցիչներին՝ իմանալու համար, թե Աղբբեջանի կողմից գեներալ-նահանգապետության հաստատումը կանդրադառնա արդյոք Զանգեզուրի վարչատարածքային ապագա կարգավիճակին: 1919 թ. փետրվարի 24-ին Երևանում գտնվող անգլիական զորքերի ներկայացուցիչ Ասատը, իսկ մարտի 5-ին՝ Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար Ուորկերը պատասխանեցին, որ գեներալ-նահանգապետ նշանակելու միակ նպատակը կարգուկանոն հաստատելն է և չի կարող կանխորոշել տարածաշրջանի հետագա կարգավիճակը:

Զբաղարարվելով պատասխանից՝ հայկական կողմը, ի դեմս ՀՀ ԱԳ նախարար Ս. Տիգրանյանի, 1919 թ. մարտի 21-ին գրությամբ դիմեց Երևանում անգլիական զինվորական ներկայացուցիչներին, որով բողոք հայտնեց Խոսրով բեկ Սուլթանովի դեմ: Հայկական կողմը միաժամանակ առաջարկեց, որ եթե Անգլիայի ներկայացուցիչները նպատակահարմար չեն գտնում Ղարաբաղն ու Զանգեզուրը անմիջապես ընդգրկել ՀՀ կազմի մեջ, ապա ՀՀ կառավարությունը նպատակահարմար է գտնում, որ այնտեղ հաստատվի տեղական ազգային խորհուրդների ինքնավարություն, անգլիական հրամանատարության վերահսկողությամբ կամ անգլիական գեներալ-նահանգապետության [10]:

1919 թ. մարտի 25-ին Կովկասում անգլիական զորքերի հրամանատար Վ. Թոմսոնը ժամանեց Երևան: Մարտի 28-ին ՀՀ նախագահ-նախարար Ալեքսանդր Խատիսյանի հետ հանդիպման ընթացքում դժգոհություն հայտնեց, որ Հայաստանի կառավարությունը, հակառակ դաշնակիցների ցանկության, եռանդուն գործունեություն է ծավալել Զանգեզուրն ու Արցախը ներառելու Հայաստանի Հանրապետության կազմի մեջ: Ա.Խատիսյանը և զրույցի մասնակիցներ Քրիստափոր Վերմիշյանն ու Սիրական Տիգրանյանն իրենց հերթին բողոքեցին Ղարաբաղի ու Զանգեզուրի նկատմամբ Աղբբեջանի ագրեսիվ քաղաքականությունը բացահայտորեն պաշտպանող անգլիացիներից: Վ. Թոմսոնը Թիֆլիս վերադարձավ ձեռնու-նայն [9]: Զանգեզուրի հարցում նա խոստացավ, որ գավառը կդեկլարվի Զանգեզուրի ազգային խորհրդի կողմից, ինչպես մինչ այդ դեկլարվում էր:

Զանգեզուրի դեկլարությունը գավառի բնակչության՝ Հայաստանի Հանրապետությանը միանալու ձգտումը պարզելու համար 1919 թ. մարտի 31-ից ապրիլի 2-ը անցկացրեց

համագումար, որի մասնակիցները միանշանակ մերժեցին Ադրբեջանին ենթարկվելը և արտահայտվեցին ՀՀ-ն միանալու օգտին [16, 34]:

Չնայած Վ. Թումանյի խոստումներին և Ջանգեզուրի համագումարի որոշումներին՝ Բաքվում նրան փոխարինած անգլիական զորքերի հրամանատար գնդապետ Դիգբի Բնգլիզ Շատելվորդը ապրիլի 3-ին պաշտոնապես հայտարարեց Խ. Սուլթանովի գեներալ-նահանգապետ նշանակվելու մասին, որտեղ ասված էր, որ ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Ջանգեզուրի հայերը պարտավոր են անառարկելիորեն կատարել Ղարաբաղ-Ջանգեզուրի ընդհանուր գեներալ-նահանգապետ Սուլթանովի «բոլոր հրամանները ու կարգադրությունները» և որ անգլիական հրամանատարությունը նահանգապետի «ձեռք առած բոլոր օրինական գործողություններին ցույց է տալու ամեն տեսակի աջակցություն» [19, 135]: Դրան հետևեց ՀՀ ԱԳ նախարարի բողոք-հայտարարությունը, որի համաձայն ՀՀ կառավարությունը վերահաստատեց Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցում իր տեսակետին մնալը: Անգլիական առաքելության ղեկավար մայոր Գ. Մոնք-Մեյսոնի կարգադրությամբ առաքելության ներկայացուցիչը Միքայել Արզումանյանի ուղեկցությամբ 1919 թ. մայիսի 1-ին Շուշիից մեկնեց Գորիս Շրջանային խորհրդի հետ բանակցելու [12]: Հանդուգն պատասխան ստանալուց հետո նա հեռացավ Գորիսից:

Անգլիական հրամանատարության կամքը պարտադրելու ու գավառը Ադրբեջանին ենթարկելու նոր փորձ արվեց մայիսի 13-ին, երբ Դ. Շատելվորդը Շուշիից մեկնեց Ջանգեզուր: Դ. Շատելվորդի սպառնալիքներին ի պատասխան զանգեզուրցիները հայտարարեցին, որ «Եթե Անգլիան ուզում է մեր երկիրը հանձնի Ադրբեջանին՝ կռվելու ենք մինչև վերջ» [6]:

Դ. Շատելվորդի գնալուց հետո բանակցելով Ջանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհրդի անդամների հետ՝ կապիտան Ա. Ֆ. Թաունզենդը և իշխան Հ. Արդույանը համաձայնեցին, որ Ջանգեզուրի և Ադրբեջանի Հանրապետության սահմանն անցնի Զաբուղ գետով [5]:

Ջանգեզուրցիների վճռականության դիմաց անգլիացիները տեղի տվեցին և ստիպված եղան Ջանգեզուրի նկատմամբ ընդունել status quo-ի սկզբունքը, պայմանով, որ Լեռնային Ղարաբաղը ենթարկվի Ադրբեջանին:

Հանդիպելով խիստ դիմադրության՝ մայիսի 14-ին Շատելվորդը ստիպված հրապարակեց կարգադրություն, որի համաձայն մինչև այդ հարցի լուծումը Ադրբեջանի ժամանակավոր վարչությունը չէր տրամադվում Ջանգեզուրի գավառի այն շրջաններին վրա, որոնք գտնվում էին Ջանգեզուրի ազգային խորհրդի իշխանության ներքո [11]:

Փաստորեն անգլիական հրամանատարությունն սպառեց Ղարաբաղում և Ջանգեզուրում Ադրբեջանի իշխանության հաստատման խաղաղ միջոցները:

Ջանգեզուրի ժողովուրդը, զգալով, որ փոթորիկ է պատրաստվում իր գլխին, իր ներկայացուցիչների միջոցով սկսեց բախել Հայաստանի կառավարության դռները, որպեսզի օգնություն հասցնեք մեկուսացած Ջանգեզուրին: ՀՀ կառավարությունը, թեև ծանրաբեռնված էր կենտրոնական Հայաստանի ինքնապաշտպանության դժվարին գործով, իր սահմանափակ միջոցներից բաժին հանեց Ջանգեզուրին, ուղարկելով չորս թնդանոթ, ռազմամթերք և փորձված սպաներ Սիմոն Տեր Սահակյանի ղեկավարությամբ [26, 33]: ՀՀ կառավարությունը, շարունակելով օգնության տրամադրումը Ջանգեզուրին, Միխատրների խորհրդի 1919 թ. մայիսի 5-ի նիստում լսելով Ջանգեզուրի վարչությանը նախահաշվի և հաստիքների մասին Զ. Քաջազունու զեկուցումը, որոշեց՝ համաձայն խորհրդի ապրիլի 29-ի օրենքի նախահաշիվը և հաստիքները հաստատել՝ բաց թողնելով 8 միլիոն ֆոնդից, ի հաշիվ ամսական 400.000 հատկացումից [4]:

ՀՀ կառավարության կողմից Ջանգեզուրին ցուցաբերվող օգնությունը նյարդայնացնում էր Ադրբեջանի կառավարությանը, որը դիմումներ էր հղում բրիտանական կառավարությանը՝ միջամտելու և կանխելու ՀՀ կողմից Ջանգեզուրին օգնություն տրամադրելը:

Ադրբեջանը մտադրություն չունեք Ջանգեզուրից հրաժարվելու և ծրագրեր էր կազմում

այն նվաճելու համար, Զանգեզուրի վրայով կապվելու Նախիջևանին: Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը 1919 թ. հունիսի 20-ին ՀՀ ԱԳՆ-ին տեղեկացնում էր. «Հավաստի աղբյուրներից միսիաս տեղեկացվեց, որ Ադրբեջանի կառավարությունը որոշել է շուտով ձեռնարկել Բաքու-Ջուլֆա երկաթուղու կառուցման գործը և աշխատանքները ղեկավարելու համար արդեն հրավիրել է գլխավոր ինժիներ: Այս գծի կառուցման համար Ադրբեջանի պառլամենտը հատկացրել է 250 միլիոն ռուբլի, որպեսզի աշխատանքը արագությամբ առաջ տարվի, միաժամանակ գծի ամբողջ տարածության վրա մինչև Ջուլֆա: Բաքու-Ջուլֆա ճանապարհը անցնում է նաև Զանգեզուրի և ապա Նախիջևանի գավառների տարածքի վրայով, սրա համար էլ տեղեկացնելով Ձեզ Ադրբեջանի կառավարության ձեռնարկի մասին խնդրում եմ կարգադրել հարկ եղած կարգադրությունները» [7]:

Զանգեզուրին տիրելու նոր փորձ արվեց 1919 թ. հունիսի 23-ին: Երիտթուրքական հայտնի ավագակապետ Քյազիմ բեյը, թուրքական ջոկատների և տեղական բեկերի ու աղալարների գլուխ անցած, հարձակվեց Ղափանի շրջանի Եղվարդ, Ագարակ գյուղերի վրա՝ նպատակ ունենալով կտրել Ղափանը Զանգեզուրից և ընկճել Մեղրու ճակատում կռվող հայ ինքնապաշտպանական խմբերին ու այդպիսով հեշտացնել ամբողջ գավառի նվաճումը [21, 52]: Սակայն հայկական ուժերի ջանքերով թուրքերը ջախջախվեցին և ետ շարվեցին: Հուլիսի 3-ին ադրբեջանական զորքերը Քյազիմ փաշայի հրամանատարությամբ և զինված քոչվորները գրավեցին հայկական բնակավայր Կարաբաբուն և շարժվեցին առաջ՝ կտրելով կապը Գորիսի ու Կապանի միջև: Հայկական զորքերը սպա Թորոսյանի հրամանատարությամբ թաթարներից դուրս բշեցին նրանց կողմից գրավված գյուղերից և առգրավեցին 19.000 փամփուշտ, 1 գնդացի, 15 ձի [39]:

Զանգեզուրի հերոսական ինքնապաշտպանությունը փրկեց Հայաստանը թուրք-մուսավաթական ուժերի նոր արշավանքից, կրկին բացառեց տարածքային կապի ստեղծումը Թուրքիայի և մուսավաթական Ադրբեջանի միջև:

Զանգեզուրի վրա թուրքերի և Ադրբեջանի հարձակման պայմաններում 1919 թվականի հունիսին Սյունիքում տեղի ունեցան Հայաստանի խորհրդարանի ընտրությունները, որոնք անցան չափազանց վտանգավոր պայմաններում, քանի որ չորս շրջանները միմյանցից հեռու էին, շրջապատված թուրքերով: Ղափանի և Արևիքի, Մեղրիի շրջաններից Հայաստանի Խորհրդարանի պատգամավորներ ընտրվեցին Վահան Խորենին, Արշակ Շիրինյանը և Պողոս Փարսյանը [26, 32]:

1919 թ. օգոստոսի դրությամբ, ըստ վարչապետ Ալ. Խատիսյանի՝ օգոստոսի 5-ին Հայաստանի խորհրդարանին ներկայացրած զեկուցման, Հայաստանի Հանրապետության տարածքը 40.920 քառ. վերստ էր, բացի նրա անբաժան մաս կազմող Զանգեզուրի, որի տարածքը 6.742 քառ. վերստ էր:

Եզակացություն

Զանգեզուրը թեև 1918 թ. նոյեմբեր – 1919 թ. օգոստոս պաշտոնապես Հայաստանի Հանրապետությանը միացված չէր, բայց արդեն ամիսներ շարունակ այնտեղ հաստատվել էր հայկական վարչություն, երկրամասը կառավարվում էր ՀՀ ներկայացուցչի կողմից, ֆինանսավորվում էր ՀՀ պետական բյուջեից, իսկ նրա ներկայացուցիչները մասնակցում էին խորհրդարանի աշխատանքներին:

1919 թ. օգոստոսին անգլիացիները հեռացան ինչպես Ղարաբաղից, այնպես էլ Անդրկովկասի այլ վայրերից: Նրանց գործուն միջամտությունը Զանգեզուրի գործերին ավարտվեց: Զանգեզուրը Ադրբեջանի իշխանություններին ենթարկվելու նրանց քաղաքականությունը ձախողվեց:

Գրականություն

1. ՀԱՍ, ֆ.199, ց.1, գ.11, թ.5 :
2. ՀԱՍ, ֆ.199, ց.1, գ.42, թ.10,
3. ՀԱՍ, ֆ.199, ց.1, գ.100, թ. 15:
4. ՀԱՍ, ֆ.199, ց.1, գ.100, թ.82:
5. ՀԱՍ, ֆ.199, ց.1, գ.252, թ.84:
6. ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.37, թթ.11-12:
7. ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.85, թ.101:
8. ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.190, թ.6:
9. ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.231, թ.51:
10. ՀԱՍ, ֆ.200, ց.1, գ.243, թ.63-64:
11. ՀԱՍ, ֆ. 200, ց.1, գ.309, թ.69:
12. ՀԱՍ, ֆ.201, ց.1, գ.42, թ.17 :
13. ՀԱՍ, ֆ.222, ց.1, գ.24, թ422-423 :
14. ՀԱՍ, ֆ.370, ց.1, գ.50, թ. 13:
15. Բաբայան Ա., Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1959:
16. Բաղայան Ա., Ջանգեզուրը՝ Հայաստան-դաշնակից երկրներ փոխադարձությունների համակարգում, «Դրոշակ», Երևան, 1998, թիվ 21:
17. Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Երևան, 2003:
18. Իշխանյան Ե., Լեոնայի Ղարաբաղ 1917-1920, Երևան, 1999 :
19. Լազեան Գ., Հայաստան և հայ դատը ըստ դաշնագիրերու, Գահիրե, 1942:
20. Լեո, Սահմանավեճեր-Լոռի-Ախալքալաք, Ղարաբաղ, Թիֆլիս, 1919:
21. Խուդավերդյան Ա., Ջանգեզուր 1917-1921, Երևան, 1988:
22. Հայոց պատմություն, հ.4, գիրք առաջին, Երևան, 2010:
23. Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., Երևան, 2014 :
24. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ.1, Առաջին տարին, 1918-1919, Եր., 2005:
25. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ., Երևան, 1996:
26. Ստեմել, Ջանգեզուրի հերոսամարտը և Արսեն Շահմալյան, «Հայրենիք», Բոստոն, 1963:
27. Ստեմել, Անդրանիկը Ջանգեզուրի մեջ, «Հայրենիք», 1962, թիվ 7:
28. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
29. Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, Ереван, 1992.
30. «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, 25 հունվարի:
31. «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, 6 ապրիլի:
32. «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, ապրիլի 10:
33. «Զանգ», Երևան, 1919, 19 հունվարի:
34. «Զանգ», Երևան, 1919, 7փետրվարի:
35. «Մշակ», Թիֆլիս, 1918, 12 դեկտեմբերի:
36. «Մշակ», Թիֆլիս, 1919, 5 հունվարի:
37. «Յառաջ», Երևան, 1919, 17 հունվարի:
38. «Յառաջ», Երևան, 1919, 3 ապրիլի:
39. Борьба, Тифлис, 1919.
40. Закавказское Слово, Тифлис, 1919.
41. Наше время, Баку, 1919.

Политика РА по присоединению Зангезура к Армении (ноябрь 1918 – август 1919 гг.)

Гулян Юрий

Резюме

Ключевые слова: Армения, Азербайджан, Англия, Андраник, Арсен Шахмязян, парламент, Региональный Совет Зангезура и Карабаха, представитель

В июне–ноябре 1918 границы между получившей независимость Арменией и Азербайджаном не были определены. Республика Армения, избегая открытой конфронтации с Азербайджаном и турецким присутствием, проводила осторожную политику по Зангезурскому вопросу. Благодаря мерам самообороны, принятым Андраником в Зангезуре, ни один турецкий солдат не смог войти в Сюник. Военно-политическая обстановка в Зангезуре оставалась неизменной вплоть до вступления в регион британских войск. После поражения Турции в Первой мировой войне правительство Армении перешло от прежней осторожной политики в вопросе Зангезура и Карабаха к практическим шагам. Под предлогом того, что не следует портить отношения с союзниками, армянское правительство не назначило официального представителя Армении в Зангезуре. Генерал-комиссаром в Зангезуре был назначен подполковник Арсен Шахмязян, должность которого была полусекретной. Зангезур, как и другие части страны, пользовался государственными средствами Армении. По состоянию на август 1919 года, Зангезур официально не был присоединен к Республике Армения, однако, там была создана армянская администрация, регион управлялся представителем РА, финансировался из государственного бюджета РА, его представители участвовали в работе парламента.

Policy of the Republic of Armenia on the Incorporation of Zangezur into Armenia (November 1918 – August 1919)

Ghulyan Yurik

Summary

Key words: Armenia, Azerbaijan, Great Britain, Andranik, Arsen Shahmazyan, Parliament, regional council of Zangezur and Karabakh, representative

Between June and November 1918, the borders between the newly independent Armenia and Azerbaijan remained undefined. Seeking to avoid open confrontation with Azerbaijan and the continued Turkish presence, the Republic of Armenia adopted a cautious policy regarding the Zangezur question. Due to the self-defense measures organized by Andranik in Zangezur, no Turkish forces were able to enter Syunik. The military-political situation in the region remained essentially unchanged until the arrival of British forces. Following the defeat of the Ottoman Empire in the First World War, the Armenian government shifted from its earlier cautious stance on Zangezur and Karabakh to taking practical steps. Lieutenant Colonel Arsen Shahmazyan was appointed General Commissioner in Zangezur, although his position remained semi-secret. Like other parts of the country, Zangezur received state funds from Armenia. As of August 1919, Zangezur had not yet been formally incorporated into the Republic of Armenia; nevertheless, an Armenian administrative structure had been established, the region was governed by a representative of the Republic, it was financed from the state budget, and its delegates participated in parliamentary activities.

Ներկայացվել է 07. 05. 2025 թ.

Գրախոսվել է 03. 06. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

«Արքայի Արտաքսերքսեսի Աստվածայինի» շրջագրով դրախմաների հեղինակի և նշանակության շուրջ

*Մելիքյան Արթուր,
Չատինյան Բոա*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-124>

Հանգուցային բառեր. *դիմերես, դարձերես, Օկտավիանուս Օգոստոս, Հռոմ, Մեծ Հայք, Հրահառ IV, Ատրպատական*

Նախաբան

«Արքայի Արտաքսերքսեսի Աստվածայինի» շրջագրով արտաշեսյան հազվագեղ դրախմաներն արդեն երկուսուկես տասնամյակ է, ինչ հայ և օտարագզի դրամագետների հետաքրքրությունների առարկա են: Այդուհանդերձ, մինչ օրս դրանց հեղինակության և պատկերագրության վերաբերյալ միանշանակ կարծիք չկա: Մույն ուսումնասիրության նպատակը նշված արձաթե դրամները հատած արքայի ինքնությունը և թողարկման պատմական համատեքստը պարզաբանելն է: Անկասկած, ինչպես ուշ արտաշեսյանների վերաբերյալ անտիկ հեղինակների հաղորդումները, այնպես էլ խնդրո առարկա հայկական դրախմաների պարունակած պատմական տեղեկությոը կրում են պաշտոնական քարոզչության կնիքը: Այդ իսկ պատճառով փորձ է արվել վերոնշյալ խնդիրների լուծմանը հասնել գրավոր և դրամագիտական տվյալների քննական համեմատության միջոցով: Դրախմաների քարոզչական տեղեկությոի ուսումնասիրությունը նույնպես կատարվել է հելլենիստական, Հռոմի կայսերական և հռոմեական խնդրարկու արքաների դրամական պատկերագրության քննական համեմատության միջոցով: Հետազոտության են ենթարկվել նաև դրախմաների ստեղծման ժամանակի և նշանակության հարցերն ու Մեծ Հայքի տնտեսական կազմալուծման համապատկերում նրանց լիարժեքության առեղծվածը:

1. «Արքայի Արտաքսերքսեսի Աստվածայինի» շրջագրով դրախմաները

«Արքայի Արտաքսերքսեսի Աստվածայինի» (ΒΑΣΙΛΕΥΣ ΑΡΤΑΞΕΡΕΣ ΘΕΙΟΥ) շրջագրով դրախմաները երևան են եկել 1990-ական թթ. Լիբանանում հայտնաբերված պարթևական գանձի կազմում: Դրա գտնվելու հստակ տեղը և ժամանակը մնում են անհայտ: Դրախմաներից առաջինը, որի մասին անդրանիկ տեղեկությոը հրապարակվել է հայկական «Ասպարեզ» հանդեսում՝ 1995 թ. 10-րդ համարում, ձեռք է բերել Բեյրութի ֆրանսիական դեսպանատան զինվորական կցորդ, գնդապետ Ա. Ռոնդը, որն էլ Հ. Թորոպյանի հետ 1997 թ. ներկայացրել է դրամի համառոտ նկարագիրը [45, 25-26] (նկար 1): Նույն թվականին Լ. Ա. Սարյանը նկարագրել է ամերիկյան մասնավոր հավաքածուում հայտնված երկրորդ դրամը [46 7-16], որը 1999 թ. վաճառվել է աճուրդում [18, Lot 768] (նկար 2): Երրորդ և չորրորդ օրինակներն աճուրդի են հանվել 1998 [17, Lot 693] (նկար 3) և 2001 թվականներին [23, № F 70; 39, Pl. 95, a2-p4a] (նկար 4):

1.1. Դրախմաների նկարագրերը

Դիմերես – Արքայի աջ դարձած կիսանդրին է, որն իր հորինվածքով, պատկերագրական մանրամասնություններով ընդհանուր առմամբ նմանվում է Արտավազդ II-ի (Ք. ա. 55-34 թթ.) չորեքդրախմաների պատկերատիպին [39, Pl. 92, A1-P1a, A2-P2a, A3-P3a]: Արքան սափրված դեմքով է, գլխին՝ հնգատամ բարձր խույրի հետ համադրված ապարոշ, որի երիզները թեթևակի ծածանվում են ծոծրակին: Խույրը զարդարված է սեղանաձև քառանկյունումեջ առնված ութնաթև աստղով: Քառանկյունին վերևում և երկու կողմերում ունի երկու մարգարտյա շարքեր: Ա. Ռոնդի հավաքածուի օրինակի աջակողմյան մարգարտյա շարքի մեջ առկա է արժվակերպ պատկեր, որը նյույորքյան դրամի վրա բուսական զարդի տեսք ունի: Դիմապատկերի մեջ առկա տարբերությունները (դեմքի ձգվածության չափը, խույրի

գարդարանքի, ականջօղի, թիկնոցի, արքայի կիսանդրին իր մեջ առնող դափնեպսակի ձևերը), հիմք են տալիս եզրակացնելու, որ հայտնի չորս դրամների դիմերեսները ստեղծվել են երեք դրամական կադապարներով:

Դրախմաների դարձերեսների հորինվածքները երկու տիպի են.

Դարձերես 1 – Սաղավարտավոր Աթենասը՝ ձախ դարձած, աջ ձեռքին՝ սուր ծայրը ներքև թեքած նիզակ, ձախին՝ վահան բռնած: ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΞΕΡΞΕΩ ΘΕΙΟΥ շրջագիրը գրված է ժամկալքի ուղղությամբ: Դաշտի աջ կողմում դրամի թվագրությունն է՝ ΙΔ (=14-րդ), իսկ Աթենասի ոտքերի տակ Արտաշատի դրամահատարանի փակագիրը:

Դարձերես 2 – Դեպի աջ ճախրող Նիկեն է՝ աջ ձեռքը հետ պահած, իսկ ձախով պսակ և արմավենու ճյուղ բռնած: Տիտղոսը գրված է ժամկալքի ուղղությամբ՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΞΕΡΞΕΩ ΘΕΙΟΥ: Այստեղ էլ դաշտի աջ կողմում դրամի թվագրությունն է՝ ΙΔ (= 14-րդ), իսկ դիցուհու ոտքերի տակ՝ Արտաշատի դրամահատարանի փակագիրը:

Խնդրո առարկա դրախմաների չորս օրինակների քաշերը տարբեր են՝ 2.6 գ, 3.59 գ, 3.20 գ, 4.06 գ: Միջին քաշը կազմում է 3,36 գ, որը 0,42 գրամով թեթև է Արտավազդ II-ի դրախմաների միջին քաշից, բայց ընդհանուր առմամբ, համապատասխանում է հելլենիստական դրախմայի կշռին: Տարբեր են նաև դրամների տրամագծերը՝ 20,8 մմ, 22 մմ, 23 մմ, 24 մմ: Միջինը կազմում է 22 մմ: Բսկ մետաղի քիմիական վերլուծությունը հաստատում է դրամների հին լինելը:

Դրախմաների վրա հստակ ընթերցվող ΑΡΤΑΞΕΡΞΕΩ (ուղղ. հոլ.՝ ΑΡΤΑΞΕΡΞΕΩ-Արտաքսերքսես = Արտաշես) անունը նվազագույնի է հասցնում դրանց հեղինակի հարցում սխալվելու հավանականությունը: Այդուհանդերձ, դրամագետների կարծիքները տարբերվում են: Լ. Ա. Սարյանը և Բ. Կրենգելը դիմապատկերն իր մեջ առած դափնեպսակից ու շրջանաձև խորագրից եզրակացնում են, որ այդ դրամները պատկանում են Արտաշես III-ին (18-34 թթ.) [46, 7-16; 31, 8. Ft. 17]: Բսկ Յ. Ներսեսյանը, փաստարկելով դրախմաների իսկությունը, դրանք վերագրում է Արտաշես II-ին (Ք. ա. 34 թ., Ք. ա. 31/30-20 թթ.) [38, 95-97; 39, 167-168, Pl. 94, a2-p4a, Pl. 95]: Նույն կարծիքին են նաև Ֆ. Վովաչը և Ջ. Նուրպետյանը [30, 28, № 170-171; 41, 165, № 40, 41]: Այլ կարծիք է Ռ. Վարդանյանը: Լ. Սարյանի հրապարած դրամի մի շարք իրողություններից (դափնեպսակ, արքայական տիտղոսի շրջանաձև գրություն, «ΘΕΙΟΥ» մակդիր) նա հավանական է համարում, որ խնդրո առարկա դրամները կեղծ են [51, 321-326]:

2. Դափնեպսակի առեղծվածը

2.1 Դափնեպսակը հելլենիստական, հռոմեական և ենթահռոմեական դրամական պատկերազրության մեջ

Դրամագետների կարծիքները բաժանվում են հատկապես արքայի դիմապատկերն իր մեջ առնող դափնեպսակի հարցում: Պատկերագրական այդ տարրն առավել տարածված է Մելեկյանների դրամահատության մեջ՝ Ապոլոնի հետ նրանց հատուկ կապի շնորհիվ: Սակայն միայն Դեմետրիոս I (Ք. ա. 162-150 թթ.) [27, № 143-153, 473-474, 527, 551-554, 910-911], Դեմետրիոս II (Ք. ա. 145-138, Ք. ա. 129-125 թթ.) [27, № 528-529], Տիմարքոս (Ք. ա. 142-138 թթ.) [27, № 1318] և Անտիոքոս VIII (Ք. ա. 125-96 թթ.) [27, № 857] արքաների դրամների վրա

¹ Ռ. Վարդանյանի կարծիքին դժվար է համաձայնել մի շարք պատճառներով: Նախ, խնդրո առարկա դրամները, չնայած իրենց փոքրաթիվությանը, ոչ թե «նեղուն» են մասնավոր հավաքածուներում, այլ շրջանառվում են դրամական աճուրդներում: Հետևաբար, արդի տեխնոլոգիաների միջոցով կեղծիքը հեշտ կրացահայտվեր՝ նախքան դրամների աճուրդի հանվելը: Անհավանական է նաև, որ կեղծարարը չորս դրամ կեղծելու համար կպատրաստեր դիմերեսի երեք և դարձերեսի երկու դրոշմոցներ: Բացի այդ, աճուրդում այդ դրախմաների վաճառքի գինը (17, Lot 693, վաճ. 3000 ԱՄՆ դոլ., 18, Lot 768, վաճ. 3000 ԱՄՆ դոլ., 19, Lot: 33, վաճ. 6500 ԱՄՆ դոլ.) հուշում է, որ ենթադրյալ կեղծարարը չէր բավարարվի ընդամենը 4 օրինակով:

է, որ դափնեպսակը ծառայեցված է որպէս դրամների դիմերեսների եզրագարդ: Որպէս կանոն, այդ պատկերագրական տարրը նույն նշանակությամբ գետեղված է դրամների դարձերեսներին: Հորինվածքային այդ սկզբունքը յուրացրել են Օուֆֆի Միհրդատ I (Ք. ա. II դ.) և Միհրդատ II (մոտ Ք. ա. 89-85 թթ.) արքաները [30, № 26, 35, 36]: Այն պահպանվել է նաև Տիգրան II-ի (Ք. ա. 95-55 թթ.) անտիոքյան և դամասկոսյան դրամահատության մեջ [27, № 397-398; 39, 80-81, Pl. 1-79; 30, № 71.2, 72.1, 73, 74.1, 74.2, 75.2, 75.3] և միայն մեկ անգամ է ընդօրինակվել Արտաշատի դրամահատարանի կողմից [39, 85. Pl. 80]: Արտավազդ II-ի դրամների հորինվածքում խնդրո առարկա տարրը բացակայում է: Այդ փաստերի տեսանկյունից քիչ հավանական է, որ ուշարտաշեսյան այս դրամների վրա խնդրո առարկա պատկերագրական տարրը երևան եկած լինի Մելեկյանների կամ էլ Տիգրան II-ի անտիոքյան-դամասկոսյան դրամահատության տպավորությամբ: Դա բացառվում է նաև դրամների հորինվածքային տեսանկյունից: Մելեկյան և տիգրանյան դրամների վրա դափնեպսակը ծառայեցված է սոսկ իբրև դրամների եզրագարդ: Մինչդեռ խնդրո առարկա դրամների վրա այն ակնհայտորեն ծառայում է իբրև արքայի դիմապատկերն ընդգծելու միջոց: Դրանից հետևում է, որ դափնեպսակը այս հայկական դրամների հորինվածք է ներմուծվել հռոմեական դրամական պատկերագրության մեջ ունեցած նշանակությամբ: Այստեղից ծնվում է առանցքային հարցերից մեկը. ո՞վ և ի՞նչ խորհրդապաշտությամբ է խնդրո առարկա դրամների դիմերեսներին գործածել հռոմեական վեհապետական իշխանության խորհրդանշան դարձած դափնեպսակը: Դրան պատասխանելու համար հարկ է դիմել հռոմեական կայսերական պատկերագրությանը:

Հռոմեական իրականության մեջ դափնեպսակն ի սկզբանե ունեցել է քաղաքական իմաստ և հանդիսացել է Յուլիոսների ու տրիումֆատորների խորհրդանշանը [11, 51-58]: Բայց դափնին համարվել է Հուլիոսների տոհմական ծառը: Ըստ այդմ, պրինցիպատի հաստատումից հետո Օգոստոսը դափնին ու դափնեպսակը դարձրեց կայսերական իշխանության խորհրդանշան և կայսերական պատկերագրության կարևոր տարր [48, VII. 1; 42, 299]: Նրա օրոք հատված հռոմեական դրամների սովոր շարքում դիմերեսին կայսեր պատկերն իր մեջ ներառող դափնեպսակով հորինվածքները շատ չեն [տե՛ս օրինակ 49, № 400, 539; 24, Lot 8783; 13, № 2662, 4997; 25, Lot 340]: Դափնեպսակները սովորաբար պատկերված են դրամների դարձերեսին՝ իսկ նրա ներսում գետեղված են պրինցեսպի ու սենատի [49, № 528, 549; 13, № 4246, 4248, 4261, 4261, 4264], պրինցեսպի ու հռոմեական ժողովրդի, երբեմն էլ՝ պրինցեսպի և պրովինցիական բնակչության միասնությունը խորհրդանշող խորագրեր [37, 317; 49, № 303, 486; 13, № 129, 2987, 3124]: Քիչ չեն այնպիսի դրամական տիպերը, որոնց դարձերեսին դափնեպսակն իր մեջ է ներառում Augustus անունը [49, № 483, 486] կամ էլ Օգոստոսի աստղակերպ այծեղջյուրի նշանը [49, № 480, 493]: Վերոնշյալ բոլոր դեպքերում դափնեպսակը ծառայեցված է դրամի դիմերեսին կայսեր դիմապատկերը, իսկ դարձերեսի հորինվածքում՝ կենտրոնական պատկերը կամ գրույթը ընդգծելուն:

Ք. ա. 20-ական թթ. կայսերական դրամական հորինվածքների ընդօրինակման արդյունքում դափնեպսակը թափանցեց նաև խնդրարկու արքաների դրամական պատկերագրության ոլորտ [35, Lot 722-724; 36, Lot 1335-1338, 1341-1343; 40, Lot 455; 30, № 245-246, 249-251, 254-258]: Իրենց փաստարկները հենց այդ հիմքի վրա են կառուցում Լ. Սարյանն ու Է. Կրենգելը, որոնք խնդրո առարկա դրամները վերագրում են Ջենոն-Արտաշեսին: Սակայն այդ նույնականացումը հիմնված է եզակի և շատ անորոշ պատկերագրական տվյալի վրա: Ջենոն-Արտաշեսի հասած դրամների առաջին տիպի դիմերեսին իր և Տիբերիուս կայսեր զուգադիր և աջ դարձած դիմապատկերներն են՝ երկուսն էլ դափնեպսակով պսակված [30, 31, № 189]: Դարձերեսին հայկական խույրի աջ դարձած պատկերն է և գրույթը՝ KAI TIBEPI - ՕՏ K Z[HNO]Σ (Կեսար Տիբերիոս և Ջենոն): Նկատի առնելով, որ դրամի դիմերեսի երկու պատկերներն էլ դափնեպսակով են, բայց տիպոս կրում է միայն Տիբերիուսը, իսկ պոնտական արքայազնը կոչված է Ջենոն, այլ ոչ թե Արտաշես անունով, պետք է եզրակաց-

նել, որ այդ տիպի թողարկումը նախորդել է Զենոնի թագադրությանը և, հնարավոր է, կայսեր հետ Զենոնի ինչ-որ համատեղ տրիումֆի խորհուրդ է պարունակում [30, 31]: Ամեն դեպքում փաստ է այն, որ տվյալ հորինվածքում պատկերների գլուխները զարդարող դափնեպատկերները կիրառված են որպես հաղթանակի նշան, այլ ոչ թե պատկերները ընդգծելու միջոց:

Բացի վերը նշվածից, Լ. Սարյանի և Է. Կրենգելի առաջարկած նույնականացումը հարուցում է նաև այլ առարկություններ: Այսպես, խնդրո առարկա դրախմաների դիմերենների արքայական խույրն իր ձևով (բարձրությամբ) և զարդարանքով էապես տարբերվում է Արտաշես III-ի բրոնզե քաղկոսների դարձերեսներին ներկայացված խույրերից [30, № 189; 29, 19-25. Pl. 4]: Ավելին, վերջինների վրայից աստղը հանված և տեղադրված է նրա հետևում՝ որպես առանձին խորհրդանշան, ըստ երևույթին, ընդգծելու համար, որ արքայական իշխանությունն ու երկիրը տարբեր հասկացություններ են [29, 20]: Հարկ է արժևորել նաև այն փաստը, որ խնդրարկու արքաների և նրանց իշխանության աղբյուրի միասնությունը խորհրդանշող պատկերագրական կամ գրային տարրերը ներկայացված են միայն դրամների դարձերեսներին [40, Lot 454-455; 30, № 237-239, 241, 245-246, 248-251, 254-258; 36, Lot 1335-1338, 1341-1343.]: Այդպիսին են նաև Տիբերիուս կայսեր կամքով և Գերմանիկուս կեսարի ձեռամբ իշխանություն ստացած Արտաշես III-ի քաղկոսների հորինվածքները: Ըստ այդմ, աներևակայելի է, որ բրոնզե քաղկոսների վրա կայսրին իր իշխանության աղբյուր ձանաչած հայոց այդ արքան կարող էր դրախմաների վրա իր իշխանության աղբյուր համարել Աթենասին կամ Նիկե դիցուհուն: Արտաշես III-ի իրավաբաղաձայն կարգավիճակը բացառում էր նաև նրա կողմից «աստվածային» մակդիրի յուրացումը: Բնավ պատահական չէ, որ նրա քաղկոսների վրա այդ մակդիրը ոչ թե արքային, այլ կայսր Տիբերիուսին է վերագրված (ΘΕΟΙΚΕ CΕΒΑՏΟΙΚ ΚΑΙCΑΡΗ ΚΑΙ ΙΟΥΛΙΑ) [29, 19; 30, 32; 31, 2]: Ի լրումն վերոնշյալի, խնդրո առարկա դրախմաների նկատմամբ Արտաշես III-ի հեղինակությունը բացառվում է նաև դարձերեսի պատկերագրության պատերազմական թեմայի և հայոց այդ արքայի անխռով գահակալության անհամապատասխանության տեսանկյունից: Այսպիսով «*արքայի Արտաքսերքսեսի Աստվածայինի*» գրույթով արծաթե դրախմաների նկատմամբ Արտաշես III-ի հեղինակության բացառմամբ դրանց միակ հնարավոր տերը մնում է Արտաշես II-ը:

2.2 Դափնեպսակի գործածությունն իբրև Հռոմին ուղղված մարտահրավեր՝

Ընդունված կարծիքի համաձայն՝ կայսերական վարչությունը չի միջամտել խնդրարկու արքաների դրամահատության գործին: Սակայն վերջիններիս կողմից «երկմակարդակ միապետության» թեմայով ստեղծված դրամների վրա արքայական և կայսերականի պատկերագրության համար դիմերեսի և դարձերեսի հստակ և համերաշխ բաշխումը հիմք է տալիս խոսելու չգրված կանոնի գոյության մասին: Մյուս կողմից, հայտնի են ոչ մեծաթիվ դեպքեր, երբ նշված սկզբունքը խախտված է: Ընդ որում, մեզ հայտնի բոլոր օրինակների վրա խախտումն իրականացված է կայսերական իշխանության խորհրդանշան դափնեպսակը դրամների դարձերեսների փոխարեն դիմերեսներին դրոշմելով: Պատկերագրական այդ շեղումները չի կարելի պատահականություն համարել, քանզի այդ դրամների հեղինակների՝ Հռոմեական տիրապետության և կայսերական հեղինակության դեմ այս կամ այն ձևով ծառացման մասին վկայում են նաև գրավոր աղբյուրները:

Վերոնշյալի ուշագրավ օրինակ է Նաբաթեայի արքա Արետես IV-ի (Ք. ա. 9 - Ք. հ. 40 թթ.) բրոնզե դրամը, որի դիմերեսին պատկերված մարդանման պատկերն առնված է կանոնավոր դափնեպսակի մեջ [40, Lot 493]: Հավանաբար, Սաբայի արքաների օրինակով դափնեպսակն իբրև արքայական պատվանշան ընդունել և ապարոշին էին համակցել դեռևս Մալիքուս I-ը (Ք. ա. 59-30 թթ.)՝ Ք. ա. 33 թ. և Օբոդաս II-ը (Ք. ա. 30-9 թթ.)՝ իր կառավարման վերջին հինգ տարիներին [32, 49]: Բայց առաջինի դեպքում Օկտավիանուսը դեռևս միահե-

ծան տիրակալ չէր, իսկ Օրոդաս II-ին էլ Օգոստոսը չէր հակազդել, քանի որ դափնեպսակը դեռևս կայսերական իշխանության կանոնական խորհրդանշան չէր դարձել: Կարևոր էր և այն, որ Օրոդաս II-ը նախապես ընդունել էր Օգոստոսի գերիշխանությունը և նրա կողմից ճանաչվել էր որպես Նաբաթեայի խնդրարկու արքա: Այլ էր խնդիրը Արետես IV-ի դեպքում. նրա գահակալության ժամանակ ոչ միայն դափնեպսակն էր արդեն դարձել կայսերական իշխանության խորհրդանշան, այլև կանոնացվել էր կայսեր կողմից խնդրարկու արքաներին իշխանությամբ օժտելու կարգը [52, 34 n. 77; 26, 273; 47, 160]: Այլ խոսքով, ինքնաթագադրվելով, Արետեսը բացահայտորեն ոտնահարել էր կայսեր հետ խնդրարկու արքաների հարաբերության երկու սկզբունք:

Մեծ Հայքի արքա Տրդատ II-ի (216-252 թթ.) բրոնզե քաղկոսի դիմերեսի հորինվածքում նույնպես արքայական դիմապատկերը շրջանակված է դափնե պսակով [30, № 203-207; 34, Lot 1439]: Թերևս, չի կարելի պատահական զուգադիպություն համարել այն, որ Անտոնինուս Կարակալայի կողմից հոր՝ Խոսրով I-ի դավադիր կալանավորումից հետո Տրդատ II-ը նույնպես ինքնաթագադրվել էր և պաշտպանել իր անկախությունը՝ ջախջախելով Հայաստան ուղարկված հռոմեական բանակին [16, LXXVIII.21.1]: Ըստ այդմ, վերոնշյալ երկու արքաների ինքնաթագադրման համապատկերում նրանց դրամների դիմերեսներին կայսերական իշխանության խորհրդանշանի դրոշմելը կարելի է գնահատել միայն որպես Հռոմից անկախանալու յուրօրինակ հռչակագրեր: Իսկ որքանով են վերոնշյալ օրինակները օգնում հասկանալու արտաշեսյան դրախմանների դիմերեսների դափնեպսակի նշանակությունը:

Տեսականորեն, եթե դրախմանները թողարկված լինեին Արտաշես II-ի երկրորդ կառավարման սկզբներին, ապա խնդրահարույց պատկերագրական տարրի «ուրացումը» գաղափարական առումով կնդրաշնչակեր Բ. ա. 31/30 թ. նրա հատած պղնձե քաղկոսների վրայի «պոմպեյական» տոմարի գործածությանը [51, 90]: Ըստ այդմ, դրախմանների դիմերեսին դափնեպսակի առկայությունը կարելի կլինեի մեկնաբանել որպես Հռոմի հետ իր բարեկամությունը (amicitia) վերականգնելու պատրաստակամության, իսկ դափնեպսակը դրախմայի դիմերեսին դրոշմել՝ այդ բարեկամությանը որպես ինքնիշխան կողմ մոտենալու նշան: Բայց Բ. ա. 30 թ. ի վեր Օկտավիանուսի և Արտաշես II-ի լարված հարաբերությունների համապատկերում հայոց արքայի կողմից դափնեպսակի այդ իմաստով կիրառությունը բացառվում է: Փոխարենը դրախմանների դիմերեսների դափնեպսակի խորհրդապաշտության իրատեսական պարզաբանման համար որոշակի հղանք է ընձեռում դրամների թվագրությունը՝ ID (= 14-րդ):

Մասնագիտական գրականության մեջ Արտաշես II-ի կառավարման շրջանը սովորաբար թվագրվում է Բ. ա. 30-20 թթ. [2, 627; 5, 234]: Մակայն այս դեպքում խնդրո առարկա դրախմանների թողարկման տարին կստացվի Բ. ա. 16 թվականը, որը մտնում է Տիգրան III-ի (Բ. ա. 20-8 թթ.) կառավարման շրջանի մեջ: Մրանից հետևում է, որ Արտաշես II-ն իր կառավարման ժամանակը հաշվել է առաջին գահակալությունից՝ Բ. ա. 34 թ. սկսած: Ըստ այդմ, նրա կառավարման 14-րդ տարին ստացվում է Բ. ա. 20 թ., որը համապատասխանում է հայհռոմեական հարաբերությունների առավելագույն լարման թվականին: Դրամների հորինվածքային մանրամասները՝ արքայի գլխի հարդարանքը, հավակնոտ տիտղոսը և դարձերեսների ընդհանուր ռազմական թեմատիկան, հատկապես՝ Աթենասի՝ սլաքը դեպի գետինը թեքած նիզակը, որը հինարևելյան պատկերագրության մեջ պատերազմական վիճակի խորհուրդն է պարունակում, հաստատում են, որ խնդրո առարկա դրամները թողարկվել են արտառոց հակահռոմեական մթնոլորտում:

3. Արտաշես II-ի արծաթե դրամների նշանակությունը

3.1 Լիաթօժեք դրախմանները տնտեսության կայունացման ցուցիչ

Մեծ Հայքում դեռևս նախորդ դարաշրջանում ծայր առած տնտեսական ճգնաժամը Բ. ա. I դ. 30-ական թթ. վերջերին էլ ավելի էր խորացել Անտոնինուսի կողմից երկրի ռազմակա-

ման, հաջորդած երեք տարիների հռոմեական թալանի և Ք. ա. 20-ական թթ. Օգոստոսի կողմից Մեծ Հայքի քաղաքական ու տնտեսական շրջափակման հետևանքով [20, 48]: Արդյունքում՝ քաղաքային կյանքը, արհեստներն ու առևտուրը թուլացել էին այն աստիճան, որ ուսկյա և արծաթե դրամների թողարկումն իսպառ վերացել էր: Արտաշես II-ի երկրորդ գահակալության ընթացքում հաստված պղնձե դրամների վեց տիպերին հասկանչող թերարժեքությունը պարզորոշ խոսում է այն մասին, որ պետությունը լուրջ դժվարություններ էր կրել անգամ տեղական շուկայի տկարացած պահանջները բավարարելու համար պղնձե դրամներ թողարկելու պարագայում [51, 92, not. 20.]: Արդյունքում՝ երկրում սկսել էին գերակայել ավանդական համակեցական կառույցներն ու արժեքները [5, 235]: Նման պայմաններում լիարժեք դրախմաների թողարկումը պետք է որակել անհեթեթ ու անարդյունավետ քայլ: Մեծ Հայքի հռոմեական շրջափակման պատճառով դրանք արտաքին առևտրի մեջ կիրառվել չէին կարող, իսկ ներքին շուկայում էլ դրանք արդյունավետ լինել չէին կարող, քանի որ գանձագոյացման արդյունքում արագորեն պետք է դուրս գային շրջանառությունից: Դրանից հետևում է, որ արտաշեսյան դրախմաները նախատեսված են եղել ոչ թե ներքին առևտրական շրջանառության, այլ խիստ որոշակի և հրատապ խնդրի լուծման համար: Խնդրի հրատապության մասին է վկայում նաև այն փաստը, որ խնդրո առարկա դրախմաների մինչ օրս հայտնի չորս նմուշները թողարկվել են դիմերեսի երեք և դարձերեսի երկու դրոշմոցներով: Եվ եթե հաշվի առնենք, որ արտաշեսյան դրամահատության վերելքի շրջանում մեծաքանակ թողարկումների համար հաճախ օգտագործվել են դիմերեսի ու դարձերեսի մեկական դրոշմոցներ, ապա նույնիսկ կարելի է եզրակացնել, որ այդ դրախմաները հատվել են հապճեպորեն: Վերոնշյալից հետևում է, որ Ք. ա. 20 թ. արծաթե դրախմաների թողարկումը պայմանավորված է եղել ոչ թե Մեծ Հայքի տնտեսական կյանքի թռիչքաձև զարգացմամբ, այլ նույն թվականին հռոմեա-պարթևական բանակցություններում կողմերի միջև կայացած համաձայնությամբ Մեծ Հայքի արտաքին ու ներքին քաղաքական դրության կտրուկ վատացմամբ:

3.2 Արտաշես II-ի արծաթե դրախմաները Ք. ա. 23-20 թթ. հռոմեա-պարթևական բանակցությունների համապատկերում

Իր քաղաքական միասնությունը վերագտնելուց և եփրատյան սահմաններում դիրքերը վերականգնելուց հետո Հռոմեական կայսրության արտաքին քաղաքական օրակարգի առաջին հարցն էր դարձել Պարթևստանի հետ հարաբերությունները ճշտելը: Սակայն Օգոստոս կայսրը, ի տարբերություն ուշ հանրապետության գործիչների, պարթևների հետ հարաբերություններում դիվանագիտական մեթոդները նախընտրում էր ռազմականից: Ք. ա. 30 և Ք. ա. 26-25 թվականներին նա պատշաճ ձևով չէր սատարել պարթևական գահին վերաստիճանալու Տրդատ II-ի փորձերին [15, LI.18.2: Հմմտ. 44, 69-71; 12, 66]: Ավելին, Ք. ա. 23 թ. Օգոստոսը բավարարեց Ք. ա. 25 թ. գահընկեց եղած Տրդատ II-ի կողմից առևանգված որդուն վերադարձնելու Հրահատ IV-ի խնդրանքը [15, LIII.33.1-2]: Բայց ի պատասխան Տրդատին հանձնելու Հրահատ IV-ի պահանջի, նա հայտարարեց, որ «*Ո՛չ Տրդատին կհանձնի, ո՛չ էլ պարթևաց դեմ նրան օգնություն կցուցաբերի*» [33, XLII.5.4]: Ա. Ստեփանյանի գնահատմամբ, սավաճել երկու տերությունների հարաբերությունները ըստ նոր ձևաչափով վերակառուցելու առաջարկությունն էր, որն ընդունել են պարթևները [10, 13; 5, 229]: Ամեն դեպքում, պարթևական արքայազնին վերադարձնելու հարցի շուրջ սկսված բանակցություններում Օգոստոսը Հրահատ IV-ի որդու խնդրանքը բավարարելու դիմաց առաջ էր մղել Կրասոսի, Անտոնիոսի և, հնարավոր է, Լ. Դեցիդիուս Սաքսայի Ք. ա. 40 թ. կորցրած հռոմեական դրոշներն ու ռազմագերիներին վերադարձնելու հարցը, որը տվյալ պահին Հռոմի «պարթևական օրակարգում» առաջնայինն էր [44, 71]: Սակայն, թեպետ Օգոստոսը պարթևական արքայազնին ուղարկեց առանց վերապահման, Հրահատ IV-ն իր պատասխան խոստումը կատարեց միայն երեք տարի հետո՝ կամ դրոշներն ու ողջ մնացած ռազմա-

գերիններին գտնել-հավաքելու դժվարությունների [44, 71-72], կամ էլ, որ ավելի հավանական է, պարթևական ավազանու նոր ցատումից երկյուղելու պատճառով:

Օգոստոսի համար դրոշների ու ռազմագերիների վերադարձի հարցը, անշուշտ, ունեցել է բացառապես քաղաքական-քարոզչական նշանակություն: Մինչդեռ հռոմեա-պարթևական հարաբերություններում առավել ծանրակշիռ էր երկու տերությունների ազդեցության գոտիների սահմանագատման խնդիրը: Դրա շուրջ բանակցությունների վերաբերյալ հռոմեական աղբյուրների տվյալները ընդհանրական ու միտումնավոր են: Կասկածից վեր են, որ տարածքային հավակնությունների ծիրում հռոմեացիների առանձնահատուկ սևեռման առարկան եղել է Մեծ Հայքի նկատմամբ վերահսկողության վերականգնման հիմնախնդիրը: Հռոմը ձգտում էր հավաստիացումներ ստանալ առ այն, որ պարթևները ճանաչում են իրենց գերակա շահերն այդ երկրում: Այդ առումով ուշագրավ է, որ հռոմեական աղբյուրները բանակցությունների հույսովյոթի մեջ Մեծ Հայք երկրանունը կանխատեսված չեն տալիս՝ այդ կերպ հասկացնելով, որ Օգոստոսն անբեկանելի է համարել Մեծ Հայքի նկատմամբ **«Լուկուրյան և Պոմպեոսի ձեռք բերված իրավունքը»** [Հմմտ. 50, XIII, 34]:

Հռոմեա-պարթևական բանակցություններում շահարկման մյուս առարկան Ատրպատականի խնդիրն էր: Ուսումնասիրողներից ոմանք, համարելով, որ Անտոնինոսի պարտությունից հետո Ատրպատականը նվաճվել է Հրահատ IV-ի կողմից, Ք. ա. 23-20 թթ. բանակցությունների օրակարգում այդ խնդիրը չեն տեսնում [21, 135; Հմմտ. 20, 48; 2, 627]: Սակայն վերոնշյալ կարծիքը չի համապատասխանում աղբյուրների տվյալների տառին ու տրամաբանությանը: Նախ, Հրահատ IV-ը Ք. ա. 31-29 թթ. չէր կարող նվաճել Ատրպատականը, քանզի գահընկեց էր ու **«ապաստանել էր պարթևներին հարևան երկրներում»** [33, XLII.5.6]: Ճիշտ է, Դիոն Կասիոսը չի նշում Ք. ա. 30 թ. մար Արտավազդի հաղթող կողմին, բայց նրա վկայությունը, որ հռոմեացիների համար **«Հայաստանը Մեդիայի հետ միասին կորսվեց»** [14, XLIX.44.4], հստակ ակնարկ է պարունակում Արտաշես II-ի գործողությունների մասին: Հայդը՝ մար Արտավազդին գերող արքա պետք է համարել Արտաշես II-ին: Ք. ա. 29 թ. վերջերին Հրահատ IV-ը վերադարձրեց իր իշխանությունը Պարթևստանում, բայց ո՛չ Ատրպատականում, որի նկատմամբ նա իրավունք ունենալ չէր կարող. Ք. ա. 33/32 թ. Անտոնինոսի տրամադրած հռոմեական զինուժի օգնությամբ այն պաշտպանել էր իր անկախությունը պարթև վեհապետից, իսկ վերջինիս վտարանդիության ժամանակահատվածում պատերազմի իրավունքով նվաճվել էր Արտաշես II-ի կողմից:

Ավելի ուշ մար Արտավազդը կարողացավ փախչել գերությունից և ընդունելություն գտավ Օկտավիանոսի մոտ [9, 32], որը նրան հաստատեց Փոքր Հայքի գահին (Ք. ա. 26-20 թթ.): Հռոմեական հովանավորության ներքո նրա հայտնվելը Օգոստոսին Արտպատականի նկատմամբ պահանջատիրության հիմք տվեց: Տվյալ պարագայում էական չէր, թե Ատրպատականի նկատմամբ հռոմեական հավակնություններն իրական են եղել, թե սոսկ պարթևների շահագրգռելու միջոց: Փաստ է այն, որ հենց միայն Արտաշես II-ի վերահսկողության տակ գտնվող երկրի պատկանելիության հարցը բանակցային սեղանին դնելով՝ Օգոստոսը ձեռք էր գոյացնում պարթևա-հայկական դաշինքի մեջ:

Հռոմեա-պարթևական բանակցությունների մանրամասներն անհայտ են: Բայց, անկասկած, դրանք եղել են տևական և դժվարին: Բանակցությունները Պարթևստանի հետ անձամբ ղեկավարելու համար Օգոստոսը Ք. ա. 22 թ. ժամանեց Արևելք և հմտորեն օգտվեց Հրահատ IV-ի իշխանության երերուն վիճակից: Բանակցությունների հերթական փակուղու ժամանակ հռոմեական դիվանագիտական առաքելության ղեկավար Տիբերիոս Կլավդիոսը պարթևներին **«անթարույց վախ ներշնչեց»**՝ հայտարարելով, թե Հռոմը պատրաստվում է պարթևների դեմ նոր պատերազմի: Պարթևների վրա ճշումը մեծացնելու նպատակով Օգոստոսը հրամայեց Ասորիքում հռոմեական զինուժ կուտակել: Դա թողեց անկալված ազդեցությունը: Ի վերջո, Հրահատ IV-ը, որը տևաբար տատանվում էր Հռոմի դեմ նոր

պատերազմ վարելու անկարողության գիտակցումի և միակողմանի զիջումներով պարթևական ավագանու մեջ իր հեղինակության մնացուկները կորցնելու վախի միջև, տեղի տվեց և իշխանությունը պահելու ճիգով **«հնազանդորեն հայեցե հռոմեական ազգի բարեկամությունը»** [9, 29]: Կայացավ փոխզիջում, ըստ որի՝ Հայաստանը Հռոմի ազեցության գոտի ճանաչելու, հռոմեական դրոշներն ու ռազմագերիներին վերադարձնելու, պարթևական գահի ընդդիմադիր հավակնորդներին չստատրելու և, վերջապես, Տրդատ II-ին Ասորիքից հեռացնելու դիմաց Հռոմը ճանաչել է Ատրպատականի նկատմամբ Հրահատ IV-ի գերակա իրավունքը²:

Դժվար է պատկերացնել, որ հայոց արքունիքում անտեղյակ են մնացել հռոմեապարթևական բանակցությունների ընթացքին ու արդյունքներին: Ինչպես երևում է, Հայաստանի քաղաքական մեկուսացման ու Հռոմին դեմ միայնակ պատերազմի հեռանկարը հարուցել է քաղաքական ճգնաժամ, որի արդյունքում հայոց արքունիքը, ինչպես Ք. ա. 66 թ., բաժանվել է պատերազմի և խաղաղության ճամբարների: Կասիոսը հաղորդում է, որ **«մյուս հայերը մեղադրում էին Արտաշեսին և (դեսպանություն ուղարկելով) խնդրում էին Հռոմում գտնվող նրա եղբորը»** [15, LIV.9.4]: Ա. Ստեփանյանը հայ ավագանու այսպես կոչված «խաղաղության» խմբակցությանը նույնացնում է արքայի քաղաքականությունից դժգոհ ռազմավարչական ավագանու հետ [5, 235], ինչն այդքան էլ հիմնավոր չէ: Մեր կարծիքով, ավելի տրամաբանական կլինի այդ ճամբարում հայ տոհմիկ ավագանուն տեսնելը, որը, նկատի ունենալով Մեծ Հայքի տնտեսական և արտաքին քաղաքական դրությունը, անհեռանկարալի են համարել Հռոմի դեմ պատերազմը և փորձել է յուրովի կանխել վերահաս աղետը: Օգոստոս կայսրին հայ ավագանու «խաղաղության» խմբակցության այս դիմումը տեղի է ունեցել Ք. ա. 22-20 թթ.՝ Օգոստոսի պահանջները բավարարելու Հրահատ IV-ի համաձայնությունից հետո, բայց նախքան Ք. ա. 20 թ. Օգոստոսի հոգեզավակ Տիբերիոսի Կլավդիոսի հրամանատարությամբ հռոմեական բանակի գորաշարժը դեպի Հայաստան:

Հռոմի հետ հաշտվելու հնարավորությունը կորցրած Արտաշես II-ը, ընդհակառակը, կամա թե ակամա կանգնել է պատերազմի ուղու վրա: Միայնակ պատերազմի հեռանկարը նրան ստիպել է դիմել նախապատրաստական ծայրահեղ միջոցառումների: Ք. ա. 34 թ. Մեծ Հայքի ռազմական ուժը կազմում էր շուրջ 70 հազար, որն ի գորտ էր լուծել երկրի պաշտպանության խնդիրը [4, 53]: Ք. ա. 20 թ. նրա քանակը դժվար թե էապես փոխված լիներ: Բայց երկրի քաղաքական միասնության խաթարումը և ավագանու հետ համաձայնության գալու անհնարինությունը արքային զրկում էր վերահաս պատերազմում երկրի ողջ ռազմական ներուժը տնօրինելու հնարավորությունից: Ուստի Արտաշես II-ին գործնականում իր զինուժը բարելավելու մի միջոց էր մնում՝ դիմել վարձկան զորքի օգնությանը: Վարձկանության երևույթը հելլենիստական դարաշրջանի ռազմական կազմակերպության հատկանշական կողմերից մեկն էր և, անկասկած, գոյություն է ունեցել նաև Մեծ Հայքում: Արմավիրի

² Մասնագիտական գրականության մեջ ընդունված կարծիքի համաձայն Ք. ա. 20 թ. Ատրպատականը Մեծ Հայքի հետ ճանաչվել է Հռոմի ազեցության գոտի [1, 149; 3, 424; 5, 232; 20, 48]: Ըստ այդմ, Արտաշեսյան հարստության մարումից հետո Մեծ Հայքում հռոմեական դրածո արքաներ Արիոբարզանեսն ու նրա որդի Արտավազդը համարվել են այդ երկրամասի արքաներ, որոնք համատեղության կարգով կառավարել են նաև Մեծ Հայքում: Իրականում Արտավազդ Ատրպատականցու մահվանից (Ք. ա. 20 թ.) հետո նրա որդին ու թոռը սոսկ Օգոստոսի հոգածության տակ մնացած արքայազներ էին, որոնց կայսրը նրանց հայրենի երկրի կորստյան պատճառով փորձում էր «թագավորեցնել» Մեծ Հայքում: Թերևս, շփոթության պատճառը ատրպատականյան արքայատան ներկայացուցիչներ Արիոբարզանեսին ու Արտավազդին Տակիտոսի տված «մար» մակդիրն է [50, II.4]: Մակայն դա ընդամենը նույն կամ նման անուն կրող դինաստիաներից ու արքաներից նրանց տարբերելու միջոց է, և բնավ չի նշանակում է, որ նրանք Մարական Ատրպատականի արքաներ են եղել:

հունարեն արձանագրության տվյալների հիման վրա Ս. Երեմյանը նույնիսկ եզրակացնում է, որ Ք. ա. III դ. վերջերին նրանք քաղաքային բնակչության նշանակալից շերտ են կազմել [7, 57]: Վարձկանների ծառայությունից օգտվել էր Տիգրան Մեծը [8, Mith. XII. 86; 3, էջ 339]: Իսկ Արտաշես II-ի համար տնտեսական ճգնաժամից հյուծված քաղաքային բնակչությունից վարձկան զինուժ հավաքագրելը դարձել էր իր դրությունը փրկելու միակ հնարավոր միջոցը: Ընդ որում, խնդրի հրատապության թելադրանքով է, որ հայոց արքան վարձկանների հավաքագրումն իրագործել է ոչ թե ավանդական ճանապարհով՝ հողահատկացմամբ [7, 57], այլ կանխիկ դրամի միջոցով: Սակայն նրա այդ ձեռնարկն իր նպատակին չի հասել, քանզի Ք. ա. 20 թ. գարնանը, Հռոմի դեմ պատերազմը դեռ չսկսած, Արտաշատում, անհայտ հանգամանքներում դավադրաբար սպանվեց ինքը՝ Մեծ Հայքի արքա Արտաշես II-ը³:

Դատելով այն փաստից, որ Արտաշես II-ի սպանությունից անմիջապես հետո Մեծ Հայք ներխուժած հռոմեական զորքն իր հետ բերում էր նաև Տիգրանին՝ Արտաշես II-ի եղբորը, կարող ենք եզրակացնել, որ արքայի սպանությունը եղել է հայ ավագանու «խաղաղության» խմբակցության հետ Օգոստոսի համաձայնության առանցքային պայմանը: Արդեն Արտաշատում, Տիգրիդուս Կլավդիոսը Օգոստոսի անունից արքայական իշխանությամբ պսակեց Տիգրանին [50, II.3; 22, XV.105; 15, LIV.9.4-5; 9, III.9]: Կատարվածը պարթևների կողմից որևէ հակազդեցության չարժանացավ: Դա խոսում է այն մասին, որ տարածքային հարցերի շուրջ հռոմեա-պարթևական համաձայնությունը իսկապես նախորդել է Արտաշեսի սպանությանն ու հռոմեական ներխուժմանը, և Հրահատ IV-ը Հայաստանն արդեն ճանաչել էր որպես Հռոմի ազդեցության ենթակա երկիր: Ք. ա. 20 թ. մայիսի 12-ին Արտաշատի մոտ գտնվող հռոմեական ճամբարում պարթևները Տիգրիդուսին հանձնեցին նաև հռոմեական դրոշներն ու ռազմագերիներին՝ ըստ էության, ամբողջացնելով պայմանագրի կատարումը:

Եզրակացություն

«Արքայի Արտաքսերքսեսի Աստվածայինի» շրջագրով արտաշեսյան դրախմաների պատկերազրկական իրողությունների քննությունը հաստատում է, որ դրանց հեղինակը Արտաշես II-ն է: Դրախմաների թվագրված են արքայի գահակալության 14-րդ տարով, այն է՝ Ք. ա. 20 թ., ինչը համապատասխանում է հայ-հռոմեական հարաբերությունների առավելագույն լարվածության տարվան: Դրանց թողարկումը պայմանավորվել է ոչ թե Մեծ Հայքի տնտեսական կյանքում կատարված դրական տեղաշարժով, այլ Արտաշես II-ի դաշնակից Հրահատ IV Արշակունու Ք. ա. 20 թ. Հռոմի հետ կնքած առանձնակ հաշտությամբ: Հռոմի դեմ միայնակ պատերազմի սպառնալիքի տեսանկյունից լիովին բացատրվում են թե՛ դրախմաների պատկերազրկության հակահռոմեական թեման, թե՛ դրախմաների թողարկման շտապողականությունը, թե՛ լիարժեքությունը, որը չի համապատասխանում Մեծ Հայքի տնտեսական կազմալուծված վիճակին: Վերոնշյալ իրողությունների և Մեծ Հայքի ներքին քաղաքական միասնության խաթարման մասին գրավոր տվյալների համադիր քննությունից բխող հետևությունը միանշանակ է. Արտաշես II-ը խնդրո առարկա դրախմաները թողարկել է՝ Հռոմի դեմ վերահաս պատերազմի համար վարձկան զինուժ հավաքագրելու նպատակով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-124>

³ Տակիտոսը հայոց արքայի սպանությունը վերագրում է արքայի ազգականներին (*occiso Artaxia per dolum propinquorum*) [50, II.3]: Սակայն պարզ չէ, թե նա Արտաշեսի արյունակից ազգականներին՝ նկատի ունի, թե քրեմենյան և հելլենիստական արքունիքներում տարածված «արքայի ազգական» տիտղոսը կրող տոհմիկ ավագանուն [22, XI.3.2: 43, Pomp. XXXIII]:

Գրականություն

1. Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի եւ Հռոմայ 190 էն ն. Ք. մինչեւ 428 յ. Ք., Վենետիկ, 1912, 391 էջ:
2. Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, 991 էջ:
3. Հայոց պատմություն, հ. I, գիրք երկրորդ, Երևան, 2024, 700+24:
4. Մանասերյան Ռ., Հայաստանն Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, 215 էջ:
5. Ստեփանյան Ա., Պատմության կերպավորությունները Մեծ Հայքում, գիրք Ա, Երևան, 2012, 385 էջ:
6. Վարդանյան Ռ., Հորինված արձաթե դրամ «Աստվածային Արտաքսերքսեսի» անվամբ // Պատմա-քանասիրական հանդես, 1999, Երևան, № 1, էջ 321-326:
7. Еремян С. Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху // Известия академии наук Арм. ССР, общественные науки, 1948, № 11, с. 33-73.
8. Appianos. Appian's Roman History, Vol. II (Books VIII, Part II-XII), Printed in Great Britain, 1962, 477 p.
9. Augustus. Res Gestae Divi Augusti. The Achievments of the Divine Augustus with an introduction by P.A. Brunt and J. M. Moore, Oxford University Press, 7th edit., 1983, 90 p.
10. Babnis T. Augustan Poets on the Roman-Parthian Treaty of 20 BC // Classica Cracoviensia Vol. XX, Kraków, 2017, p. 5-43.
11. Bergmann B. Der Kranz des Kaisers, Genese und Bedeutung einer RöInsignie, Berlin and New York, 2010, xix + 515 p.
12. Bivar A. Iran under the Arsacids // Cambrige History of Iran, Vol. 3/2, New York, 2006, 21-99 pp.
13. Burnett A., Amandry M., Ripollès P. Roman Provincial Coinage, Vol. I, London, Paris, 1992, 727 p. + 7 Maps.
14. Cassios D. Dio's Roman History, Vol. V, London, Cambridge Mass., 1955, 526 p.
15. Cassios D. Dio's Roman History, Vol. VI, London, Cambridge Mass., 1955, 492 p.
16. Cassios D. Dio's Roman History, Vol. IX, London, Cambridge Mass., 1955, 489 p.
17. Classical Numismatic Group. Inc. Mail Bid Sale 46. 24 June 1998 // https://issuu.com/cngcoins/docs/cng_46 (21.02.2025)
18. Classical Numismatic Group, Inc. Auction 51. Mail Bid Sale. 15 September 1999 // https://issuu.com/cngcoins/docs/cng_51 (21.02.2025).
19. Classical Numismatic Group, Inc. Auction 85. Mail Bid Sale. 15 September 2010 // https://www.cngcoins.com/Coins_archive.aspx?CONTAINER_ID=601&ITEM_IS_SOLD=1
20. Dąbrowa E. Parthian-Armenian Relations from the 2nd Century BCE to the Second Half of the 1st Century CE // Electrum, Vol. 28, 2021, 41-57 pp.
21. Debevoise N. Political History of Parthia, Chicago, 1938, 303 p.
22. Flavius J. Jewish Antiquities. London, Wordsworth Classics of World Literatuere, 2006, 902 p.
23. Freeman and Sear Fixed Price List 6 (Summer 2001).
24. Fritz Rudolf Künker Münzenhandlung, Auction 124 (16-17 März 2007) // <https://issuu.com/kuenkercoins/docs/a124> (23.02.2025)
25. Gemini III Auction Catalogue Harlan J. Berk and Freeman & Sear, Ancient and World Coins, Greek and Roman Coins, January 9th, 2007.
26. Hackl U., Jenni H., Schneider C. Quellen zur Geschichte der Nabatäer, Textsammlung mit Übersetzung und Kommentar, Novum Testamentum et orbis antiquus, № 51, Freiburg, 2003.
27. Houghton A. Coins of the Seleucid Empire from the collection of Arthur Houghton, New York, 1983, 122 p. + 77 Plates.

28. Kovachs F. Additions and corrections to Armenian Coins and Their Values // *Armenian Numismatic Journal*, Series 1, Vol. 30, 2004, p. 83-86.
29. Kovachs F. Artaxias III and a Numismatic Enigma, *Armenian Numismatic Journal*, Ser. II, Vol. 10 (40), 2014, p. 19-25.
30. Kovachs F. Armenian Coinage in the Classical Period // *Classical Numismatic Studies*, № 10, Lancaster/London, 2016, xxv+83 p. + 34 Plates.
31. Krenzel E. Die erste armenische Münzprägung für Zenon/Artaxias aus Pontus // *Jahrbuch für Numismatik und Geldgeschichte*, № 63, 2013, p. 1-16.
32. Kropp A. *Images and Monuments of Near Eastern Dynasts, 100 BC-AD 100*, Oxford, 2013, 520 p.
33. Ivstins M. Ivstini Epitoma Historiarum Philippicarum Pompei Trogi. Accedunt Prologi in Pompei Trogi, Stuttgart, 1985, 375 p.
34. Leu Numismatic AG Web Auction 20 (16-18 Jul 2022) // <https://www.numisbids.com/sale/5828?s=1&pg=15&so=1> (21.02.2025)
35. Leu Numismatic AG Web Auction 32, (7 Dec 2024) // <https://www.numisbids.com/sale/8729> (24.02.2025).
36. Leu Numismatik AG Web Auction 33, (15-17 Mart 2025) // <https://www.numisbids.com/sale/9044> (06.04.2025)
37. Mattingly H. *Coins of the Roman Empire in the British Museum*, Vol. I, London, 1923, 464 p. + 64 Plates.
38. Nercessian Y. Silver Coins of Artaxias II, Tigrahanes III, Artavasdes IV of Armenia // *Armenian Numismatic Journal*, Vol. XXIX, Decemb. 2003, 89-98 pp.
39. Nercessian Y. Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia // *Armenian Numismatic Society, Special Publication*, № 11, Los Angeles, 2006, 212 p.+ 96 Plates.
40. Nomos AG - Obolos 34 (10 Nov 2024) // <https://www.numisbids.com/sale/8634> (24.02.2024)
41. Nurpetlian J. *Ancient Armenian Coins: The Artaxiad Dynasty (189 BC - AD 6)* // *Berytus Archaeological Studies*, Vol. LI-LII, Beirut, 2008-2009, p. 117-167.
42. Ogle M. Laurel in Ancient Religion and Folk-Lore // *The American Journal of Philology*, 1910, Vol. 31, No. 3 (1910), p. 287-311.
43. Plutarchos Plutarch's Lives. Vol. V, Cambridge Mass., London, 1955, ix + 544 p.
44. Poirer J. *The Romano-Parthian Cold War: Julio-Claudian Foreign Policy in the First Century CE and Tacitus' Annales*. Louisiana State University, 2003, 310 p.
45. Ronde A., Torossian H. Une drachme inédite (?) d'Artaxès II, roi d'Arménie // *Bulletin de la Société Française de Numismatique*, Vol. 52, № 2. p. 25-26.
46. Saryan L. An Unpublished Silver Drachm Attributed to Artaxias III (A.D. 18-34) of Armenia // *American Journal of Numismatics*, Second Series, Vol. 9, 1997, p. 7-16.
47. Schwentzel C. Les thèmes du monnayage royal nabatéen et le modèle monarchique hellénistique, Syria, № 82, 2005, p.149-166.
48. Suetonius G. *The Lives of the Caesars*, Vol. I, London, New York, 1914, 497 p.
49. Sutherland C., Carson R. *Roman Imperial Coinage*, Vol. I, London, 1984, 360 p.
50. Tacitus P. *The Annals*, London, 2017, 696 p.
51. Vardanyan R. A Dated Copper Coin of Artaxias II: Evidence of the Use of the Pompeyan Era in Artaxata // *Armenian Numismatic Journal*, Vol. XXVII, 2001, 90 p.
52. Wenning R. Eine neuerstellte Liste der nabatäischen Dynastie, *Boreas* 16, 1993, p. 25-38.

Об авторе и значении драхм с легендой «Царя Артаксиаса Божественного»

**Меликян Артур,
Чатинян Ира**

Резюме

Ключевые слова: аверс, реверс, Октавиан-Август, Рим, Великая Армения, Фраат IV, Атропатена

Драхмы с легендой «Царя Арташеса божественного» являются одними из самых оригинальных и загадочных выпусков позднеарташесской чеканки. Судя по изображению на аверсе портрета царя и царских знаков отличия, указанные драхмы явно находились под влиянием тетрадрахм Артавазда II. Новшеством является изображение на царском портрете лаврового венка, что является неприкрытой иконографической декларацией против римского великодержавия. Изображение дополняют эпитет «божественный», прилагаемый к царскому титулу, и иконография на реверсе драхм, которые сжато передают идею готовности к войне с Римом. Изучение иконографических реалий монет подтверждает, что они были изготовлены Арташесом II. Монеты датированы 14 годом правления царя, т. е. 20 г. до н. э., что соответствует периоду максимальной напряженности в армяно-римских отношениях. Их выпуск был обусловлен не положительной динамикой экономического развития Великой Армении, а заключением в 20 г. до н. э. особого мира между Фраатом IV Аршакуни, союзником Арташеса II, и Римом. Угроза военного противостояния с Римом без внешнего содействия вполне объясняет как антиримскую тематику иконографии монет, так и поспешность и полноценность выпуска драхм, что не соответствовало дезорганизованному экономическому состоянию Великой Армении. Комплексный анализ вышеизложенных реалий и письменных данных о нарушении внутривосточного единства Великой Армении позволяет сделать однозначный вывод: Арташес II выпускал указанные драхмы для вербовки наемных войск в предстоящей войне с Римом.

About the Author and the Meaning of Drachmas with the Legend “Of the King Artaxias the Divine”

**Melikyan Artur,
Chatinyan Ira**

Summary

Key words: obverse, reverse, Octavian Augustus, Rome, Great Armenia, Phraates IV, Atropatene

Drachmas with the legend "Of the King Artashes the Divine" are among the most original and mysterious issues of the late Artashes coinage. Judging by the image of the king's portrait and royal insignia on the obverse, these drachmas were clearly influenced by the tetradrachms of Artavazd II. An innovation is the image of a laurel wreath on the king's portrait, which is an overt iconographic declaration against the Roman great power. The image is complemented by the epithet "divine" attached to the king's title and the iconography on the reverse of the drachmas, which briefly convey the idea of readiness for war with Rome. A study of the iconographic realities of the coins confirms that they were made by Artashes II. The coins are dated to the 14th year of the king's reign, i.e. 20 BC, which corresponds to the period of maximum tension in Armenian-Roman relations. Their issue was due not to the positive dynamics of Armenia's economic development, but to the conclusion of a special peace in 20 BC between Rome and Phraates IV Arshaked, an ally of Artashes II. A comprehensive analysis of the above realities and written data on the violation of the internal political unity of Great Armenia allows us to make an unambiguous conclusion: Artashes II issued the said drachmas to recruit mercenary troops for the upcoming war with Rome.



Photo 1. Kovachs F., Armenian Coinage in the Classical Period, № 170.



Photo 2. Classical Numismatic Group 51, (15 Sept. 1999), Lot 768



Photo 3. Classical Numismatic Group 46, (24 June 1998), lot 693.



Photo 4. Freeman and Sear, Fixed Price List 6 (Summer 2001), № F 70.

Ներկայացվել է 09. 04. 2025 թ.
 Գրախոսվել է 19. 04. 2025 թ.
 Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ФИЛОСОФИЯ И
ПОЛИТОЛОГИЯ

PHILOSOPHY AND
POLITICAL SCIENCE

Քաղաքացիական հասարակությունը սոցիալ-փիլիսոփայական ճանաչողության տեսանկյունից

Աղաքայան Դիանա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-138>

Հանգուցային բառեր. *պետություն, հասարակություն, ժողովրդավարություն, անհատի Ազատություն, Սոցիալական փիլիսոփայություն, քաղաքացի*

Նախաբան: Մույն հոդվածը ուսումնասիրում է քաղաքացիական հասարակության գաղափարը արևմտաեվրոպական սոցիալ-փիլիսոփայական մտքի շրջանակներում՝ անդրադառնալով նրա պատմական ծագմանը, զարգացման փուլերին և սոցիալական, քաղաքական ու գաղափարական հակասություններին: Քաղաքացիական հասարակությունը ներկայացվում է որպես պետության և անհատի միջև կարևոր հակակշիռ, որը կարևոր դեր է խաղում ժողովրդավարության և անհատի ազատության պահպանման գործում: Վերլուծում է տարբեր փիլիսոփայական մոտեցումներ:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակը քաղաքացիական հասարակության գաղափարի պատմական զարգացման և դրա սոցիալ-փիլիսոփայական ընկալման ուսումնասիրությունն է, որպեսզի բացահայտվեն այս երևույթի ընկալման տարբեր մոտեցումները, հասկանալու համար, թե ինչպես է քաղաքացիական հասարակությունը ձևավորվել, փոխվել և ազդեցություն ունեցել պետության և անհատի միջև հարաբերությունների վրա՝ ընդգծելով նրա կարևորությունը ժողովրդավարության և անհատի ազատության պահպանման գործում:

Հետազոտության խնդիրները:

1. Քաղաքացիական հասարակության պատմական զարգացումը: Քաղաքացիական հասարակության գաղափարի պատմության ուսումնասիրություն՝ հին դարերից մինչև արդի ժամանակներ, տարբեր սոցիալական, քաղաքական և գաղափարական հանգամանքների ներքո, ինչը թույլ կտա հասկանալ խնդրի շուրջ առկա մոտեցումները և եզրակացությունն անել արդյունավետ քաղաքացիական հասարակության ձևավորման համար:

2. Հասարակության և պետության միջև հարաբերությունները: Հասարակության և պետության միջև գոյություն ունեցող փոխգործակցությունը և դրա ազդեցությունը քաղաքացիական հասարակության ձևավորման վրա, արդյունքում մենք կարողանանք հասկանալ, թե ինչպես կարելի է ձևավորել քաղաքացիական հասարակություն՝ առանց բախումների պետության և հասարակության անդամների միջև:

3. Քաղաքացիական հասարակության տարբեր ընկալումների վերլուծություն սոցիալ-փիլիսոփայական տեսանկյունից: Տարբեր ընկալումների հետազոտություն արդյունքում կկարողացաք դուրս բերել, թե որ մեթոդը կնպաստի քաղաքացիական հասարակության կայացմանը:

Հետազոտության նորույթը: Հետազոտության նորույթը հոդվածում ընդգծված է որպես քաղաքացիական հասարակության գաղափարի պատմական զարգացումն ու դրա սոցիալ-փիլիսոփայական ընկալումը: Հոդվածը մանրամասն վերլուծում է՝ ինչպես է քաղաքացիական հասարակության ընկալումը փոխվել դարերի ընթացքում, այնպես էլ այն հիմնական փիլիսոփայական ավանդույթները, որոնք ազդել են դրա ձևավորման վրա: Հետազոտությունն առանձնացնում է քաղաքացիական հասարակության դերը պետության և անհատի միջև:

Արդիականությունը: Հոդվածը քաղաքացիական հասարակության հայեցակարգի խորը և համապարփակ ուսումնասիրությունն է արևմտյան համատեքստում: Աշխատանքի նորույթը հետևյալն է. մանրամասն վերլուծվում է քաղաքացիական հասարակության գա-

դափարի պատմական զարգացումը մինչև մեր օրերը: Սա թույլ է տալիս ընթերցողներին հասկանալ, թե ինչպես է փոխվել քաղաքացիական հասարակության ընկալումն ու իմաստը դարերի ընթացքում, և բացահայտել հիմնական փիլիսոփայական ավանդույթներն ու մտածողներին, որոնք ազդել են դրա ձևավորման վրա և արդյունքում սոցիալ-փիլիսոփայական վերլուծությամբ հասկանալ՝ ինչպես նպաստել քաղաքացիական հասարակության ձևավորմանը:


Հետազոտության տեսական նշանակությունը և գործնական նշանակությունը

Մույն հոդվածը կարևոր է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով, քանի որ այն հիմք է տալիս քաղաքացիական հասարակության զարգացման, գործառույթի և նշանակության ավելի խոր և համակարգային ուսումնասիրության համար: Քաղաքացիական հասարակությունը, որպես պետության և անհատի միջև գոյություն ունեցող կարևոր հակակշիռ, դառնում է հանրության սոցիալական, քաղաքական և տնտեսական կյանքի առանցքային բաղադրիչ, որը հնարավորություն է տալիս ըմբռնելու, թե ինչպես է հասարակությունը կազմակերպվում և ինչ կերպ է գործում ժողովրդավարությունը:

Քաղաքացիական հասարակության գաղափարը լայն տարածում ունի աշխարհում: Շատ զարգացած երկրներում այս հայեցակարգը վաղուց օգտագործվել է պաշտոնական փաստաթղթերում և օրենքներում: Այնուամենայնիվ, «քաղաքացիական հասարակություն» տերմինն ինքնին առաջացել է համեմատաբար վերջերս՝ 19-րդ դարում՝ որպես հակակշիռ հասարակական կյանքում պետական միջամտությանը և նոր սոցիալական պայմաններում իշխանությունների ավտորիտար գործողություններին:

Հոդվածի բովանդակությունը: Հոդվածը ուսումնասիրում է քաղաքացիական հասարակության գաղափարը արևմտաեվրոպական սոցիալ-փիլիսոփայական մտքի շրջանակներում՝ շեշտելով նրա պատմական ծագումը, զարգացման փուլերն ու սոցիալական, քաղաքական ու գաղափարական հակասությունները: Քաղաքացիական հասարակությունը դիտվում է որպես պետության և անհատի միջև կարևոր հակակշիռ, որը նպաստում է ժողովրդավարության և անհատի ազատության պահպանմանը:

Հետազոտության մեթոդները: Հոդված գրելու գործընթացում օգտագործվող մեթոդները կարևոր դեր են խաղում թեմայի խորության, տեսանկյունի և վերլուծության ձևավորման գործում: Հոդվածում օգտագործված հետազոտության մեթոդները կարող են բաժանվել մի քանի հիմնական կատեգորիաների, որոնք ներառում են պատմական և համեմատական մոտեցումները: Առաջին գծապատկերում ներկայացված են առաջին հոդվածում օգտագործված հիմնական մեթոդները:



Գծապատկեր 1: Գիտական հետազոտության մեթոդները:

Պատմական մեթոդ: Հոդվածը սկսում է քաղաքացիական հասարակության գաղափարի պատմական վերլուծությամբ՝ հետևելով դրա զարգացմանը հին դարերից մինչև արդի ժամանակներ: Պատմական մեթոդը հիմնված է անցյալի իրադարձությունների, գործընթացների և մարդկանց հետազոտության վրա: Այն ներառում է պատմական փաստերի հավաքում, վերլուծություն և մեկնաբանություն: Այս մեթոդի միջոցով հեղինակն ուսումնասիրում է, թե ինչպես են ձևավորվել տվյալ երևույթները, ինչ գործոններ են ազդել դրանց վրա և ինչ հետևանքներ են ունեցել:

Համեմատական մոտեցում: Մոտեցումը հիմնված է տարբեր մշակույթների, հասարակությունների կամ համակարգերի համեմատության վրա: Այն կարող է օգտագործվել տարբեր քաղաքական, տնտեսական կամ սոցիալական համակարգերի ուսումնասիրության համար՝ հասկանալու, թե ինչպես են դրանք գործել, ինչ նմանություններ կամ տարբերություններ ունեն: Համեմատական ուսումնասիրությունները կարող են օգնել մեզ՝ բացահայտելու ընդհանուր օրինաչափությունները:

Իրական ժողովրդավարություն ապահովելու և անհատի ազատությունը պաշտպանելու համար կարևոր է, որ գոյություն ունենա ցանկացած պետական իշխանության հակալեզիծ. հենց այդ դերն է խաղում քաղաքացիական հասարակությունը: Այս երևույթի փիլիսոփայական վերլուծությունն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն:

«Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը առանցքային տարր է տարբեր ոլորտներում, ինչպիսիք են փիլիսոփայությունը և սոցիոլոգիան, սակայն դրա իմաստը հաճախ մնում է ոչ այնքան պարզ և երկիմաստ: Պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ «քաղաքացիական հասարակություն» հասկացության և «հասարակություն» հասկացության միջև կան էական տարբերություններ՝ չնայած նրանց միջև ակնհայտ կապին: Քաղաքացիական հասարակությունը ծագում է հասարակության զարգացման որոշակի փուլում, երբ մարդկանց միջև որոշակի հարաբերություններ են հաստատվում: Այսպիսով, «քաղաքացիական» ածականը կրում է կոնկրետ և հստակ բովանդակություն, չնայած այն կարող է որոշակիորեն անորոշ լինել:

Բաժին 1. Քաղաքացիական հասարակության հասկացության ընկալումները պատմական տարբեր ժամանակահատվածներում: «Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը պատմականորեն արտացոլում է բոլոր դարաշրջանների և մշակույթների մտածող մարդկանց ցանկությունը՝ ստեղծելու հասարակության և պետության իդեալական մոդել՝ հիմնված բանականության, ազատության, բարեկեցության և արդարության վրա: Առաջին նկատումները ներկայացված են քաղաքացիական հասարակության զարգացմանը նպաստող սկզբունքները:

**Քաղաքացիական հասարակության
Կենտրոնական սկզբունքը հարգանքն է
անհատի, նրա իրավունքների և
ազատությունների նկատմամբ:**

Նկար 1. Քաղաքացիական հասարակության ձևավորմանը նպաստող սկզբունքները:

Այսպիսով, քաղաքացիական հասարակությունը հակադրվում է ոչ միայն քաղաքացիական որակների բացակայությանը, այլ իր անդամների հասարակական և անձնական կյանքի նկատմամբ բռնության, ճնշման և պետական վերահսկողության հասարակությանը:

Քաղաքացիական հասարակության ձևավորման և դրա հայեցակարգի մշակման պատմական ուղին ուղեկցվել է սոցիալական, քաղաքական և գաղափարական սուր հակասություններով: Փիլիսոփայական մտածողության եվրոպական ավանդույթում քաղաքացիական հասարակության ուսումնասիրությունն իր արմատներով գնում է հին դարաշրջան: Առանձնահատուկ ուշադրության է արժանի Արիստոտելի այն գաղափարը, որ քաղաքացիական հասարակությունը ձևավորվում է քաղաքացիների ամբողջության կողմից և ներկայացնում է ինչպես բարբարոսների, այնպես էլ բռնապետության հակառակը: Կարևոր է նաև պետության ձևավորման մեջ մարդու քաղաքական բնույթի էվոլյուցիան ավարտելու նրա հայեցակարգը:

Անտիկ շրջանի մտածողները հիմք են վերցրել քաղաքացիական հասարակության

վերլուծության բնական-իրավական մոտեցումը՝ պետությունը և հասարակությունը համարելով մեկ ամբողջություն: Մինչև 18-րդ դարը նրանց միջև հստակ տարբերակում չկար, քանի որ պետությունը դիտվում էր որպես հասարակության կազմակերպման ձև: Հետագայում տեսաբանները սկսեցին տեսնել երկուսի միջև եղած տարբերությունը և հասկացան, որ դրանք փոխկապակցված մասեր են:

Իմանուել Կանտը ներկայացնում է քաղաքացիական հասարակության հիմքերի փիլիսոփայական և իրավական բնութագրերը, որոնք այն առանձնացնում են պետությունից: Նա շեշտում է, որ մարդը պատասխանատու է իր գործողությունների համար և ինքնուրույն է ստեղծում իր միջավայրը: Մարդկանց շահերի փոխազդեցությունը և դրանց պաշտպանությունը խթանում են ինքնակատարելագործման գործընթացը: Օրենքով Ապահովված ազատությունը առանցքային դեր է խաղում մարդու զարգացման և նրա մարդկային արժանապատվության պահպանման գործում [1, 95]:

Քաղաքացիական հասարակության էությունը հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել Կանտի այն պոստուլատը, որ հասարակությունը չպետք է ճնշի անհատի անհատականությունն ու անձնական շահերը, եթե նա չի խախտում օրենքները: Անձնական շահերի մրցակցությունը կարևոր դեր է խաղում անհատի և հասարակության զարգացման գործում: Կանտը կարծում է, որ անհատների միջև անտագոնիզմը խթանում է նրանց ինքնազարգացումը, և դա ազդում է պետությունների միջև հարաբերությունների վրա՝ կոչ անելով հասնել համընդհանուր իրավական քաղաքացիական հասարակության՝ որպես մարդկության առջև դրված կարևոր խնդիրներից մեկը:

Հաշվի առնելով Կանտի փիլիսոփայությունը՝ Վիլհելմ Հումբոլդտը օրինակներով ցույց տվեց քաղաքացիական հասարակության և պետության միջև հակասությունները: Նա հավատում էր, որ քաղաքացիական հասարակությունը ձևավորվում է անհատների կողմից և ներառում է բնական և ընդհանուր իրավունքը, ինչպես նաև հենց մարդուն: Մինչդեռ պետությունը բաղկացած է պետական ինստիտուտներից, դրական օրենքից և քաղաքացուց՝ ի տարբերություն քաղաքացիական հասարակության:

Այսպիսով, լուսավորության դարաշրջանի փիլիսոփաները տարբերակում էին քաղաքացիական հասարակությունը իրական պետությունից և դրա կառավարման ձևերից: Նրանք պաշտպանում էին սոցիալական պայմանագրի տեսությունը, ըստ որի՝ օրինական էր այն կառավարությունը, որին կամավոր ենթարկվում էին բոլոր քաղաքացիները: Միևնույն ժամանակ նրանք գիտակցում էին, որ իրական պետությունը հակված է ճնշել քաղաքացիական հասարակությանը: Հետևաբար, քաղաքացիական հասարակության հայեցակարգը ներառում էր պայմանագրի տարրեր, քաղաքացիների շահերի հաշվառում և իրականացում:

Լուսավորության ժամանակ «քաղաքակրթություն» հասկացությունը լայնորեն տարածվեց, և քաղաքացիական հասարակությանը նվիրված ուսումնասիրություններում կարելի է տեսնել հստակ քաղաքակրթական դրդապատճառ՝ արևմտյան հասարակության հակադրությունը Արևելյան բռնապետությանը, բարբարոսական «ոչ քաղաքակրթությանը» և ոչ եվրոպական սոցիալական ձևերի բոլոր դրսևորումներին: Օրինակ՝ 18-րդ դարի շոտլանդացի փիլիսոփա Ադամ Ֆերգյուսոնը քաղաքացիական հասարակությունը բնորոշեց որպես «քաղաքակրթ», որը մարդկության առաջընթացի մի փուլ է [2, 107]: Ըստ Ֆերգյուսոնի՝ քաղաքացիական հասարակության մեծ նպատակը անհատների երջանկությունն է: Ի վերջո, ինչպես կարող է լինել հասարակության բարգավաճումը, եթե նրա յուրաքանչյուր անդամ դժբախտ է:

Քաղաքացիական հասարակությունը և քաղաքացիությունը սերտորեն կապված են միմյանց հետ, քանի որ դրանք սահմանում են անհատի դերը որպես որոշակի համայնքի անդամ, որը համագործակցում է պետության հետ: Ըստ Հեգելի՝ քաղաքացիական հասարա-

կության զարգացումը հնարավոր է միայն պետության՝ որպես դրա հիմքի առկայության դեպքում: Նա շեշտում էր պետության կարևորությունը՝ դրանում տեսնելով համընդհանուր նյութական և հոգևոր սկզբունքի գաղափարի մարմնացումը և նրան առաջնահերթություն էր տալիս քաղաքացիական հասարակությանը [3, 228]:

Հետագայում Կառլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը մերժեցին Հեգելի գաղափարը քաղաքացիական հասարակության հանդեպ պետության գերակայության մասին և նախընտրեցին պատմությունը հասկանալու նյութապաշտական մոտեցումը: Մարքսը կարծում էր, որ քաղաքացիական հասարակությունը արտադրական հարաբերությունների ամբողջությունն է, մինչդեռ պետությունը դասի քաղաքական գերակայության գործիք է, որը վերահսկում է արտադրության միջոցները: Այդ պատճառով Մարքսը քաղաքացիական հասարակությունը կապեց հասարակության բազայի հետ, որտեղ պետությունը, իրավունքը, բարոյականությունը, արվեստը և կրոնը դիտվում էին որպես հավելումներ: Արդյունքում քաղաքացիական հասարակություն հասկացությունը բաժանվեց և գրկվեց իր ինքնուրույնությունից: Սա հանգեցրեց նրան, որ օրթոդոքսալ մարքսիզմ-լենինիզմը և սովետական սոցիալական և հումանիտար գիտությունը կարևորություն չտվեցին քաղաքացիական հասարակության հայեցակարգին, ինչը համապատասխանում էր տոտալիտար ռեժիմի խնդիրներին [4.13]:

Քաղաքացիական հասարակության գաղափարը, որպես պետությունից անկախ հատուկ ոլորտ, Եվրոպայում հայտնի դարձավ ֆրանսիացի սոցիոլոգ և քաղաքական գործիչ Ալեքսիս Դե Թոկվիլի աշխատանքի շնորհիվ: Նա ընդգծել է սեփական ուժով համայնքների ձևավորման կարևորությունը, որտեղ սերմանվում է հարգանք ազատության, հավասարության և քաղաքացիության նկատմամբ [5, 234]: Թոկվիլը նաև ուշադրություն է հրավիրել անկախ մամուլի և քաղաքական ասոցիացիաների դերի վրա, որոնք նպաստում են քաղաքացիական ինքնագիտակցության զարգացմանը և քաղաքացիական հասարակության ամրապնդմանը: Այսպիսով, նա ճանաչեց քաղաքացիական հասարակության մեջ քաղաքական տարրի կարևորությունը, որն անհրաժեշտ է ժողովրդավարական համակարգի համար:

18-19-րդ դարերում բնական իրավունքի, սոցիալական պայմանագրի և իշխանությունների տարանջատման հասկացությունների գործնական մարմնավորումը ոչ միայն նպաստեց իրավական պետության ձևավորմանը, այլև քաղաքական և իրավական տարածքի և քաղաքացիական հասարակության ստեղծմանը: 19-րդ դարում բնական իրավունքի, սոցիալական պայմանագրի և իշխանությունների տարանջատման հայեցակարգերի գործնական մարմնացումը ոչ միայն նպաստեց իրավական պետության ձևավորմանը, այլև քաղաքական և իրավական տարածքի և քաղաքացիական հասարակության ստեղծմանը: Արդյունքում ակնհայտ դարձավ, որ հասարակությունն իր ծրագրերը կարող է իրականացնել միայն պետական իշխանության հետ մրցակցելու ունակ ինստիտուտների և կառույցների առկայության դեպքում: Քաղաքական համակարգը և քաղաքացիական հասարակությունը այդ ժամանակ դառնում էին հենց այդ ինստիտուտները:

Քաղաքացիական հասարակությունն օգնում է ամրապնդել ժողովրդավարությունը [11, 42]: Այն չի բխում կապիտալիստական առաջընթացից, թեև վերջինս նպաստում է դրա ամրապնդմանը: Դրա առաջացման համար անհրաժեշտ են պետական իշխանության կողմից դրսևորվող քաղաքականություն և մասնավոր անձանց վարքագծի որոշակի նորմեր: Քաղաքականությունը թափանցում է հասարակական կյանք և ձևավորում քաղաքացիական հասարակության հասարակական կերպար ուժային հարաբերությունների միջոցով:

XIX-XX դարի սկզբին քաղաքացիական հասարակության հայեցակարգի զարգացման ամենակարևոր արդյունքը նրա կարգավիճակի ճանաչումն էր՝ որպես առանձին սոցիալական սուբյեկտ: Մշակվել է Քաղաքացիական հասարակության հայեցակարգի հիմնական տեսական հիմքը, ինչը նշանակում էր քաղաքացիական հասարակության դասական տեսության ի հայտ գալը:

Բաժին 2. Քաղաքացիական հասարակություն հասկացության ժամանակակից ընկալումը: Քաղաքացիական հասարակության ժամանակակից տեսությունները արտացոլում են նոր սոցիալական իրականություն, որտեղ քաղաքացիական հասարակության գաղափարը պարզապես տեսական կառուցվածք չէ, այլ դառնում է ամենօրյա գիտակցության մաս: Հետմոդեռնիզմի փիլիսոփայությունը սոցիալական կյանքը և քաղաքացիական հասարակությունը դիտարկում է հաղորդակցության վրա հիմնված միջուկային փոխազդեցության ուսպնյակի միջոցով: Կարևոր հարց է դառնում անհատի և հասարակության հարաբերակցությունը, որը բացահայտվում է քաղաքացիական հասարակության և պետության փոխգործակցության միջոցով:

Ժամանակակից հեղինակները չեն անտեսում քաղաքացիական հասարակության դասական տեսության սկզբունքները, այլ ավելի շուտ ուսումնասիրում են դրանք նոր ձևերով՝ օգտագործելով նոր հասկացություններ: Հատուկ ուշադրություն է դարձվում սոցիալական պետության համատեքստում քաղաքացիական իրավունքների վերանայմանը: Հնդհանուր կետերից մեկը կոնսենսուսի գաղափարն էր, որը ներկայացնում է սոցիալական պայմանագրի փոփոխված ընկալումը և ենթադրում է պետության ավելի ակտիվ սոցիալական դեր: Այս գաղափարը, որը հայտնի է նաև որպես կոնսենսուս, բխում է այն բանից, թե ինչպես է պետությունը գործում սոցիալական ոլորտում:

Յուրգեն Հաբերմասը քաղաքացիական հասարակությունը սահմանում է որպես սոցիալական ոլորտում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների հիմք: Նա դա տեսնում է որպես հաղորդակցության տարածք, որտեղ ձևավորվում է ընդհանուր սոցիալական աշխարհի բոլոր սուբյեկտների համար, որում զարգանում և հաստատվում են գաղափարներ, իդեալներ և արժեքներ: Այսպիսով, նա առաջարկում է քաղաքացիական հասարակության նոր տեսակ՝ «բազմակարծիք, արդյունավետ և պատասխանատու», որն ազատված քաղաքականությունից և ենթակա չէ «պետություն – հասարակություն» փոխհարաբերությունների տրամաբանությանը:

Յ. Հաբերմասը կոչ է անում օգտագործել հաղորդակցական գործողություն առկա սոցիալական պրակտիկան վերլուծելու նպատակով նոր մոտեցումներ և նորարարություններ սահմանելու համար: Նա կարծում է, որ ազատ դիսկուրսը կարող է հանգեցնել ընդհանուր համաձայնության կյանքի հիմնական հարցերի շուրջ, ինչպիսիք են նորմերը, արժեքները և նպատակները: Հաղորդակցական գործողությունների տեսությունը Հաբերմասին թույլ է տալիս տեսնել ժողովրդավարական վերափոխումների դրական հետևանքներ և ձգտել սոցիալական կոնսենսուսի հաստատմանը ռացիոնալ դիսկուրսի միջոցով, որում յուրաքանչյուր մասնակից փորձում է համատեղել իր շահերը ընդհանուր ստանդարտների հետ: Հաբերմասի այս զարգացումը կարևոր մեթոդաբանական մոտեցում է քաղաքացիական հասարակության ուսումնասիրության գործում:

Ֆրանսիացի մտածող Միշել Ֆուկոն, ով ուսումնասիրում էր պոստմոդեռնիզմի փիլիսոփայությունը, հանդես էր գալիս որպես Յուրգեն Հաբերմասի հակառակ տեսակետ հայտնող: Նա կարծում էր, որ քաղաքացիական հասարակության մեջ համընդհանուր համաձայնության հասնելու հնարավորություն չկա, կոնսենսուսի գաղափարը չի համապատասխանում ժողովրդավարական սկզբունքներին [10.127-136]: Ֆուկոն մերժեց իշխանության ավանդական ընկալումը որպես ամենակարող և տոտալ՝ հնարավորություն տալով մեկին կառավարել շատերին: Նա նկարագրում էր իշխանության նոր տեսակը որպես կարգապահական մեխանիզմ: Նրա կարծիքով, քաղաքացիական հասարակության այնպիսի բնութագրերը, ինչպիսիք են հասարակության սուբյեկտների ինքնավարությունը և համերաշխությունը, իրենց տեղը գիշում են կարգապահական վերահսկողության մեթոդներին, որոնք միշտ չէ, որ թափանցիկ են: Ֆուկոն կարծում էր, որ հասարակությունը պետք է ուղիներ փնտրի իշխանության համատեքստում իր հնարավորություններն իրականացնելու համար: Հստ իր

հայեցակարգի՝ քաղաքացիական հասարակությունը կարգապահական տիպի հասարակություն է:

Քաղաքացիական հասարակության ժամանակակից լիբերալ մոդելը, տրված է Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Էռնեստ Գելների կողմից, այն բաղկացած է մի շարք ոչ կառավարական հաստատությունների առկայությունից, որոնք ունակ են գործել պետությունից անկախ և միևնույն ժամանակ խաղալ միջնորդի դեր հիմնական շահերի խմբերի միջև [9.108]: Այս հաստատությունները կարող են լինել ոչ պետական: Քաղաքացիական հասարակությունը հիմնված է քաղաքականության, տնտեսության և սոցիալական ոլորտի տարանջատման սկզբունքի վրա՝ Քաղաքացիական հասարակությանը նեղ իմաստով անկախ սոցիալական ոլորտ է, որը առանձնացված է պետության ազդեցությունից: Քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնական սկզբունքներից է, որ այն հակված է իշխանության կառույցների կողմից հասարակության գործերին չմիջամտելուն:

Ըստ Գելների, քաղաքականության և տնտեսագիտության տարանջատումը քաղաքացիական հասարակության և ավանդապաշտի հիմնական տարբերությունն է [8, 25]: Նա շարունակում է Արիստոտելի, Լոկի և Շեգելի ավանդույթը՝ պնդելով, որ մասնավոր սեփականությունը ծառայում է որպես քաղաքացիական հասարակության հիմք: Բացի այդ, քաղաքացիական հասարակության կարևոր հիմքը քաղաքացիական պարտքի և հանդուրժողականության զգացումն է, որը սահմանում է մարդու ժամանակակից տեսակը, որը Գելները նկարագրել է որպես «մոդուլային»:

Քաղաքացիական հասարակության մեջ ժամանակակից մարդը պետք է ունենա «մոդուլարության» առանձնահատկություններ՝ առկա ինստիտուտներին և ասոցիացիաներին հեշտությամբ ինտեգրվելու ունակություն, ժամանակավորապես մասնակցել դրանց և ազատորեն լքել դրանք: Գելների մոտեցումը շեշտում է քաղաքացիական հասարակության կարևորությունը՝ որպես ժամանակակից հասարակության մեջ անհատի ազատության հիմք: Նա կարծում է, որ քաղաքացիական հասարակության հայեցակարգն ավելի կառուցողական և օգտակար է, քան ժողովրդավարություն հասկացությունը: Նրա տեսությունը քաղաքացիական հասարակությունը ներկայացնում է որպես դինամիկ կառույց, որը կարող է ռացիոնալ բարելավվել մարդու մոդուլարության շնորհիվ:

Ժամանակակից քաղաքացիական հասարակության ամենակարևոր հասկացություններից մեկը ձևակերպել են ամերիկացի երկու պրոֆեսորներ՝ սոցիոլոգ Էնդրյու Արատոն և քաղաքագետ Ջին Քոենը [10, 7]: Նրանք քաղաքացիական հասարակությունը սահմանում են որպես տնտեսության և պետության միջև փոխգործակցության ոլորտ, որն իր մեջ ներառում է սերտ հարաբերություններ ընտանիքի, սոցիալական ասոցիացիաների, սոցիալական շարժումների և հանրային հաղորդակցության տարբեր ձևերի: Ժամանակակից քաղաքացիական հասարակությունը դերերի, վարքի ձևերի, նորմերի, իրավասության ոլորտների, կայսրության ձևերի և կազմակերպչական հաղորդակցության աշխարհ է: Նրա խնդիրն է ոչ թե վերահսկել տնտեսական բաշխումը կամ իշխանական կառույցները, այլ ազդել այդ գործընթացների վրա: Այն պետության վրա ազդում է ազատ մտավոր քննարկումների և Ժողովրդավարական կազմակերպությունների միջոցով, այլ ոչ թե հակադրվում է դրան [14, 41]:

Հետազոտության առանձին թեմա է քաղաքացիական հասարակության վերլուծությունը՝ օգտագործելով սոցիալական կապիտալի հայեցակարգը: Ամերիկացի սոցիոլոգ Ռոբերտ Պուտնամը սոցիալական կապիտալը դիտարկում է որպես քաղաքացիական հասարակության ձևավորման և գործունեության հիմք, որը նա տեսնում է որպես քաղաքացիների կոսմոսի և ընդհանուր նպատակներին ուղղված վարք: Նա կարծում է, որ մարդկանց հորիզոնական կամավոր միավորումները կարող են խթանել համագործակցությունը և օգնել կոլեկտիվ խնդիրների լուծմանը: Պուտնամի կարծիքով՝ հորիզոնական կապերը նպաստում են քաղաքացիական ոգու, համերաշխության և վստահության զարգացմանը: Նրա հետազո-

տության արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքացիները, մասնակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և կուտակելով սոցիալական Կապիտալ, կարող են այն օգտագործել պետության կառավարման մեջ ժողովրդավարական սկզբունքների ամրապնդման համար:

Սոցիալական կապիտալի հայեցակարգի իր մեկնաբանության մեջ Ֆրենսիս Ֆուկույաման շեշտում է հասարակության և պետության միջև կարևոր փոխգործակցությունը [12, 30]: Սոցիալական կապիտալի մասին իր հոդվածում նա այն սահմանում է որպես հաստատված ոչ ֆորմալ նորմեր, որոնք նպաստում են մարդկանց միջև համագործակցությանը: Նա ուշադրություն է հրավիրում պետության դերի վրա սոցիալական կապիտալի ձևավորման գործում, որն ընկած է քաղաքացիական հասարակության հիմքում: Ֆուկույաման նաև ընդգծում է, որ պետության ազդեցությունը հասարակության վրա կարող է լինել ինչպես կործանարար, այնպես էլ կառուցողական՝ կախված այդ փոխգործակցության բնույթից:

20-րդ դարի զարգացումները ցույց տվեցին, որ չնայած պետական ինստիտուտների օգնությամբ քաղաքացիական հասարակության ինքնակարգավորման մեխանիզմները ճնշելու հանրային իշխանության մենաշնորհների ցանկությանը, ինքնակարգավորվող ուժն ավելի ուժեղ էր: Այն դեպքերում, երբ ինքնակարգավորման մեխանիզմները բավականաչափ զարգացած էին, պետությունը, գործելով որպես քաղաքացիական հասարակության մաս, սկսեց կարգավորել հանրային հարաբերությունները մասնավոր շահերի պաշտպանության, հանրային իշխանության տարանջատման և ինքնակարգավորման պաշտպանական մեխանիզմների ստեղծման համար [13, 1-424]: Միևնույն ժամանակ, այն երկրներում, որտեղ պետությունը ճնշում էր քաղաքացիական հասարակությունը (Օրինակ՝ Գերմանիայում և Ռուսաստանում) և ինքնակարգավորման մեխանիզմները թերզարգացած էին, կենտրոնացված հանրային իշխանության համադրությունը պետական ապարատի հետ հանգեցրեց քաղաքացիական հասարակության ճնշմանը և տոտալիտար համակարգերի առաջացմանը:

Այսպիսով, սոցիալ-փիլիսոփայական մտքի մեջ դրված քաղաքացիական հասարակության գաղափարը զարգացման երկար ճանապարհ է անցել, որը հանգեցրել է քաղաքացիական հասարակության ամբողջական հայեցակարգի ձևավորմանը [6, 11-12]: Քաղաքացիական հասարակության եվրոպական մոդելը հիմնված է տնտեսության մեջ շուկայական հարաբերությունների, հանրային ոլորտում քաղաքացիների իրավունքների ճանաչման և պաշտպանության, օրենքի նկատմամբ հարգանքի, իշխանությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրողների առջև նրա պատասխանատվության, ինչպես նաև անհատի ակտիվ դերի վրա:

Հետազոտության վերլուծությունը, արդյունքները: Այս հոդվածը կենտրոնանում է քաղաքացիական հասարակության պատմական և սոցիալ-փիլիսոփայական զարգացման վրա, ինչպես նաև դրա կարևորությունը վրա պետության և անհատի միջև հարաբերություններում: Քաղաքացիական հասարակությունը դիտվում է որպես ժողովրդավարության և անհատի ազատության պահպանման կարևոր բաղադրիչ, որը կարող է հակակշիռ հանդիսանալ պետական իշխանության նկատմամբ:

Չոդվածում մանրամասնորեն ուսումնասիրել ենք քաղաքացիական հասարակության գաղափարի պատմական զարգացումը և սոցիալ-փիլիսոփայական ընկալումը արևմտաեվրոպական մտքի շրջանակներում: Հետազոտությունը ընդգծում է քաղաքացիական հասարակության կարևորությունը պետության և անհատի միջև հարաբերություններում, ինչպես նաև նրա դերը ժողովրդավարության և անհատի ազատության պահպանման գործում: Բացահայտվում են Արևմուտքի ժամանակակից սոցիալական փիլիսոփայության մեջ քաղաքացիական հասարակության երևույթը հասկանալու տարբեր մոտեցումները:

Եզրակացություն

Սույն հոդվածը հանգամանորեն վերլուծում է քաղաքացիական հասարակության գաղափարը, նրա պատմական զարգացումը և սոցիալ-փիլիսոփայական ընկալումները, որոնք ձևավորել են այս երևույթի շուրջ առկա քննարկումները: Քաղաքացիական հասարակությունը ներկայացվում է որպես պետության և անհատի միջև կարևոր հակակշիռ, որն ապահովում է ժողովրդավարության և անհատի ազատության պահպանման անհրաժեշտ պայմանները:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-138>

Գրականություն

1. Кант И. Идея всеобщей истории во всемирно-гражданском плане // Сочинения на немецком и русском языках. Москва, 1994, т. 1, с. 95.
2. Фергюссон А. Опыт истории гражданского общества // Пер. с англ.; под ред. М.А. Абрамова. Москва, 2000, с. 32, с. 107.
3. Гегель Г. Философия права. Москва, 1990, с. 228.
4. Маркс К. К критике политической экономии, т. 13.
5. Токвиль А. Демократия в Америке. Москва, 1992, с. 234.
6. Гужавина Т.А. Социально-философские основания гражданского общества (общетеоретические подходы и региональная практика), Архангельск, 2011, с. 11-12.
7. Флибверг Х. и Фуко. Социологические исследования, 2000, № 2, с. 127-136.
8. Геллнер Э. Условия свободы. Гражданское общество и его исторические соперники. Москва, 2004, с. 25.
9. Геллнер Э. Указ. соч., с. 108.
10. Козн Дж., Арато Э. Гражданское общество и политическая теория. Москва, 2003, с. 7.
11. Четвернин В. Демократическое конституционное государство: введение в теорию. Москва, 2003, с. 42.
12. Fukuyama F. Social Capital and Civil Society (The Institute of Public Policy George Mason University), 1999, p.30.
13. Robert C., Nancy L. Civil Society and Government, 2021, p. 1-424.
14. Blomberg F. The Bright & Dark Sides of Civil Society-Democratic Consolidation and Regime Hybridity in Divided Societies. Frankfurt, 2012, p.41.

Гражданское общество с точки зрения социально-философского познания

Агабян Диана

Резюме

Ключевые слова: государство, общество, демократия, свобода личности, социальная философия, гражданин

В статье рассматривается идея гражданского общества в контексте западноевропейской социально-философской мысли, прослеживаются её исторические корни, этапы развития, а также анализируются социальные, политические и идеологические противоречия, сопровождавшие формирование данного концепта. Гражданское общество представлено как важный противовес между государством и личностью, играющий важную роль в сохранении демократии и индивидуальной свободы. В статье анализируются различные философские подходы, рассматриваются проблемы, с которыми сталкивается гражданское общество, раскрывая различные интерпретации гражданского общества в современной западной социальной философии. Данная статья важна как с теоретической, так и с практической точки зрения, поскольку она закладывает основу для более глубокого и систематического изучения развития, функционирования и значения гражданского общества. Гражданское общество, как важный противовес между государством и личностью, становится ключевым компонентом социальной, политической и экономической жизни общества, что дает возможность понять, как устроено общество и как функционирует демократия. Анализ взаимодействия институтов гражданского общества позволяет выявить структурные механизмы, определяющие устойчивость демократических процессов и динамику социальных трансформаций в условиях современных политических изменений.

Civil Society from the Perspective of Socio-philosophical Cognition

Aghabalyan Diana

Summary

Key words: state, society, democracy, individual freedom, social philosophy, citizen

The following article examines the idea of civil society within the framework of Western European socio-philosophical thought, reflecting on its historical origins, stages of development, and social, political, and ideological contradictions. Civil society is presented as a vital counterbalance between the state and the individual, playing a key role in safeguarding democracy and protecting individual freedom. The article also explores a range of philosophical perspectives on this relationship along with the challenges facing civil society by examining its origins in Western European social-philosophical thought. In addition, it uncovers different interpretations of civil society in modern Western social philosophy. This article is important both theoretically and practically, as it provides a basis for a deeper and more systematic study of the development, function and significance of civil society. Civil society, in its turn, becomes a key component of the social, political and economic life of society, providing an opportunity to understand how society and democracy function. Analyzing civil society institutions reveals mechanisms shaping democratic stability and social transformation amid political change.

Ներկայացվել է 11. 02. 2025 թ.

Գրախոսվել է 13. 03. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

Հայ առաքելական եկեղեցին որպես քաղաքացիական հասարակության հաստատություն (ինստիտուտ)

Պողոսյան Գարիկ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-148>

Հանգուցային բառեր. *համընդհանուր քաղաքացիական հասարակություն, համամոլորակային տուրբուլենտություն, մասնակցային գործառույթ*

Ներածություն

Հայ դպրոցականների և երիտասարդների շրջանում, ներառյալ՝ կրթօջախները, ակնհայտորեն առկա է միտում՝ նշելու օտար տոներ՝ Սուրբ Վալենտինի օրը, Հելուինը, Գոհաբանության օրը: Այն փաստորեն իրենից ներկայացնում է օտար սոցիալականության միջավայրի ներխուժում հայ իրավաբանություն, իսկ փափուկ ուժի այս անհամաչափ ազդեցությունը (անհամաչափ, քանի որ հայկական եկեղեցական ու ազգային տոները չեն նշվում Արևմուտքի երկրներում) մեծ հաշվով դուրս է մնում հայ հետազոտողների տեսադաշտից: Ասվածը կարևորվում է հատկապես հիմա, երբ համամարդկային քաղաքակրթությունն առաջնորդվում է խաղերի տեսության տրամաբանությամբ [7]: Հայաստանյան ու արտասահմանյան առաջատար գիտահետազոտական հաստատություններն ու հետազոտողներն ուշադրություն են հրավիրում այնպիսի օրհասական հիմնախնդիրների հրատապության վրա, ինչպիսիք են կլիմայական փոփոխությունները, անգրագիտությունը, տակավին չհաղթահարված աղբատությունը, թերսնումը, հակամարտությունների աճն ու հումանիտար հետևանքները, միջազգային համագործակցության ձևաչափերում առկա անհամաձայնությունները և այլն [3, 154]: Սակայն, միևնույն ժամանակ, աչքաթող են արվում մշակութային ներթափանցումներին ու դրանց ազդեցությանն առնչվող հարցերը, ուստի բացակայում է համընդհանուր ըմբռնման գաղափարական հենքը:

Համոզված ենք, որ հայկական քաղաքակրթության շարունակական հզորացման ու արտաքին անհարկի ներխուժումներից պաշտպանության նպատակով անհրաժեշտ է ձևավորել քաղաքացիական, կրթական, քաղաքական հարթակների ու հաստատությունների մրցունակ տիրույթ, որը հնարավորություն կստեղծի մշակելու վերոնշյալ հիմնախնդրին լուծումներ գտնելու կառուցակարգեր: Մեր համոզմամբ այդպիսի հնարավորություններից է համամոլորակային քաղաքացիական հասարակության ուսումնասիրությունը, որի մտազննությունը կարևոր է հատկապես Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կայացման տեսանկյունից:

Այժմ առկա է տեսակետ առ այն, որ ձևավորված չէ համամոլորակային քաղաքացիական հասարակություն, թեպետ կան նաև հակառակ պնդումներ: Պետություններն ու հասարակություններն ունեն քաղաքացիական հասարակության զարգացման սեփական տեսլական ու մոտեցումներ, ինչի կարևորության շուրջ, թվում է, առկա է փոխըմբռնում [1, 455], սակայն ըստ ամենայնի ձևավորված չէ մի համամոլորակային ցանց, որը, անհատների ու մարդկանց խմբերի միավորելով, կարող է կոչվել համամոլորակային քաղաքացիական հասարակություն: Մի կողմից այդպիսի մի համամոլորակային հարթակի բացակայությունը, մյուս կողմից՝ հիմնախնդիրների կարգավորման գործընթացում քաղաքացիավարության սկզբունքներ որդեգրելու անհրաժեշտության գիտակցումը ստեղծում են գաղափարն ավելի խորությամբ հետազոտելու պահանջ: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ վերոնշյալ ուսումնասիրությունները պետք է լինեն բազմամակարդակ, այսինքն՝ վերաբերվեն ն՝ անհատներին ու մարդկանց առանձին խմբերի, և՛ հասարակություններին (լոկալ մակարդակ) [9], և՛ մարդկությանն ընդհանրապես (համամոլորակային մակարդակ), ապա վստահ ենք, որ քաղաքացիական հասարակության հաստատությունների քանակական ու որակա-

կան փոփոխությունների անհրաժեշտության մասին մեր առաջ քաշած վարկածը կարող է լույս սփռել համամոլորակային քաղաքացիական հասարակությանն առնչվող հիմնախնդիրների վրա (հայկական համատեքստում), հանգեցնել լուծումների ի հայտ գալուն:

Այսպես, եթե հարցականվում են քաղաքացիական հասարակության հաստատությունների բնույթն ու տեսակները, ապա առաջ է քաշվում գաղափար առ այն, որ դրանց քանակական ու որակական բնութագրիչների փոփոխությունը կարող է հանդիսանալ մի այդպիսի լուծում: Այս համատեքստում հոդվածը նպատակ է հետապնդում վերլուծական, համեմատական և համադրական մեթոդներով հիմնավորելու, որ ավանդական հաստատությունները (ընտանիքը, բանակը, եկեղեցին) կարող են և պետք է դիտարկվեն որպես քաղաքացիական հասարակության անքակտելի մաս:

Մեր այս համոզմունքն ունի երկու հիմնական տեսական-գաղափարական հենարան: Առաջին, քաղաքացիական հասարակության վերաբերյալ նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, որ այն շատ ավելի ընդգրկուն, բազմադերային միջավայրում գործառնող (բազմաթիվ դերակատարներից բաղկացած) ոլորտ է, քան հասարակական կազմակերպությունների տիրույթը: Առկա են ասվածի բազմաթիվ ապացույցներ և՛ եվրոպական երկրների փորձից, և՛ այսպես կոչված գլոբալ հարավի [14] երկրների: Ուստի, քաղաքացիական հասարակության նեղ սահմանումները հնացած են և չունեն կիրառական նշանակություն համամոլորակային քաղաքացիական հասարակության ձևավորման տեսակետից: Երկրորդ, ավանդական հաստատությունների ներգրավումը քաղաքացիավարության կերտման գործընթացում ոչ միայն համահունչ է ընթացիկ համամոլորակային տեղաշարժերին, այլև հարստացնում է քաղաքացիավարության սկզբունքների տիրույթը, քանի որ արդեն կայացած հաստատությունների կողմից քաղաքացիավարության դեր ստանձնելը փոխադարձաբար ընդլայնում է նրանց գործառնության տիրույթը: Հոդվածը քաղաքացիական հաստատությունների քանակական ու որակական փոփոխությունների հարցը դիտարկում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ռապնակով:

Քաղաքացիական հասարակության սահմանումների շուրջ

Քաղաքագիտական բառարանները հաճախ չունեն քաղաքացիական հասարակություն հասկացության սահմանումներ [18]: Ինչ է քաղաքացիական հասարակությունը հարցի պատասխանը տակավին մնում է մեծ հաշվով չլուծված: «Բրիտանիկա» հանրագիտարանն այն սահմանում է որպես խմբերի, համայնքների, ցանցերի և կապերի խիտ ցանց, որոնք գտնվում են անհատի և պետության միջև [16]: Ասվածից հետևում է քաղաքացիական հասարակությունն հասկացության ընդգրկուն բնույթը, քանի որ արդյալային խմբերը, համայնքները, ցանցերը և կապերը ներառական, համընդհանուր հասկացություններ են և չեն սահմանափակվում որևէ տեսակի խմբային պատկանելությամբ: Օքսֆորդի քաղաքագիտական բառարանը քաղաքացիական հասարակությունը սահմանում է արևմտյան և հետաադըպատերազմյան ընկալումների ծիրում: Այսպես, բառարանի հեղինակները բացատրում են, որ առկա է «արևմտյան ընկալում առ այն, որ քաղաքացիական հասարակությունը ստեղծում է կանոններ, որոնք պետությունը պետք է պաշտպանի» [17, 73]: Ասվածից հետևում է, որ գործառնությանն առումով կանոնակարգված են պետություն-քաղաքացիական հասարակություն հարաբերությունները: Ընդ որում, քաղաքացիական հասարակությունը կատարում է համակեցություն ու փոխըմբռնման օրակարգ, խաղի ընդունված կանոններ ձևավորող սուբյեկտի դեր: Միևնույն ժամանակ ընդգծվում է պետության՝ որպես իրավաքաղաքական, հաստատութենական կառույցի վերահսկողական գործառնությունը:

Փաստորեն քաղաքացիական հասարակություն-պետություն երկվությունը ոչ թե տարանջատման, այլ փոխլրացման մասին է: Ըստ որում՝ կանոններ ձևավորող քաղաքացիական հասարակությունը չի կարող սահմանափակվել հասարակական կազմակերպություններով, որոնք ոչ միայն հաճախ օտարերկրյա ֆինանսավորում ունեն, այլև ներկայացնում են խմբային, հատվածային շահեր, ոչ թե հանրային կամ համագային: Ասվածը վկայում է, որ

ավանդական հաստատությունները՝ Հայ առաքելական եկեղեցին, հայ ընտանիքը, հայկական բանակը, պետք է դիտարկվեն որպես քաղաքացիական հասարակության հաստատություններ: Հայ առաքելական եկեղեցու պատմական առաքելությունը, հոգևոր-կրթադաստիարակչական գործառնությունը, կազմակերպական և համահայկական ներուժը նրան դարձնում են այս շարքին դասվելու հավակնություն ունեցող ավանդական հասկացություններից գլխավորը, մանավանդ, որ այն անմիջականորեն կապված է հայ ավանդական ընտանիքի և հայոց բանակի հետ, ուստի կարող է կատարել նաև կամրջող, համակարգող գործառնություն:

Ավելին, մարդկության քաղաքակրթական փորձը համամարդկային քաղաքագիտական միտք է ներբերել այն գաղափարը, որ քրիստոնեական եկեղեցին քաղաքացիական հասարակության հաստատություն է: Այսպես, «Արևելյան Եվրոպայում կոմունիզմի փլուզումից հետո քաղաքացիական հասարակություն կառուցելու (վերակառուցելու) անհրաժեշտությունը եղել է բարեփոխիչների ու մեկնաբանների կողմից հաճախ քննարկվող թեմա 1991-ից սկսած: Կոմունիստական վարչակարգը չէր խրախուսել (had disapproved) քաղաքացիական հասարակությունը: Հետևաբար, Լեհաստանի կաթոլիկ եկեղեցու պես դիմացկուն օրինակներից գատ քիչ էին այդպիսիք» [17, 82]: Բերված օրինակում կաթոլիկ եկեղեցին աներկբայորեն ընդունվում է որպես քաղաքացիական հասարակություն հաստատություն, ինչը ևս մեկ անգամ հիմնավորում է մեր այն վարկածը, որ Հայաստանի Հանրապետությունում և հայկական սփյուռքում անհրաժեշտ է վերաբարձնող քաղաքացիական հասարակության հաստատությունների դերը, դրանց շարքին դասել ավանդական հաստատությունները, առաջին հերթին Հայ առաքելական եկեղեցին, քանի որ այն փաստացի կատարում է քաղաքացիական հասարակություն կերտելու և վերակերտելու պատմաքաղաքակրթական գործառնություն:

Համամոլորակային տուրբուլենտությունը և քաղաքացիական հասարակության դերը

Որպես արդի ժամանակաշրջանում համամոլորակային տուրբուլենտության ծնող երկու հիմնական պատճառներ ենք դիտարկում համամոլորակային կառավարման հիմնախնդիրները (աղքատության հաղթահարման համընդհանուր մարտահրավեր, երկրների տնտեսական անհամաչափ զարգացում, համավարակների դեմ պաշտպանվածության հիմնախնդիրներ, կլիմայական փոփոխություններ և այլն), ինչպես նաև անվտանգային մարտահրավերները (Արցախի արտաբխոն բնակչության նկատմամբ էթնիկ գտումներ և բռնի տեղահանություն, ռազմական հակամարտությունների թվային աճ և աշխարհագրական ընդլայնում, սպառազինությունների մրցավազք, տեղեկատվական անվտանգության հիմնախնդիր, սպառողների իրավունքներ և այլն): Փաստորեն համամոլորակային տուրբուլենտությունը [8] մի վիճակ է, երբ փոփոխությունների հորձանուտում հայտնվում են բոլորը: Մարդն իր քաղաքացիական գործառնություններն իրականացնելիս (աշխատանք, զինվորական ծառայություն, քաղաքացիական շարժումներ ու նախաձեռնություններ), ազգային կյանքում (կրթական համակարգ, եկեղեցական կյանք, ավանդական ծեսեր և սովորույթներ), ինչպես նաև անձնական ոլորտում (ներընտանեկան հարաբերություններ, միջանձնային հարաբերություններ, բնակչության վայրի ու աշխատանքի ընտրության հնարավորություն) անընդհատ բախվում է արտաքին իրողությունների ազդեցությանը, ավելի ստույգ՝ արտաքին ներխուժումներին: Ապրելով համամոլորակային բաց հասարակությունում՝ մարդն անպաշտպան է, քանի որ նրա ավանդական պատկերացումները կյանքի ամենատարբեր ոլորտների վերաբերյալ ճնշվում են համամոլորակային օրակարգի, արդիականացման տարաբնույթ հոսանքների [13] կողմից: Ավելին, տեղեկատվական ներխուժումներն ու անորոշությունների մակաձուլը քաղաքական նպատակներով ստիպում են ժամանակակից մարդուն մտնել կամ երկարատև ինքնության ճգնաժամի շրջափուլ, կամ ընդվզել համամոլորակային ազատական աշխարհակարգի պարտադրանքների դեմ: Եթե ինքնության ճգնաժամից հնարավոր ելքեր փնտրող մարդը մեր համոզմամբ օտարվում է իր իսկ սոցիոմշակութային միջավայրից, կանգնում զանգվածների ազդեցությամբ հանրային կյանքի լուսանցքում հայտնվելու կամ այլընտրանքային ապրելակերպ դավանող մարդկանց խմբերի կողմից

թիրախավորվելու դժվար երկընտրանքի առաջ, ապա ընդվզող մարդը փնտրում է ազդեցության միջոցներ՝ քաղաքացիական գործիքակազմ հանրային տիրույթի վրա ազդեցություն ունենալու նպատակով: Սակայն այս պարագայում ի հայտ է գալիս մեկ այլ առաջնային խնդիր. ժամանակակից աշխարհը հետխորհրդային անցման երկրներում հակված է ազատական աշխարհակարգի քարոզչության, միջազգային աստիճանակարգի [19], դրա առերևույթ խորքային չափորոշիչների բնաշխարհիկացման պարտադրանքի, ինչը խաթարում է արժեքային հավասարակշռությունն ընդունող հասարակություններում [4, 619]: Իրենց քաղաքական ապագայի մասին հակադիր պատումների միջև սուր մրցակցության պայմաններում հետխորհրդային հասարակությունները ճիշտ չեն ըմբռնում արդիականացման պահանջների և ազգային սոցիալալիստիկության իրողությունների հաշտ գոյակցության հնարավորությունները:

Որպես հետևանք հետխորհրդային հասարակությունները բախվել են Արցախից արտարիստ բնակչության բռնի տեղահանությանը, վերջինիս ինքնորոշման իրավունքի կոպտագույն ոտնահարմանը, Ուկրաինայում ավերիչ պատերազմին, Վրաստանում ներքաղաքական անորոշություններին ու լարվածությանը, Ռուսաստանում արտաքին ու անվտանգային քաղաքականության առումով բարդ որոշումների կայացմանը և այլն: Վերոնշյալ երկու երևույթների միջև պատճառահետևանքային կապերի առկայության մասին մեր համոզմունքը պայմանավորված է այն իրողությամբ, որ բացառությամբ հաջողությամբ արևմտականացած բալթյան երեք հանրապետությունների, դժվար է պնդել, որ մնացած հետխորհրդային երկրներից ու հասարակություններից որևէ մեկը հաջողությամբ ավարտել է ժողովրդավարացման գործընթացը ու ձևավորել անվտանգ ապագայի [2] շուրջ ազգային տեսլական: Վատ կառավարման արդյունքում հեշտությամբ բեմականացվող գունավոր հեղափոխությունները, անպատեհության մթնոլորտում էթնիկական գոտումների դիմող երկրները, թերի կայացած կամ հռչակագրային բնույթ կրող հաշմված ժողովրդավարական համակարգերը գալիս են ապացուցելու ասվածը:

Այս պայմաններում հետխորհրդային հասարակությունները ստիպված են լինելու փնտրել ելքեր, որոնք կապահովեն ինչպես իրավիճակային, այնպես էլ հեռանկարային, ռազմավարական լուծումներ: Համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետության դեպքում այդպիսի լուծումներից են Հայ առաքելական սուրբ եկեղեցին որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ ճանաչելը՝ նրան լրացուցիչ քաղաքացիավար գործառնություններ վերապահելով, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև համահայկական կրթական տարածության ձևավորումը որպես հայության ցանցային ներուժի վրա հիմնված փափուկ ուժի [20] գործիք: Այս պարագայում ևս Հայ առաքելական եկեղեցուն անհրաժեշտ է վերապահել կարևոր մասնակցային գործառնություն ինչպես կրթական հաստատություններ հիմնելու և զարգացնելու իր պատմական փորձի, այնպես էլ հայկական գաղթօջախներում ցանցային ու կազմակերպական ներուժի համար: Ուստի, անկախ Հայաստանի Հանրապետությունում հրատապ անհրաժեշտություն է ճանաչել այն քաղաքացիավար գործառնությունը, որը Հայ եկեղեցին դարերի վեր կատարում է: Այն հնարավորություն կտա ընդլայնելու Եկեղեցի-պետություն, քաղաքացիական հասարակություն-պետություն երկխոսության հորիզոնները:

Եկեղեցին և քաղաքացիական հասարակությունը

Համավարակների, փախստականների հոսքի, մարդկությանը պատուհասած աղետների պարագայում ակնհայտ են դառնում պետությունների և հասարակությունների կազմակերպական ներուժի սահմանափակ հնարավորությունները: Միջազգային կառույցները ևս չունեն այն մարդկային ներուժն ու հաստատութենական կարողությունները, որ կարողանան առանց կողմնակի աջակցության հասնել մարդասիրական աշխատանքների ամբողջական համակարգման: Ուստի Եկեղեցին վերածվում է հզոր ցանցային ու կազմակերպական հանրավորություններ ունեցող կենտրոնաձիգ աստիճանակարգմամբ առանձ-

նացող մի կառույցի, որի ընդհանուր ներդրումը քաղաքացիական նախաձեռնություններում, հանրային կյանքի բարելավման գործում դժվար է գերազնահատել: Ընթացիկ տարում Իսպանիայի Վալենսիա քաղաքին պատուհասած ջրհեղեղների ժամանակ Գաթոլիկ եկեղեցին դարձավ լայնածավալ օգնություն տրամադրող գլխավոր կառույց: Այսպես եկեղեցու օգնությունը համակարգող կազմակերպությունը՝ Գարիտաս Իսպանիան, դարձավ առաջամարտիկ՝ համախմբելով հազարավոր կամավորների, այդ թվում՝ քահանաների ու միանձնուհիների [15]: Քաղաքացիական պատերազմի ու մշտական արտաքին ռազմական սպառնալիքների պայմաններում ապրող սիրիացիներին 2012 թվականից օգնության ձեռք է մեկնել «Միջազգային ուղղափառ քրիստոնեական բարեգործական կազմակերպություններ» անունը կրող կառույցը, որը մեծ ծավալի աջակցություն է տրամադրել կարիքավոր սիրիացիներին և իրաքցի փախստականներին սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների, կեցության վարձերի իմաստով՝ պատրաստելով հրատապ օգնության պատրաստ շուրջ չորս հազար երեք հարյուր կամավորների [21]:

Անգնահատելի է Հայ առաքելական սուրբ եկեղեցու ներդրումը Արցախի հայության պատշպանության և հումանիտար խնդիրները կարգավորելու հարցում: Բավական է նշել, որ «Արմավիրի, Կոտայքի, Վայքի, Շիրակի, Գեղարքունյաց և Գուգարաց թեմերի թեմապատկան ճամբարներում և տարբեր կացարաններում Արցախից բռնի տեղահանված ընտանիքների ապաստան է տրամադրվել» [6], իսկ նախքան բռնի տեղահանությունը, խոսելով հետպատերազմական ծանր փորձությունների միջով անցնող Արցախի մասին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն նշում է. «Առ այսօր Արցախ փոխադրվել է 300 տոննա սննդամթերք, առաջիկայում էլ նախատեսվում է 100 տոննա նույնպես նմանատիպ օգնություն: Մենք մեր բարձր գնահատանքն ենք բերում մեր թեմականերին և նաև հայ բարեգործական ընդանուր միությանը, Բառնաբաս հիմնադրամին, բարեսիրական կազմակերպություն, ովքեր մեծապես աջակից եղան այս ծրագրի իրականացման գործում» [5]: Այսօր, երբ Արցախի հայերի կյանքի և վերադարձի իրավունքը կոպտորեն խախտված է, իսկ մեծ քաղաքականությունը գոհում է հայության երկարաժամկետ շահերն այսօրվա պաշտպանական հաշվարկներին, Հայ առաքելական եկեղեցին շարունակում է մնալ Արցախի հիմնահարցի արդարացի կարգավորման ջատագույն, Արցախի հայության իրավունքների պաշտպանության առաջամարտիկ, ինչն ակնհայտ է դառնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հրապարակային ելույթներում և ուղերձներում, Հայ եկեղեցու բարձրաստիճան սպասավորների հանրային խոսույթում: Վերոբերյալ օրինակները վերահաստատում են մեր այն տեսակետը, որ մոլորություն է Հայ առաքելական սուրբ եկեղեցու գործառույթները կրոնադավանաբանական, ծիսական, կրթադաստիարակչական, հոգևոր կյանքի ոլորտներով սահմանափակելու ձգտումը: Ե՛վ իր կազմակերպական ու մարդկային ներուժով, և՛ իր պատմական հիշողությամբ, և իր ազգային առաքելության գիտակցումով Հայ եկեղեցին եղել և մնում է հայոց ազգային կյանքի կարևորագույն հաստոյթեական օղակներից մեկը, իսկ ժամանակակից աշխարհում, որտեղ ընդունված են կառավարման քաղաքացիավար մոտեցումներ, այն փաստացի գործառնում է որպես լիարժեք քաղաքացիական հասարակության հաստատություն (ինստիտուտ), սակայն փաստացիորեն զրկված է այդ կոչումից:

Ժամանակակից աշխարհի փորձը ցույց է տալիս, որ անգամ ազատական Արևմուտքն է քրիստոնեական եկեղեցիներին շատ ավելի լայն հասարակական գործառույթ վերապահում, քան ընդունված է համարել: Այսպես ասվածի վկայությունն է այն, որ Եվրոպական Միության հիմնարար օրենսդրական գործիքներից Լիսաբոնի պայմանագրով առաջին անգամ «Եվրամիության հաստատությունների և եկեղեցիների, կրոնական միությունների», այլ նմանատիպ կազմակերպությունների միջև «բաց, թափանցիկ ու կանոնավոր երկխոսության հիմք է դրվում», որով «ճանաչվում է նրանց ինքնությունն ու յուրօրինակ ներդրումը» [10]: Ավելին, Մեծ Բրիտանիայում ընդլայնվել են եկեղեցական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության հորիզոնները: Անգլիա-

յում, Շոտլանդիայում և Ուելսում քրիստոնեական կազմակերպությունները կատարել են զանազան գործառնություններ՝ «սկսած շների վարժեցումից, աստղագիտության դասերից ու զայրույթը կառավարելու գործընթացից մինչև գրադարաններ ու փոստային ծառայություններ աշխատեցնելը» [12], ինչից տեղական ինքնակառավարման մարմինները գոհ են:

Փաստորեն, մարդկային քաղաքակրթության փորձը, մասնավորապես արևմտյան ազատական երկրների օրինակով, ցույց է տալիս, որ կախված պատմական տվյալ ժամանակաշրջանում հասարակություն-պետություն երկխոսության արդյունավետությունից, եկեղեցիներին կարող են վերապահվել լայն գործառնություններ, քանի որ նրանք միավորում և ուղղորդում են քաղաքացիների ջանքերը հանուն ընդհանուր բարեկեցության ու անվտանգ ապագայի: Ավելին, հայկական իրողություններն ու պատմական փորձը նկատի ունենալով՝ անհրաժեշտ է ավելի ընդգծված նախաձեռնողականությամբ զարգացնել Եկեղեցի-հասարակություն, Եկեղեցի-պետություն երկխոսությունը, քանի որ ի տարբերություն արևմտյան ազատական երկրների, որտեղ եկեղեցիները կատարում են համապարփակ հոգևոր ու քաղաքացիավար գործառնություններ միայն, հայության դեպքում կարևորվում է նաև Եկեղեցու դերը ազգապահպանության, կրթության կազմակերպման, հայկական գաղթօջախներում հայապահպանության, այժմ նաև՝ արտաքին սպառնալիքներին միաբանված պատասխան տալու հաստատությունական, պետութենական հարցերում: Մեր կարծիքով առաջացել է անհրաժեշտություն ոչ թե սոսկ Հայ եկեղեցին քաղաքացիական հասարակության հաստատություն հռչակելու, քանի որ այն արդեն օժտված է քաղաքացիական բազմաթիվ գործառնությամբ, այլ ճանաչելու նրա այդ կարգավիճակն ու ըստ այդմ զարգացնելու համագործակցության բազմամակարդակ մշակույթ:

Ամփոփենք. պատմության մասին հակասական տեսություններն ու գաղափարները [11] ցայսօր կենսունակ չեն եղել, և ընդհանուր առմամբ մասնագետները հանգել են այն եզրակացության, որ պատմությունն առաջ է ընթանում շրջափոխելով կամ գծայնորեն, սակայն չի ավարտվում նրա բարեշրջումը: Նկատի ունենալով մարդկային քաղաքակրթության առաջ ծառացած հիմնախնդիրներից բխող վտանգներն ու առկա հնարավորությունները՝ հայ քաղաքացիական հասարակության տեսակետից կարևորում ենք հետագա ուսումնասիրությունները ինչպես Հայաստանյալ առաքելական սուրբ եկեղեցին որպես քաղաքացիական հասարակության հաստատություն թեմայով, այնպես էլ Հայ առաքելական եկեղեցու հետևորդները որպես համայնք, Հայ առաքելական եկեղեցու նորարարական դերը կրթության ու համահայկական ներուժի իրացման մեջ, Հայ առաքելական եկեղեցու ցանցային հնարավորությունները որպես փափուկ ուժի դրսևորում թեմաներով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-148>

Գրականություն

1. Ալեքսանյան Ա. (խմբ.), Ժամանակակից ժողովրդավարության համախմբման նախադրյալները: Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Հրդգստան, Ուկրաինա, Մոլդովա, Երևան, ԵՊՀ, 2019, 455 էջ: http://publishing.yasu.am/files/Challenges_to_the_Consolidation_of_Modern_%20Democracy_Ar.pdf
2. Այվազյան Ա. (խմբ.), Ռազմավարության և անվտանգության հարցեր, «Հայրենասիրություն» մատենաշար II, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, Երևան, 2006, 683 էջ:
3. Ենգոյան Ա., Սարգսյան Ա., Ազատյան Խ., Ենգոյան Փ., ՀՀ-ի առաջ ծառացած մարտահրավերները գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման համատեքստում, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, 154 էջ:
4. Գայդար Ե., Գայսրության կործանումը, Երևան, Անտարես, 2019, 619 էջ:

5. Երկիր, Արցախի մեր կարիքավոր ժողովրդին Եկեղեցին օգնություն է ուղարկել և ուղարկում. Գարեգին Բ. 2023-04-20 <https://yerkir.am/hy/article/2023/04/20/11239>
6. Հովսեփյան Մ., Հայ եկեղեցին Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին կացարան է տրամադրում, Շողակաթ, <https://www.shoghakat.am/am/telecasts/30658>
7. Մարգարյան Մ. և Մարգարյան Մ., Խաղերի տեսություն. Ինչպես դառնալ առաջնորդ (ուսումնասերոդական ձեռնարկ), Եր., «Պետական ծառայություն» հրատարակչություն, 2024, 180 էջ
8. Մարգարյան Մ. և Մարգարյան Մ., Քաղաքական տուրբուլենտություն. մարտահրավերներ և Հայաստանի բնականոն արդիականացման հնարավորությունները, Հանրային Կառավարում, 2/2020, էջ 146-156: https://paara.am/wp-content/uploads/2023/07/Public-Administration_2020-2.pdf
9. Մարգարյան Մ., Մովսիսյան Մ., Հոգևոր անվտանգությունը որպես ազգային և քաղաքացիական ինքնության փոխհարաբերությունների գործոն, Հոգևոր Անվտանգություն, «Էջմիածին» կրոնագիտական և հայագիտական հանդես, 2021 թ., էջ 72-88:
10. Dialogue with Churches, religious associations or communities, philosophical and non-confessional organisations. European Parliament: <https://www.europarl.europa.eu/at-your-service/en/be-heard/religious-and-non-confessional-dialogue>
11. Dale E. M., Hegel, The End of History, and the Future. Cambridge University Press. 2014, 256 pages. DOI: <https://doi.org/10.1017/CBO9781107477711>
12. Evangelical Alliance. Churches and local authorities working together, 2013 <https://www.eauk.org/current-affairs/politics/churches-and-local-authorities-working-together.cfm>
13. Casanova J. Cosmopolitanism, the clash of civilizations and multiple modernities. Current Sociology 59(2), 2011, p. 252-267 DOI: 10.1177/0011392110391162 http://fbemoodle.emu.edu.tr/pluginfile.php/73809/mod_resource/content/1/cosmopolitanism,%20clash%20of%20civilizations%20and%20multiple.pdf
14. Dargin J. (ed.), The Rise of the Global South: Philosophical, Geopolitical and Economic Trends of the 21st Century. World Scientific Publishing Co. Pte. Ltd., 2013, 417 pages.
15. Zengarini L. Church in Spain on the frontline of relief efforts in DANA-hit Valencia, Vatican News: <https://www.vaticannews.va/en/church/news/2024-11/church-in-spain-on-the-frontline-of-relief-efforts-valencia.html>
16. Kenny M. Civil Society, Britannica <https://www.britannica.com/topic/civil-society>
17. McLean and MacMillan A. (eds.), the Oxford Concise Dictionary of Politics, Oxford University Press, 2003, p.73 <https://archive.org/details/oxfordconcisedic00iain/page/n9/mode/2up?q=civil+society&view=theater>
18. Collin P. H. Dictionary of Politics and Government, 3rd edition, Bloomsbury Publishing Plc., 2004.
19. Cerny Ph. G. (ed.), Heterarchy in World Politics, Innovations in International Affairs, Routledge, 2023, 221 pages.
20. Desai-Trilokekar R., Masry H. E. The Nexus of Public Diplomacy, Soft Power, and National Security: Volume 14, Issue 5, 2022, pp. 111-133. DOI: 10.32674/jcihe.v14i5.4987 | <https://ojed.org/jcihe>
21. Syria, International Orthodox Christian Charities: <https://iocc.org/where-we-work/syria>

Армянская Апостольская Церковь как учреждение (институт) гражданского общества

Погосян Гарик

Резюме

Ключевые слова: Армянская Апостольская церковь, универсальное гражданское общество, глобальная турбулентность, религиозные организации, функция участия

В последние годы армянские исследователи уделяли значительное внимание различным глобальным вызовам. Однако проблема формирования глобального гражданского общества в значительной степени оставалась вне сферы активного анализа. На наш взгляд, процесс становления гражданского общества имеет индивидуальный, локальный и глобальный уровни, что делает изучение его комплексности актуальной научной задачей. В статье рассматривается возможность расширения как количественных, так и качественных характеристик институтов гражданского общества в качестве ответа на вызовы, связанные с формированием глобального гражданского общества. Для углубления и расширения теоретико-концептуальных оснований предлагается включить в анализ вопрос о признании традиционных институтов в качестве полноправных элементов гражданского общества. Статья фокусируется на глобальной перспективе и анализирует ее влияние на трансформацию локальных структур гражданского общества. В частности, обсуждается роль Армянской Апостольской Церкви как института гражданского общества; проводится сопоставление ее гражданских функций с универсальными глобальными вызовами, а также приводятся международные параллели, демонстрирующие активное участие религиозных организаций в общественно-гражданской жизни. Таким образом, Церковь рассматривается как важный сетевой и организационный центр, способствующий формированию и укреплению гражданского общества.

The Armenian Apostolic Church as an Establishment (Institute) of Civil Society

Poghosyan Garik

Summary

Key words: Armenian Apostolic Church, Universal civil society, global turbulence, faith-based organizations, participatory function

In recent years, Armenian scientists have paid sufficient attention to the multiplicity of global challenges. However, the issue of the formation of global civil society has largely been overlooked. From our perspective, civil society formation has individual, local and global dimensions which makes delving into its complexity a transcendental necessity. The article discusses the possibility of augmenting the number and quality of civil society institutions as an answer to the challenge of global civil society formation. In order to deepen and broaden the conceptual foundations of civil society, the article suggests considering the recognition of traditional institutions as civil society institutions. The article adopts a global perspective and analyzes its implications for local civil society transformation. More specifically, it discusses the role of the Armenian Apostolic Church as a civil society organization drawing parallels between its civil functions and the plurality of universal challenges, including international examples of pro-active faith-based organizations. Thus, the Church is seen as a networking and organizational powerhouse: something that is required for civil society formation.

Ներկայացվել է 18. 02. 2025 թ.

Գրախոսվել է 09. 04. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

Աշխարհայացք և գաղափարախոսություն

*Տիգրանյան Գնել,
Տիգրանյան Նունե*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-156>

Հանգուցային բառեր. *աշխարհայացք, գաղափարախոսություն, աշխարհընկալում, հասարակական գիտակցություն, արժեք, քաղաքական գաղափարախոսություն*

Հարցի դրվածքը: Աշխարհայացքը մարդու, սոցիալական, էթնիկական խմբի ընդհանրական գաղափարներն են, հայացքներն ու սկզբունքները իրականության գոյության, զարգացման և դրանում մարդու տեղի ու դերի վերաբերյալ: Այն մարդու և աշխարհի այն-պիսի փոխհարաբերություն է, որտեղ մշտապես ծագում են նույն հարցերը՝ ինչպե՞ս է մարդը պատկերացնում աշխարհը, ո՞րն է իրականության զարգացման չափանիշը, և ի՞նչ տեղ է զբաղեցնում այդ համակարգում մարդը: Աշխարհայացքը բազմաշերտ գաղափարախոսություն է, մշակութային արժեք, և պատմականորեն դրսևորվել է տարբեր հարթությունների մեջ՝ առօրեականից մինչև գիտականորեն հիմնավորված և գործնականում կիրառվող հայացքներ ու սկզբունքներ: Աշխարհի մասին համընդհանուր ուսմունքներում մարդն ինքն իրեն գիտակցում է ոչ թե առանձին, սոցիալական հանրության կտրված միավոր, այլ իր նմանների հետ ընդհանրացված, ինտեգրված ամբողջություն: Համամիասնականության այդ գիտակցումը մարդուն մղում, հանրությանը ստիպում է ձևակերպել աշխարհընկալման ընդհանրական մոդել, որում հայտածվում է ոչ միայն մարդու աշխարհայացքի անհատական կենսաձևը, այլև այն հատկություններն ու հարաբերությունները, որոնք նա ձեռք է բերում հասարակության մեջ:

Եթե գիտաբանական գրականության մեջ, ինչպես իրավացիորեն արձանագրված է, գիտության համընդհանուր սահմանում կամ ձևակերպում չկա, ապա մեր խնդրո առարկայի համընդգրկուն սահմանումը հետևյալն է. «Աշխարհայացքը աշխարհի՝ իբրև ամբողջի նկատմամբ մարդու ունեցած հայացքների ընդհանրացված համակարգն է, մարդու կողմից իր գործունեության իմաստի և մարդկային ճակատագրի ըմբռնումը» [6, 454]:

Փիլիսոփայորեն ձևակերպված՝ աշխարհայացքը, իբրև մարդկային կենսափորձի ամփոփում, ապրելաձևի սկզբունք և ապագայի տեսլական, իրականացնում է որոշակի գործառույթներ:

1) Իրականության ընդհանրացված պատկեր ստեղծելու նպատակով կազմակերպում, համակարգում է բնության, հասարակության, մարդու մասին անհատական գիտելիքները:

2) Ձևավորում է մարդու վարքի չպարտադրվող, սակայն խրախուսելի կանոններ, բացահայտում հասարակության ենթահամակարգերի գործունեության արժեքային կողմնորոշումները:

3) Հավաքագրում է հոգևոր մշակույթի ձեռքբերումները, մարդկության անցյալի կենսափորձը, կանխատեսում հետագա իրադարձությունների ընթացքը:

4) Կարգավորում և ղեկավարում է մարդկանց իմացական-ճանաչողական գործունեությունը՝ հաշվի առնելով նրանց անհատական համոզմունքները, իդեալները, բարոյական չափանիշներն ու ապագային միտված նպատակները:

Այս ամենով հանդերձ, աշխարհայացքը դառնում է գաղափարախոսություն, յուրահատուկ մտածելակերպ, որի մեջ ամփոփվում է սոցիալական իրականության առանձին կողմերը, գնահատում մարդու տեղն ու դերը, ստեղծում հավաքական կողմնորոշումների գիտականորեն հիմնավորված տեսություն:

Աշխարհայացք և գաղափարախոսություն: Աշխարհայացքի պատմականորեն և նախկին գիտելիքի վրա հենված առաջին դրսևորումը առօրեականն է: Այն ծագում է տարերայնորեն մարդկանց կենսափորձից, ունի մակերեսային, չհամակարգված բնույթ: Տարերային է,

որովհետև ծագում է ինքնաբերաբար մարդկանց կյանքի ընթացքում, առանց որևէ հիմնավոր ուսումնասիրություն կամ գիտական փաստարկման, այդ պատճառով էլ հակասական է, փոփոխական: Մակերեսայնություն չի նշանակում, որ այդտեղ չկան խորը գիտական դրույթներ: Այստեղ հաճախ ամրագրվում են մարդկության բազմադարյան փորձի ընդհանրացումները, որոնք մշտապես դառնում են քննարկման նյութ: Երբեմն գիտական պարզունակ կոռուցումները իրենց մեջ պարունակում են այնպիսի արժեքավոր գաղափարներ, որոնք ներառվում են գիտության մեջ՝ դառնալով մշտական ուսումնասիրության և հետազոտության առարկա:

Աշխարհայացքի տիպաբանության մեջ առանձնահատուկ տեղ ունի դիցաբանական մտածողությունը: Իբրև նախափիլիսոփայական աշխարհայացք՝ այն ներառել է ժամանակի կրոնական, փիլիսոփայական պատկերացումները, գիտությունն ու արվեստը: Արպես ցեղային նախի ինքնագիտակցության ձև, դիցաբանությունը «համակարգել է» ժամանակաշրջանի աշխարհընկալումն ու աշխարհգացողությունը: Ահա թե ինչու փիլիսոփայությունը իրապես ածանցվել է դիցաբանությունից, և առաջին փիլիսոփայական հիմնադրույթները բնութագրվում են ոչ այնքան փիլիսոփայական հարցադրումներով: Նախագիտական աշխարհիկ կոռուցումները ներկայանում են իբրև ոչ ռացիոնալ մտածելակերպ, իրենց մեջ կրում են զգացմունքային կամ հուզական տարրեր: Սակայն իբրև հավերժական պրոբլեմներ, դրանք հետագայում փիլիսոփայության տեսադաշտից դուրս չեն մղվում:

Դիցաբանությունը չի կարող հավակնել վերաճելու գաղափարախոսության, սակայն նրանում ամրագրված որոշ դրույթներ ներթափանցվում են աշխարհընկալման գաղափարաբանական մոդելներում: Դիցաբանությունը ինքնին աշխարհայացքային գաղափարախոսություն չէ, որովհետև այստեղ բավարար չափով առկա չէ հիմնադրույթի ապացուցման տրամաբանական կառուցվածքը, երևույթները չեն դիտարկվում պատճառահետևանքային կապի մեջ, իսկ իրականության մեկնաբանումը մնում է հուզական-զգայական դաշտի մեջ:

Աշխարհայացքի այս մոդելի գործնական հիմնատարրերում բնորոշվում են մտածողի հայացքների հիմքերը, գործելաոճը, մտածելակերպի ուղղվածությունը [2, 9]:

Այն առավելապես համոզմունք է, սեփական «ես»-ի անհատական գնահատում, ոչ օբյեկտիվ մտածելակերպ: Առօրյա կյանքում յուրաքանչյուր մարդ այս կամ այն կերպ փորձում է հիմնավորել աշխարհում իր ներկայության իմաստը: Անցողիկ գոյության վախը և հավերժականի գոյության ձգտման անգործությունը մարդուն պարտադրում են ոգել միջակայան տեսություններ մարդկանց, հասարակության և ամբողջ աշխարհի վերաբերյալ: Այս և նման բոլոր հարցերը մշտապես լուծում է ամեն մի նոր սերունդ՝ երբեք չհասնելով կատարյալ ճշմարտության իմացությանը: Նման փնտրտուքը հանգում է նոր հետաքրքրությունների, գիտելիքների, նյութական և հոգևոր արժեքների իմաստի վերանայման և աշխարհի մասին գիտական նոր պատկերի արտածման:

Առասպելական դիցաբանական տարրերը գաղափարախոսության մեջ ներգրավվում են տվյալ հանրույթի հավաքական պատկերացումների տեսքով, որոնց մեջ տրվում են ազգերի և ժողովուրդների՝ իրականության նկատմամբ հարակցությունները բանավոր կամ գրավոր շարադրանքների ձևով:

Կրոնական աշխարհայացքի հիմքում հավաստ է, գերբնականի, բարի և չար ուժերի բախումը մարդկային դիտակետից: Այն կանոնակարգում է մարդու կյանքը, նրա բնույթը, ապրելու իմաստը: Աշխարհայացքի այս ձևի մեջ հասարակությունը, հեռանալով գիտական փաստարկումից, զգայական ինքնագիտակցության մեջ է, ստեղծում է կատարյալ մի աշխարհ, որտեղ ոչինչ կախված չէ անձի ֆիզիկական հնարավորություններից: Կրոնական աշխարհաճանաչողությունը մարդկության համար ծառայել է որպես ամենահզոր և արդյունավետ գաղափարախոսության հիմքերից մեկը: Պետության ծագման ամենահին տեսությունները, որոնցից շատերը դեռևս արդիական են, հենվել են կրոնական վարդապետության վրա: Կրոնական դավանաբանության մուտքը դեպի գաղափարախոսություն հանգեց-

նում է հասարակական այնպիսի գիտակցության ընկալմանը, ըստ որի՝ պետությունը և իշխանությունը դիտվում են որպես Աստծո արարչագործության արգասիք, որ ամբողջ իշխանությունը սերվում է գերագույն արարողից: Մարդկանց ենթարկումը Աստծո կամքին, աստվածային բանականության սկզբունքներին, ինչը ամրագրվում է դոգմաներով, որոշ առումով հասարակության մեջ ապահովում է կարգ ու կանոն:

Փիլիսոփայական աշխարհայացքը փորձում է գիտականորեն բացահայտել իրականության բնույթը, իմաստն ու ծագումը, գտնել իրերի և գործընթացների շարժման և զարգացման գործիքակազմը, հենվելով փաստական նյութի վրա՝ հնարավորինս գիտականորեն մեկնաբանել մարդու՝ իրականության մեջ ունեցած տեղն ու դերը, կանխատեսել նրա ապագան: Այս բոլորն ամփոփվում են գիտության նվաճումների հիմքի վրա, հետևաբար՝ աշխարհայացքի այս ձևը գիտական բնույթ ունի: Լինելով բանական, տեսական ճանաչողության ձև, այն օգտագործում է մտածողության ողջ ապացուցողական ապարատը՝ ձգտելով վեր հանել, հիմնավորել իր դրույթները, հեղքել այլ ուսմունքները:

Գիտական-փիլիսոփայական աշխարհայացքը գաղափարախոսություն է, փիլիսոփայորեն հիմնավորված տեսություն, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել մարդու և հավաքականության շահերին: Բացահայտելով իրականության հիմնախնդիրները, մարդու բնույթն ու էությունը, փիլիսոփայական գիտելիքը իբրև իրականության մեկնաբանման աշխարհայացքի առավել համապարփակ ձև, ամեննին չի հավակնում դառնալու բացարձակ ճշմարտություն: Տեսականորեն անկարելի է ստեղծել իրականության մեկնաբանման անփոփոխ ծրագիր, պատկերացումների համակարգ: Յուրաքանչյուր պատմական դարաշրջան, պետական կազմավորման ձև ժամանակի մեջ պահանջում է իր բնույթին և յուրահատկությանը համահունչ գաղափարական հիմնավորում: Ուստի գաղափարախոսությունները հարափոփոխ են, անկարող են բոլոր ժամանակները և իրադարձությունները մեկնաբանել:

Աշխարհայացքը գաղափարախոսության հիմքն է, երբ մարդը հեռանում է անհամեմատ մատչելի իռացիոնալ մտածելակերպից, բացահայտում է իր նմանների հետ կապի, հարաբերությունների նորագույն սկզբունքները, տեսականորեն ստեղծում կառավարման նոր ուղղություններ ու գործիքներ: Ի տարբերություն փիլիսոփայական աշխարհայացքի և աշխարհընկալման՝ գաղափարախոսությունը չունի հստակ ընդգծված աշխարհագրական տարածք [5, 25]: Գաղափարախոսությունը կարող է ծագել, ձևավորվել որևէ պետական կազմավորման շրջանակներում, սակայն այն սահմաններ չի ճանաչում, կամովին, երբեմն ստիպողաբար դուրս է գալիս ազգային կամ պետական շրջանակներից և ընդգրկում ավելի մեծ տարածք ու միջավայր: Աշխարհայացքային գաղափարախոսությունների բազմաթիվությունը պայմանավորված է հասարակությունների նպատակների և խնդիրների տարբերությամբ և նմանությամբ: Որքան տարբեր են հասարակությունները, նույնական չեն դրանց կառավարման ձևերը, կիրառվող վարչակարգերը, այդքանով տարբեր են նաև պետական գաղափարախոսությունները: Չկան հավերժական կամ անփոփոխ գաղափարախոսություններ, ժամանակի ընթացքում դրանք ենթարկվում են փոխակերպումների: Ավելին, երբեմն արմատապես մերժվում են այնպիսի աշխարհայացքային գաղափարախոսություններ, որոնք երկար տարիներ կատարել են հասարակության համախմբման դեր: Սա պայմանավորված է երկու հանգամանքով.

1. հասարակության անընդհատական զարգացումը պահանջում է նոր պայմաններին համապատասխան և նորովի ձևակերպված գաղափարաբանության տեսական մոդել,
2. նախկինում իրեն արդարացրած աշխարհայացքային մոդելը իրեն սպառել է, կանխարգելում է հասարակության հետագա առաջընթացը, դառնում ապագա բարեփոխումների գսպաշարայիկ:

Առաջադրելով բազմաբնույթ գաղափարախոսություններ՝ փիլիսոփայությունը մշակույթի համակարգում բացում է բազմակարծության հնարավորությունը, ընտրության բազ-

մարժեքությունը: Յուրաքանչյուր ոք ընդունում է այն աշխարհայացքը կամ գաղափարախոսությունը, որի մեջ տեսնում է իր պատկերացումների և շահերի բավարարումը կամ տեսչականը: Հասարակական գիտակցության, իսկ տվյալ դեպքում հասարակական գաղափարախոսության կրողները կամ սուբյեկտները մարդկային հանրություններն են՝ դասակարգեր, սոցիալական խավեր և այլն [4, 159]:

Աշխարհայացքային գաղափարախոսությունների բազմաժանրությունն աշխարհի մասին փիլիսոփայական գիտելիքը տարաբաժանվել է բազմաբնույթ ուղղությունների, որտեղ տարբերակման հիմքը ոչ միայն իրականության սկզբնապատճառի, գոյի մեկնաբանումն է, այլև ապագայի նկատմամբ մարդկանց տեսական մտածելակերպի և ընկալման խտացումն է:

Հասարակական գաղափարախոսությունը մարդկային հանրության տարբեր սոցիալական և ազգային միավորումների շահերի ու նպատակների համակարգված տեսությունն է իրականության, կառավարման համակարգի, տնտեսական – հոգևոր հարաբերությունների վերաբերյալ: Գաղափարախոսությունը հայացքների, գաղափարների համակարգ է, որն արտահայտում է հասարակական մեծ խմբերի արմատական շահերը: Այն ազգերի, դասերի, հասարակությունների, սոցիալական շարժումների գաղափարական պատկերացումների խտացումն է ներկայի և ապագայի վերաբերյալ: Արտահայտելով սոցիալական շահերը արժեքների, իդեալների և նորմատիվ պահանջների տեսքով, գաղափարախոսությունն իրականացնում է տվյալ սոցիալական հանրության ներկայացուցիչների համախմբման կարևոր գործառնություն, հենք դառնում քաղաքական ծրագրերի համար [1, 146]: Գաղափարախոսության ավելի ամբողջական ու համակարգված ձևը կուսակցությունն է: Քաղաքական տարբեր կառույցների միջոցով մարդիկ ստեղծում են իրենց խնդիրների լուծմանը միտված, նպատակները հետապնդող գաղափարախոսություններ և ձգտում դրանք իրականացնել:

Գաղափարախոսությունը հոգևոր ապրանք է, արժեք, որի «արտադրությամբ» զբաղվում են անհատները, բայց որն ունի հասարակական հնչեղություն և կարող է ընդունվել կամ մերժվել հասարակության կողմից: Մարդկային հասարակությունը մշտապես ձգտում է դուրս գալ գոյող կենսաձևերից և ստեղծել ապագայի լավագույն պատկերացումների համակարգ: Նոր աշխարհի ստեղծելու մարդկային մտքի մղումը հավերժ է: Ներկան վիճարկելու և ապագայի տեսլական արարելու միջոցով իրականությունն է մեկ քայլ վեր կանգնելն ու այն վերանայադարձելը կյանքի շարունակման գրավականն են: Վիճարկումը իրականությունից դուրս ձևավորում է իդեալական աշխարհի մոդել (ուսուպիա), որի գոյության իրավունքի համար մարդիկ ինքնակամ զոհողություններ են դիմում [3, 15]:

Իբրև հոգևոր համակարգված արժեքաբանություն՝ աշխարհայացքային գաղափարախոսությունը գաղափարների կամ պատկերացումների համակարգ է, որը ծառայում է մտածող սուբյեկտին որպես բացարձակ ճշմարտություն, որի հիման վրա նա ստեղծում է աշխարհի իր սկզբունքների համակարգն ու որոշարկում իր դիրքն այդտեղ այնպես, որ դրանով նա ինքնախաբեություն է իրականացնում, որն անհրաժեշտ է գաղափարախոսությունն արդարացնելու, նրա իրական շահերը քողարկելու համար [7, 146]:

Գաղափարախոսությունը հասարակական երևույթ է, այդ իսկ պատճառով այն հանդես է գալիս ոչ թե անհատական, այլ սոցիալ-խմբային, կամ առավելապես իբրև հասարակական գիտակցության ձև: Սա ամենևին չի նշանակում, որ անհատական գիտակցությունը կտրված է գաղափարախոսությունից: Գաղափարախոսությունը մշտապես սնվում է անհատի գիտակցության և աշխարհընկալման սուբյեկտիվ ընկալումներից:

Պետական կազմավորումների պարագայում ձևավորվում է գաղափարախոսության նոր տեսակ՝ քաղաքական գաղափարաբանություն, որը ներկայանում է իբրև որևէ կուսակցության կամ քաղաքական շարժման նպատակների և համոզմունքների բացարձակ ճշմարտության չհավակնող, բայց ներկայանալի համակարգ: Քաղաքական գաղափարախոսությունն ինքնաբացասվող, փոխակերպվող աշխարհայացք է, որի մեջ ամփոփվում են քաղա-

քական կառույցների և կուսակցությունների նպատակների տեսլականն ու դրան հասնելու գործիքակազմը:

Եզրակացություն

Փիլիսոփայության աշխարհայացքային գործառույթը կոնկրետ անձի և ընդհանրապես սոցիալական հանրությանների ամրագրված կարծիքն է աշխարհի ընկալման և դրանում մարդու տեղի ու դերի վերաբերյալ: Աշխարհայացքը իրականացնում է գոյաբանական, իմացաբանական, արժեքաբանական և մարդաբանական բացահայտումներ, քանի որ՝

1. Այն ընդհանրական գիտելիք է ստեղծում աշխարհի գոյի, մարդու և իրականության փոխհարաբերության մասին,
2. Փորձում է պարզել աշխարհի ճանաչողության հիմնախնդիրն ու դրան հասնելու գործիքակազմը,
3. Ստեղծում է մարդուն ծառայող արժեքային համակարգված գիտելիքներ և գործնականում կիրառվող տեսություններ,
4. Գիտականորեն հիմնավորում է մարդու և հանրությանների գոյութենաբանական սկզբունքները:

Բազմագործությային ամբողջության մեջ աշխարհայացքը վերաճում է գաղափարախոսության: Եթե աշխարհայացքը տեսական գիտելիքների ամբողջություն է, ապա գաղափարախոսությունը հայացքների, ուսմունքների գործնականորեն կիրառվող մոդել է, որը պարտադրվում է հասարակությանը կամ էլ կամովին ընդունվում նրա բացարձակ մեծամասնության կողմից:

Աշխարհայացքի աղբյուրը անհատն է: Սակայն եթե գաղափարը համահունչ է սոցիալական որոշակի զանգվածի նպատակներին և շահերին, ապա այն դառնում է հասարակական գիտակցության ձև, ստանում գործնական կիրառում: Աշխարհայացքը խմբային մտածելակերպից գաղափարական հիմնավորում է ստանում, երբ այն ներառվում է պետական կառավարման համակարգ և ներկայանում իբրև գաղափարախոսություն: Բոլոր գաղափարախոսություններն աշխարհայացքի խտացման արդյունք են: Մինչդեռ ամեն մի աշխարհայացք դեռևս գաղափարաբանություն չէ:

Այսպիսով, աշխարհայացքը գաղափարախոսություն է դիտվում միայն այն ժամանակ, երբ իբրև փիլիսոփայորեն հիմնավորված տեսություն, արտացոլում է սոցիալական մեծ խմբերի շահերն ու տեսլականը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-156>

Գրականություն

1. Ենգոյան Ա., Գաղափարախոսություն հասկացության քաղաքագիտական մեկնաբանությունը, ԵՊՀ, Երևան, 2014, 56 էջ:
2. Խաչատրյան Բ., Փիլիսոփայություն, Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, 2004, 243 էջ:
3. Հարությունյան Էդ., Համատեքստի հերթափոխը. վիճարկումը իբրև անհնարինի հաղթահարման կամագղակում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 2, Երևան, 2016:
4. Հովսեփյան Ա., Սոցիալական փիլիսոփայության հիմունքներ, Դե-ֆակտո, Երևան, 2003, 288 էջ:
5. Շաքարյան Հ., Փիլիսոփայություն, ԵՊՀ, Երևան, 212 էջ, 2005:
6. Константинов Ф. В. Философская энциклопедия. «Мысль», Москва, т 3, 1977, с. 471.
7. Ясперс К. Смысл и назначение истории. Полит издат., Москва, 1991, 529 с.

Мировоззрение и идеология

Тигранян Гнел,
Тигранян Нуне

Резюме

Ключевые слова: мировоззрение, идеология, мировосприятие, общественное сознание, ценности, политическая идеология

Человеческое познание реальности не ограничивается пассивным созерцанием. Практическое познание систематизируется теоретически, формируя определенное мировоззрение. Оно представляет собой совокупность коллективных представлений той или иной социальной группы о реальности, о месте и роли человека в ней. Если мировоззрение приобретает общественный резонанс, оно может развиваться в идеологию, включая в себя систему управления, и реализоваться в качестве политической идеологии. Мировоззрение – это многослойная идеология. Мировоззрение у человека формируется в течении всей жизни, своим полученным опытом, литературой, обществом. Оно охватывает не только правовую и политическую надстройку, но и регулирует индивидуальное поведение людей, теоретически обосновывает приемлемые нормы человеческих отношений, навязывает толерантность в общественной жизни. Возникнув из мировоззрения, идеология ретроспективно трансформирует его, приспособлявая к велениям и требованиям времени. Не все мировоззрения становятся идеологией: только те мировоззренческие модели претендуют на роль идеологии, которые затрагивают большое количество людей и способны руководить ими. Таким образом, мировоззрение – это идеология, философски обоснованная теория, система идей, которая выражает интересы и чаяния значительных социальных групп.

Worldview and Ideology

Tigranyan Gnel,
Tigranyan Nune

Summary

Key words: worldview, ideology, worldview, public consciousness, values, political ideology

Human cognition of reality is not limited to passive contemplation. Practical cognition is systematized theoretically, forming a certain worldview. It is a set of collective ideas of a particular social group about reality, about the place and role of man in it. If a worldview acquires public resonance, it can develop into an ideology, including a system of governance, and be realized as a political ideology. A worldview is a multi-layered ideology. A person's worldview is formed throughout life, by one's experience, literature, and society. A worldview encompasses not only the legal and political superstructure, but also regulates individual human behavior, theoretically substantiates acceptable norms of human relations, and imposes tolerance in public life. Having emerged from a worldview, an ideology retrospectively transforms it, adapting it to the dictates and demands of the time. Not all worldviews become ideologies; only those worldview models claim the role of ideology that affect a large number of people and are capable of guiding them. Thus, a worldview is an ideology, a philosophically substantiated theory, a system of ideas that expresses the interests and aspirations of significant social groups.

Ներկայացվել է 27. 03. 2025 թ.
Գրախոսվել է 14. 04. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЭКОНОМИКА

ECONOMICS

Կենսաթոշակային ֆոնդերի միջազգային փորձի վերլուծությունը և զարգացման հիմնական միտումները

Բեկյան Անի

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-163>

Հանգուցային բառեր. *կենսաթոշակային հիմնադրամ, կենսաթոշակ, կուտակում, ֆինանսավորվող համակարգ, վճարովի համակարգ, մասնավոր խնայողություններ, համակարգի մասնակից*

Նախաբան: Ժամանակակից տնտեսական աշխարհակարգում, երբ բնակչության ծերացումն ու սոցիալական ապահովության համակարգերի ծանրաբեռնվածությունը դարձել են գլոբալ մարտահրավերներ, կենսաթոշակային ֆոնդերը կանգնած են արդյունավետ ձևավորման և կառավարման նոր պահանջների առջև:

Կենսաթոշակային համակարգերի առանցքային դերը պետք է լինի սոցիալական գործառույթը: Կենսաթոշակային համակարգը մի կողմից հնարավորություն է տալիս ֆինանսապես ապահովել տարեցներին, իսկ մյուս կողմից շատ դեպքերում զգալիորեն նվազեցնում է աղքատության մակարդակը բնակչության տվյալ խմբում: Միաժամանակ պետության բյուջետային սահմանափակ միջոցների պատճառով այս խնդրի լուծումը (ամբողջությամբ կամ մասամբ) տեղափոխում են հենց իրենք՝ քաղաքացիները՝ կուտակային կենսաթոշակային համակարգերի միջոցով: Կայուն մակրոտնտեսական միջավայրի, զարգացած ֆինանսական համակարգի և բավականաչափ բարձր եկամուտների պայմաններում առաջադրված խնդիրը լուծվում է բավականին հաջող: Մյուս կողմից, զարգացող երկրների պայմաններում նման նպատակին հասնելը շատ ավելի դժվար է:

Կենսաթոշակային ֆոնդերը անհատների համար ծառայում են որպես խնայողություններ կուտակելու միջոց՝ իրենց աշխատանքային կյանքի ընթացքում՝ ապահովելով կենսաթոշակի ժամանակ եկամտի կայուն հոսք: Այս հիմնադրամները սովորաբար ստեղծվում են գործատուների, արհմիությունների կամ պետական գործակալությունների կողմից, և նրանք ներդրումներ են կատարում երկարաժամկետ եկամուտներ ստանալու համար:

Կենսաթոշակային հիմնադրամները նախապես ֆոնդերից և սուվերեն հարստության հիմնադրամներից (երկրի պահուստները ներկայացնող կազմակերպություններից) հետո աշխարհի խոշորագույն ինստիտուցիոնալ ներդրողներից են: Այս հիմնադրամները կառավարում են ակտիվները անհատների և կազմակերպությունների անունից՝ կենսաթոշակային նպաստներ տրամադրելու համար: Կենսաթոշակային հիմնադրամները գլոբալ ֆինանսական շուկաներում կարևոր դերակատարներ են՝ կառավարվող զգալի ակտիվներով: Իհարկե, դրանք պատասխանատու են նաև միլիոնավոր մարդկանց կենսաթոշակային եկամուտ ապահովելու համար: Տարբեր երկրներում տեղի են ունենում կենսաթոշակային տարիքի փոփոխություններ իրավական դաշտում, որոնք էլ հաստատում են թեմայի ընտրության արդիականությունը:

Հոդվածի բովանդակությունը: Կենսաթոշակային հիմնադրամը ներդրումային ֆոնդի տեսակ է, որը ստեղծվել է գործատուի, արհմիության կամ պետական գործակալության կողմից՝ ֆիզիկական անձանց կենսաթոշակային տարիներին եկամուտ ապահովելու համար: Կենսաթոշակային ֆոնդի առաջնային նպատակն է կուտակել և ներդնել միջոցներ անհատի աշխատանքային տարիների ընթացքում, որպեսզի նրանք կարողանան ապահովել կայուն եկամտի հոսք կենսաթոշակի անցնելու ընթացքում:


Գոյություն ունեն կենսաթոշակային համակարգերի երեք հիմնական տեսակներ՝ վճա-

րովի (pay as you go), մասնակի ֆինանսավորվող (defined contribution DC) և ֆինանսավորվող (defined benefit DB):

Այն համակարգը, որտեղ այսօրվա կենսաթոշակառուների ծախսերը կատարվում են այսօրվա աշխատողների և գործատուների մուծումներով՝ սերունդների համերաշխության սկզբունքով, կոչվում է բաշխման համակարգ: Վճարովի մոտեցման այլընտրանքը կուտակային կենսաթոշակն է: Այս դեպքում մասնակիցների ներդրումները ներդրվում են այնքան ժամանակ, քանի դեռ նրանք գտնվում են աշխատունակ բնակչության մեջ: Երբ աշխատողները թոշակի են անցնում, կենսաթոշակային նպաստները վճարվում են այս հիմնադրամից:

Մասնակի ֆինանսավորվող DC համակարգերում աշխատողն ու գործատուն նախապես սահմանված չափով կատարում են ներդրումներ (շարունակական ֆինանսավորում), որոնք կուտակվում են հստակ աշխատողի անհատական հաշվին: Այս համակարգում կենսաթոշակի չափը կախված է ներդրումների ընդհանուր չափից և դրանց ներդրումային եկամտաբերությունից:

Ֆինանսավորվող համակարգերում DB կենսաթոշակի չափը նախորոք որոշված է՝ հիմնված աշխատողի աշխատավարձի, աշխատանքային փորձի կամ այլ գործոնների վրա: Մի քանի երկրների մասով այս երկու համակարգերում բաշխվածությունն ունի հետևյալ տեսքը՝



Նկար 1. DB/DC բաժանումը վերջին տասը տարիներին [1, 38-40]

Ավստրալիայում գերակշռում է DC կայացած համակարգը՝ 86-89 %: մարդիկ կուտակում են իրենց սեփական հաշվին:

Կանադայում գերակշռում է DB համակարգը՝ շուրջ 60-61 %, սակայն նկատելի է DC համակարգի աստիճանաբար աճը (40 % ից 44 %): Կարող ենք եզրակացնել, որ Կանադան ցուցաբերում է ներդրումային հարմարվողականություն և դանդաղ անցում է կատարում DC համակարգին:

Ճապոնիայում բացարձակ գերակշռում է DB համակարգը 95-97 %՝ կենսաթոշակները նախապես սահմանված են և կախված չեն ներդրումային եկամուտից: Ճապոնիայում պահպանված է ավանդական պետական կենտրոնացված մոդելը: Չնայած այս համակարգը կայուն է կառուցվածքով, Ճապոնիան կանգնած է ժողովրդագրական եւ տնտեսական մարտահրավերների առաջ: Մեծ է պետական կենսաթոշակային ֆոնդերի բեռը, քանի որ Ճապոնիայի բնակչության ավելի քան 28 %-ը 65 տ-ից բարձր է: Բացի այդ՝ սա ունի նաև ֆինանս-

սական ճնշման դիսկ, քանի որ Ճապոնիայի պետական կենսաթոշակային ֆոնդը GPIF (Government Pension Investment Fund)՝ աշխարհի ամենամեծ ներդրումային ֆոնդն է, և այն ակտիվորեն ներդրումներ է կատարում միջազգային շուկաներում՝ ապահովելու կենսաթոշակային կայունություն:

Նիդերլանդներում ավանդական կայուն DB համակարգ է՝ 93-98 %, չնայած փորձ է արվում DC համակարգի որոշ տարրեր ներմուծել. պետական կառավարման նկատմամբ առկա է հանրային վստահության բարձր մակարդակ:

Միացյալ Թագավորությունն ունի խառը կենսաթոշակային համակարգ, ներառյալ պետական կենսաթոշակը, մասնագիտական կենսաթոշակային սխեմաները և մասնավոր կենսաթոշակային կարգավորումները:

Մեծ Բրիտանիայում կապիտալ ակտիվների կառավարիչները կենսական դեր են խաղում կենսաթոշակային ֆոնդի ներդրումների կառավարման գործում, որոնք սովորաբար ներառում են դիվերսիֆիկացված պորտֆելներ՝ ներառելով բաժնետոմսերը, պարտատոմսերը և այլընտրանքային ներդրումները: Մեծ Բրիտանիայի կենսաթոշակային համակարգը բարեփոխումների է ենթարկվել՝ լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կյանքի տևողության և մատչելիության բարձրացումը՝ կենսաթոշակային տարիքի և կենսաթոշակային վճարների պահանջների փոփոխությամբ: Միացյալ Թագավորությունում զգալի աճ է գրանցվել DC համակարգում՝ 18 %-ից 27 %: Կարող ենք եզրակացնել, որ Միացյալ Թագավորությունում անցում է կատարվում աշխատողի կողմից ֆինանսավորվող մոդելի՝ նվազեցնելով գործատուի պատասխանատվությունը:

ԱՄՆ-ն ունի ամենաարտահայտված անցումը դեպի DC համակարգի՝ 59 %-ից 69 %: Միացյալ Նահանգներում ավանդական կենսաթոշակային ծրագրերը կամ DB համակարգերը դառնում են ավելի հազվադեպ և փոխարինվում են գործատուների համար ավելի քիչ ծախսատար կենսաթոշակային նպաստներով, ինչպիսին է 401(k) կենսաթոշակային խնայողությունների ծրագիրը:

Գուտակային համակարգում աշխատողը կատարում է ներդրումներ/contributions, որոնք կարող են համապատասխանեցվել գործատուի կողմից: Աշխատակցի վերջնական օգուտը կախված է ծրագրում ներդրած կատարողականից: Ընկերության պարտավորությունն ավարտվում է, երբ ծախսվում են ընդհանուր ներդրումները:

DC համակարգը ընկերության համար ավելի քիչ ծախսատար է հովանավորելը, և երկարաժամկետ ծախսերն ավելի հեշտ է գնահատել:

Կենսաթոշակային հիմնադրամներ: Կենսաթոշակային հիմնադրամները ենթակա են տարբեր կանոնակարգերի և կառավարման կառույցների՝ շահառուների շահերը պաշտպանելու համար: Կառավարությունները հաճախ ստեղծում են վերահսկող մարմիններ՝ ապահովելու համապատասխանությունը և վերահսկելու կենսաթոշակային հիմնադրամների ֆինանսական առողջությունը:

Կենսաթոշակային հիմնադրամները սովորաբար ներդրումներ են կատարում ակտիվների դիվերսիֆիկացված պորտֆելում, ինչպիսիք են բաժնետոմսերը, պարտատոմսերը, անշարժ գույքը և այլընտրանքային ներդրումները, ինչպիսիք են մասնավոր կապիտալը և հեջային ֆոնդերը: Ակտիվների բաշխումը մանրակրկիտ կերպով կառավարվում է՝ ռիսկը և եկամտաբերությունը հավասարակշռելու համար:

Հեջային հիմնադրամը (Hedge fund) մասնավոր ներդրողների սահմանափակ գործընկերություն է, որոնց գումարները կառավարվում են պրոֆեսիոնալ ֆոնդերի կառավարիչների կողմից, ովքեր օգտագործում են լայն ռազմավարություններ միջինից բարձր ներդրումային եկամուտներ ստանալու համար:


Ամենամեծ կենսաթոշակային հիմնադրամները կարող են մեծ ազդեցություն ունենալ

շուկայում իրենց չափերի պատճառով: Իհարկե, դրանք պատասխանատու են նաև միլիոնավոր մարդկանց կենսաթոշակային եկամուտ ապահովելու համար: Կենսաթոշակային հիմնադրամները բախվում են մի շարք մարտահրավերների՝ իրենց նպատակներին հասնելու համար.

- աշխարհաքաղաքական հակամարտությունը առաջացնում է անկայունություն և անորոշություն,
- բարձր գնաճը և ցածր տոկոսադրույքները (համեմատած երկարաժամկետ միջին ցուցանիշների հետ) սահմանափակում են վերադարձի պոտենցիալը,
Դասավանդման մեթոդները, ներառյալ ինտերակտիվ դասախոսությունները, խմբային քննարկումները, քեյս վերլուծությունները, սիմուլյացիաները և դերային խաղերը, ընտրվել են՝ ապահովելու տեսական և գործնական գիտելիքների սինթեզ: Սիմուլյացիաներն ու դերային խաղերը մոդելավորում են իրական սցենարներ՝ զարգացնելով ապրումակցումը և մասնագիտական հմտությունները: Փոխհատուցման ռազմավարությունների և ռեաբիլիտացիոն ծրագրերի մշակումը համահունչ է անհատականացված մոտեցումներին: Ինքնու-

րույն աշխատանքի առաջադրանքները, ներառյալ գրականության վերլուծությունը և գեղեցկների պատրաստումը, խթանում են հետազոտական հմտությունները: Տեսանյութերի դիտումը և ռեֆլեքսիան խթանում են քննադատական մտածողությունը՝ համապատասխանելով Բլումի տակտոնոմիային: Գծապատկերների օգտագործումը առավել դյուրին է դարձնում փոխհատուցման և ռեաբիլիտացիայի բարդ հասկացությունների յուրացումը:

Դասավանդման մեթոդները երաշխավորում են խորքային ընկալում և գործնական կիրառություն Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում: Այս գործիքակազմը պատրաստում է ուսանողներին միջմասնագիտական համագործակցության և սոցիալական ինտեգրման խթանման համար: Մեթոդների վերլուծությունը ցույց է տալիս դրանց համապատասխանությունը ժամանակակից հոգեբանամանկավարժական պրակտիկաներին: Դրանք նաև հաշվի են առնում Հայաստանի ռեսուրսային սահմանափակումները՝ խթանելով կրեատիվ լուծումներ:

Գնահատման չափանիշները, որոնք ընդգծում են ակտիվ մասնակցությունը և կրեատիվությունը, խթանում են ուսանողների ներգրավվածությունը: Էթիկական սկզբունքները, ներառյալ գաղտնիությունը և հարգանքը, պահպանվում են բոլոր գործնական առաջադրանքներում:

«ՀՀ ներառական կրթության համակարգի ներդրման ու կայացման հիմքերը» թեմայի հիմնական նպատակն է խորացնել ուսանողների գիտելիքները Հայաստանում ներառական կրթության համակարգի ներդրման և կայացման սկզբունքների վերաբերյալ՝ պատրաստելով նրանց աշխատել ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ: Այն ձգտում է զարգացնել բազմամասնագիտական թիմային համագործակցության, հոգեբանամանկավարժական աջակցության և տեխնոլոգիաների կիրառման հմտություններ:

Հիմնական հարցերն ընդգրկում են ԿԱՊԿ ունեցող աշակերտների սոցիալականացումը, բազմամասնագիտական թիմերի դերը և ներառական կրթության տեխնոլոգիաները: Նշված հարցերի շրջանակում վերլուծվում են սոցիալական հարմարվողականությունը, ծնողների ներգրավումը և թվային ռեսուրսների կիրառումը:

Մեր կողմից դասավանդման մեթոդներ են ընտրվել ինտերակտիվ դասախոսությունները, խմբային քննարկումները, քեյս վերլուծությունները, սիմուլյացիաները և դերային խաղերը՝ տեսական գիտելիքների և գործնական հմտությունների սինթեզ ապահովելու նպատակով: Դասավանդման մեթոդները երաշխավորում են խորքային ընկալում և գործնական կիրառություն Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում: Այս գործիքակազմը պատրաստում է ուսանողներին բազմամասնագիտական համագործակցության և սոցիալական արդարության խթանման համար: Մեթոդների վերլուծությունը ցույց է տալիս դրանց համապատասխանությունը ժամանակակից կրթական պրակտիկաներին՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ռեսուրսները:

Դասավանդման մոտեցումները նպաստում են ուսանողների կարողությունների զարգացմանը՝ վերլուծելու ներառական կրթության մարտահրավերները: Դրանք նաև խրախուսում են կրեատիվ լուծումներ՝ հաշմանդամություն ունեցող աշակերտների սոցիալական ինտեգրումը խթանելու համար: Ընդհանուր առմամբ, ընտրված մեթոդները երաշխավորում են կրթական նպատակների իրականացումը՝ համապատասխանելով միջազգային և տեղական չափանիշներին: Այս մեթոդները խթանում են ուսանողների միջմասնագիտական իրազեկությունը՝ ընդգծելով բազմազանության ընդունման կարևորությունը: Դրանք նաև զարգացնում են կոնֆլիկտների կառավարման հմտություններ՝ բազմամասնագիտական թիմերում համաձայնություն ձեռք բերելու համար: Տեխնոլոգիաների ինտեգրումը ուսուցման մեջ համապատասխանում է գլոբալ թվայնացման միտումներին:

Դասընթացը նպաստում է էթիկական սկզբունքների յուրացմանը, որոնք առանցքային են ներառական կրթության պրակտիկայում: Ընդհանուր առմամբ, մոտեցումները նպաս-

տում են կայուն մասնագիտական զարգացմանը՝ համապատասխանելով Հայաստանի Հանրապետության կրթական բարեփոխումների օրակարգին:

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներով աշակերտների սոցիալականացումը բարդ գործընթաց է, որը պահանջում է հոգեբանամանկավարժական աջակցություն և ներառական միջավայր: ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքը (1999, թարմացված 2015) երաշխավորում է կրթության հասանելիություն, սակայն ռեսուրսների սահմանափակումները և ուսուցիչների պատրաստվածության պակասը խոչընդոտում են: Սոցիալականացումը ներառում է սոցիալական հմտությունների զարգացում, ընտանիքի և դպրոցի համագործակցություն: Թվային ռեսուրսները և խմբային աշխատանքը խթանում են աշակերտների ներգրավվածությունը: Բազմամասնագիտական թիմերի դերը կարևոր է, սակայն ծնողների ներգրավումը հաճախ բախվում է դժվարությունների: Ներառական կրթությունը Հայաստանում զարգանում է, սակայն պահանջում է համակարգային բարեփոխումներ:

Այսպիսով, «Հատուկ և ներառական կրթության հոգեբանություն» դասընթացի վերլուծությունը ցույց տվեց, որ այն անցել է էվոլյուցիա՝ կարիտատիվ մոտեցումներից դեպի գիտականորեն հիմնավորված, սոցիոմշակութային և ներառական մոդելներ՝ հիմնվելով Լ. Վիգոտսկու, Ա. Լուրիայի և Մ. Այնսթրոմի տեսությունների վրա:

Դասընթացի պարտադիր կարգավիճակը հիմնավորված է Հայաստանի Հանրապետության ներառական կրթության իրավական ու հասարակական պահանջներով, ինչը մեծապես կնպաստի ուսանողների մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը՝ զարգացնելով տեսական գիտելիքները, անհատական կրթական ծրագրերի մշակման, ճանաչողական խանգարումների ախտորոշման և բազմամասնագիտական համագործակցության հմտությունները:

Ինտերակտիվ դասավանդման մեթոդները արդյունավետ են գործնական կարողությունների ձևավորման համար՝ համապատասխանելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի սկզբունքներին: Սակայն ՀՀ-ում ռեսուրսների սահմանափակությունը և համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչների պակասը դեռևս խոչընդոտում են ներառական միջավայրի լիարժեք իրականացմանը:

Դասընթացը նպաստում է սոցիալական արդարության և բազմազանության ընկալման ձևավորմանը՝ միաժամանակ ընդգծելով էթիկական սկզբունքների կարևորությունը: Առաջարկվող մեթոդները, ներառյալ թվային տեխնոլոգիաների ինտեգրումը, հարմարեցված են տեղական պայմաններին՝ խթանելով կրեատիվ և տղեռանտ լուծումներ:

Հետազոտությունը հաստատում է, որ դասընթացի կառուցվածքը համահունչ է ՀՀ օրենսդրությանը և միջազգային փորձին, սակայն հարկավոր է ուժեղացնել ինչպես առողջ, այնպես էլ ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնողների ներգրավվածությունը՝ բազմամասնագիտական թիմերի աշխատանքներին: Այս բոլոր գործոնները միասին նպաստում են կրթական համակարգում հավասար հնարավորությունների ապահովմանը՝ պատրաստելով մասնագետներ, որոնք կարող են արձագանքել հասարակության փոփոխվող պահանջներին:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-196>

Գրականություն

1. Выготский Л. С. Психология развития человека. Москва: изд-во Смысл; изд-во Эксмо, 2005, - 1136 с.
2. Выготский Л. С. Собрание сочинений: В 6-ти т. Т. 5. Основы дефектологии/ Под ред. Т. А. Власовой. Москва: Педагогика, 1983, - 368 с.

3. Ковалев В. В. Психиатрия детского возраста. Москва: Медицина, 1995. 560 с.
4. Лебединский В. В. Нарушения психического развития в детском возрасте: учебное пособие / 3-е издание, стереотипное. Москва: Академия, 2006, - 144 с.
5. Лурия А. Р. Основы нейропсихологии. Москва: Издательство МГУ. 1973, - 376 с
6. Павлов И. П. Полное собрание сочинений /Том 3. Книга 2. Москва: Издательство Академии наук СССР, 1951, - 438 с.
7. Сухарева Г. Е. Клинические лекции по психиатрии детского возраста. Москва: Медгиз, 1959, т. 2, - 408 с.
8. Ainscow M. Taking an inclusive turn. Journal of Research in Special Educational Needs, 7(1), 2007, p. 3-7.
9. Ainscow M., & Dyson A. *Improving schools, developing inclusion*. Routledge, 2006.
10. APA: Ethical Principles of Psychologists and Code of Conduct. American Psychological Association, 2017.
11. Barrows H. S. Problem-based learning in medicine and beyond. New Directions for Teaching and Learning, 1996.
12. Bloom B. S. Taxonomy of Educational Objectives. Longman, 1956.
13. Booth T., & Ainscow M. Index for inclusion: Developing learning and participation in schools. Centre for Studies on Inclusive Education, 2011.
14. Florian L. Preparing teachers to work in inclusive classrooms. Journal of Teacher Education, 2013.
15. Kolb D. A. Experiential Learning: Experience as the Source of Learning and Development. Prentice Hall, 1984.
16. Tomlinson C. A. How to Differentiate Instruction in Mixed-Ability Classrooms. ASCD, 2001.
17. UNESCO: The Salamanca Statement and Framework for Action on Special Needs Education. UNESCO, 1994.
18. UNESCO: Guidelines for inclusion: Ensuring access to education for all. UNESCO, 2005.
19. UNESCO: A Guide for Ensuring Inclusion and Equity in Education. UNESCO, 2017.
20. Winzer M. A. The history of special education: From isolation to integration. Gallaudet University Press, 1993.
21. CAST: Universal Design for Learning Guidelines version 2.2. <http://udlguidelines.cast.org> (25.06.2025)

Методика преподавания дисциплины «Специальная психология и психология инклюзивного образования» в программе бакалавриата ВГУ по специальности психология

Григорян Заруи

Резюме

Ключевые слова: особые образовательные потребности, интерактивное обучение, междисциплинарное сотрудничество, социальная интеграция, индивидуальная образовательная программа, универсальный дизайн

Анализ дисциплины «Специальная психология и психология инклюзивного образования» показывает, что она прошла значительную эволюцию – от преимущественно каративных подходов к научно обоснованным, социокультурным и инклюзивным моделям, основанным на теоретических положениях Л. С. Выготского, А. Р. Лурии и М. Айнскоу. Обязательный статус дисциплины обоснован правовыми и общественными требованиями инклюзивного образования в Республике Армения, что значительно способствует повышению

профессиональной подготовки студентов, развитию теоретических знаний, навыков разработки индивидуальных образовательных программ, диагностики когнитивных нарушений и междисциплинарного сотрудничества. Интерактивные методы преподавания эффективны для формирования практических компетенций и соответствуют принципам ЮНЕСКО. Однако ограниченность ресурсов и недостаточная подготовка педагогов в Армении все еще препятствуют полноценной реализации инклюзивной среды. Дисциплина способствует формированию восприятия социальной справедливости и ценности многообразия, подчеркивая важность этических принципов. Предлагаемые методы, включая интеграцию цифровых технологий, адаптированы к местным условиям и стимулируют креативные решения. Исследование подтверждает, что структура дисциплины соответствует законодательству Республики Армения и международному опыту, однако необходимо усилить вовлеченность родителей и работу междисциплинарных команд. Все эти факторы вместе способствуют обеспечению равных возможностей в образовательной системе, подготавливая специалистов, способных быстро реагировать на изменяющиеся требования общества.

Methods of Teaching the Course “Special Psychology and the Psychology of Inclusive Education” in the Bachelor’s Program in Psychology at VSU

Grigoryan Zaruhi

Summary

Key words: *special educational needs, interactive learning, interdisciplinary collaboration, social integration, individualized educational program, universal design*

The analysis of the course “Special Psychology and the Psychology of Inclusive Education” demonstrates its evolution from charitable approaches to scientifically grounded, sociocultural, and inclusive models based on the theories of Vygotsky, Luria, and Ainscow. The mandatory status of the discipline is justified by legal and societal demands for inclusive education in Armenia, significantly contributing to the enhancement of students’ professional training, development of theoretical knowledge, skills in designing individualized educational programs, diagnosing cognitive impairments, and fostering interdisciplinary collaboration. Interactive instructional approaches have demonstrated strong effectiveness in fostering practical competencies and correspond closely to UNESCO’s guiding principles. However, limited resources and insufficient teacher training in Armenia continue to hinder the full implementation of an inclusive educational environment. The discipline promotes the formation of a perception of social justice and appreciation of diversity, emphasizing the importance of ethical principles. The proposed methods, including the integration of digital technologies, are adapted to local contexts and encourage creative problem-solving. The study confirms that the structure of the course complies with Armenian legislation and international practices. Nevertheless, greater parental involvement and improved interdisciplinary teamwork are needed. Collectively, these factors contribute to ensuring equal opportunities within the education system and preparing specialists capable of responding effectively to the changing needs of society.

Ներկայացվել է	30. 03. 2025 թ.
Գրախոսվել է	05. 04. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.

Հանրակրթական դպրոցների կառավարման սոցիալ-հոգեբանական բնութագիրը

Լ. Կաչինյան Լ. Իլիթ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-206>

Հանգուցային բառեր. *մանկավարժական կոլեկտիվ, կրթական միջավայր, կազմակերպչական կառուցվածք, կազմակերպչական մշակույթ, կրթության կառավարում, լիդերություն, մոտիվացիա, հոգեբանական մթնոլորտ*

Նախաբան

Ժամանակակից կրթական համակարգի բարեփոխումները պահանջում են նոր մոտեցումներ հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացում: Կրթության որակի բարձրացման, ուսուցիչների մասնագիտական զարգացման և աշակերտների արդյունավետ ուսուցման ապահովման համար անհրաժեշտ է ուսումնասիրել դպրոցի կառավարման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Հոդվածի նպատակն է բացահայտել հանրակրթական դպրոցի կառավարման սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք նպաստում են կրթական միջավայրի արդյունավետ կազմակերպմանը: Հետազոտության շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մանկավարժական կոլեկտիվի փոխհարաբերությունների, սոցիալական դերերի բաշխման, ղեկավարի առաջնորդական հատկանիշների և դպրոցական միջավայրի հոգեբանական մթնոլորտի ուսումնասիրությանը:

Հետազոտության խնդիրներն են՝

- վերլուծել դպրոցի կառավարման սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները,
- ուսումնասիրել մանկավարժական կոլեկտիվում սոցիալական հարաբերությունների դերը կառավարման գործընթացում,
- բացահայտել դպրոցի ղեկավարման ոճերի ազդեցությունը կրթական միջավայրի ձևավորման վրա,
- առաջարկել գործնական առաջարկություններ դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Հետազոտության նորույթը պայմանավորված է նրանով, որ ներկայիս կրթական համակարգի բարեփոխումները պահանջում են նոր, գիտականորեն հիմնավորված մոտեցումներ դպրոցների կառավարման գործընթացում: Այս ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել կրթական կառավարման հոգեբանական առանձնահատկությունները և մշակել մեխանիզմներ, որոնք կնպաստեն դպրոցական միջավայրի բարելավմանը:

Տեսական և գործնական նշանակությունը այն է, որ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել կրթական հաստատությունների կառավարման բարելավման, մանկավարժական կոլեկտիվների արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև դպրոցների ղեկավարների մասնագիտական զարգացման ծրագրերում: Այս ուսումնասիրությունն իր ներդրումը կունենա ոչ միայն կրթության կառավարման ոլորտում, այլև ուսուցիչների և աշակերտների միջև առողջ հոգեբանական միջավայրի ձևավորման գործում:

Հոդվածի բովանդակությունը

Հանրակրթական դպրոցը՝ որպես սոցիալական ինստիտուտ, կարևոր նշանակություն ունի հասարակության համար, քանի որ աճող սերնդին պատրաստում է ինքնուրույն կյանքի, ապահովում նրա ուսուցումը, դաստիարակությունն ու զարգացումը: Հանրակրթությունը հնարավորություն է տալիս աշակերտներին փոխանցել հասարակության և գիտության առաջընթացի նվաճումներն ու ռեսուրսները: Ժամանակակից աշխարհի դինամիկան, հասարակական պահանջմունքների փոփոխությունը և նորարարությունների ներդրման

անհրաժեշտությունը ենթադրում են նոր սպասելիքներ և պահանջներ կրթության գործընթացի և սոցիալական փոխգործողության ձևերի նկատմամբ:

Այդ ամենը փոխում է մոտեցումը դպրոցի գործունեության ընկալման նկատմամբ, քանի որ այն հասարակության արտացոլումն է, այդ թվում՝ նրա խնդիրների և հակասությունների: Ներկայումս նորովի է իմաստավորվում ուսումնական հաստատությունների դերը և կարգավիճակը հասարակության կյանքում: Կրթության կառավարման մասնագետների կողմից ակտիվորեն քննարկվում են այն նպատակները, արժեքներն ու իդեալները, որոնց պետք է կողմնորոշվի դպրոցը և սեփական խնդիրների լուծման համար ինչ գործիքներ կարող է դպրոցն օգտագործել սովորողների հետ աշխատանքում: Հ. Գարդների կարծիքով, դրա նպատակն է օգնել աշակերտներին յուրացնելու իրականության ինտելեկտուալ իմաստավորման հիմնական համակարգ կազմող եղանակներն ու սովորեցնել մտածել որպես քաղաքացի, գիտության, պատմության, գեղարվեստի, էթիկայի, մաթեմատիկայի տեսանկյունից [5]:

Որպես կանոն՝ դաստիարակության նշանակալի մասն իրագործվում է ոչ թե ուղղակիորեն, այլ միջավայրի միջոցով, իսկ դպրոցն իրենից ներկայացնում է միջավայրի վառ օրինակ, որը կազմված է այնպես, որ ազդի երեխաների վարքի, կրթության, ինտելեկտուալ զարգացման և բարոյական դիրքորոշումների վրա [6]:

Կրթական հաստատությունները սերտորեն կապված են արտաքին միջավայրի հետ, և այդ փոխգործողությունը կարող է ընթանալ երկու ձևով. Առաջին դեպքում կրթական հաստատությունը հարմարվում է արտաքին միջավայրին՝ վերակառուցելով կրթական գործընթացները, երկրորդում՝ կրթական հաստատությունն աշխատում է ենթարկել միջավայրը սեփական նպատակներին հասնելու համար:

Հանրակրթական դպրոցի գործառնությունը այնպես է ուղղորդված հասարակության պահանջմունքներով պայմանավորված իր առջև դրված նպատակների իրագործմանը, որ դրանք պետք է իրագործվեն սահմանված ժամանակահատվածում: Կրթական հաստատության նպատակները կանխորոշում են մանկավարժական համակարգի բովանդակությունը, որն իր հերթին ենթադրում է նրա իրագործման ձևերի և մեթոդների բազմազանություն: Ուստի, մանկավարժական համակարգի արդյունավետ գործառնությունը հնարավոր է միայն համապատասխան սոցիալ-մանկավարժական պայմանների դեպքում:

Մանկավարժական կոլեկտիվի կառուցվածքային կազմակերպվածության օրինաչափությունները կոլեկտիվի կառուցվածքի ընդհանուր սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների արտադրյալ են: Կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական վերլուծության դեպքում առանձնացնում են ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպչական կառուցվածքներ: Կոլեկտիվի ֆորմալ կառուցվածքը պայմանավորված է նրա անդամների իրավունքներով և պարտականություններով, նաև աշխատանքի պաշտոնական բաժանումով: Կոլեկտիվի ոչ ֆորմալ կառուցվածքն առաջանում է իրական, այլ ոչ միայն վերագրված գործառնությունների հիման վրա, որոնք կատարվում են մասնագիտական հանրության կողմից: Կոլեկտիվի ոչ ֆորմալ կառուցվածքն իրենից ներկայացնում է նրա անդամների միջև իրական ձևավորված հարաբերությունների համակարգ:

Ս. Վ. Խրեբինյան իր «Կրթության կազմակերպչական հոգեբանությունը աշխատանքի գիտական կազմակերպման գաղափարների համակարգում» աշխատությունում պնդում է, որ կրթական համակարգի գործունեության արդյունավետությունը կախված է ոչ միայն բովանդակությունից, այլև նրա տարածության մեջ ներկայացված սուբյեկտների՝ դեկավարների, մանկավարժների, սովորողների հոգեբանական չափորոշիչներից: Սուբյեկտների ակտիվության ժամանակային կազմակերպման, ուսումնական, դասավանդման, կառավարչական գործունեության ռճերի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերլուծել և կանխատեսել կրթական գործընթացի արդյունքները որպես հատուկ կազմակերպված սոցիալական փոխգործողություն և համատեղ գործունեություն [14]:

Կրթական կազմակերպությունների կառավարման սոցիալ-հոգեբանական բնութագրի էությունը մեկնաբանելու համար որպես հիմնարար դրույթ կիրառվում է ամերիկացի հոգեբան Ջ. Գիբսոնի «հնարավորությունների տեսությունը»: Հնարավորություններն ընդգծում են սուբյեկտի ակտիվությունը, որը յուրացնում է իր կենսական միջավայրը, այդ թվում՝ նախադպրոցական, դպրոցական և մասնագիտական ուսուցման պայմաններում: Հնարավորությունները կանխորոշվում են և՛ միջավայրի հատկություններով, և՛ սուբյեկտի հնարավորություններով [2]: Ն. Վ. Բորոդովսկայան առանձնացնում է կրթական միջավայրի «հնարավորությունների համակարգի» երեք բաղադրիչներ: «Հնարավորությունների համակարգի» առաջին բաղադրիչը կրթական միջավայրի սուբյեկտին ակտիվ լինելու հնարավորության ընձեռման կարողությունն է: «Հնարավորությունների համակարգի» երկրորդ բաղադրիչը սուբյեկտին ակտիվության դրսևորման եղանակների հնարավորություն առաջարկելու կարողությունն է: «Հնարավորությունների համակարգի» երրորդ բաղադրիչը կրթական միջավայրի սուբյեկտի ակտիվության հաջող դրսևորման պայմանները ապահովելու կարողությունն է: Ն. Վ. Բորոդովսկայայի հիմնական եզրակացությունը այն է, որ կրթական միջավայրը զարգացնող է, կրթության սուբյեկտի գործողությունները պետք է զարգացնեն որոշակի ընդունակություններ, արդիականացնեն անձնային ներուժը, հանգեցնեն անձնային աճի [1]: Ձևավորելով անհրաժեշտ միջավայր և վերահսկելով այն՝ մեծահասակները հնարավորություն ունեն անմիջականորեն ներգործել աճող սերնդի մտքերի ու զգացմունքների վրա:

Սոցիալական հոգեբանության տեսանկյունից բարդ կազմակերպությունները կարելի է դիտարկել որպես ներքուստ կառուցակարգված սոցիալական համակարգեր, որոնք բաղկացած են տարբեր խմբերից և գտնվում են միջխմբային հարաբերությունների բազմակողմանի հարաբերությունների մեջ [8; 22; 23]:

Դպրոցը կրթության հիմնական օղակն է, որը կատարում է անձի սոցիալականացման և սոցիալական փորձի փոխանցման կարևոր գործառնությունները: Այն ոչ արտադրական կազմակերպություն է, որը չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ ու չի հանդիսանում իր ունեցվածքի սեփականատերը [7]: «Կազմակերպություն» հասկացության կիրառությունը դպրոցի նկատմամբ ընդգծում է տվյալ սուբյեկտի ինքնուրույնությունը, շեշտադրում կրթական ծառայություններից օգտվողների հետ ակտիվ փոխգործողությունը [3]:

Դպրոցների՝ որպես փոխկապակցված տարրերի համախումբ ունեցող կազմակերպությունների դիտարկում՝ հնարավորություն է տալիս սոցիալական, կազմակերպչական և կառավարչական հոգեբանության ոլորտում կուտակված տեսական և պրակտիկ փորձն օգտագործել կրթության ոլորտում այժմեական խնդիրների լուծման համար, թույլ տալիս գտնել խնդրահարույց գոտիները նոր տեսանկյունից և ստեղծել դրանց վրա ներգործության ժամանակակից գործիքներ, նաև հանդես է գալիս որպես կրթական գործընթացի ռազմավարությունների և զարգացման եղանակների տեսական հիմք:

Ամերիկացի հոգեվերլուծաբան Քենեթ Էյսլըը նշում է, որ դպրոցի վարչակազմը, ուսուցիչները, աշակերտները և նրանց ծնողները դպրոցն ըմբռնում են տարբեր կերպ, իրենց նախընտրությունների հիմքի վրա, որոնք իրենցից ներկայացնում են տարբեր սպասելիքներ, հետաքրքրություններ, պահանջմունքներ, ինչը դպրոցում հեշտությամբ կարող է հանգեցնել զուգահեռ համակարգերի գոյության: Այդ պատճառով հեղինակը դպրոցը դիտարկում է որպես միմյանց հետ հատման գոտիներ ունեցող համակարգերի թույլ կապակցված համախումբ:

- սովորողների համակարգ, որը կապված է դպրոցականների ուսուցման և զարգացման հետ,
- ուսուցիչների համակարգ, որը կապված է մասնագիտական չափորոշիչների պահպանման և արդյունավետ ուսուցման հետ,
- ծնողների համակարգ, որը կողմնորոշված է դպրոցի և երեխայի միջև փոխհարաբերություններին,

- վարչական համակարգ, որը զբաղված է կառավարումով ընդհանրապես, այդ թվում անվտանգությամբ և արտաքին հարաբերություններով [19]:

Հեղինակը նշում է, որ բարենպաստ դպրոցական կլիման կարելի է դիտարկել որպես հաղորդակցման թեթևացում այդ համակարգերի միջև, որը հակառակ դեպքում կարող է վերածել կասկածամտության և փոխադարձ թշնամանքի:

Միջանձնային հարաբերությունների տեսանկյունից դպրոցները շեշտը դնում են համագործակցության և համակարգման վրա, այլ ոչ մրցակցության: Դպրոցականներն ուսումնական առաջադրանքների կատարման ժամանակ փոխգործակցում են միմյանց և ուսուցիչների հետ: Ուսուցիչները փոխգործակցում են միմյանց, ծնողների և կոլեկտիվի մյուս անդամների հետ: Դպրոցի տնօրենը, ուսուցիչները, ծնողները՝ իրենց կարողությունների չափով, միասին աշխատում են ուսուցման որակի բարելավման վրա, ինչը նպաստում է դպրոցի արդյունավետության բարձրացմանը: Համագործակցությունը դժվարանում է, երբ մարդիկ հետապնդում են սեփական նպատակներ կամ աշխատում խնդիրների տարբեր ընկալումով, իսկ ծնողները դպրոցն ընկալում են որպես ծառայությունների ոլորտ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն, որ կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների մոտ կարող են լինել տարբեր մոտեցումներ դպրոցի սոցիալական գործառնությունների նկատմամբ:

Ժամանակակից կրթական հաստատությունների վրա ուժեղ ճնշում է գործադրվում՝ նորարական և արագ փոփոխվող կազմակերպությունների վերափոխման մոտիվացիայի նպատակով: Դպրոցները բավականին շատ են տարբերվում ուսուցման գործընթացում նոր գաղափարների ընդունման և իրագործման արագությամբ: Սակայն մինչ օրս լուծված չէ նոր գաղափարների հաջող ներդրման և արդյունավետ նորարարական գործունեության իրագործման նպաստող կազմակերպչական և սոցիալ-հոգեբանական գործոններին վերաբերող հարցը [9]:

Վարչակազմին, ուսուցիչներին, դպրոցականներին և ծնողներին անհրաժեշտ է գիտակցել, որ բազմաթիվ դպրոցական խնդիրներ առաջանում են կազմակերպչական բացթողումների, սոցիալ-հոգեբանական գործոնների հետևանքով, այլ ոչ անձնային գործոններով, և այդ պատճառով ոչ միշտ է պետք թերությունները փնտրել սեփական անձի կամ կրթական գործընթացի մասնակիցների մեջ:

Մանկավարժական կոլեկտիվի կազմակերպչական կառուցվածքի զարգացման վրա ազդում են մի շարք սոցիալ-հոգեբանական գործոններ, որոնց արդյունքում ձևավորվում են նրա սոցիալ-հոգեբանական բնութագրերը.

1. Մանկավարժական կոլեկտիվի կողմից լուծվող մասնագիտական-մանկավարժական խնդիրների բնույթը: Ուսուցիչների, դասղեկների, ծնողների, հանրության գործունեությունն ինտեգրվում է մանկավարժական գործընթացի ամբողջականությամբ, ուսուցման և դաստիարակության անխզելի կապով: Չնայած որ յուրաքանչյուր մանկավարժ կատարում է իր կոնկրետ գործառնությունները, նա իր գործողությունները պետք է փոխհամաձայնեցնի մանկավարժական գործընթացի այլ մասնակիցների հետ՝ ուսուցիչների, աշակերտների, դպրոցի վարչակազմի: Հոգեբանական հետազոտություններում ապացուցվել է, որ կոլեկտիվի համախմբվածության անհրաժեշտ պայման է նպատակային միասնությունը, երբ կոնկրետ, մասնավոր խնդիրների կատարումը ենթարկվում է գործունեության ընդհանուր նպատակին [4]:

2. Մանկավարժական կոլեկտիվի սոցիալ-ժողովրդագրական և հոգեբանական առանձնահատկությունները (տարիք, կրթություն, որակավորում, մասնագիտական արժեքներ): Մանկավարժական կոլեկտիվի կազմի տարասեռությունն իրական հիմք է տարբեր ուղղվածության ոչ ֆորմալ խմբերի ձևավորման համար:

3. Կոլեկտիվի կազմակերպչական կառուցվածքը կախված է նաև նրանից, թե որքանով է նրան պատկանելությունը բավարարում անդամների պահանջմունքները, հետաքրքրությունները (կոլեկտիվի հեղինակություն, ընկերների առկայություն, կոլեկտիվում

սեփական աշխատանքի կարևորության գիտակցում, կոլեկտիվի ավանդույթներ, բարոյահոգեբանական մթնոլորտ):

4. Կոլեկտիվի մեծությունը. որքան մեծ է կոլեկտիվը, այնքան պաշտոնական բնույթ են ձեռք բերում հարաբերությունները նրա անդամների միջև: 30-ից ավել անդամ ունեցող մանկավարժական կոլեկտիվում, որպես կանոն, սկսում են առաջանալ տարբեր ոչ ֆորմալ խմբեր, որոնք միավորվում են տարբեր հատկանիշներով՝ հետաքրքրությունների, զբաղմունքների ընդհանրություն, համատեղ հանգիստ և այլն [11, 95-96]:

Դպրոցական կյանքի կառուցվածքի մեջ մտնող բոլոր համակարգերը պետք է գործառնեն համահունչ ձևով, տարբեր խնդիրների միասնական առաքելության մեջ միավորումով, ինչը ենթադրում է նպատակների և արժեքների, գործունեության կազմակերպման ուղիների և եղանակների փոխհամաձայնեցում, նաև շփումների ու համագործակցության կարգավորում: Դա թույլ է տալիս ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որը բավական օգտակար է դպրոցի արդյունավետ գործառնության համար: Չնայած մասնակիցների մեծ բազմության առկայությանը, համահունչ, բարենպաստ կազմակերպչական մշակույթի ձևավորման և պահպանման համար հիմնական պատասխանատվությունը ընկած է դպրոցի վարչակազմի վրա:

Կազմակերպչական մշակույթը կարող է դառնալ այն անհրաժեշտ կապող գործոնը, որը թույլ է տալիս փոխհամաձայնեցնել կազմակերպչական գործընթացները, նաև դրանց ըմբռնումը դրանցում մասնակցող տարբեր սոցիալական խմբերի կողմից: Ուստի, հանրակրթական դպրոցը պետք է պահպանի որոշակի հավասարակշռություն և՛ այն միջավայրի նկատմամբ, որտեղ գործունեություն է ծավալում, և՛ նրա ընդհանուր կառուցվածքը կազմող տարբեր համակարգերի միջև:

Սոցիալ-հոգեբանական տեսանկյունից անհրաժեշտ է նշել՝ թեպետ ուսուցումը և դաստիարակությունը դպրոցի գործունեության բովանդակությունն են կազմում, սակայն դպրոցը նաև կազմակերպչական մշակույթի կրողն է, որը պետք է ուսումնասիրվի աշխատանքի օպտիմիզացման համար: Բացի դրանից՝ հանրակրթական դպրոցների կազմակերպչական մշակույթի հայեցակարգի կիրառության հետ կապված՝ կարևորվում է դպրոցում գոյություն ունեցող երկու հիմնական սոցիալական խմբերի՝ մեծահասակների և սովորողների յուրահատկության հաշվի առնելու անհրաժեշտությունը:

Կազմակերպչական հոգեբանության հնարավորությունների կիրառությունը մանկավարժական կոլեկտիվների կառավարման գործընթացների ուսումնասիրության մեջ ընդգծում էր Ս. Ս. Պանսոյովսկին: Հեղինակը նշում էր, որ կազմակերպչական հոգեբանության տեխնոլոգիաները կարող են դառնալ լավ գործիքակազմ մանկավարժական հետազոտությունների համար, քանի որ նրա ուսումնասիրությունների ոլորտը կազմակերպությունների տեսություններն են, խմբային արդյունավետությունը, լիդերությունը, մոտիվացիան, վարքը և այլն [12]:

Դպրոցի կազմակերպչական մշակույթը կոլեկտիվի գործունեությունը և փոխհարաբերությունները կարգավորող արժեքների, ավանդույթների, ծիսակատարությունների, սովորույթների և կանոնների ամբողջությունն է, որն արտացոլում է դպրոցում գործող կենսաձևը [13]: Կազմակերպչական մշակույթի յուրահատկությունը կանխորոշում է մանկավարժական և վարչական կազմի հակազդումների յուրօրինակությունն արտաքին և ներքին իրադարձություններին՝ ձևավորելով ռազմավարական զարգացման դինամիկան, կառավարչական գործողությունների բնույթն ու ուղղությունը [16]:

Համարվում է, որ առհասարակ կազմակերպության մեջ ընդունված արժեքները, համոզմունքները և բազային պատկերացումները կարող են ձևավորել կրթական յուրահատուկ ընկալում, մտածելակերպ, զգացմունքներ և վարք: Կազմակերպչական մշակույթի առանցքը նրա գաղափարախոսությունն է, որը դրսևորվում է համոզմունքները և նպատակներն ար-

տացույթող հանրային արտահայտություններում և իր հերթին դառնում վարքի համար կոդ-նորոշիչ [17; 20; 28]:

Բացի դրանից՝ ուժեղ, գրագետ կառուցված և կարգի բերված կազմակերպչական մշակույթը նպաստում է արդյունավետ գործունեությանը, աշխատակիցների հավատարմությանն ու նրանց մոտիվացիային, հարմարմանն ու ճկունությանը [24; 25; 26; 27]: Կազմակերպչական մշակույթն օգնում է հաղթահարել արտաքին հարմարման և ներքին ինտեգրման խնդիրները, ինչպես նաև կազմակերպության հետ նույնականացման ձևավորմանը [8; 10]:

Ընդհանուր առմամբ դպրոցի կազմակերպչական մշակույթը դիտարկվում է որպես ընդհանուր արժեքների, դիրքորոշումների, համոզմունքների և նորմերի համախումբ, որոնց միայն որոշ մասն է արտահայտված [18; 19]: Կազմակերպության մշակույթը բազմաթիվ ասպեկտներից ոչ միշտ է գիտակցվում, միևնույն ժամանակ այն ծառայում է յուրատեսակ «տանիմ», որը կապում և ստեղծում է դպրոցում համախմբվածության զգացում: Կազմակերպչական մշակույթն արտահայտվում է դպրոցական միջավայրի նորմերի և հիմքերի, կրթական գործընթացի յուրահատկության վրա, դրսևորվում գործընկերների, ուսուցիչների և աշակերտների, նաև ուսուցիչների և ծնողների միջև փոխհարաբերություններում [21]: Դպրոցի կազմակերպչական մշակույթը նպաստում է նույնականության զգացման ձևավորմանը, օգնում վարքի սոցիալապես ընդունված չափորոշիչների և մոդելների ձևավորմանը, խթանում անհատական և կոլեկտիվ նվաճումները, կանխորոշում զարգացման հետագա ուղղությունը:

Դպրոցի կազմակերպչական մշակույթը կարևոր սոցիալ-հոգեբանական իրողություն է, որը մեծ ազդեցություն է գործում աշակերտների և ուսուցիչների հաջողությունների և բավարարվածության վրա: Ինչպես նշել ենք, դպրոցի կազմակերպչական մշակույթն իրենից ներկայացնում է արժեքների, նորմերի, համոզմունքների և ավանդույթների ամբողջություն, որը կանխորոշում է կրթական գործընթացի բոլոր մասնակիցների վարքը, փոխհարաբերությունները և գործունեությունը: Այսինքն՝ դպրոցի կազմակերպչական մշակույթն առանցքային դեր է խաղում կրթական սոցիալ-հոգեբանական միջավայրի ձևավորման մեջ: Այն ազդում է դպրոցի առօրյա գործունեության, նրա հեղինակության և աշակերտների առաջադիմության վրա: Ուժեղ, դրական մշակույթը նպաստում է անվտանգ և աջակցող կրթական միջավայրի ձևավորմանը, որտեղ դպրոցի յուրաքանչյուր անդամ իրեն արժևորված է զգում, հարգված:

Հանրակրթական դպրոցների կառավարման սոցիալ-հոգեբանական բնութագիրն իր մեջ ընդգրկում է մի քանի առանցքային կողմեր, որոնք ազդում են դպրոցի գործառնության և զարգացման վրա, որը, մեր կարծիքով, դպրոցում ձևավորված կազմակերպչական մշակույթն է:

Հանրակրթական դպրոցների կառավարման գործում սոցիալ-հոգեբանական բնութագրերն առանցքային դեր են խաղում, քանի որ այն անմիջականորեն ազդում է կրթական գործընթացի որակի, սովորողների և ուսուցիչների մոտիվացիայի մակարդակի, կոլեկտիվում ձևավորված կրթական ընդհանուր մթնոլորտի վրա: Հանրակրթական դպրոցի կառավարման սոցիալ-հոգեբանական բնութագրերը կարևոր են կրթության բարձր որակի ապահովման համար: Արդյունավետ կառավարումը, հաղորդակցական հմտությունները, մոտիվացիան, կոլեկտիվ մասնակցությունը, սովորողների նկատմամբ անհատական մոտեցումը և համագործակցությունը ծնողների հետ նպաստում են դպրոցում բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը և կրթական բարձր արդյունքների ապահովմանը:

Եզրակացություն

Հանրակրթական դպրոցի կառավարման սոցիալ-հոգեբանական բնութագրերի ուսումնասիրությունը փաստում է, որ դպրոցի արդյունավետ գործունեության համար կարևոր է ոչ միայն կրթական ծրագրերի իրականացումը, այլև համայնքի մեջ ստեղծվող

հոգեբանական և սոցիալական միջավայրը: Կառավարման յուրաքանչյուր մակարդակ՝ ղեկավարից մինչև ուսուցիչ և աշակերտ, ունեն մեծ նշանակություն մանկավարժական գործունեության հաջողության համար: Սոցիալ-հոգեբանական հարաբերությունների արդյունավետ կառավարումը կարող է մեծապես բարձրացնել կրթական հաստատության ընդհանուր արդյունավետությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ հանրակրթության ոլորտում առավելագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալին՝

1. մանկավարժական կոլեկտիվի համագործակցություն՝ արդյունավետ և փոխգործակցող թիմերի ստեղծում, որտեղ բոլորը կլինեն ներգրավված, աջակցող ու ներդաշնակ գործունեության մեջ,
2. կրթական միջավայրի բարելավում՝ հարմարավետ և անվտանգ կրթական միջավայրի ապահովում, որտեղ աշակերտները կզգան իրենց ազատ ու վստահ,
3. հոգեբանական մթնոլորտի բարելավում՝ ի նպաստ դպրոցում բարոյահոգեբանական դրական մթնոլորտի ստեղծմանը՝ կենտրոնանալով բարոյական արժեքների, միմյանց նկատմամբ հարգանքի վրա,
4. առաջնորդի դերի բարձրացում, որտեղ դպրոցի ղեկավարները, դասղեկները պետք է հանդես գան որպես մոտիվացիայի աղբյուր՝ նպաստելով ուսուցիչների և աշակերտների ներուժի բացահայտմանը:

Գործնական առաջարկներ.

1. Կազմակերպել դպրոցում առկա խնդիրների բաց քննարկումներ՝ նպաստելով մասնակցության և գաղափարների փոխանակման դրակի բարձրացմանը:
2. Դպրոցում իրականացնել թիմային աշխատանքներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություններն ու ուժեղ կողմերը:
3. Կազմակերպել սոցիալ-հոգեբանական աջակցման ծրագրեր՝ մանկավարժների և աշակերտների անձնային հնարավորություններն իրագործելու և մոտիվացնելու նպատակով:
4. Խմբային սոցիալ-հոգեբանական վարժանքների միջոցով բարձրացնել կրթության կողմերի միջանձնային հարաբերությունների և փոխազդեցության արդյունավետությունը:

Կարծում ենք՝ կրթական համակարգում վերոնշյալ առաջարկությունների ներդրումը կստեղծի առավել կայուն, արդյունավետ և բարենպաստ կրթական միջավայր՝ ի նպաստ հանրակրթական դպրոցների կառավարման սոցիալ-հոգեբանական արդյունավետության բարձրացման:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-206>

Գրականություն

1. Бордовская Н.В. Вызовы времени и новые модели развивающей образовательной среды //Человек и образование, 2013, №2 (35), с. 4-11.
2. Гибсон Дж. Экологический подход к зрительному восприятию. Москва: Изд. Коллибри, 1988, 464 с.
3. Доница И. А., Шерайзина, Р. М. Проблемно-диагностический анализ развития школы как некоммерческой образовательной организации. Вестник Новгородского государственного университета, 2015, 88, 36-40 с.

4. Донцов А. И. Проблемы групповой сплоченности. Москва: Прогресс, 1985, 150 с.
5. Корнетов Г. Б. Образы школы. Историко-педагогический журнал, 2019, 1, с. 6-15.
6. Корнетов Г. Б. Российская модель общественно активной школы. Среднее образование в России, 2014, 3, с. 69-75.
7. Костюнина А. А. Школа как открытая социальная организация, 2014.
URL: http://elar.urfu.ru/bitstream/10995/52127/1/klo_2014_061.pdf (15.07.2024).
8. Липатов С. А. Социальная идентичность работников в организационных условиях. Москва: Изд. дом ГУ ВШЭ, 2008.
9. Мельник О. Ф. Организационная культура средних школ с разной степенью инновационной активности. Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского, 5(1), с. 396-403, 2010.
10. Несмеянова Р. К. Взаимосвязь образа корпоративной культуры и организационной идентификации сотрудников коммерческих предприятий, Москва, 2018.
11. Огородова Т. В. Социальная психология образования. Ярославль: ЯрГУ, 2014, - 116 с.
12. Пантюхин С. С. Применение ресурсов организационной психологии в педагогических исследованиях. Личность, семья и общество: вопросы педагогики и психологии, 2014, №42, с. 24-28.
13. Поташник М. М., Лазарев, В. С. Управление развитием школы. Москва: Новая школа, 1995.
14. Хребина С. В. Организационная психология образования в системе идей научной организации педагогического труда //Известия ТРТУ, 2006, №14 (69), с. 75-81.
15. Шакуров Р. Х. Социально-психологические основы управления: руководитель и подколлектив. М.: Просвещение, 1990, 206 с.
16. Ясвин В. А., Моргачева Е. М. Организационная культура педагогических коллективов в ситуации объединения образовательных организаций. Вестник РГГУ. Психология. Педагогика. Образование, 2017, 4(10), с. 58-74.
17. Alvesson, M. Organizations, culture, and ideology. International Studies, 1987.
18. Brown R. School culture and organization: Lessons from research and experience. Available from: <https://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.527.8918&rep=rep1&type=pdf;>
19. Eisold K. The School as an Organization. Schools: Studies in Education, 2009, 6(1), 138-142.
20. Gruenert S., Whitaker T. School culture rewired: How to define, assess, and transform it. Alexandria, VA: ASCD, 2015.
21. Haberman M. Why school culture matters, and how to improve it. Huffington Post, 2013.
22. Hartley J. F. Intergroup relations in organizations. Handbook of work group psychology. Chichester, 1996.
23. Hogg M. A., Terry D. J. Social identity and self-categorization processes in organizational contexts. Academy of Management Review, 2000, 25(1), p. 121-140.
24. Lewis D. Five years on the organizational culture saga revisited. Leadership & Organization Development Journal, 2002.
25. Jaghargh F. Z., Ghorbanpanah H., Nabavi S. E., Farvardin Z. A Survey on Organizational Culture Based on Stephan Robbins's Theory (Case Study). 2nd International Conference on Management and Artificial Intelligence, IPEDR, 35, 2012.
26. Ouchi W. Theory Z. Reading. Mass: Addison-Wesley, 1981, p. 280-287.
27. Peters T. J. Waterman R. H., jr. In search of excellence. New York: Harper and Row, 1982.
28. Price J. L. Mueller C. W. Handbook of organizational measurement. New York: Management and organizations, 1986.

Социально-психологическая характеристика управления общеобразовательной школой

Лачинян Лилит

Резюме

Ключевые слова: педагогический коллектив, образовательная среда, организационная структура, организационная культура, управление образованием, лидерство, мотивация

В статье представлены социально-психологические характеристики управления общеобразовательной школой с акцентом на педагогический коллектив, образовательную среду, организационную структуру и культуру, а также психологический климат. Цель статьи – выявить факторы, способствующие эффективности образовательного процесса. Особое внимание уделено тому, что школа как социальная система требует гармонии во взаимодействии между внешней средой, учителями, учениками, родителями и администрацией. Организационная культура рассматривается как важный элемент, регулирующий ценности, нормы и отношения, способствующие мотивации, сплоченности и адаптации. В статье подчеркивается, что стиль руководства, межличностные отношения и психологический климат оказывают непосредственное влияние на учебные результаты. Практические рекомендации включают развитие командной работы, открытые обсуждения, программы психологической поддержки и важность роли руководителей в создании позитивной социально-психологической среды в школе. В заключении подчеркивается, что качество образования зависит не только от учебных программ, но и от интегрированного управления социально-психологическими факторами. Дополнительно отмечается, что эффективная управленческая стратегия требует системного анализа внутренних процессов и постоянного мониторинга факторов, определяющих устойчивость образовательной среды, что в свою очередь способствует повышению организационной эффективности школы.

The Socio-Psychological Characteristics of Public-School Management

Lachinyan Lilit

Summary

Key words: pedagogical staff, educational environment, organizational activity structure, organizational culture, education management, leadership, motivation

This article examines the socio-psychological characteristics of public-school management, focusing on the pedagogical staff, educational environment, organizational activity structure and culture, as well as the psychological atmosphere. The aim of the study is to identify the educational and socio-psychological factors that contribute to the effectiveness of the education process. The article emphasizes the idea that a school, as a social system, requires harmonious collaboration among society, state institutions, teachers, students, parents, and administrators. Organizational culture is viewed as a key factor in regulating social values, norms, and relationships, fostering educational motivation, cohesion, and adaptation. The study highlights the significance of management style, interpersonal relationships, and the psychological atmosphere within the staff as essential prerequisites for ensuring the effectiveness of the learning process. It can be concluded that the quality of education depends not only on curricula but also on the integrated management of socio-psychological components within the educational system. It is additionally noted that an effective management strategy requires systematic process analysis and ongoing monitoring of key factors, thereby enhancing the school's organizational efficiency.

Ներկայացվել է 14. 02. 2025 թ.

Գրախոսվել է 20. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

Կրթության կառավարման գործընթացի տեսամեթոդաբանական հիմքերը

**Լաչինյան Լիլիթ,
Սարգսյան Լևոն**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-215>

Հանգուցային բառեր. *կրթական համակարգ, կառավարման մոտեցումներ, կրթության արդյունավետություն, կրթական բարեփոխումներ, սիներգետիկ մոտեցում, ծրագրային-նպատակային կառավարում*

Նախաբան

Կրթության կառավարման գործընթացի տեսամեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությունը հոգեբանության կարևոր գիտական հիմնախնդիր է, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտելու կրթական համակարգերի արդյունավետության բարձրացման ուղիները: Արագ փոփոխվող աշխարհում, որտեղ տեխնոլոգիական առաջընթացը և գլոբալիզացիոն գործընթացները ազդում են կյանքի բոլոր ոլորտների վրա, կրթության կառավարումը դառնում է առանցքային գործոն յուրաքանչյուր պետության զարգացման համար:

Տվյալ *հետազոտության նպատակն* է ուսումնասիրել և համակարգել կրթության կառավարման տեսամեթոդաբանական մոտեցումները՝ պարզելու դրանց ազդեցությունը կրթական համակարգերի արդյունավետության վրա:

Հետազոտության խնդիրներն են՝

1. վերլուծել կրթության կառավարման տարբեր տեսություններն ու մեթոդաբանական մոտեցումները,
2. բացահայտել կրթության կառավարման արդի մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները,
3. առաջարկել ինտեգրված մոտեցում, որը կներառի կրթության կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմներ:

Հետազոտության նորույթը կրթության կառավարման տարբեր մեթոդաբանական մոտեցումների համադրման մեջ է՝ դիտարկելով ժամանակակից կրթական համակարգերում դրանց արդյունավետությունը:

Ուսումնասիրության *տեսական նշանակությունն* արտահայտվում է կրթության կառավարման տարբեր մոտեցումների վերլուծության և դրանց դասակարգման մեջ, իսկ *գործնական նշանակությունը՝* կրթության կառավարման բարելավման համար կիրառելի մեխանիզմների առաջարկման մեջ:

Հիմնական բովանդակությունը

Կրթության կառավարման գործընթացը բազմակողմանի և միջգիտակարգային երևույթ է, որը պահանջում է խորը տեսական և մեթոդաբանական իմաստավորում: Հարափոփող աշխարհի և գլոբալիզացիայի պայմաններում, երբ տեղեկատվական տեխնոլոգիաներն ու նորարարություններն ավելի մեծ ազդեցություն են գործում կյանքի բոլոր ոլորտների վրա, կրթության կառավարումը դառնում է հասարակության զարգացման կարևոր գործոններից մեկը: Կրթության համակարգի արդյունավետ գործառնության համար անհրաժեշտ է հասկանալ և հաշվի առնել բազմաթիվ գործոններ՝ սկսած սոցիալ-տնտեսական պայմաններից, վերջացած պատմամշակութային առանձնահատկություններով:

Կրթության կառավարման տեսամեթոդաբանական հիմքերն իրենց մեջ ընդգրկում են

տարբեր մոտեցումներ և հայեցակարգեր, որոնք օգնում են սահմանել կրթական գործընթացների կառավարման մեջ օգտագործվող հիմնական սկզբունքներն ու մեթոդները:

Կրթության կառավարման բնագավառի կարևոր ասպեկտ է ուսումնասիրության մեթոդաբանությունը: Ժամանակակից ուսումնասիրությունները հենվում են միջգիտակարգային մոտեցումներին՝ ինտեգրելով գիտելիքները սոցիոլոգիայից, հոգեբանությունից, մանկավարժությունից, տնտեսագիտությունից և հարակից այլ գիտություններից: Դա թույլ է տալիս ավելի ամբողջական և խորը վերլուծել կրթական գործընթացները, բացահայտել օրինաչափությունները և մշակել կառավարման արդյունավետ ռազմավարություններ:

Կրթության կառավարման գործընթացի տեսամեթոդաբանական հիմքերը հենք են ստեղծում կրթական համակարգերի ներդրման և կատարելագործման համար՝ ապահովելով դրանց հարմարումը ժամանակակից հասարակության մարտահրավերներին և պահանջներին:

Բոլորովին ակնհայտ է, որ մարդկության համաշխարհային խնդիրների լուծման, նաև ցանկացած պետության զարգացման կանխորոշիչ գործոն է կրթության համակարգը: Հասարակական կյանքի ոլորտների մեջ կրթության ներգրավման մակարդակից է կախված առաջընթացը մարդկային հարաբերություններում, ժողովրդի և պետության ինտելեկտուալ ներուժը, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացումը, գիտության և տեխնիկայի, մարդու կայուն զարգացումը, հասարակական կյանքի կայունությունը:

Այս տեսանկյունից կրթությունը մշակույթի ժառանգման սցիալական եղանակ է, որը հանդես է գալիս որպես հասարակական և անհատական ինքնագիտակցության որակն ապահովող և սերունդների մշակութային փորձի փոխանցումն ու վերարտադրությունն իրագործող սոցիոմշակութային պրակտիկայի հատուկ ոլորտ: Կրթության ստեղծագործական առաքելության իրագործումը պահանջում է կրթության կառավարման որակյալ համակարգ, որը կարող է ապահովել նրա արդյունավետությունը:

Ժամանակակից կրթության առանձնահատկություններից է նրա դինամիզմը, հարափոփոխությունը: Այդ կապակցությամբ լրջագույն կառուցվածքային վերափոխումների են ենթարկվում Հայաստանի, արտասահմանյան երկրների կրթական համակարգերը, իրագործվում է կրթության ինտենսիվ բարեփոխում, ներդրվում են նոր նախագծեր:

Ա. Ս. Գալազովը նշում էր, որ փոփոխությունները կրթության մեջ հասարակական կեցության բովանդակության փոփոխությունների արդյունք են գիտակցության մեջ: Մանկավարժության հարացույցի հիմք են դարձել ինքնազարգացման, ինքնակրթության, ինքնանախագծման գերակայությունները: Այդ փոփոխություններին հաջորդում է մասնագետին ներկայացվող ավանդական պահանջների փոփոխություն՝ որպես ժամանակակից կրթության կրողի: Նա պետք է կարողանա կառավարել կրթական և դաստիարակչական գործընթացները՝ նախագծել և իրագործել պրակտիկայում նոր տեսակի զարգացնող կրթադաստիարակչական իրադրությունները, հաշվի առնել համակարգային փոխադարձ կապերը միջավայրի գործողությունների միջև [8, 68]:

Կրթական համակարգերի կառավարման տեսության մեջ կարելի է առանձնացնել կառավարում հասկացության սահմանման նկատմամբ երեք մոտեցում.

1. Կառավարումը որպես գործունեություն (Վ. Ս. Լազարև, Գ. Ն. Պոպով, Մ. Մ. Պոտաշնիկ, Ա. Ֆայդլ և այլք): Տվյալ սահմանումը կարևոր է առարկայական արդյունքի հասնելու կողմնորոշվածության տեսանկյունից: Սակայն այն շեշտադրում է կատարում կրթական գործընթացի մասնակիցների սուբյեկտային փորձի փոփոխության վրա այդ գործունեության ընթացքում:

2. Կառավարումը որպես մի համակարգի՝ այլ համակարգի կամ մի մարդու ուրիշ մարդու կամ մարդկանց խմբի վրա ներգործություն (Վ. Գ. Աֆանասև, Լ. Բ. Բոկլետտ, Ա. Ա. Օրով,

Ն. Ս. Սունցով և այլք): Այստեղ կառավարումը դիտարկվում է որպես սուբյեկտի նպատակաուղղված ներգործություն օբյեկտի վրա և այդ օբյեկտի փոփոխություն այլ օբյեկտի վրա ներգործության արդյունքում: Տվյալ մեկնաբանությունը գրեթե հաշվի չի առնում կառավարման սուբյեկտ-սուբյեկտային բնույթը, քանի որ ակտիվ դիրք է հատկացվում միայն կառավարչին, իսկ կառավարվողը պարտադրված նորմային հետևող պասսիվ կատարող է:

3. Կառավարումը որպես սուբյեկտների փոխգործողություն (Վ. Գ. Աֆանասև, Վ. Ի. Զվերևա, Պ. Ի. Տրետյակով, Տ. Ի. Շամովա և այլք), որտեղ փոխգործողության ընթացքում տեղի է ունենում կառավարիչների և աշխատակիցների փոխադարձ փոփոխություն ու փոխգործողության գործընթացի վիճակների փոփոխություն: Նրա էությունը ուղղակի և հակադարձ ներգործության անխզելիության, միմյանց վրա ներգործող սուբյեկտների փոփոխությունների օրգանական համակցության մեջ է: Բացի դրանց՝ փոխգործողությունը ամբողջական, ներքուստ տարբերակված, ինքնազարգացող համակարգ է [26, 234]:

Կրթության կառավարման տեսանկյունաբանական հիմքն ապահովող հիմնական մոտեցումներն են ընդհանուր գիտական մակարդակում՝ համակարգայինը, սիներգետիկը, ծրագրային-նպատակայինը, կիբեռնետիկը, կոնկրետ գիտական մակարդակում՝ համալիրը, անտրոպոկենտրոնը, իրադրայինը, ակմեոլոգիականը, տարածաշրջանայինը, որակաչափականը:

Համակարգային մոտեցումը (Աֆանասև Վ. Գ., Լ. ֆոն Բերթալանֆի, Բլաուերգ Ի. Վ., Սադոլսկի Վ. Գ., Յուդին Է. Գ. և այլք) հանդես է գալիս որպես բարդ օբյեկտների կառավարման մեթոդաբանություն: Կրթության կառավարումը համակարգային մոտեցման հիման վրա պահանջում է.

- Պատկերացումներ կառավարման օբյեկտի մասին որպես բարդ համակարգի՝ նրա բաղադրիչների առանձնացում, բաղադրիչների միջև ներքին կապերի հաստատում, համակարգի՝ որպես ավելի բարձրակարգ համակարգի բաղադրիչի դիտարկում, բաղադրիչներին բնորոշ հատկությունների բացահայտում և դրա հիման վրա նրա՝ որպես ամբողջության բնութագրի առանձնացում:

- Կառավարման օբյեկտի ճանաչողություն ոչ միայն նրա ձևավորման, այլև զարգացման ներքին և արտաքին պայմանների միջոցով, ինչը պայմանավորված է կրթության համակարգի ռազմավարական ռեսուրսի բացահայտման անհրաժեշտությամբ՝ որպես կրթական կառույցի կողմից ապահովվող որակ:

- Կրթության կառավարման բացահայտում՝ որպես զարգացման ու արտաքին միջավայրի հետ փոխգործակցության մեջ գտնվող բաց համակարգի, որն առանձնանում է կառավարչական գործընթացի մի շարք խնդիրների կատարման համար փոխկապակցված գործառույթների հանրագումարի առկայությամբ [4, 6; 7]:

Կիբեռնետիկ մոտեցում (Բերգ Ա. Ի., Էշբի Ու. Ռ. և այլք) հիմնվում է ժամանակի և տարածության մեջ օբյեկտի տարբեր վիճակների գոյության ընդունման վրա, ինչը թույլ է տալիս կառավարման օբյեկտը դիտարկել դինամիկայի մեջ: Կրթության կառավարման համար կիբեռնետիկ մոտեցման հիմնական դրույթներն են.

- կրթության կառավարումը որպես դինամիկ համակարգ ենթադրում է մուտքերի, ելքերի ու գործընթացների առկայություն,

- կառավարվող օբյեկտը գործընթացի և նրա արդյունքի, իրական և հնարավոր վիճակի միասնություն է,

- որոշակի գործողություններ նպաստում են կառավարման օբյեկտի իրական վիճակից անցումը ներքուստ կազմակերպված վիճակին [5; 28; 29]:

Կրթության արդյունավետության տնտեսական և ֆինանսական կողմերը

Սովորողների ներգրավվածության մեծացումը կրթական գործընթացներում ոչ միայն
բարելավում է ուսուցման որակը, այլև բարձրացնում է կրթական հաստատությունների
տնտեսական գործունեության արդյունավետությունը: Օրինակ, երբ բուհի ուսանողները
ակտիվորեն ներգրավված են և արդյունավետորեն իրականացնում են իրենց ուսումնառու-
թյան գործընթացները, ապա բարձրանում է նրանց առաջադիմությունը, նվազում մաղման
հավանականությունը, հետևաբար և բուհի ուսանողների կորստի մակարդակը՝ այդպիսով
ամրապնդելով հաստատության ֆինանսական կայունությունը:

Ներկայացված պայմաններում կրթական հաստատությունը ձևավորում է բարձր
որակավորման մրցունակ մասնագետներ, որոնք պահանջարկված են տնտեսությունում և
պատրաստ բարձրորակ և արդյունավետ աշխատանքի: Դա կարող է բերել գործազրկության
նվազման, ձեռնարկությունների արտադրողականության աճի և տնտեսական զարգացում-
ների խթանման, ինչը վկայում է կրթության՝ որպես ռազմավարական գործոնի, գլխավոր և
առաջնային դերի մասին ոչ միայն գիտական, մշակութային, սոցիալական, այլև արտադրա-
տեխնիկական, տեխնոլոգիական, ռազմարդյունաբերական, երկրի անվտանգության և
ամբողջությամբ տնտեսական զարգացումներում [1, 48], [16]:

Այդպիսով, սովորողների ներգրավվածությունը կրթական գործընթացներում կարող է
դիտարկվել՝ որպես երկարաժամկետ ներդրում, որն ակադեմիականից զատ, ունի նաև
տնտեսական արժեք: Կրթական տեխնոլոգիաների և նորարարական մեթոդաբանության

ներդրումը համակարգում նպաստում է ոչ միայն որակյալ կրթության ապահովմանը, այլև կրթական հաստատությունների ֆինանսական կայունությանն ու աճին:

Եզրակացություն և զարգացման ռազմավարություն

Ժամանակակից բարձրագույն կրթությունը պահանջում է ձկուն, տեխնոլոգիապես հագեցած, արդյունավետ և ուսանողակենտրոն լուծումներ: Այդ համատեքստում՝ որպես ուսուցման կազմակերպման և կառավարման արդյունավետ հարթակ, առանձնանում է էլեկտրոնային ուսուցման Moodle համակարգը:

Համակարգի ներդրումը կրթության ոլորտում պետք է դիտարկել որպես ուսուցման գործընթացի ռազմավարական բարեփոխման և որակի ապահովման բաղկացուցիչ: Մեթոդաբանական առումով կարևորվում են ուսանողակենտրոն մոտեցումը, խաղայնացման մեխանիզմները և համագործակցային ուսուցման ձևաչափերը, որոնք խթանում են գործընթացում սովորողների ներգրավվածությունը, զարգացնում վերլուծական մտածողությունը և ստեղծագործման կարողություն:

Երկարաժամկետ հեռանկարում Moodle հարթակը կարող է վերածվել ուսանողների կարիքների ուսուցման ռեժիմին և ուժին հարմարեցվող խելացի կրթական էկոհամակարգի, որը ուսումնական հաստատություններին հնարավորություն կտա ապահովել կրթական համակարգի՝ ժամանակակից մարտահրավերներին համահունչ դինամիկ, արդյունավետ և որակյալ ուսուցում:

Հարթակի համապարփակ բարելավումը կարող է իրականացվել միաժամանակ տեխնիկական, տեխնոլոգիական և մեթոդաբանական ուղղություններով:

Մերվերային օպտիմալացումը, քեշավորման և բեռնվածության բալանսավորման համակարգերի ներդրումը և հավելվածների ինտեգրումը կբարձրացնի Moodle-ի արձագանքման արագությունը, հարմարվողականությունը և կայունությունը:

Հարթակի հնարավորությունների ընդլայնման կարևոր պայման է արտաքին գործիքների ինտեգրումը: Google Drive-ի, Zoom-ի, Microsoft Teams-ի, ինչպես նաև արհեստական բանականության համակարգերի (օր.՝ ChatGPT, OpenAI API) ինտեգրումը Moodle-ում թույլ են տալիս՝ ստեղծելով հարմարավետ թվային միջավայր, ապահովել ուսուցման գործընթացի հասանելիություն և կազմակերպել ավտոմատացված և անհատականացված ուսուցում, որոնց հնարավորությունների լիարժեք և արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է դասավանդողների և սովորողների կողմից համակարգի կիրառման մեթոդաբանության իմացություն, համակարգչային պատրաստվածություն և գրագիտություն:

Մեթոդաբանական առումով արհեստական բանականության (AI) օգտագործումը կրթական գործընթացներում կարևորվում է անհատականացված ուսուցման, ավտոմատ գնահատման և կառավարման նպատակաուղղվածությամբ, որը հնարավորություն կտա, ստեղծելով վիրտուալ ուսուցողական միջավայր և վերլուծելով սովորողի անհատականացված ուսուցման առաջադիմության ավտոմատ գնահատման տվյալները, առաջարկել բարելավման աջակցություն և եղանակներ:

Երկարաժամկետ հեռանկարում Moodle-ը կարող է դիտարկվել ոչ միայն որպես էլեկտրոնային ուսուցման հարթակ, այլ որպես կրթական գործընթացի ռազմավարական բարեփոխման գործիք՝ VR/AR, AI, chatbot-եր և խելացի գնահատման համակարգեր ներառող խելացի միջավայր ստեղծելու համար: Այդ ուղղությամբ զարգացումները կօգնեն կրթական հաստատություններին՝ վերափոխադարձելու իրենց առաքելությունը՝ որպես ուսանողակենտրոն, նորարար և արդյունավետ կրթություն ապահովող կենտրոններ:

Գրականություն

1. Աթոյան Վ., Օհանյան Ս., Մովսիսյան Ն., Հովյան Վ., Ասատրյան Տ., Թադևոսյան Մ., Ուսանողների արժեքամակարդակին կողմնորոշիչները թվային դարաշրջանում, «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, 2024:
2. Բեգիրջյան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան, Ս., Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրագործումը. կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Երևան, 2017:
3. Վանաձորի պետական համալսարան: «Էլեկտրոնային կրթական հարթակների դասախոսի ուղեցույց», Վանաձոր, 2019:
4. «ՎՊՀ առցանց դասավանդման գործընթացի վերաբերյալ դասախոսների կարծիքի ուսումնասիրության վերլուծություն», Վանաձորի պետական համալսարան, ՈԱԿ, Վանաձոր, 2020:
5. ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը», Երևան, 2022:
6. ՅՈՒՆԵՍԿՅ: «Հայաստանի կրթության ոլորտի վերլուծություն. ամփոփագիր», Երևան, 2022:
7. Пашенко О. И. Информационные технологии в образовании: Учебно-методическое пособие. Издательство Нижневартовского государственного университета. 2013.
8. Белоус И. А., Чупалов А. Я. Сравнительный анализ современных систем дистанционного обучения. Вестник Московского городского педагогического университета. Серия: Информатика и информатизация образования, (3), 85-95. 2019.
9. Булганина С. В., Лебедева Т. Е., Хозерова, Т. П., & Шкунова А. А. Преимущества и возможности использования дистанционных технологий среды Moodle в контексте смешанного обучения. Науковедение, (5), 1-24. 2014.
10. Каплина Л. Ю., Банарцева А. В. Применение инновационных цифровых технологий в процессе дистанционного обучения (на платформах Moodle, Zoom, Teams). Проблемы современного педагогического образования, (67), 162-166. 2020.
11. Ganimi an A. J., Vegas E. & Hess F. M. Realizing the Promise: How Can Education Technology Improve Learning for All?. The Brookings Institution. 2020. <https://www.brookings.edu/>
12. Horvat A., Dobrota M., Krsmanovic M., & Cudanov M. Student perception of Moodle learning management system: A satisfaction and significance analysis. Interactive Learning Environment, 23(4), 517-527. 2015.
13. Ifenthaler D., Majumdar R., Gorissen P., Judge M., Mishra S., Rafaghelli J., & Shimada A. Artificial intelligence in education: Implications for policymakers, researchers, and practitioners. Technology, Knowledge and Learning. 2024.
14. Kerimbayev N., Kultan J., Abdykarimova S., & Akramova A. LMS Moodle: Distance international education in cooperation of higher education institutions of different countries. Education and Information Technologies, 22, 2125-2139. 2017.
15. OECD. OECD Digital Education Outlook: Towards an Effective Digital Education Ecosystem. OECD Publishing. 2023. <https://www.oecd.org/>
16. UNESCO. Global Education Monitoring Report: Technology in Education. A Tool on Whose Terms? UNESCO Publishing. 2023. <https://www.unesco.org/>
17. World Economic Forum. Catalysing Education 4.0: Investing in the Future of Learning for a Human-Centric Recovery. 2022. <https://www.weforum.org/>
18. University of Tokyo Educational Technology Center. <https://www.u-tokyo.ac.jp/en/education/tech.html>
19. University of Melbourne Learning Environments: <https://le.unimelb.edu.au/>
20. MIT Open Learning. <https://openlearning.mit.edu/>
21. ԵՊՀ պաշտոնական կայք. <https://www.ysu.am/>

22. ՀԱԱՀ պաշտոնական կայք՝ <https://anau.am/>
23. Հայաստանի Ամերիկյան Համալսարան (AUA)՝ <https://aua.am/>
24. Հայաստանի Ֆրանսիական Համալսարան (UFAR)՝ <https://www.ufar.am/>
25. ՎՊՀ պաշտոնական կայք՝ <https://www.vsu.am/>
26. Moodle Documentation. <https://docs.moodle.org>
27. UNESCO. (2021). Recommendation on the Ethics of Artificial Intelligence. Paris: UNESCO. <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000380455>
28. European Commission. Ethics Guidelines for Trustworthy AI. Brussels: European Commission, 2019. <https://digital-strategy.ec.europa.eu/en/library/ethics-guidelines-trustworthy-ai>
29. United Nations. The Age of Digital Interdependence. Report of the High-Level Panel on Digital Cooperation, 2019. <https://www.un.org/en/pdfs/DigitalCooperation-report-for%20web.pdf>
30. IEEE. Ethically Aligned Design: A Vision for Prioritizing Human Well-being with Autonomous and Intelligent Systems, 2019. <https://standards.ieee.org/initiatives/autonomous-intelligence-systems/>
31. Labster. Virtual Labs for Universities and High Schools. <https://www.labster.com>
32. Arts & Culture Expeditions. <https://www.google.com>
33. ThingLink. <https://www.thinglink.com/>

Технико-технологические и методологические направления развития платформы Moodle в системе высшего образования

Харатян Артур

Резюме

Ключевые слова: обучение, учебный процесс, качество образования, образовательная среда, геймификация, студентоцентрированный подход, студент, оценивание

Современное высшее образование требует гибких, технологически оснащенных и студентоориентированных решений. В этом контексте система e-learning Moodle выделяется как эффективный инструмент для организации и управления учебным процессом. Внедрение Moodle в систему образования должно рассматриваться как часть стратегических реформ. Студентоориентированный подход, геймификация и кооперативное обучение способствуют вовлеченности учащихся, развитию аналитического мышления и творческих способностей. В перспективе Moodle может стать интеллектуальной образовательной экосистемой, адаптированной к потребностям студентов, что обеспечит динамичное и качественное обучение. Совершенствование платформы должно вестись как по техническому (оптимизация серверной части, кэширование, балансировка нагрузки), так и по методологическому направлениям. Интеграция внешних инструментов (Google Drive, Zoom, Microsoft Teams, ИИ-системы как ChatGPT) расширяет возможности Moodle, создавая комфортную цифровую среду и поддерживая персонализированное обучение. Для эффективного использования этого требуется компьютерная грамотность преподавателей и студентов. Применение искусственного интеллекта позволяет анализировать прогресс учащихся, предлагать пути их развития. В будущем Moodle может стать не просто платформой e-learning, а основой интеллектуальной среды, включающей VR/AR, ИИ, чат-ботов и системы умной оценки, переосмысляя роль вузов как центров инновационного и студентоориентированного образования.

Technical-Technological and Methodological Development Directions of the Moodle Platform in the Higher Education System

Kharatyan Arthur

Summary

Key words: *learning, educational process, quality of education, educational environment, gamification, student-centered approach, student, assessment*

Modern higher education requires flexible, technologically equipped, and student-centered solutions. In this context, the Moodle e-learning system stands out as an effective tool for organizing and managing the educational process. The implementation of Moodle in the education system should be viewed as part of the strategic reforms. A student-centered approach, gamification, and cooperative learning contribute to student engagement, the development of analytical thinking, and creative abilities. In the long term, Moodle can become an intelligent educational ecosystem tailored to student needs, ensuring dynamic and high-quality learning. The platform's improvement should be carried out both in technical (server optimization, caching, load balancing) and methodological directions. Integration of external tools (Google Drive, Zoom, Microsoft Teams, AI systems such as ChatGPT) expands Moodle's capabilities, creating a comfortable digital environment and supporting personalized learning. Effective use of it requires digital literacy from both instructors and students. The application of artificial intelligence enables the analysis of student progress, suggests development paths. In the future, Moodle may become not just an e-learning platform but the foundation of an intelligent environment incorporating VR/AR, AI, chatbots, and smart assessment systems, rethinking the role of universities as centers of innovative and student-oriented education.

Ներկայացվել է 14. 04. 2025 թ.
Գրախոսվել է 07. 05. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

Ամուսնալուծվող անձի հետ կապված վտանգները

Կոստանդյան Լուսինե

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-239>

Հանգուցային բառեր. *ամուսնալուծության ռիսկ, ամուսնալուծության հետևանք, ընտանեկան խնդրահարույց հարցեր*

Նախաբան

Ժամանակակից խելահեղ արագությամբ ընթացող աշխարհում հասարակությունը դարձել է առավել անհանդուրժող և ոչ ապրումակցող: Հետևաբար այս էմպաթիայի կենդանի շփման պահվածքները հնարավոր չէ, որ իր համապատասխան արտահայտությունը չունենա նաև ընտանեկան հարաբերություններում: Սակայն մենք մեր քննարկման առարկան ենք դարձրել ոչ թե ճգնաժամները և բախումները, այլ դրա հետևանքով ամուսնալուծվող անձի հետ կապված վտանգները:

Հետազոտության արդիականությունը, նորությունը այն է, որ այստեղ փորձ է արվել գտնելու տարբեր տարածաշրջանում ապրող և տարբեր մշակույթ, սովորություններ ունեցող հայ և ռուս ընտանիքների մոտեցումները ընտանիքի պահպանման հարցում, հնարավորինս դրանք կանխումը և ապահովագրումը ապրումակցման, համբերատարության, հանդուրժողականության և անկախության տարբեր մակարդակների պարագայում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ամուսնական զույգերի մոտ անկախության, համբերատարության և հանդուրժողականության մակարդակների միջև կապը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը այն է, որ պետք է գտնել, թե վերը նշված նպատակի ուսումնասիրումը որքանով պիտանի կլինի ամուսնալուծման վտանգները մասամբ կանխելու իմաստով:

Հոդվածի բովանդակությունը

Ընտանեկան բախումների և ճգնաժամների հետևանքներից մեկը ամուսնալուծությունն է՝ ընտանիքի տրոհումը և վերացումը: Ժամանակակից ընտանիքի փոփոխության միտումները և առկա վիճակը հասկանալու, դրանով իսկ այդ ուղղությամբ բացասական զարգացումները հնարավորինս կանխելու, ընտանիք կազմելու գործում վերահաս խնդրահարույց հարցերի վերաբերյալ իմացության անհրաժեշտ մակարդակ ապահովելու, սոցիալական և ժողովրդավարական քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար այդ երևույթի մանրակրկիտ ուսումնասիրությունն անհրաժեշտ է: Քանի որ մեր օրերում ամուսնության մեջ գլխավոր դերը պատկանում է սիրուն և ոչ թե պարտքին կամ պարտավորությանը, ինչպես նախկինում էր, ապա փոխադարձ սիրո զգացմունքի բացակայությունը կարող է ամուսնալուծության իրավաբանական հիմք դառնալ: Ընտանիքը կարող է քայքայվել բազմաթիվ պատճառներով: Ընտանիքի քայքայման պատճառ կարող է լինել ամուսնալուծությունը, ամուսնու կամ կնոջ հեռանալը ընտանիքից, նրանցից մեկի կամ երկուսի մահը, ամուսիններից մեկի անլիարժեք ճանաչվելը, ամուսիններից մեկի երկարատև բացակայությունը և այլն: Ամուսնալուծությունն այն հանգամանքի իրավաբանական հավաստումն է, որ ամուսնությունը դադարում է գոյություն ունենալ: Ամուսնալուծությունների քանակը ընդհանուր առմամբ մեծանում է աշխարհի համարյա բոլոր երկրներում՝ հարուստ թե աղքատ, արևմտյան թե արևելյան, հյուսիսային թե հարավային: Ամուսնալուծության պատճառները բազմաթիվ են, սակայն սույն հոդվածում մեր խնդիրը առավելապես ամուսնալուծության ռիսկերին, հետևանքներին անդադադառնալն է [2, 112-120]:

Ամուսնալուծության խնդիրը ժամանակակից ժողովրդավարական հասարակությունների հիմնական սոցիալական խնդիրներից մեկն է: Բավական է նշել, որ նախկին ԽՍՀՄ-ում ամուսնալուծությունների թիվը վերջին հաշվով հասել է ամուսնությունների 40 %-ի մակարդակին [1, 339-341]: Հատկապես լուրջ է վիճակը Ռուսաստանում և Մերձբալթյան երկրներում: Օրինակ՝ էստոնացի սոցիոլոգ Է. Տիյթի հետազոտությունները ցույց են տվել, որ այս երկրներում ունենք նույն մտահոգող ցուցանիշը: Չնայած Հայաստանում վիճակը փոքր-ինչ բարվոք է, սակայն մտածելու տեղիք է տալիս: Ներընտանեկան բախումները, ինչպես գիտենք, ծագում են ամուսինների հիմնական պահանջմունքների չբավարարված լինելու հետևանքով, ինչն էլ իր հերթին ծնում է ամուսնալուծության վտանգ կամ, ավելի լայն, ընտանիքների քայքայման վտանգ: Ընտանիքի հոգեբանության բնագավառում բոլորիս հայտնի ռիսկի ըմբռնումից ելնելով՝ խոսում են այն մասին, որ նոր ամուսնացողները, ինչպես նաև արդեն ամուսնացած մարդիկ, մշտապես գտնվում են ամուսնալուծվելու որոշակի վտանգի առջև: Մենք արդեն նշեցինք, որ ընտանիքի քայքայման վտանգը ծագում է այն դեպքում, երբ չեն բավարարվում կամ մասամբ են բավարարվում ամուսինների մի շարք հիմնական պահանջմունքներ: Այդ տեսակետը, չնայած օգտակարությանն ու հստակությանը, քննարկման շրջանակներից դուրս է թողնում ընտանիքի քայքայման վտանգ առաջացնող մեծաթիվ այլ գործոններ: Դրանցից մի քանիսն ուսումնասիրել են Է. Տիյթը, Ա. Ի. Վոլկովան և այլք: Է. Տիյթը դրանք անվանել է «ամուսնալուծության վտանգի գործոններ» [5, 721-733]: Վերլուծելով իր բավականին լայն սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները նա առանձնացնում է նման գործոնների երեք խումբ.

• **Ամուսնալուծվողների անձի հետ կապված վտանգներ (ռիսկային գործոններ)**

Այդ խմբի մեջ հեղինակը ներառում է ամուսնացողների ծագումը, ծնողների ընտանիքի թողած ազդեցությունը, որոշ սոցիալ-ժողովրդագրական գործոնները, հոգեբանական առանձնահատկությունները, ֆիզիկական և հոգեկան առողջությունը և այլն: Հեղինակը նշում է, որ թվարկված բոլոր գործոնների իմացությունը թույլ է տալիս որոշ հավանականությամբ կանխատեսում կատարել այն մասին, թե յուրաքանչյուր առանձին մարդու ամուսնությունը որքանով հաջող է լինելու: Իհարկե, հասկանալի է, որ թվարկված գործոնները մտնում են տարբեր ենթախմբերի մեջ:

• **Ուսումնասիրվող զույգի առաջնային համատեղելիությունը**, ինչպես նաև այն մասին, թե ինչ պայմաններում են ծանոթացել, ինչպիսին էին նրանց հարաբերությունները մինչամուսնական կապի փուլում, ամուսնանալու դրդապատճառները: Նա ընդգծում է, որ ռիսկի այս գործոնները գտնվում են առաջին խումբ գործոնների ազդեցության տակ, կախված են դրանցից և կարող են ուժեղացնել դրանց, իսկ որոշ դեպքերում էլ՝ փոխհատուցել: Այդ գործոնների իմացությունը, հեղինակի կարծիքով, թույլ է տալիս կանխատեսել ամուսնության հաջողությունը արդեն տվյալ զույգի ամուսնանալու հենց առաջին օրը:

• **Ռիսկային գործոններ**, որոնք ծագում են արդեն ամուսինների համատեղ կյանքի ընթացքում: Սակայն այս խմբի մեջ ևս հեղինակը ներգրավում է տարաբնույթ գործոններ, ինչպիսին են, օրինակ, ընտանիքի տնտեսական վիճակը, բնակարանային պայմանները և դրանց կողքին՝ դերային սպասումների և դրանց իրականացման անհամապատասխանությունը: Հասկանալի է, որ դրանք ազդում են ընտանիքի կայունության վրա, սակայն էականորեն տարբեր ձևերով, ուղիներով, մեխանիզմներով: Հեղինակի պնդմամբ, հիշատակված երեք խումբ ռիսկային գործոնները որոշվում են երկրորդային անհամատեղելիությամբ, ամուսինների ոչ ճիշտ, համարժեք վարքով, ընտանեկան բախումներով, սեռական անհարգալիություններով և հարբեցողությամբ կամ այլ վնասակար կախվածություններով:

Ռիսկային գործոնների թվարկումը քիչ բան է տալիս ընտանիքի հետագա կյանքի ընթացքը կանխատեսելու համար: Հիմնական խնդիրը գլխավոր գործոնների բացահայտումն է, որին կարող է օգնել խնդրի ճիշտ ընկալման դերային մոտեցումը: Ելնելով նման

դիրքորոշումից՝ կարելի է եզրակացնել, որ որևէ ամուսնական գույզի համատեղ կյանքի ընթացքի կանխատեսման գործում գլխավոր պայմաններն են.

- ինչպե՞ս էին նրանք մինչև ամուսնանալը պատկերացնում և կանխատեսում իրենց ապագա ամուսնական դերերը,

- ինչպիսի՞ պատկերացումներ ձեռք բերեցին իրենց դերային սպասումների մասին ամուսնական կյանքի առաջին շրջանում,

- որքանո՞վ հիշյալ պատկերացումները հաստատվեցին,

- որքանո՞վ են նրանք ճիշտ, համարժեք կատարում իրենց ամուսնական դերերը:

Ամուսինների պետք է սովորեցնել այդ դերերը, իսկ դրա համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ դրանց մասին [1, 339-341]:

Ամուսնալուծության հետևանքները: Ամուսնալուծության փաստը ազդում է նախկին միասնական ընտանիքի բոլոր անդամների կյանքի տարբեր կողմերի վրա: Ամուսնալուծությունը, հատկապես եթե ընտանիքում երեխաներ կան, լուրջ ազդեցություն է գործում նախկին ամուսինների թե՛ հոգեվիճակի, թե՛ սոցիալական պայմանների վրա:

Տնտեսական հետևանքներ: Ամուսնալուծության հետևանքով առաջացած կիսատ ընտանիքներն անմիջապես հայտնվում են տնտեսական ավելի վատ պայմաններում: Օրինակ՝ ամուսնացած կինը, որ մինչ այդ հետամուտ չի եղել իր մասնագիտական գործունեությանը և այդ ոլորտում բարձր դիրքի չի հասել, անհրաժեշտ եկամուտ չունենալով, սկսում է լուրջ նյութական դժվարություններ կրել: Տղամարդու համար այդ դժվարությունն արտահայտվում է ինքնուրույն տնտեսություն վարելու, ակիմենտ վճարելու տեսքով:

Հոգեբանական հետևանքներ: Ամուսնալուծությունից հետո առաջացած ամենադժվար հաղթահարելի խնդիրը, թերևս, մնում է հոգեբանականը: Ամուսինների կողմից շատ դժվար է մոռացության տալ նախաամուսնական զգացումները, հույզերը: Հոգեկան գերլարվածությունից խուսափելու համար ամուսնալուծությունը պետք է լուծել խաղաղությամբ: Հակառակ դեպքում առաջանում են նոր բախումներ, սուր կոնֆլիկտներ, սթրեսներ: Ամուսնալուծվածներն ապրում են խոր հիասթափություն, զոջման ներքին աններդաշնակության զգացումներ, որոնցից ազատվելու համար երկար ժամանակ է անհրաժեշտ լինում: Ամուսնալուծվածները երկար ժամանակ մնում են հասարակության ուշադրության կենտրոնում, խոցելի դառնում նոր սթրեսների, զրկանքների հանդեպ, նրանց հոգեբանական դիմադրողականության մակարդակն իջնում է: Եթե ներընտանեկան կոնֆլիկտները շատ սուր են, ապա ամուսնալուծվելն ավելի նպատակահարմար է, քան հակառակություններով լի կյանքը: Այսպիսի ընտանիքն ախտածին սոցիալ-հոգեբանական միջավայր է և երեխաների, և ամուսինների համար: Ամուսնալուծության անցանկալի փաստը վերլուծելու և կանխելու համար պետք է ուշադրություն դարձնել առնվազն երեք հանգամանքի վրա.

1. որքանով ամուսինները ունեն ապրումակցման մշակույթ,
2. որքանով են ամուսինները համբերատար և հանդուրժող մեկը մյուսի նկատմամբ,
3. որքանով են ամուսիններն անկախ /այս դեպքում անկախությունը դիտվում է որպես ռիսկային գործոն/:

ԱՍՈՒՄԻՆԵՐԻ ԱՊՐՈՒՄԱԿՑՄԱՆ (ԷՄՍԹԻՍԻ), ԱՆԿԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԲԵՐՆԱՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՇԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ

Ծանոթություն

Հոդվածի տեսական մասում մեր կողմից ներկայացվեցին ամուսնալուծվող անձի հետ կապված վտանգները: Հոդվածի հետազոտական մասում մենք փորձել ենք ներկայացնել ապրումակցման կարևորությունը և ամուսինների անկախության ու համբերատարության հանգամանքը՝ որպես ամուսնալուծությունների դեպքում որոշիչ գործոն:

Փորձարարական հետազոտության ընտրանքը ձևավորվել է՝ համաձայն առաջա-

դրված նպատակի պահանջներին: Արդյունքում ձևավորվել են հետազոտության անցկացման վայրը և ընտրանքը:

Հետազոտությունը անցկացվել է ՀՀ Վանաձոր քաղաքում և ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում:

Հետազոտության մասնակիցների թիվը կազմել է 30 ամուսնական զույգ: Մասնակիցները բաժանվել են երկու խմբի՝ հայ և ռուս ընտանիքներ:

Հետազոտական արդյունքներին գործնական նշանակություն ու կիրառումը.

Հետազոտության արդյունքներն ու առաջարկները կարող են կիրառվել ամուսնական զույգերի կողմից իրենց համատեղ կյանքը արդյունավետ կառավարելու և բացասական ազդեցություններից (վեճեր, ամուսնալուծություններ) հնարավորինս խուսափելու նպատակով:

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները.

▪ Ապրումակցման (Էմպաթիայի) ախտորոշման մեթոդիկա (Ա. Մեհրաբյանի և Էպշտեյնի հարցարան) [7, 211-213],

▪ համբերատարության մակարդակի բացահայտման թեստ/ընտանեկան համատեղելիության որոշման մեթոդիկա, հեղինակ՝ Վ. Կրուզով [6, 211-214],

▪ անկախության մակարդակի որոշման թեստ /ընտանեկան համատեղելիության որոշման մեթոդիկա, հեղինակ՝ Վ. Կրուզով [6, 229-232]:

Հետազոտության նպատակն է.

1. որոշել ամուսինների ապրումակցման մակարդակը,

2. որոշել ամուսինների անկախության մակարդակը,


3. որոշել ամուսնական զույգի համբերատարության մակարդակը,

4. կիրառել թեստերը հայ և ռուս ընտանիքների հետ և կատարել համեմատական վերլուծություն:

1. Ապրումակցման (Էմպաթիայի) ախտորոշման մեթոդիկա

(Ա. Մեհրաբյանի և Էպշտեյնի հարցարան): Հետազոտության արդյունքների վերլուծություն

Ապրումակցման (Էմպաթիայի) թեստը անցկացնելով 40 կանանց և տղամարդկանց հետ՝ եկանք այն եզրահանգման, որ 20 տղամարդկանցից 10 տղամարդ կամ փորձարկվողների 50 %-ը գրանցել է բարձր մակարդակ, 4 տղամարդ կամ փորձարկվողների 10%-ը՝ միջին մակարդակ, 6 տղամարդ կամ փորձարկվողների 40 %-ը՝ ցածր մակարդակ: 20 կանանցից 12 կին կամ փորձարկվողների 60 %-ը գրանցել է բարձր մակարդակ, 6 կին կամ փորձարկվողների 30 %-ը՝ միջին մակարդակ, 2 կին կամ փորձարկվողների 10 %-ը՝ ցածր մակարդակ: Համեմատության մեջ դնելով կանանց և տղամարդկանց՝ կտեսնենք, որ կանայք առավել ապրումակցող են:




Գծապատկեր 1

Տղամարդիկ

Ցածր մակարդակ – 40 %

Միջին մակարդակ – 10 %

Բարձր մակարդակ – 50 %-ը



Գծապատկեր 2

Կանայք

Ցածր մակարդակ – 10 %


Միջին մակարդակ – 30 %

Բարձր մակարդակ – 60 %

2. Համբերատարության (հանդուրժողականության) մակարդակի բացահայտման թեստ

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Համբերատարության թեստը անցկացնելով 15-ական հայ և ռուս ընտանիքների հետ՝ եկանք այն եզրահանգման, որ հայ 15 ընտանիքներից 3 ընտանիք կամ հարցվածների 20 %-ը ունեն համբերատարության ցածր մակարդակ, 7 ընտանիք (50 %-ը) գրանցել են միջին, իսկ 5 ընտանիքներ (30 %-ը) բարձր մակարդակ: Ռուս ընտանիքներում 8 ընտանիք կամ հարցվածների 60 %-ը ունեն հանդուրժողականության ցածր մակարդակ, 5 ընտանիք (30 %-ը) միջին, 2 ընտանիք (10 %) գրանցել են հանդուրժողականության բարձր մակարդակ: Եթե փորձենք համեմատության մեջ դնել հայ և ռուս ընտանիքները, ապա կտեսնենք, որ հայ ամուսնական զույգը մեկը մյուսի նկատմամբ առավել հանդուրժող է:



Գծապատկեր 3


հայ ընտանիքում

Ցածր մակարդակ – 0-4 միավոր – 20 %

Միջին մակարդակ – 6-12 միավոր – 50 %

Բարձր մակարդակ – 14-18 միավոր – 30 %

Համբերատարության և հանդուրժողականության թեստ ռուս ընտանիք



Գծապատկեր 4

ռուս ընտանիքում

Յաճր մակարդակ – 0-4 միավոր – 60 %

Միջին մակարդակ – 6-12 միավոր – 30 %


Բարձր մակարդակ – 14-18 միավոր – 10 %

3. Անկախության մակարդը որոշելու թեստ

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Անկախության մակարդը որոշելու թեստը անցկացնելով 15-ական հայ և ռուս ընտանիքների հետ՝ եկանք այն եզրահանգման, որ հայ ընտանիքներում 15 հետազոտվող ընտանիքներից 7-ը կամ հարցվածների 50 %-ը ունի անկախության բարձր մակարդակ, 5 ընտանիք (30 %) գրանցել է անկախության միջին, իսկ 3 ընտանիք (20 %)՝ ցածր մակարդակ: Ռուս ընտանիքների դեպքում 9 ընտանիք կամ հարցվածների 70 %-ը գրանցել է բարձր ցուցանիշ, 5 ընտանիքի դեպքում (20 %) միջին մակարդակ է, իսկ 1 ընտանիք (10 %) ունի անկախության ցածր մակարդակ: Եթե համեմատական վերլուծություն կատարենք, ապա դարձյալ անկախության ցուցանիշով հայ ընտանիքները զիջում են ռուս ընտանիքներին: Նրանք առավել անկախ են, կարողանում են համարձակ արտահայտել իրենց տեսակետը, շատ դեպքերում պատրաստ են զնալ կտրուկ քայլերի, այն է՝ ամուսնալուծության: Բնական է, որ հայ ամուսնական զույգերի մոտ, որ ունեն հանդուրժողականության բարձր մակարդակ, վերջիններիս մոտ անկախության ցուցանիշը համեմատաբար ցածր է:

Անկախության մակարդակը որոշելու թեստ հայ ընտանիք



Գծապատկեր 5


հայ ընտանիք

Բարձր մակարդակ – 30-44 միավոր – 50 %

Միջին մակարդակ – 15-29 միավոր – 30 %

Յաճր մակարդակ – 0-14 միավոր – 20 %

Անկախության մակարդակը որոշելու թեստ ռուս ընտանիք



Գծապատկեր 6

ռուս ընտանիք

Բարձր մակարդակ – 30-44 միավոր – 70 %

Միջին մակարդակ – 15-29 միավոր – 20 %

Ցածր մակարդակ – 0-14 միավոր – 10 %

Նգրակացություն

Մեր կողմից կատարված գիտական աշխատանքի արդիականության վերաբերյալ խոսել ենք ներածության մեջ: Հետևաբար ամուսնալուծության պատճառները, հետևանքները, ամուսնալուծվող անձանց հետ կապված վտանգները և ռիսկային գործոնները անցյալում, ներկայում և ապագայում ևս հետաքրքրելու են հասարակությանը: Ընտանիքաբանների խնդիրը պետք է լինի ոչ միայն ամուսնալուծության՝ որպես արդեն իսկ կայացած փաստի մեկնաբանումը, այլև վերջիններս պետք է ուղիներ առաջադրեն դրանց կանխման համար: Աշխատանքի առաջին գլխում փորձել ենք ներկայացնել ընտանեկան բախումների արդյունքում ամուսնալուծված անձանց հետ կապված վտանգները և ռիսկային գործոնները: Խոսել ենք ամուսնալուծված անձանց հոգեբանական, սոցիալական, տնտեսական ազդեցությունների մասին, որոնք ինչպես նեղ անձնական ոլորերգություն են, այլ նաև լայն հասարակական քննարկման և պարսավանքի նյութ:

Մասնագիտական գրականության մեջ մեր կողմից առաջարկված թեմայի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ուսումնասիրությունը և մեր կողմից իրականացված փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ են տալիս լուծել ներածական մասում մեր կողմից առաջադրված խնդիրները և կատարել հետևյալ ընդհանրացումները.

1. ռիսկային գործոնի բացահայտման համար պետք է հնարավորինս ուշադրություն դարձնել ամուսինների ապրումակցման (էմպաթիայի) մակարդակի վրա,
2. հետազոտվողների երկու խմբի դեպքում էլ մենք նկատեցինք, որ հայ ամուսնական զույգերը ունեն հանդուրժողականության և համբերատարության բարձր ցուցանիշներ: Նրանց մոտ առավել բարձր է ընտանիքն ամեն գնով պահպանելու ցանկությունը,
3. անկախության ցուցանիշը բացահայտող թեստի կիրառման դեպքում առավել բարձր ցուցանիշ ունենին ռուս ամուսնական զույգերը, իսկ հայ ընտանիքները գրանցել են առավել ցածր ցուցանիշ:

Հետազոտական մասում կիրառված ապրումակցման և համբերատարության մակարդակը որոշող թեստերը ըստ էության միտված են ընտանիքի կայունությանը, իսկ անկախության մակարդակը բացահայտող թեստի դեպքում բարձր ցուցանիշը կարող է խնդիր առաջացնել ընտանիքի գոյության համար: Մեր դիտարկմամբ ապրումակցումը և համբերատարությունը հակադրվում է անկախությանը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-239>

Գրականություն

1. Սեդրակյան Ս. Ա., Ընտանիքի հոոգեբանություն, Երևան, 2010:
2. Կրավչենկո Ս. Ի., Սոցիոլոգիա, Երևան, 2004:
3. Карабанова О. А. Психология семейных отношений и основы семейного консультирования. Москва, 2006.
4. Крайг Г. Психология развития. Санкт-Петербург, 2000.
5. Тийт Э. Факторы риска, вызывающие расторжения брака. Самара, 2021.
6. Тесты на семейную совместимость. Москва, 2008.
7. Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Երևան, 2002:

Основные опасности, воздействующие на личность в ситуации развода

Костандян Нуне

Резюме

Ключевые слова: *риск развода, последствия развода, проблемы семьи, распад семьи, семейный конфликт*

В статье рассматривается морально-психологическое состояние человека, переживающего развод, а также анализируются проблемы, риски и угрозы, с которыми он сталкивается в этот период и после завершения бракоразводного процесса. Развод выступает одним из наиболее распространенных последствий семейных конфликтов и кризисов, приводящих к дезинтеграции семейной системы и изменению привычного образа жизни. В условиях утраты эмоциональной поддержки и социальной стабильности личность сталкивается с повышенной уязвимостью, что требует особого внимания к динамике переживаемых стрессов и адаптационных трудностей. Для более глубокого понимания тенденций развития современной семьи, а также причин ее ослабления и распада, важно всесторонне исследовать факторы, способствующие возникновению семейных кризисов, и определить, каким образом они трансформируются в угрозы для психического и социального благополучия человека. Раскрытие рисков и опасностей, сопровождающих развод, позволяет не только оценить степень их воздействия на личность, но и сформировать подходы к профилактике и смягчению негативных последствий этого сложного жизненного события. Дополнительное внимание уделяется социальным механизмам поддержки, которые могут способствовать более успешному восстановлению после развода. Анализ полученных данных подчеркивает необходимость разработки эффективных программ помощи людям, переживающим подобный кризис.

Major Dangers Affecting the Individual in the Context of Divorce

Kostandyan Nune

Summary

Key words: *risk of divorce, consequences of divorce, family problems, family dissolution, family conflict*

The article examines the moral and psychological state of a person experiencing divorce and analyzes the problems, risks, and threats they encounter both during this period and after the completion of the divorce process. Divorce is presented as one of the most common consequences of family conflicts and crises, leading to the disintegration of the family system and significant changes in the usual way of life. In the context of losing emotional support and social stability, the individual faces heightened vulnerability, which requires particular attention to the dynamics of experienced stress and the challenges of adaptation. To gain a deeper understanding of the developmental trends of the modern family, as well as the causes of its weakening and disintegration, it is important to thoroughly investigate the factors contributing to family crises and determine how they transform into threats to a person's psychological and social well-being. Identifying the risks and dangers accompanying divorce makes it possible not only to assess the extent of their impact on the individual but also to develop approaches for preventing and mitigating the negative consequences of this difficult life event. The analysis of the obtained data highlights the need to develop effective assistance programs for individuals experiencing such a crisis.

Ներկայացվել է	29. 04. 2025 թ.
Գրախոսվել է	15. 09. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.

Մաթեմատիկայի միջառարկայական կապի դերը բնագիտական առարկաների և հայոց լեզվի ուսուցման գործընթացում

Մելիքյան Հերմինե

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-248>

Հանգուցային բառեր. *ապացուցման մեթոդ, հերքման մեթոդ, պայման, եզրակացություն, տրամաբանություն, թեորեմ, կարողություն, ունակություն*

Ներածություն

Ուսուցման ընթացքի կազմակերպումը բարդ գործընթաց է, որը ժամանակի ընթացքում փոփոխության է ենթարկվում՝ պայմանավորված շրջակա միջավայրում տեղի ունեցող փոփոխություններով, գիտության զարգացմամբ:

Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար դեռևս հին ժամանակներից մեծ ուշադրություն են դարձրել առարկաների միջև առկա կապերին: Մակայն միջառարկայական կապերի հաստատմանը տարբեր ժամանակներում նույն նշանակությունը չի տրվել, որի հիմնական պատճառը ուսումնակրթական ծրագրերում կատարվող փոփոխություններն են:

«Միջառարկայական կապերի խնդրի ուսումնասիրության համար առանձնահատուկ հետաքրքրություն էին ներկայացնում 1923 թվականին ներդրված համալիր ծրագրերը: Բարդ դասավանդման համակարգի էությունը, երևույթների և իրերի կենտրոնացումն էր ընդհանուր գաղափարի շուրջ, որն իրականում վերացրեց նյութի ուսումնասիրությունն ըստ առարկայի: Արդյունքում դասերը աշակերտներին համակարգված գիտելիքներ չտվեցին» [4, 6]:

20-րդ դարի 30-ական թվականներին առավել մեծ ուշադրություն հատկացվում է միջառարկայական կապերի դիդակտիկ դերին: Հատկապես կարևորվել է գիտելիքների փոխադարձ ըմբռնումը, տեսակետների ամբողջական համակարգի ձևավորումը, որոշ դեպքերում՝ կրկնություններից խուսափումը:

Ժամանակի ընթացքում, կրթական ծրագրերի փոփոխությամբ պայմանավորված, փոխվում է նաև միջառարկայական կապերի նպատակայնությունը ուսուցման գործընթացում: Այս տեսանկյունից 20-րդ դարի 50-ական թվականներին հատկապես մեծ ներդրում են ունեցել Լենինգրադի ուսուցիչները: Խորհրդային հոգեբան Անանինի դեկլարությամբ ստեղծվել է «համակարգման ցանց», որտեղ նշված են դպրոցական բոլոր ծրագրերի համար հիմնարար գիտական հասկացությունների մշակման փուլերը: Նա օգնեց օգտագործել մի առարկայի նյութը մյուսի ուսումնասիրության համար [4, 6]: Բսկ Յ. Ա. Կոմենսկին իր աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև կապերը [6, 30, 32]:

Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով, նշանակում է ամեն ինչ սովորել մատնացույց անելով պատճառները, այսինքն ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան, նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ» [1, 106]:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ միջառարկայական կապերի հաստատումը տար-

բեր ժամանակահատվածներում և տարբեր դպրոցների ներկայացուցիչների կողմից զանազան կերպ է իրացվել, սակայն դրանց համար ընդհանուր է ուսուցման գործընթացի արդյունավետությանը նպաստելը: Հասկանալի է դառնում նաև այն, որ միջառարկայական հարաբերությունների հաստատման ձևերը սերտորեն կապված են ուսումնական ծրագրերի ներդրման հետ: Առանց դրանց կիրառման ուսումնական գործընթացի կազմակերպումը թերի կհամարվի:

Սույն աշխատանքում նպատակ ենք հետապնդել վեր հանել մաթեմատիկայի և բնագիտական ու հումանիտար առարկաների միջառարկայական կապը, առանձնացնել մեթոդներ, որոնք հնարավորություն են ընձեռում առավելագույնս ընդգծելու և կարևորելու դրանց միջև առկա կապի սերտությունը և հնարավորությունները: Մաթեմատիկայի և հայոց լեզվի շրջանակներում անդրադարձել ենք նաև *ասույթ* տերմինի ընկալման դրսևորումներին փորձելով վեր հանել տերմինի նշանակության և կիրառության առանձնահատկությունները:

Քննությունից պարզ է դառնում, որ վերոնշյալ առարկաների միջառարկայական կապերի վերհանումը կարելի է կատարել ապացուցման և հերքման մեթոդներով, որոնցով ավելի հստակ ընդգծվում է դրանց միջև առկա կապերի սերտությունը: Իսկ ինչ վերաբերում է *ասույթ* տերմինին, ապա նկատվում է, որ գործածության դաշտում դրանք տարբեր են, սակայն երկու առարկաների դեպքում էլ խոսքային միավոր է, ունի արտահայտչական (էքսպրեսիվ) դեր: Հատկանշական է նաև այն, որ մաթեմատիկական ասույթները նույն հարաբերություններն են արտահայտում, ինչ որ հայերենի բարդ նախադասությունները:

Աշխատանքը շարադրված է վերլուծական, նկարագրական և համեմատության մեթոդներով:

Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների միջառարկայական կապը

Ուսումնական հաստատություններում դասավանդվող առարկաների ուսումնասիրման ընթացքում նկատելի է, որ դասապրոցեսում միջառարկայական կապերի վերհանումը կարևորագույն մանկավարժական խնդիրներից մեկն է: Կան առարկաներ, որոնց մեթոդաբանությունը հիմնարար նշանակություն ունի այլ առարկաների համար: Այդպիսին է մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դեպքում:

Այսպես՝ դեռևս հին ժամանակներից մաթեմատիկան սերտորեն առնչվել է ֆիզիկայի հետ, մաթեմատիկական մեթոդները կազմել են նրա անբաժանելի մասը: Մաթեմատիկական մեթոդները լայնորեն օգտագործվում են քիմիայում և նրան հարակից գիտություններում: Սակայն պետք է նշել, որ անցյալում քիմիկոսների կողմից մաթեմատիկայի նկատմամբ հետաքրքրություն չի նկատվել, որը բացատրվում է պայմանավորված քիմիայի հիմնականում փորձարարական գիտություն լինելով. ոչ քիմիկոսները և ոչ էլ մաթեմատիկոսները քիմիական օրենքների մաթեմատիկական ուսումնասիրությամբ չեն զբաղվել: Կենսաբանական ցանկացած առարկայի օրինաչափությունների ձևակերպմանը օժանդակում է մաթեմատիկական վիճակագրությունը: Աշխարհագրական տարածքների և տեղերի նկարագրությանը օժանդակում է մաթեմատիկական կոորդինատների իմացությունը: Չնայած մենք բոլոր բնագիտական առարկաները չենք նշել, սակայն պետք է հասկանալ, որ մաթեմատիկան օգնում է բացահայտելու և հասկանալու բնագիտական ցանկացած առարկայի խնդիրները:

Մաթեմատիկայում կիրառվող մի շարք մեթոդներ ուղղակի և անուղղակի կերպով կիրառվում են կամ կարող են կիրառվել բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում, որոնք էլ ավելի են ընդգծում դրանց միջև առկա միջառարկայական կապը: Դրանցից կարելի է առանձնացնել մաթեմատիկայում լայնորեն կիրառվող ապացուցման (ուղղակի և ոչ ուղղակի) և հերքման մեթոդները [2, 143], որոնց դերը մեծ է հատկապես որևէ կանոնի սահմանման կամ որևէ տեսակետի, վարկածի հերքման գործում: Այսպես, օրինակ, սկզբում առաջադրվում է խնդիրը, այնուհետև փորձ է արվում գտնել այն հնարը, որով պիտի կազմել

փաստարկները: Ըստ այդմ՝ առանձնացվում է «ապացուցվելիք պնդում, ապացուցման մեթոդ և բովանդակային բաղադրիչ» [2, 140]:

Այս մեթոդը խնդիրներ լուծելու արդյունավետ միջոց է, որով բազմակողմանի քննության է ենթարկվում տվյալ խնդիրը, և քանի որ բոլոր բնագիտական առարկաների դեպքում առնչություն ենք ունենում խնդիրների հետ, ուստի ապացուցման մեթոդը ոչ միայն պարզեցնում է խնդրի լուծման ճանապարհը, այլև վերհանում է մաթեմատիկայի և բնագիտական առարկաների միջև սերտ կապը:

Փաստորեն, եթե միջառարկայական կապը մեթոդաբանության տեսանկյունից դիտարկենք, ապա կարելի է առանձնացնել այնպիսի մեթոդներ, որոնց գործադրումը կրում է ընդհանրական բնույթ, առավելագույնս ընդգծում մաթեմատիկայի և բնագիտական առարկաների միջառարկայական կապը՝ մեթոդաբանորեն:

Մաթեմատիկայի և հումանիտար առարկաների կապը «Մաթեմատիկա» առարկայի չափորոշիչի համատեքստում

Մարդկության ողջ պատմության ընթացքում մաթեմատիկական զարգացման տարբեր փուլեր է անցել: Այն սուկ գիտություն չէ, որն զբաղվում է թվաբանությամբ կամ հաշվարկներով, այլ մարդկային գործունեության տարբեր ոլորտներում ունի հիմնարար կամ անկյունաքարային դեր:

Ներկայումս կրթական համակարգերում ներդրված մաթեմատիկայի ուսումնական ծրագիրը բավական թափանցիկ և պարզորոշ ընդգծում է մաթեմատիկայի դերի կարևորությունը բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում, նշում, որ «ի լրումն հատուկ գիտելիքների, անհրաժեշտ են նաև տրամաբանորեն մտածելու կարողություն, փաստարկները ճիշտ և հետևողականորեն կառուցելու, մտքերը ճշգրիտ և պարզ արտահայտելու ունակություններ, իրավիճակը քննադատաբար գնահատելու, վերլուծելու, կարևորն ու երկրորդականը զանազանելու, առանձին փաստերը համադրելու, ընդհանրացումներ անելու հմտություններ» [5, 1]: Սակայն հումանիտար առարկաների ուսուցման գործընթացում ևս սովորողների մոտ նշյալ հասկացությունների ձևավորմանը նպաստում են նաև մաթեմատիկայի մեթոդաբանությունը և մաթեմատիկական հմտությունները: Այսպես, օրինակ՝ գրականության ուսուցման գործընթացում սովորողները պետք է ձեռք բերեն կարդացածը վերլուծելու, կարծիք արտահայտելու, համեմատական աշխատանք իրականացնելու ունակություններ, ինչպես նաև՝ կարողանան լեզվատրամաբանական դատողություններ կատարել:

Ուստի կարծում ենք «Մաթեմատիկա» առարկայի ուսուցման հիմնական նպատակների մեջ պետք է նշել նաև մաթեմատիկայի՝ հումանիտար առարկաներում տրամաբանական մտածողության զարգացմանը միտված դերի մասին:

Մաթեմատիկայի և հայոց լեզվի միջառարկայական կապը

Ինչպես վերը նշեցինք՝ Մաթեմատիկական սերտորեն կապված է նաև հումանիտար առարկաների հետ: Այն ունի ուղեկցող դեր, բարձրացնում է սովորողների վերլուծելու ունակությունները:

Սովորողների տրամաբանական մտածողության դեպքում մեծ է մաթեմատիկայի ուսուցողական-դաստիարակչական դերը: Բացի այդ՝ տրամաբանական կարողությունների ձևավորումն ավելի բնական է կատարել մաթեմատիկայի ուսուցման միջոցով, քանի որ մտքի տրամաբանական ձևերն ու հարաբերությունները, ապացույցները, մտահանգման կանոնները մաթեմատիկայում հանդես են գալիս պարզ, մաքուր տեսքով՝ հաշվարկի արդյունքում: Սակայն, փաստարկներ ներկայացնելու, ժխտելու, սահմանելու, դասակարգման ենթարկելու կարողությունների ու հմտությունների ձևավորմամբ զբաղվում են նաև հումանիտար առարկաները: Վերոնշյալ մեթոդները՝ ապացուցման և հերքման, մեծ դեր ունեն նաև

հումանիտար առարկաների շրջանակներում, հատկապես՝ համոզմունքների ու աշխարհայացքի ձևավորման գործում:

Ավելի մանրամասն ներկայացնենք հայոց լեզվի օրինակով՝ ստորև:

Մաթեմատիկայում շատ է կարևորվում թեորեմների, խնդիրների հասկացման գործընթացը: «Ապացուցել $P(x) \Rightarrow Q(x)$ թեորեմը նշանակում է տրամաբանական դատողությունների միջոցով ապացուցվելիք $P(x) \Rightarrow Q(x)$ պնդման $P(x)$ պայմանից գնալ դեպի $Q(x)$ եզրակացությունը՝ հենվելով այդ ընթացքում նախկինում հաստատված պնդումների (աբսիուդների, թեորեմների, հետևանքների) վրա...» կամ «ելնելով $P(x)$ պայմանից և հենվելով հայտնի պնդումների վրա՝ ցույց է տրվում, որ $Q(x)$ պնդման եզրակացությունը հանդիսանում է $P(x)$ պայմանի տրամաբանական հետևանքը» [8, 105]: Մրանից պետք է հասկանալ, որ թեորեմի մաս են կազմում պայմանը և եզրակացությունը, որոնք պետք է առանձնացնել: Վերջինս սովորողների կողմից հստակ չի կատարվում, քանի որ նրանք հստակ չեն կարողանում տարբերակել թեորեմի պայմանն ու եզրակացությունը: Նմանատիպ թեորեմների հասկացմանը կարող է նպաստել նախադասության դիտարկումը լեզվական միավորների առանձնացման միջոցով: Օրինակ, եթե նախադասությունը սկսվում է *եթե*-ով, ապա ենթադրվում է, որ պայմանով կատարվող գործողության մասին է խոսքը, որի հետևանքի մասին պիտի խոսվի հաջորդիվ՝ *այսպես* շաղկապով շարունակվող բարդ ստորադասական նախադասության երկրորդ հատվածում: Նախադասության հետևանքը մաթեմատիկայում բնականաբար կդրսևորվի որպես եզրակացություն: Նույնը կարելի է կիրառել հակառակ՝ եթե սովորողը մաթեմատիկայում կարողանում է պայմանը և եզրակացությունը տարբերակել, ապա հստակ ձևով կարող է ընկալել պայմանի պարագա երկրորդական նախադասությունները, դրանց գլխավոր և երկրորդական բաղադրիչ մասերը:

Տերմինների ընկալման համատեքստում ևս կարելի է քննվող առարկաների միջև միջառարկայական կապ հաստատել կամ ցույց տալ դրանց փոխներգործուն հարաբերությունը: Այս տեսանկյունից հատկապես դիտարկելի և հետաքրքիր է *ասույթ* տերմինը, որը երկու առարկաների շրջանակներում էլ ուսումնասիրվում է, այլ հարց է, թե ինչ նշանակությամբ: Հայերենում այն «արտասանական և բովանդակային պլաններով մեկ միասնություն կազմող արտահայտություն է, արտասանվածք, որն ունի հաղորդակցական, հաղորդակցական-էքսպրեսիվ կամ միայն էքսպրեսիվ արժեք: Կառուցվածքով կարող է լինել ծավալուն կամ համառոտ, զեղչումներով, ստեղծված լինել նույնական տարրերով, բայց տարբեր վերակառուցումներով, գործադրելի լինել տարբեր իրադրություններում կամ միայն տվյալ իրադրության մեջ» [7, 58], իսկ մաթեմատիկայում նշանակում է «պնդում», որը կարող է կազմված լինել «կեղծ» կամ «ճշմարիտ» արժեք ունեցող նախադասություններից: Փաստորեն, մաթեմատիկայում այն ևս կարելի է խոսքային միավոր դիտարկել, որն ունի ավելի շատ արտահայտչական արժեք: Տվյալ տեսանկյունից նպաստկաշարմար է, որ սովորողը առաջնահերթ այս տերմինին ծանոթանա մաթեմատիկայի շրջանակներում. բովանդակության տեսանկյունից ավելի ընդգրկուն է և բազմազան: Սակայն մաթեմատիկական տրամաբանության «ասույթների տրամաբանություն» և «պրեդիկատների տրամաբանություն» բաժինները կարող են օժանդակել բարդ նախադասությունների կապակցման միջոցների, դրանցում արտահայտված գործողության կատարման հաջորդականության (և այլն), բայց ոչ բուն ասույթների բովանդակության հասկացմանը: Մաթեմատիկայի շրջանակներում նշված տերմինի իմացությունը կարող է օժանդակել և՛ հայոց լեզվում, և՛ մաթեմատիկայում *պնդումների փունջ* կոչվող առաջադրանքների լուծմանը, որոնց համար նշվում են *ճիշտ* է կամ *կեղծ* է պատասխանները, և որոնք արդյունք են դատողությունների:

Օրինակ՝

ա) $4 + 5 = 9$

գ) $2 + 4 < 5$

բ) $2 * 3 > 4$

դ) $\sin \frac{\pi}{7} = 0$

որոնցից ճշմարիտ են առաջին երկուսը, իսկ վերջին երկուսը՝ կեղծ:

Հմտ.

1. Հայերենում ուղղագրությունը գերազանցապես հնչյունային է, բառերը հիմնականում ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են:

2. *Վարդ, թակարդ, բարձ, դժոխք, փախչել* բառերի ուղղագրությունը ավանդական է:

3. Բառաբարդման կամ ածանցման դեպքում *օ*-ով, *է*-ով սկսվող բառերի ուղղագրությունը պահպանվում է, իսկ *ը*-ով սկսվող բառերինը՝ ոչ:

4. Բառակցքում բաղաձայների գրությունը չի տարբերվում արտասանությունից:

Սրանցից սխալ է միայն 3-ը:

Դիտարկենք նաև այլ ասույթներ.

Ա) Ես կգնամ աշխատանքի:

Բ) Ես կայցելեմ ընկերոջս:

Գ) Ես կգնամ աշխատանքի կամ կայցելեմ ընկերոջս:

Դ) Ես կգնամ աշխատանքի և կայցելեմ ընկերոջս:

Գ ասույթը ճշմարիտ է, եթե ճշմարիտ է Ա և Բ ասույթներից գոնե մեկը, և կեղծ է, եթե երկուսն էլ կեղծ են: Նշված դեպքում սովորաբար մաթեմատիկայում ասվում է, որ Գ ասույթը Ա և Բ ասույթների տրամաբանական գումարն է (դիզյունկցիան է):

Վերջինիս իմացությունը կարող է կիրառվել հայոց լեզվում՝ բարդ համադասական նախադասությունների բացատրման գործում: Դրանց միջոցով հեշտությամբ կարելի է ներկայացնել, որ համադասական նախադասությունները կազմված են առանձին պարզ նախադասություններից և կարող են կապակցվել *կամ* շաղկապով: «Ես կգնամ աշխատանքի կամ կայցելեմ ընկերոջս» ասելիս սովորաբար հասկանում ենք, որ դրանցից մեկը պիտի կատարվի: Եվ եթե քննվող տեսանկյունից դիտարկենք, ապա վստահաբար կարող ենք ասել, որ Գ ասույթը ճշմարիտ է, քանի որ դրա կազմի մեջ մտնող Ա և Բ ասույթներից գոնե մեկը անպայմանորեն պիտի կատարվի:

Վերջին ասույթը՝ Դ-ն, ճշմարիտ է, եթե ճշմարիտ են և՛ Ա-ն, և՛ Բ-ն, և կեղծ է, եթե դրանցից գոնե մեկը կեղծ է: Դ ասույթը Ա և Բ ասույթների տրամաբանական արտադրյալն է (կոնյունկցիան): Փաստորեն *և* շաղկապի առկայությունը փոխեց դրանց հարաբերության բնույթը: Իսկ շարահյուսական մակարդակում դիտարկելու դեպքում այն ոչ թե բնույթն է փոխում, այլ բարդ նախադասության մեջ կապում է «բարդ կառուցվածքի նույնասեռ բազմակի անդամներ» [3, 51-54]: Բացի դրանից՝ *և* շաղկապի միջոցով արրտահայտվում է կատարվելիք գործողության հաջորդականությունը՝ *սկզբում կգնա աշխատանքի, հետո կայցելի ընկերոջը*: Շարահյուսական տեսանկյունից հաջորդաբար կատարվելիք գործողության իմաստը կարտահայտվի նաև առանց շաղկապի՝ տրոհմամբ, ինչպես՝ *Ես կգնամ աշխատանքի, կայցելեմ ընկերոջը*: Վերջինս ևս պետք է ասույթ դիտարկվի, որը նշված դեպքում կատարում է Դ ասույթի գործառնություն և ասույթների տրամաբանական արտադրյալ է (կոնյունկցիան):

Իսկ եթե նշված միջառարկայական կապը դրանց պատմական զարգացման գործընթացում ենք դիտարկում, ապա առանց հայոց լեզվի նախորդ փուլերի հատկապես՝ գրաբարի իմացության դժվար է մաթեմատիկայի անցած, նրա՝ այլ գիտական համակարգերում կատարած դերի մասին խոսել:

Եզրակացություն

Միջառարկայական կապերի վերհանման համար կարելի է առանձնացնել այնպիսի մեթոդներ, որոնց գործադրումը կրում է ընդհանրական բնույթ, առավելագույնս ընդգծում մաթեմատիկայի և բնագիտական առարկաների միջառարկայական կապը մեթոդաբանորեն:

Մաթեմատիկայի միջառարկայական կապի դերը և՛ հումանիտար և՛ բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում հիմնարար նշանակություն ունի, ինչը պետք է ընդգծել մաթեմատիկայի ուսումնական ծրագրում: Այդ դերի կարևորության ընդգծումը անհրաժեշտ է ոչ միայն դպրոցական ծրագրերում, այլև կրթական տարբեր մակարդակներում:

Հատկապես քննելով «Մաթեմատիկա» և «Հայոց լեզու» առարկաների միջառարկայական կապը պարզ է դառնում, որ միևնույն տերմինի մաթեմատիկորեն բացատրումը կարող է օժանդակել հայոց լեզվի քերականական որոշ իրողությունների դյուրըմբռնմանը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-248>

Գրականություն

1. Ամիրջանյան Յու., Մանկավարժություն, «Մանկավարժ» հրատ., 2005:
2. Այվազյան Է., Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, ԵՊՀ, 2016:
3. Գևորգյան Գ., Սահակյան Ա., Հանրահաշիվ և մաթեմատիկական տարրեր, բնագիտական հոսքի համար, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2010:
4. Իսրայելյան Գայանե, Միջառարկայական կապերը որպես տվողորդների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց, Հրազդան, 2022 <https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-30/da95b3024904c62576b34f989b322449.pdf>
5. «Մաթեմատիկա» առարկայի չափորոշիչ:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176064>,
6. Կոմենսկի Յ. Ա., Մեծ դիդակտիկա, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2010:
7. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
8. Репьев В. В., Общая методика преподавания математики, Москва, “Учпедгиз”, 1958.

Роль междисциплинарной связи математики в процессе обучения естественнонаучным предметам и армянскому языку

Меликян Эрмине

Резюме

Ключевые слова: метод доказательства, метод опровержения, условие, вывод, логика, теорема, умение, навык

Ещё с древних времен математика имела важное значение в различных сферах человеческой деятельности: она способствовала развитию логики у людей, формированию правильных суждений, научно-техническому прогрессу. В учебной программе предмета "Математика", введенной в современных образовательных системах, большое внимание уделяется развитию логического мышления: это сформулировано как стандартная цель математики. Роль математики велика не только в процессе обучения естественнонаучным предметам, но и гуманитарным. Изучая междисциплинарные связи математики с естественнонаучными и гуманитарными предметами, становится ясно, что для выявления и подчеркивания их тесных

связей большое значение имеет применение методов доказательства и опровержения. В данной работе, обращая также к междисциплинарной связи математики и армянского языка посредством метода доказательства, становится очевидным, что они могут играть интерактивную роль в обучении определенным темам: условие и вывод предложения в математике, их выделение можно объяснить ролью, которую выполняют компонентные предложения в сложноподчиненном предложении с обстоятельством условия в армянском языке, или наоборот – обстоятельство условия в армянском языке через предложения можно объяснить условием и выводом в математике.

The Role of Mathematical Interdisciplinary Connections in Teaching Natural Sciences and the Armenian Language

Melikyan Hermine

Summary

Key words: *method of proof, elimination method, condition, conclusion, logic, theorem, ability, skills*

Since ancient times, mathematics has played an important role in various fields of human activity; it has contributed to the development of human logic, proper reasoning, scientific and technological progress. In the curriculum of "Mathematics" implemented in current educational systems, great attention is paid to the development of logical thinking; it is formulated as the standard goal of mathematics. The latter should be included as an objective in the mathematics curriculum. By studying the interdisciplinary connections between mathematics along with natural science and humanities subjects, it becomes clear that the application of methods of proof and elimination is of great importance for revealing and emphasizing these close connections. By examining the interdisciplinary connection between mathematics and the Armenian language through the method of proof, it becomes evident that these disciplines can interact productively in the teaching of certain topics. For example, in mathematics, the formulation of a statement-its condition and conclusion and the distinction between them-can be illustrated through the structure of complex sentences with adverbial clauses of condition in the Armenian language. Conversely, the understanding of conditional clauses in Armenian can be clarified by drawing parallels with mathematical conditions and deductions.

Ներկայացվել է	15. 04. 2025 թ.
Գրախոսվել է	19. 05. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.

Ծնող-երեխա փոխհարաբերությունների ազդեցությունը աուտիկ սպեկտրի խանգարումներով երեխաների հարմարման գործընթացի վրա

Շահվերդյան Մարգարիտա,
Հովսեփյան Նունե

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-255>

Հանգուցային բառեր. աուտիկ սպեկտրի խանգարում (ԱՄԽ), ծնողական վերաբերմունք, համագործակցում, վերահսկում, մերժում, սիմբիոզ

Ներածություն

Վերջին տասնամյակներում հաճախ ենք լսում և առնչվում «աուտիզմ» (անգլ. autism, ինքն իր մեջ), համախտանիշի հետ: Տարեցտարի ամբողջ աշխարհում նկատվում են աուտիզմի և աուտիկ սպեկտրի խանգարումներ (այսուհետ՝ ԱՄԽ) ունեցող երեխաների թիվի աճ: Բավական է նշել այն փոստը, որ 1998-2018 թթ. ընկած ժամանակահատվածում աուտիզմ ախտորոշմամբ երեխաներ թիվն ավելացել է 8 %-ով, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի /Centers for Disease Control and Prevention/ տվյալներով 2020 թվականին դպրոցական երեխաներից յուրաքանչյուր 64-երորդն ունի ԱՄԽ:

Ընդհանուր առմամբ աշխարհում աուտիզմով տառապում է 24.8 մլն մարդ: Զարգացած երկրներում երեխաների մոտ 1,5 %-ն աուտիզմ ունի: Տղաների մոտ 3 անգամ ավելի շատ է հանդիպում, քան աղջիկների մոտ [1, 8]:

Այս փաստերը մտահոգիչ են, սակայն այսօր կատարելագործվել է ախտորոշման գործիքակազմը (DSM-5), և հասարակության մեջ բարձրացել է իրազեկվածությունը խնդրի շուրջ: Գիտական տարբեր կառույցներ փորձում են գտնել խնդրի լուծման մեթոդներ և միջոցներ: Հատկապես վերջին տասնամյակում մեր երկրում մեծացել է հետաքրքրությունը «Աուտիկ» համախտանիշով երեխաների հիմնախնդիրների նկատմամբ:

ԱՄԽ-ով երեխաների ներառումը կրթական միջավայրին պահանջում է հոգեբանամանկավարժական խոր ուսումնասիրություններ: Հոգեբանության արդիական խնդիրներից են վերջիններիս հարմարվելու, միջավայրին ինտեգրվելու, հոգեբանական արդյունավետ աջակցություն ստանալու հարցերը: Միայն հոգեբանների ջանքերը բավարար չեն լավագույն արդյունք ապահովելու համար: Եթե աուտիկ երեխաների ծնողները չհամագործակցեն և մասնակից չլինեն երեխայի սոցիալական հարմարման և ներառման գործընթացներին, ապա չենք ունենա դրական դինամիկ փոփոխություններ: Մույն հոդվածի *նպատակն է*.

Բացահայտել ԱՄԽ-ով երեխաների և նրանց ծնողների միջև փոխհարաբերությունների տեսակներն ու բնույթը, դրանց ազդեցությունը երեխայի սոցալականացման և հարմարման գործընթացներին:

Հոդվածի *վարկածն է*. Ենթադրվում է, որ ծնող-երեխա փոխհարաբերությունների արդյունավետ տեսակներով է պայմանավորված ԱՄԽ-ով երեխաների հարմարման գործընթացը:

Ինդիկ ենք դրել.

1. Ուսումնասիրել ԱՄԽ-ով երեխաների նկատմամբ ծնողների հարաբերությունների տեսակները:
2. Հանմեմատական վերլուծություն կատարել ծնող-երեխա հարաբերությունների բնույթի և հարմարման արդյունքի հետ:

Նյութեր և մեթոդներ

Վանաձորում «Առավոտ» ՀԿ-ի կողմից իրականացվել են ԱՄԽ-ով երեխաների և

նրանց ծնողների հետ մասնագիտական թիմի (հոգեբան, սոցիալական մանկավարժ, մանկաբույժ, մանկական հոգեբույժ և լոգեպեդ) հոգեշտկողական-վերականգնողական աշխատանքները: Ծրագրում ընդգրկված են եղել տարբեր տարիքային խմբերի աուտիկ սպեկտորի խանգարումներով երեխաներ: Հետազոտության ընտրանքը 6-16 տարեկան 30 երեխաները և նրանց ծնողներն են: Կիրառել ենք դիտման և գրույցի մեթոդները, «Ծնողների վերաբերմունքի հարցաթերթիկ» մեթոդիկան, ըստ՝ Ա. Վարգայի և Վ. Ստոլինի: Հոգվածի շրջանակներում իրականացվող ուսումնասիրության խնդիրներն են.

«Աուտիզմ» ախտորոշումը ունեցող երեխաների ծնողները նշում են, որ երեխայի ախտորոշման պահից սկսած, ամբողջապես փոխվել են իրենց կյանքը, ընտանիքի հոգեբանական մթնոլորտը և միջանձնային փոխհարաբերությունների բնույթը: Խնդիրները, որոնց բախվում են ԱՄԽ-ով երեխաների ծնողները, բավականին տարբերվում են սովորական ընտանիքի խնդիրներից [6, 105]:

Երեխայի ախտորոշումից ի վեր ամբողջապես խախտվում է ընտանիքի բնականոն կյանքը: Այդ փաստը հոգեբանական լուրջ տրավմա է ծնողների և ընտանիքի մյուս անդամների համար: Շատ ծնողներ, նման իրավիճակում դրսևորում են ապահարմարվողական վարք, դերային շփոթվածություն, խնդրի գնահատման ոչ օբյեկտիվ մոտեցումներ: Մասնագետները նշում են, որ աուտիկ երեխաների ընտանիքները (հատկապես ախտորոշումից անմիջապես հետո), կանգնում են հոգեբանական և սոցիալական լուրջ խնդիրների առջև: Երբեմն նույնիսկ երեխայի հետ հուզական կապերը խզվում են: Ծնողները հայտնվում են անելանելիության ու շփոթվածության հոգեվիճակում: Այսպիսի դեպքերսով, բարդ հուզական հոգեվիճակը հանգեցնում է անարդյունավետ գործողությունների, ինչը վնասում է առաջին հերթին, երեխայի խնդրի ադեկվատ գնահատմանը և մասնագետների հետ համագործակցմանը [4, 45-47]:

Ըստ ախտանշանների բնորոշվում է աուտիզմի երեք տեսակ՝ *թեթև, միջին և ծանր*:

Միջին և ծանր ԱՄԽ-ով երեխաները չեն կարողանում տարանջատել մարդկանց և անշունչ առարկաները: Նրանց բնորոշ է միևնույն շարժումների անընդհատ, անիմաստ կրկնությունը, անհանգստությունը, ագրեսիվությունը (աուտոագրեսիվությունը), իմպուլսիվությունը, նրանց վարքը հաճախ դառնում է անկառավարելի: Այս երեխաները աչքի են ընկնում հուզական սառնությամբ, վարքի հակասականությամբ, շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ անտարբերությամբ, վախերով, խուսքի խանգարումներով, հիվանդագին ճշտապահությամբ, միօրինակ և կրկնվող շարժումներով (DSM 5 E 7) [3, 89-92]:

Աուտիզմը հոգեկան մյուս հիվանդություններից տարբերվում է նրանով, որ շրջապատի հետ երեխայի հաղորդակցման պահանջումները և հաղորդակցման կարողությունը մասամբ կամ ամբողջությամբ բացակայում է: Ծնողները շատ դեպքերում միանգամից չեն հասկանում, որ իրենց երեխան խնդիրներ ունի: Նրանք երեխայի վարքը գնահատում են որպես համառություն, ժխտողականություն և կամակորություն՝ փորձելով այս կամ այն միջոցով իրենց ենթարկեցնել երեխային:

Ըստ Ա. Վարգայի՝ ծնողական վերաբերմունքը ԱՄԽ-ով երեխայի հանդեպ տարաբնույթ զգացմունքների, վարքային կարծրատիպերի և ընկալումների համակարգ է: Սոցիալական կյանքին հարմարվելու գործընթացում վճռորոշ դեր են խաղում ծնողական դաստիարակման ոճերը և փոխհարաբերությունների տեսակները [7, 102]:

Հատկապես ծնողների հետ փոխգործունեության արդյունքում է աուտիկ երեխան սովորում հաղորդակցման արդյունավետ նորմերը, ինքնասպասարկման հմտությունները և արտաքին աշխարհի ազդակների ընկալումը:

Մասնագետները նշում են դաստիարակության այնպիսի ոճեր, որոնք այս երեխաների

դեպքում ոչ միայն անարդյունավետ են, այլև վնասում են երեխայի զարգացմանը: Դրանք են.

1) *Հուզական մերժում* (գիտակցված կամ չգիտակցված), մի կողմից երեխային պարտադրվող վարքի ձևեր, խիստ վերահսկվող կարգուկանոն, մյուս կողմից՝ անտեսում, անտաբերություն, անհետևողականություն: Շնորհները ժխտում են երեխայի հիմնական խնդիրները և երեխայից պահանջում են ավելին, քան կարող է:

2) *Գերխնամք*, երբ ծնողը երեխայի առողջական, կրթական և շփման հարցերին վերաբերվում է անվստահությամբ՝ երեխային համարելով ոչ կոմպետենտ, սահմանափակում է նրա ինքնությունությունը: Այս ծնողները մշտապես գտնվում են տագնապային զգացողությունների ներքո, երեխային հսկում են ողջ օրվա ընթացքում:

3) *Երեխայապաշտական*, երբ ընտանիքի բոլոր անդամները անտեսում են իրենց պահանջմունքները, դադարում են ապրել իրենց անձնական կյանքով՝ առաջնային դարձնելով երեխայի պահանջմունքները, չափից ավելի ուշադրություն են հատկացնում նրան, վերագրում են ընտանիքի «պաշտելի» և «կյանքի իմաստի» դերը [5, 102]:

Տ. Վիստինսան նշում է այն փոխհարաբերությունների տեսակները, որոնք արդյունավետ են երեխայի թե՛ ճանաչողական և թե՛ անձնային զարգացման գործում.

Աղեկվառություն: Շնորհի կողմից երեխայի առանձնահատկությունների իրատեսական գնահատում, երբ տեսնում, հասկանում և հարգում է երեխայի անհատականությունը:

Ճկունություն: Շնորհի կողմից շփման նոր եղանակներն պատրաստ լինելու ընդունակություն՝ կախված երեխայի մեծանալու կամ ընտանիքի պայմանների փոփոխությունների հետ: Քարացած, ոչ ճկուն դիրքորոշումը տանում է հարաբերությունների փակուղի: Երեխան ընդդիմանում է ցանկացած պահանջի, համառ-բունկուն վարք է դրսևորում:

Կանխատեսելիություն: Շնորհը կողմնորոշված է դեպի երեխայի «Զարգացման ակտուալ գոտին» (այն, ինչ այս պահին կարողանում է երեխան) և վաղվա օրվա խնդիրների վրա (զարգացման մերձակա գոտի): Դա երեխայի զարգացման հեռանկարային մոտեցումն է, ինչն իրատեսական հիմքեր է տալիս փոքր, սակայն հաստատուն քայլերով առաջ գնալուն [4, 72] (տե՛ս աղյուսակ 1):


Փորձարարական հետազոտության վերլուծություն և արդյունքներ

ԱՄՄ-ով երեխաների ծնողների դիրքորոշումների հետազոտման նպատակով կիրառել ենք «Շնորհների վերաբերմունքի հարցաթերթիկ» ըստ Ա. Վարգայի և Վ. Ստոլինի: Հարցաթերթիկը կազմված է 61 հարցերից, որոնք արտահայտում են ծնողական վերաբերմունքի 5 տիպեր: Շնորհների կողմից տրած պատասխանները գնահատվել են 1-5 միավորներով: Հարցմանը մասնակցել են ԱՄՄ-ով երեխաների 30 մայրեր:

Մեթոդիկայի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ համագործակցող հարաբերությունների մակարդակը ամենից բարձրն է՝ 6 միավոր, իսկ երեխայի անհաջողությունների վրա հիմնված հարաբերությունների արդյունքը՝ 4: Այսպիսով՝ 30 մասնակից ծնողների 46 %-ը համագործակցում է երեխայի հետ, 15 %-ը ընդունում է երեխային այնպիսին, ինչպիսին կա, և 15 %-ը՝ սիմբիոզ: Վերահսկող հարաբերությունը կազմում է 12 %, երեխայի անհաջողություններին կենտրոնացվող հարաբերությունը՝ 12 %:

«Ծնողների վերաբերմունքի հարցաթերթիկ»

1	Երեխայի ընդունում-մերժում	« <i>Ընդունում-մերժում</i> » սանդղակը վերլուծելուց հետո պարզ է դարձել, որ ծնողներից 13-ը ստացել են բարձր միավոր, 5-ը՝ ցածր: Բարձր միավորի դեպքում ծնողը ընդունում է երեխայի անհատականությունը: Ցածր միավորի դեպքում ծնողը երեխայի նկատմամբ զգում է գրգռվածություն, բարկություն, երբեմն նույնիսկ ատելություն, երեխային ծնողը համարում է անհաջողակ:
2	Կոուպերացիա (համագործակցություն)	« <i>Կոուպերացիա</i> » սանդղակը վերլուծելուց հետո պարզ է դարձել, որ ծնողներից 12-ը ստացել են բարձր միավոր, 3-ը՝ ցածր: Բարձր միավորի դեպքում ծնողը համագործակցում է երեխայի հետ: Ցածր միավորի դեպքում ծնողը երեխային չի ներգրավում առօրյա գործերում:
3	Միմիոզ (համակեցություն)	« <i>Միմիոզ</i> » (համակեցություն) սանդղակի հարցերի պատասխանների վերլուծությունից հետո պարզ է դարձել, որ բարձր միավոր ստացել են ծնողներից 12-ը, իսկ ցածր միավոր՝ ոչ ոք: Բարձր միավորի դեպքում ծնողը հոգեբանական պատճեն չի կառուցում իր և երեխայի միջև, բավարարում է նրա պահանջունքները: Ցածր միավորը վկայում է այն մասին, որ ծնողը հեռացնում է երեխային իրենից և քիչ է հոգ տանում նրա մասին:
4	Վերահսկողություն	« <i>Վերահսկողություն</i> » սանդղակի վերլուծությունից պարզ է դարձել, որ բարձր միավոր ստացել են ծնողներից 8-ը, իսկ ցածր միավոր ստացել են 6-ը: Բարձր միավորը վկայում է այն մասին, որ ծնողը խիստ ավտորիտար է, նրանից պահանջում է հնազանդություն, պարտադրում է իր կամքը: Ցածր միավորը վկայում է այն մասին, որ երեխայի գործողությունների նկատմամբ բացակայում է ծնողի վերահսկողությունը:
5	Վերաբերմունքը երեխայի անհաջողությունների նկատմամբ	« <i>Վերաբերմունք երեխայի անհաջողությունների նկատմամբ</i> » սանդղակի հարցերի պատասխանների վերլուծությունից հետո պարզ է դարձել, որ բարձր միավոր ստացել են ծնողներից 6-ը, իսկ ցածր միավոր ստացել են ընդամենը 4 ծնող: Բարձր միավորի դեպքում ծնողը երեխայի անհաջողություններին հետևողական է, ցածրի դեպքում համարում է անհաջողակ, վերաբերվում է ինչպես անդադնալի հիվանդ էակի:



Պատկեր 1. «Ծնողների վերաբերմունքի հարցաթերթիկ»-ի վերլուծության արդյունքներ %

Մեր կողմից առաջ քաշած վարկածի հաստատման նպատակով վերը նշված մեթոդիկայի կիրառման արդյունքները համադրել ենք ծնողների և նրանց երեխաների հետ աշխատող հոգեբանների, հատուկ մանկավարժների և ուսուցիչների (մասնագիտական թիմի) հետ իրականացված զրույցի, հարցազրույցի մեթոդի արդյունքների հետ: Կարևոր էմպիրիկ տվյալներ ենք ստացել նաև երեխայի վարքի դիտման մեթոդի շնորհիվ: Դիտումն անց է կացվել կոնկրետ իրադրության մեջ (դասի, պարապմունքների, դասամիջոցների, մասնագետների հետ աշխատելիս), ինչն էլ ավելի հավաստի տվյալներ է տվել յուրաքանչյուր երեխայի հարմարման գործընթացի վերաբերյալ: Զրույցի, դիտման մեթոդներից ստացված արդյունքները վերլուծելով՝ ստացել ենք հետևյալ պատկերը:

Կրթական միջավայրի արդյունավետ հարմարվում են այն երեխաները, որոնց ծնողների դիրքորոշումը համապատասխանում էր «Հնդուում և համագործակցում» սանդղակին: Մասնագետները նշում են, որ այս խմբի երեխաների վարքը կառուցողական է, ադապտիվ և ենթարկվում է հոգեշտկողական մեթոդների ազդեցությանը: ԱՄՆ-ով երեխան կարողանում է իրեն հասանելի մեխանիզմներով փոխհարաբերվել շրջապատի մարդկանց հետ: «Վերահսկողություն, Միմբիոգ և Անհաջողությանը կենտրոնացված» դիրքորոշումն ունեցող ծնողների կարծրատիպային, ռիգիդ և ժխտողական մոտեցումը հանգեցնում է փոխհարաբերությունների անարդյունավետությանը, ինչն էլ իր հերթին դեգադապտիվ վարքի պատճառ է դառնում: Երեխան դժվարանում է բավարարել իր հաղորդակցման պահանջմունքը դրսևորելով ագրեսիա, մեկուսացում և անհանդուրժողականություն:

Եզրակացություն

Այսպիսով՝

1. ԱՄՆ-ով երեխաների և նրանց ծնողների հարաբերությունների ուսումնասիրությունը բազմաշերտ և բարդ է: Հնամենիք փորձում է երեխայի խնդիրը լուծել ինքնուրույն, սեփական ռեսուրսներով, ինչն էլ հանգեցնում է նոր և առավել բարդ խնդիրների: Հաճախ

այս ընտանիքները մեկուսանում են հասարակությունից՝ չհաղթահարելով բացասական ապրումները և տագնապները, կախված երեխայի ապագայի հետ:

2. Հասմեմատական վերլուծություն կատարելով ծնող-երեխա հարաբերությունների բնույթի և հարմարման արդյունքի հետ՝ պարզ դարձավ, որ ԱՄԽ-ով երեխաների հարմարման, կրթական գործընթացներին ինտեգրման հիմնախնդիրը մեծապես կախված է ծնողների կողմից երեխայի խնդրի գնահատման օբյեկտիվությունից, ընդունման և մասնագետների հետ համագործակցման առանձնահատկություններից:

Սույն հետազոտական աշխատանքը ցույց տվեց, որ աուտիկ սպեկտրի խանգարումներով երեխաները անդառնալի հիվանդներ չեն, ամենևին դատապարտված չեն մեկուսացման: Եթե ընտանիքը, հասարակական կառույցները և միջավայրը նպաստավոր-դրական նախադրյալներ է ստեղծում, ապա երեխան իր վարքը հարմարեցնում է միջավայրի պահանջներին ունենալով սոցիալականացման կարողություններ:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-255>

Գրականություն

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց (մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար), Երևան, 2020:
2. Аршатская О. С. Психологическая помощь ребенку раннего возраста при формирующемся детском аутизме 2005.
3. Варга А. Я., Столин В. В. Тест-опросник родительского отношения // Практикум по психодиагностике, 2000.
4. Высотина Т. Н. Проблема родительского отношения к детям со сложными нарушениями развития, 2006.
5. Иванова Н. Н. Как узнать аутизм? 2002.
6. Манелис Н. Г. Ранний детский аутизм. Психологические и нейропсихологические механизмы // Школа здоровья, 1999.
7. Ткачева В. В. Психолого-педагогическое изучение семьи воспитывающей ребёнка с отклонениями развития, 2003.
8. Костина И. А. Консультирование родителей детей с аутизмом // Детский аутизм: исследования и практика, с. 333-344.

Влияние родительско-детских отношений на процесс интегрирования детей с расстройствами аутистического спектра

*Шахвердян Маргарита
Овсепян Нуне*

Резюме

Ключевые слова: *расстройство аутистического спектра (РАС), родительское отношение, сотрудничество, контроль, отвержение, симбиоз*

Семьи, имеющие детей с расстройствами аутистического спектра (РАС), крайне уязвимы. Семья пытается самостоятельно решить проблему ребенка, используя собственные ресурсы, что приводит к возникновению новых и более сложных проблем. Часто эти семьи изолируются от общества, не справляясь с негативными переживаниями и тревогами, связанными с будущим ребенка. Проблема адаптации и образовательной инклюзии детей с РАС во многом зависит от объективности оценки проблемы ребенка со стороны родителей,

их принятия и особенностей сотрудничества с профессионалами. Наши исследования и опыт показали, что дети с аутизмом не являются неизлечимыми и совершенно не обречены на изоляцию, если семья и общественные структуры проводят последовательную и совместную работу с ними. Дополнительно следует подчеркнуть, что успешная адаптация детей с РАС возможна при комплексной поддержке, включающей психолого-педагогическое сопровождение, специализированные образовательные программы, консультирование родителей и активное взаимодействие с социальными службами. Такая интегрированная стратегия способствует снижению уровня стресса в семье, повышению социальной вовлеченности ребенка и формированию устойчивых навыков, необходимых для дальнейшей самостоятельной жизни и социализации.

The Impact of Parent-Child Relationships on the Inclusion Process of Children with Autism Spectrum Disorders

*Shahverdyan Margarita
Hovsepyan Nune*

Summary

Key words: *Autism Spectrum Disorder (ASD), parental attitude, cooperation, control, rejection, symbiosis*

Families raising a child with ASD (Autism Spectrum Disorder) are extremely vulnerable. Often, they attempt to address the child's difficulties independently, relying solely on their own resources, which can create additional and more complex challenges. Such families frequently become socially isolated and struggle to cope with the negative emotions and anxieties associated with their child's future. The successful adaptation and educational inclusion of children with ASD largely depend on the parents' ability to objectively assess their child's condition, their willingness to accept it, and the quality of their collaboration with specialists. Our research and practical experience demonstrate that autistic children are not irreversibly impaired and are by no means destined for isolation – provided that families and social institutions engage in consistent, coordinated, and supportive efforts. It should also be emphasized that successful adaptation of children with ASD is possible with comprehensive support, including psychological and educational guidance, specialized educational programs, parental counseling, and active collaboration with social services. Such an integrated strategy helps reduce family stress, enhance the child's social engagement, and develop stable skills necessary for future independent living and socialization.

Ներկայացվել է	06. 03. 2025 թ.
Գրախոսվել է	10. 05. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.

Մարտական գործողությունների մասնակիցների հետտրավմատիկ անձնային աճի և բազային արժեքային կողմնորոշումների փոխադարձ կապը

Ստեփանյան Լիլիթ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-262>

Հանգուցային բառեր. *նոր հնարավորություններ, անհատականության ուժ, կյանքի արժեքի վերագնահատում, ավանդականություն, ինքնուրույնություն, ձեռքբերումներ, կամեցողություն, անվտանգություն*

Նախաբան

Հողվածի արդիականությունը. Հայաստանը վերջին տարիներին բախվել է պատերազմական իրավիճակների (օրինակ՝ 2020 թ. Արցախյան պատերազմ և դրանից հետո պարբերաբար մարտական գործողությունները), ինչը մեծացրել է հետտրավմատիկ խանգարումների և դրանց հաղթահարման ուսումնասիրության կարևորությունը: Ժամանակակից հոգեբանության մեջ աճում է հետաքրքրությունը տրավմայի դրական հետևանքների (ՀՏՍ) նկատմամբ, և այս աշխատանքը լրացնում է գիտելիքների բացը՝ կապված մեր տարածաշրջանային համատեքստի հետ: Բացի այդ, այն արձագանքում է հասարակության կարիքներին՝ օգնելու վետերաններին և նրանց ընտանիքներին վերաինտեգրվել կյանքին:

Մարդու հոգեկան և սոցիալական զարգացումը կախված է բազմազան հանգամանքներից, որոնցից մեկը մարտական գործողություններին մասնակցությունն է: Այդպիսի փորձառությունը կարող է ունենալ խորը և երկարատև ազդեցություն անձի անձնային աճի, կյանքի արժեքային կողմնորոշումների և ներքին ուժի զարգացման վրա: Մարտական գործողություններին մասնակցած անձանց առջև ծառանում են ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր և անձնային մարտահրավերներ, որոնք ազդեցություն են թողնում նրանց արժեհամակարգի և ընդհանրապես կյանքի վրա: Նման տրավմատիկ փորձառությունները կարող են լինել ոչ միայն վնասակար, այլև միտումներ ունենալ հոգևոր և անձնային աճի համար: Հետտրավմատիկ անձնային աճը ենթադրում է, որ մեծ դժվարություններով տրավմատիկ իրադարձությունների միջով անցած մարդիկ կարող են վերագնահատել կյանքը և վերափոխել իրենց արժեհամակարգը:

Հետազոտության *նպատակն* է վերլուծել մարտական գործողությունների մասնակիցների մոտ հետտրավմատիկ անձնային աճի (ՀՏՍ) և բազային արժեքային կողմնորոշումների փոխադարձ կապը՝ պարզելու, թե ինչպես է տրավմատիկ փորձառությունը ազդում անձի արժեքային համակարգի և անձնային զարգացման վրա:

Հետազոտության խնդիրները

1. Բացահայտել այն գործոնները (օրինակ՝ սոցիալական աջակցություն, ադապտիվ մեխանիզմներ), որոնք նպաստում են տրավմայի վերածմանը անձնային աճի:
2. Գնահատել ՀՏՍ-ի և բազային արժեքների միջև կապերի վիճակագրական նշանակությունը՝ օգտագործելով համահարաբերակցային վերլուծություն:

Հետազոտության *նորույթը* այն է, որ այն առաջին անգամ Հայաստանի Հանրապետության համատեքստում համակցված կերպով ուսումնասիրում է մարտական գործողությունների մասնակիցների հետտրավմատիկ անձնային աճի և Շվարցի բազային արժեքային կողմնորոշումների փոխկապակցվածությունը: Այն համեմատում է տրավմատիկ փորձառություն ունեցող և չունեցող խմբերի արժեքային համակարգերի տարբերությունները՝ առաջարկելով նոր պատկերացումներ տրավմայի դրական հետևանքների մասին մեր մշակութային և սոցիալական իրողություններում:

Տեսական նշանակությունը: Հետազոտությունը հաստատում և ընդլայնում է հետ-տրավմատիկ աճի տեսության (Tedeschi & Calhoun) և բազային արժեքների տեսության (Schwartz) մոդելների կիրառելիությունը պատերազմական փորձառություն ունեցող անձանց վրա՝ ցույց տալով, թե ինչպես են արժեքային կոդմոտորշումները միջնորդում տրավմայի և աճի միջև կապը: Աշխատանքը նաև նոր տվյալներ է ավելացնում անձի հոգեբանության և տրավմայի հոգեբանության ոլորտներին:

Գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հոգեբանական աջակցության ծրագրեր մշակելու համար՝ ուղղված մարտական գործողությունների մասնակիցների վերականգնմանը և անձնային աճի խթանմանը:

Հողվածի բովանդակությունը

Տարբեր ուսումնասիրություններ վկայում են, որ մարտական գործողություններին մասնակցած անձինք հաճախ վերափոխվում են իրենց կյանքն ու արժեքները՝ ձեռք բերելով հոգևոր փոփոխություններ, կյանքի արժեքի բարձրացում և ինքնազարգացման նոր հնարավորություններ: Դա վկայում է այն մասին, որ նրանք կարող են ընդլայնել իրենց ներքին ռեսուրսներն ու ձեռք բերել անձնային աճի նոր մակարդակ: Մյուս կողմից՝ պատերազմներին չմասնակցած անձանց մոտ արժեքային համակարգը կարող է ավելի բեռնակշիռ լինել: Որոշ արժեքներ նպաստում են անձնային աճին, իսկ մյուսները մնում են հակասական, ինչը կարող է դժվարացնել նրանց առաջընթացը: Տրավմատիկ փորձառությունների հնարավոր դրական հետևանքները կախված են սոցիալական աջակցության առկայությունից և ադապտիվ մեխանիզմներից, որոնք կարող են տրավման վերածել աճի աղբյուրի: Այս հիմնախնդրի համար անհրաժեշտ է խորքային և պարբերական ուսումնասիրություն, քանի որ պատերազմական իրավիճակները կրում են շարունակական բնույթ և ուսումնասիրության արդյունքները կարող են տալ արժեքավոր տվյալներ՝ հասկանալու համար, թե ինչպես կարող են տարբեր իրավիճակներ և արտաքին ազդեցություններ խթանել կամ կանխել անձնային աճը:

Հետտրավմատիկ անձնային աճի (Posttraumatic Growth, PTG) տեսությունը նկարագրում է դրական հոգեբանական փոփոխությունները, որոնք կարող են առաջանալ անհատի կողմից ծանր տրավմատիկ փորձի հաղթահարումից հետո: Այն ընդգծում է, որ տրավման կարող է հանգեցնել ոչ միայն տառապանքի, այլև անձնային զարգացման, իմաստավորման և կյանքի նոր հեռանկարների բացման: Այս տեսությունը հակադրվում է տրավմայի բացառապես վնասակար հետևանքների մասին տեսակետներին:

Ռիչարդ Թեդեսչիի և Լոուրենս Քալհունի տեսության (Tedeschi & Calhoun) համաձայն՝ ՀՏԱ-ն առաջանում է, երբ անհատը պայքարում է տրավմայի հետևանքների հետ և վերականգնվում է իր կյանքի իմաստը: Այդ մոդելն առանձնացնում է 5 հիմնական տիպոյներ.

1. Անձնային ուժի զգացում. «Ես ավելի ուժեղ եմ, քան կարծում էի»:
2. Նոր հնարավորություններ. կյանքում նոր ուղղությունների բացահայտում:
3. Հարաբերությունների խորացում. մտերիմ կապերի արժևորում:
4. Կյանքի գնահատում. կյանքի փիլրությունային և արժեքի գիտակցում:
5. Հոգևոր փոփոխություն. կրոնական կամ էքզիստենցիալ հարցերի նկատմամբ հետաքրքրության աճ [7]:

Մթիվեն Ջոզեֆի օրգանիզմային արժեքավորման տեսության (Organismic Valuing Theory) համաձայն՝ մարդիկ ունեն բնածին հակում՝ ձգտելու աճի և ինքնակայացման, նույնիսկ տրավմայի պայմաններում: Տրավման խախտում է անձի հիմնական համոզմունքները՝ ստիպելով վերագնահատել կյանքը: Անձնային աճը տեղի է ունենում, երբ անհատը կարողանում է ինտեգրել տրավմատիկ փորձը իր ինքնության մեջ [4]:

Ռ. Ջանոֆ-Բուվանի «Կործանված ենթադրությունների» տեսությունը (Shattered Assumptions Theory) պնդում է, որ տրավման վերափոխում է անձի հիմնական ենթադրությունները աշխարհի մասին («Աշխարհը արդար է», «Ես անվտանգ եմ»): Անձնային աճի մեխանիզմն, ըստ նրա, կայանում է հետևյալում՝ տրավմայից հետո անհատը կառուցում է ավելի իրատեսական և ճկուն համոզմունքներ և այդ գործընթացը կարող է հանգեցնել կյանքի ավելի խոր ըմբռնման [3]:

ՀՏԱ-ն (PTG) տարբերվում է ռեզիլիենտությունից, քանի որ այն նկարագրում է աճ դեպի նոր մակարդակ, այլ ոչ թե պարզապես նախկին վիճակի վերականգնում: ՀՏԱ-ի չափման համար օգտագործվում է Հետտրավմատիկ անձնային աճի հարցարանը (Posttraumatic Growth Inventory- PTGI), որը բաղկացած է 21 հարցից (Tedeschi & Calhoun, 1996): Կիրառվող թերապիաներն են՝ իմաստի որոնումը խթանող նախադիմացի թերապիա և էքզիստենցիալ մոտեցումներ, «Փորձագետ ուղեկից» մոդելը (Expert Companion Model), որտեղ թերապևտը օգնում է այցելուին վերակառուցել պատմությունը [8]:

Հետտրավմատիկ աճի տեսությունը ընդգծում է մարդու հոգեբանության ճկունությունն ու հարմարվողականությունը: Այն հնարավորություն է տալիս տեսնել տրավման ոչ միայն որպես կործանարար ուժ, այլև որպես անձնային և հոգևոր վերափոխման հնարավորություն: Սակայն այն պետք է կիրառվի զգուշությամբ՝ հաշվի առնելով տրավմայի բարդությունն ու անհատի յուրահատկությունը:

Շվարցի բազային արժեքային կողմնորոշումների տեսությունը (Schwartz's Theory of Basic Human Values) հոգեբան Շալոմ Շվարցի (Shalom H. Schwartz) կողմից մշակված տեսություն է, որը բացահայտում է մարդկային արժեքների համընդհանուր կառուցվածքը և դրանց դերը մշակութային ու անհատական վարքագծում: Այս տեսությունը հիմնված է 10 հիմնական արժեքների վրա, որոնք կազմակերպված են շրջանաձև մոդելում (Circumplex Model)՝ նրանց միջև գոյություն ունեցող համատեղելիության և հակադրությունների հիման վրա:

Հիմնական արժեքները և կառուցվածքը

1. Ունիվերսալիզմ (Universalism)՝ բնության և մարդկության հանդեպ հոգատարություն:
2. Կամեղողություն (Benevolence)՝ մտերիմների բարօրության խնամք:
3. Ավանդականություն (Tradition)՝ մշակութային ժառանգության հարգանք:
4. Համաձայնեցում (Conformity)՝ սոցիալական նորմերի պահպանում:
5. Անվտանգություն (Security)՝ կայունության և կանխատեսելիության ձգտում:
6. Իշխանություն (Power)՝ սոցիալական կարգավիճակի և ռեսուրսների վերահսկողություն:
7. Զեղքերում (Achievement)՝ անձնական հաջողության ձգտում:
8. Հեդոնիզմ (Hedonism)՝ հաճույքի և բավարարվածության որոնում:
9. Ստիմուլյացիա (Stimulation)՝ նորությունների և ռիսկի ձգտում:
10. Անկախություն (Self-Direction)՝ անկախության և ստեղծագործականության ազատություն [5]:

Շրջանաձև մոդելի սկզբունքներն են.

- Համատեղելի արժեքներ. օրինակ՝ բարեգործություն և ունիվերսալիզմ:
- Հակադիր արժեքներ. օրինակ՝ իշխանություն և ունիվերսալիզմ, ավանդույթ և ինքնորոշում:

Հիմնական դրույթներն են.

1. Մշակութային համընդհանրություն. արժեքների կառուցվածքը համընդհանուր է բոլոր մշակույթներում, թեև առանձին արժեքների կարևորությունը տարբեր է:

2. Դիսամիկ հարաբերություններ. արժեքները գործում են որպես դրդապատճառներ՝ հակադրվելով կամ լրացնելով միմյանց:
3. Արժեքների հիերարխիա. անհատները և մշակույթները դասակարգում են արժեքներն ըստ իրենց նախասիրությունների [6]

Տեսությունը կիրառվում է մշակութային հետազոտություններում. օրինակ՝ արևմտյան հասարակություններում գերակայում են ինքնորոշումը և հեղինակությունը, իսկ ասիական հասարակություններում՝ անվտանգությունը և համաձայնեցումը, մարքեթինգում և սոցիալական քաղաքականության մեջ արժեքների վերլուծությունը օգտագործվում է սպառողական վարքագիծը և քաղաքական նախապատվությունները հասկանալու համար:

Հետազոտության իրականացման համար կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

1. *Հետտրավմատիկ աճի հարցարան* ՀՏԱՀ (PTGI - *Tedeschi & Calhoun*) [2]:

Հարցաբանը չափում է դրական փոփոխությունների մակարդակը, որոնք տեղի են ունեցել տրավմատիկ իրադարձությունից (այս դեպքում՝ մարտական գործողություններին մասնակցությունից) հետո և բաղկացած է հինգ ենթասանդղակներից, որոնք առնչվում են անձի աշխարհընկալման հիմքային շերտի հետ: Ըստ այս մեթոդիկայի՝ առանձնացվում են հետևյալ սանդղակները. մարդկանց հանդեպ վերաբերմունք (ԱՄԿ), Նոր հնարավորություններ (ՆՀ), Անհատական ուժ (ԱՌԻ), Հոգևոր փոփոխություններ (ՀՓ), Կյանքի արժեքի բարձրացում (ԿԱԲ):

2. *Բազային արժեքային կողմնորոշումներ* (Շ. Շվարց) [1, 86-92]: Շվարցի տեսությունը կարևոր գործիք է հասարակության և անհատի արժեքային համակարգերը հասկանալու համար: Այն ընդգծում է արժեքների դիսամիկ բնույթը և դրանց դերը սոցիալական փոխազդեցություններում: Այս մեթոդիկան առանձնացնում է հետևյալ սանդղակները՝ կոնֆորմություն, ավանդականություն, կամեցողություն, ունիվերսալիզմ, ինքնուրույնություն, հեղուկություն, ձեռքբերումներ, իշխանություն, անվտանգություն, ստիմուլյացիա:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվել է մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառմամբ՝ նկարագրական վիճակագրություն, Սպիրմենի համահարաբերակցային վերլուծություն:

Հետազոտության ընտրանքը. մարտական գործողությունների մասնակիցներ՝ փորձարարական խումբ - R1 (n=200), մարտական գործողություններին չմասնակցածներ - R2՝ ստուգիչ խումբ (n=200):

Փորձարարական և ստուգիչ խմբերում Հետտրավմատիկ աճի հարցարանի և Բազային արժեքների կողմնորոշումների ախտորոշման մեթոդիկայի կիրառության արդյունքում ստացված տվյալները ենթարկել ենք համահարաբերակցային վերլուծության՝ պարզելու համար հետտրավմատիկ անձնային աճի և արժեքային կողմնորոշումների միջև փոխադարձ կապը, համեմատելով դրանց դրսևորումը մարտական գործողություններին մասնակցածների և չմասնակցածների մոտ:

Այդուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս փորձարարական (R1) և ստուգիչ խմբի (R2) անձնային արժեքների և հետտրավմատիկ անձնային աճի ցուցանիշների միջև առկա կապերը:

Աղյուսակ 1.

ՀՏԱ-ի սանդղակների և ինտեգրալ ցուցանիշների ու բազային արժեքային կողմնորոշումների տվյալների
 համահարթերակցային վերլուծությունը

№	Արժեքներ	ԱՈԻ		ԱՄՎ		ՆՀ		ՀՓ		ԿԱԲ		Ինտեգր	
		R1	R2	R1	R2	R1	R2	R1	R2	R1	R2	R1	R2
1.	Կոնֆորմություն	0,12	-0,02	0,11	0,05	-0,08	0,22**	0,17*	0,23**	-0,11	0,28***	0,08	0,28***
2.	Ավանդականություն	-0,02	-0,17*	0,01	0,23**	0,13	0,21**	0,23**	0,53***	-0,06	-0,04	0,09	0,32***
3.	Կամեցողություն	-0,07	-0,09	-0,08	0,03	-0,1	0,32***	0,06	0,27***	-0,01	-0,18*	-0,12	0,11
4.	Ունիվերսալիզմ	-0,04	-0,19*	0,12	-0,2**	0,06	0,13	0,16*	0,36***	-0,14*	0,1	0,1	-0,05
5.	Ինքնուրույնություն	-0,06	-0,57***	-0,03	0,05	-0,25***	-0,18*	0,07	0,29***	-0,02	0,06	-0,16*	-0,24***
6.	Հեղինակ	0,08	-0,33***	-0,07	0,03	0,01	-0,45***	0,08	0,67***	-0,08	-0,19**	-0,02	-0,2**
7.	Ձեռքբերումներ	0,3***	-0,35***	0,2**	-0,22***	0,1	-0,08	-0,01	0,57***	-0,31***	-0,26***	0,22**	-0,32***
8.	Իշխանություն	0,03	0,11	0,14*	0,12	-0,01	0,05	0,46***	0,17*	0,02	-0,22**	0,19**	0,1
9.	Անվտանգություն	-0,17*	-0,1	0,19**	-0,23**	-0,14*	0,25***	0,2**	0,2**	-0,04	-0,14*	0,02	-0,1
10.	Մոխրալյացիա	-0,01	-0,15*	-0,16*	-0,37***	-0,12	0,3***	-0,17*	0,23**	-0,16*	-0,2**	-0,25***	-0,23**

Օսնոթոգրություն. * — $p \leq 0,05$; ** — $p \leq 0,01$; *** — $p \leq 0,001$:

Աղյուսակ 1-ում համահարաբերակցային վերլուծության արդյունքները ցույց են տալիս տարբեր արժեքային կողմնորոշումների և ՀՏԱ (հետարավմատիկ աճի) սանդղակների միջև առկա կապերը՝ համեմատելով մարտական գործողությունների մասնակիցների (R1) և չմասնակցածների (R2) խմբերը:

R2 խմբում (չմասնակցածներ) կոնֆորտությունը ավելի ուժեղ կապ ունի *հոգևոր փոփոխությունների* (0.23**) և *կյանքի արժեքի բարձրացման* (0.28***) հետ, ինչը ենթադրում է, որ հասարակական նորմերին հարմարվող անհատները կարող են ավելի շատ արժևորել կյանքի արժեքը և հոգևոր զարգացման հնարավորությունները:

R1 խմբում առկա է դրական նշանակալի կապ *նոր հնարավորությունների* միջև ($r = 0,23^{**}$), ինչը վկայում է այն մասին, որ մարտական գործողություններին մասնակցած անձինք ավելի հակված են ավանդականության և միևնույն ժամանակ բաց են նոր հնարավորությունների նկատմամբ: Իսկ R2 խմբում կապը նոր հնարավորությունների հետ շատ ավելի ուժեղ է ($r = 0,53^{***}$), ինչը ենթադրում է, որ չմասնակցած անձինք ավանդականությունը շատ ավելի ինտեգրալ են համարում նոր հնարավորությունների որոնման գործընթացում:

R2 խմբում Ավանդականության և Կյանքի արժեքի բարձրացման (ԿԱԲ) միջև կապը բավականին ուժեղ է ($r = 0,32^{***}$), ինչը ցույց է տալիս, որ խաղաղ պայմաններում գտնվող անձանց համար կյանքի արժեքի գիտակցումը շատ ավելի կապված է ավանդականության հետ:

Մարտական գործողություններին չմասնակցածների (R2) խմբում կամեցողությունը ուժեղ դրական կապ ունի ԱՄՎ-ի հետ (0.32**), ինչը վկայում է այն մասին, որ խաղաղ պայմաններում կամեցողությունը նպաստում է դրական միջանձնային հարաբերություններին, աջակցությանը և փոխօգնությանը:

Մարտական գործողություններին մասնակցածների մոտ կամեցողությունը ցույց է տալիս, որ կապ չունի ՆՀ-ի հետ (0.06), ինչը ենթադրում է, որ պատերազմն ինքնին չի խթանում կամեցողության միջոցով նոր հնարավորությունների որոնումը: Չմասնակցածների մոտ այս կապը շատ ավելի ուժեղ է (0.27**), ինչը նշանակում է, որ նրանց համար բարեսիրտությունը կարող է գործել որպես նոր հնարավորությունների զարգացման խթան՝ սոցիալական կապերի և գործընկերային հարաբերությունների տեսանկյունից: Մարտական գործողությունների մասնակիցների շրջանում կամեցողությունն ունի դրական, բայց թույլ կապ ՉՓ-ի հետ (0.27**), ինչը կարող է վկայել այն մասին, որ պատերազմական իրավիճակը կարող է նպաստել բարեսիրտության միջոցով հոգևոր վերափոխմանը:

Ունիվերսալիզմի և հոգևոր փոփոխությունների (ՀՓ) (0.36***) միջև ուժեղ կապը (համեմատած R1 խմբի 0.16* կապի հետ) վկայում է, որ մարտական գործողություններին չմասնակցած անձինք ունիվերսալիզմը ավելի շատ կապում են ներքին հոգևոր վերափոխման հետ, ինչը կարող է պայմանավորված լինել սոցիալական կայուն միջավայրում ձևավորված գաղափարական ընկալումներով:

R1 խմբում *ինքնուրույնությունը* բացասական կապ ունի նոր հնարավորությունների ($-0,25^{***}$) և ինտեգրալ ցուցանիշի ($-0,16^*$) հետ: R2 խմբում այն շատ ուժեղ բացասական կապ ունի կյանքի արժեքի բարձրացման ($-0,24^{***}$) հետ: Մարտական գործողություններին մասնակցած անձանց մոտ ինքնուրույնության նվազումը կարող է կապված լինել թիմային մտածողության ամրապնդման հետ, մինչդեռ մյուս խմբի մոտ այն արտացոլում է կյանքի իմաստի որոնման դժվարությունները: R1 խմբում ինքնուրույնության բացասական կապը նոր հնարավորությունների և ինտեգրալ ցուցանիշի հետ վկայում է այն մասին, որ պատերազմական փորձ ունեցող անձինք ավելի հակված են գործելու թիմային համախմբվածության շրջանակում՝ առաջնահերթություն տալով կոլեկտիվ որոշումներին:

R1 խմբում որևէ նշանակալի կապ չունի: R2 խմբում *հեղինակը* բացասականորեն է

կապվում կյանքի արժեքի բարձրացման ($-0,2^{**}$) և հոգևոր փոփոխությունների ($-0,45^{***}$) հետ, սակայն դրականորեն՝ նոր հնարավորությունների հետ ($0,67^{***}$): R1 խմբում հեռունիզմի հետ կապերի բացակայությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ պատերազմական փորձ ունեցող անձինք առաջնահերթություն են տալիս գոյատևմանն ու սոցիալական համերաշխությանը, ինչը նվազեցնում է անձնական հաճույքի և վայելքի դերը:

Հետազոտության տվյալների համաձայն՝ *ձեռքբերումների* արժեքային կողմնորոշման և ՀՏԱ-ի ցուցանիշների միջև համահարաբերակցային կապերն էականորեն տարբերվում են մարտական գործողությունների մասնակիցների (R1) և չմասնակցած անձանց (R2) մոտ:

Մարտական գործողությունների մասնակիցների (R1) մոտ ձեռքբերումները դրական կապ ունեն անհատական ուժի ($r = 0,3^{***}$) և այլ մարդկանց հանդեպ վերաբերմունքի ($r = 0,2^{**}$) հետ: Մարտական գործողությունների մասնակիցների (R1) մոտ ձեռքբերումների և անհատական ուժի միջև ուժեղ դրական կապը ($r = 0,3^{***}$) ցույց է տալիս, որ այս խմբում անձնական հաջողություններն ու նպատակների իրագործումը սերտորեն կապված են սեփական կարողությունների և ինքնավստահության ընկալման հետ, ինչը կարող է լինել մարտական փորձառության հետևանք, որտեղ անհատական գոյատևումն ու կայունությունը դառնում են առաջնային: Ձեռքբերումները բացասական կապ ունեն կյանքի արժեքի բարձրացման ($r = -0,31^{***}$) հետ, ցույց է տալիս, որ անձնական հաջողություններին և նպատակներին ձգտելը կարող է հակադրվել կյանքի իմաստի և արժեքի ընկալմանը, հնարավոր է՝ մարտական փորձառության հետևանքով առաջացած արժեքային վերակողմնորոշման պատճառով:

Մարտական գործողությունների չմասնակցած զինծառայողների (R2) մոտ ձեռքբերումները բացասական կապ ունեն անհատական ուժի ($r = -0,35^{***}$) և նոր հնարավորությունների ($r = -0,22^{***}$) հետ: Մարտական փորձ չունեցող զինծառայողների շրջանում ձեռքբերումների վրա կենտրոնանալը հաճախ ուղեկցվում է ինքնավստահության անկմամբ և սահմանափակ հնարավորությունների ընկալմամբ: Հոգևոր փոփոխությունների հետ ձեռքբերումները ուժեղ դրական կապ ունեն ($r = 0,57^{***}$), ինչը նշանակում է, որ այս խմբի մոտ ձեռքբերումների ձգտումը հաճախ ուղեկցվում է ինքնաճանաչման և հոգևոր վերափոխման գործընթացներով: Կյանքի արժեքի բարձրացման հետ ձեռքբերումները բացասական կապ ունեն ($r = -0,26^{***}$), ինչը նշանակում է, որ քաղաքացիական անձանց մոտ ձեռքբերումների ձգտումը երբեմն կարող է նվազեցնել կյանքի արժեքի սուբյեկտիվ ընկալումը: Դա կարող է պայմանավորված լինել նրանով, որ մրցակցային միջավայրը խթանում է սթրեսն ու անհանգստությունը, ինչը դժվարացնում է կյանքից լիարժեք բավարարվածության զգացողությունը:

Գոմբատանտների (R1) մոտ նկատվել է ուժեղ դրական կապ Հոգևոր փոփոխությունների (ՀՓ) ($0,46^{***}$) և թույլ դրական կապ ՀՏԱ-ի ինտեգրալ ցուցանիշի հետ ($0,19^{*}$): Մարտական գործողությունների մասնակիցների շրջանում «իշխանություն» արժեքը դրսևորվում է զգալիորեն ուժեղ կապով հոգևոր փոփոխությունների ($0,46^{***}$) հետ: Այսինքն, տվյալ խումբը իշխանությունը դիտարկում է որպես իրենց անձնական աճի, հոգևոր վերափոխման կամ կարգապահության միջոցով ինքնահաստատման միջոց:

R2 խմբում (չմասնակցածներ) «Անվտանգություն» արժեքը դրականորեն է կապված «Նոր հնարավորությունների» (ՆՀ) ($0,25^{***}$) և «Հոգևոր փոփոխությունների» (ՀՓ) ($0,2^{**}$) հետ, ինչը կարող է մատնանշել, որ անվտանգության զգացումը խթանում է նոր փորձառությունների և հոգևոր աճի ձգտումը: Բացասական կապը «Այլ մարդկանց հանդեպ վերաբերմունքի» (ԱՄՎ) ($-0,23$) և «Կյանքի արժեքի բարձրացման» (ԿԱԲ) ($R = -0,14$) հետ կարող է ցույց տալ, որ անվտանգության կարիքը նվազեցնում է սոցիալական ներգրավվածությունը և կյանքի արժեքի գնահատումը:

R1 խմբում ստիմուլյացիան ունի թույլ բացասական կապ ԱՄՎ-ի հետ ($-0,16^{*}$), իսկ R2 խմբում՝ ավելի ուժեղ բացասական կապ ($-0,37^{***}$), ինչը կարող է ցույց տալ, որ հատկապես մարտական գործողություններին չմասնակցած անձանց մոտ ստիմուլյացիայի բարձր մակարդակը կապված է այլ մարդկանց հանդեպ ավելի բացասական վերաբերմունքի հետ:

R1 խմբում ստիմուլյացիան ՆՀ-ի հետ չունի նշանակալի կապ (-0.12), մինչդեռ R2 խմբում առկա է դրական նշանակալի կապ (0.30***), ինչը կարող է մատնանշել, որ մարտական գործողություններին չմասնակցած անձանց մոտ ստիմուլյացիայի ձգտումը կապված է նոր հնարավորությունների որոնման հետ:

Եզրակացություն

Վերլուծության ենթարկելով ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունը. մարտական գործողություններին մասնակցած անձինք (R1) ավելի ուժեղ կապեր ունեն հոգևոր փոփոխությունների, կյանքի արժեքի բարձրացման և անհատական ուժի հետ, ինչը վկայում է նրանց անձնային աճի մասին: Չմասնակցած անձանց մոտ (R2) արժեքային համակարգը ավելի բնեռացված է. որոշ արժեքներ նպաստում են զարգացմանը, սակայն որոշները՝ հակասում միմյանց: Տրավմատիկ փորձառությունը կարող է վերածվել աճի, եթե մարդն ունի սոցիալական աջակցություն և ադապտիվ մեխանիզմներ: Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարող ենք ասել, որ պատերազմի բացասական փորձը կարող է հանգեցնել դրական փոփոխությունների՝ կյանքի արժեքի գնահատման տեսանկյունից (հետտրավմատիկ աճի տեսությամբ համահունչ)՝ հենվելով բազային արժեքային կողմնորոշումների վրա:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-262>

Գրականություն

1. Մերոբյան Ա. Կ., Գրիգորյան Ն. Գ., Անձի դիսպոզիցիոնալ գծեր և սոցիալ-մշակութային կողմնորոշումներ. հոգեչափողական գործիքների տեղայնացում: Գիտամեթոդական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2021, 128 էջ:
2. Магомед-Эминов М. Ш. Феномен посттравматического роста // Вестник Тамбовского университета. Гуманитарные науки. 2009. Вып. 3 (71), с. 111-117.;
3. Janoff-Bulman R. Shattered Assumptions: Towards a New Psychology of Trauma. Free Press. 1992.
4. Joseph S. What Doesn't Kill Us: The New Psychology of Posttraumatic Growth. Basic Books, 2011.
5. Schwartz S. H. Universals in the Content and Structure of Values: Theoretical Advances and Empirical Tests in 20 Countries. Advances in Experimental Social Psychology, 1992, p. 1-65.
6. Schwartz S. H. An Overview of the Schwartz Theory of Basic Values. Online Readings in Psychology and Culture, 2(1), 2012, p. 550-562.
7. Tedeschi R. G., & Calhoun L. G. The Posttraumatic Growth Inventory: Measuring the positive legacy of trauma. Journal of Traumatic Stress, 9(3), 1996, p. 455-471.
8. Tedeschi R. G. et al. Posttraumatic Growth: Theory, Research, and Applications. Routledge, 2018.

Взаимосвязь посттравматического личностного роста и базовых ценностных ориентаций участников боевых действий

Степанян Лилит

Ключевые слова: новые возможности, сила личности, переоценка ценности жизни, традиционность, самостоятельность, достижения, доброжелательность, безопасность

В последние годы Армения столкнулась с военными ситуациями, такими как война в Арцахе в 2020 году и последующие периодические боевые действия, что повысило значи-

мость изучения посттравматических расстройств и способов их преодоления. В современной психологии вырос интерес к положительным последствиям травмы (посттравматический рост), и данная работа восполняет пробел в этой сфере знаний, связанных с нашим региональным контекстом. Кроме того, она отвечает потребностям общества, помогая ветеранам и их семьям реинтегрироваться в жизнь. В статье рассматриваются вопросы, касающиеся взаимосвязи между посттравматическим личностным ростом (ПТЛР) и базовыми ценностями. Обсуждаются факторы, способствующие преобразованию травмы в личностный рост. Полученные результаты показывают, что лица, участвовавшие в боевых действиях, имеют более тесные связи с духовными изменениями, повышением ценности жизни и силой личности, что свидетельствует об их личностном росте. У лиц, не участвовавших в боевых действиях, ценностная система более поляризована: некоторые ценности способствуют развитию, тогда как другие противоречат друг другу. Травматический опыт может преобразоваться в рост, если человек обладает социальной поддержкой и адаптивными механизмами. Подводя итоги данного исследования, можно сказать, что негативный опыт войны может привести к положительным изменениям в оценке ценности жизни (в соответствии с теорией посттравматического роста), опираясь на базовые ценностные ориентации. Результаты исследования могут быть использованы для разработки программ психологической поддержки, направленных на восстановление участников боевых действий и стимулирование их личностного роста.

The Relationship Between Post-Traumatic Personal Growth and Basic Value Orientations in Combat Participants

Stepanyan Lilit

Key words: *new opportunities, personal strength, re-evaluation of life's value, tradition, independence, achievement, volition, security*

Armenia has faced wartime situations in recent years (e.g., the 2020 Artsakh War and subsequent periodic combat operations), increasing the importance of studying post-traumatic disorders and their coping mechanisms. In modern psychology, there is a growing interest in the positive outcomes of trauma, known as Post-Traumatic Growth (PTG), and this study fills a knowledge gap related to our regional context. Additionally, it addresses societal needs by aiding veterans and their families in reintegrating into civilian life. This article examines the connections between PTG and basic value orientations, exploring the factors that transform trauma into personal growth. The findings indicate that individuals who participated in combat exhibit stronger associations with spiritual changes, heightened appreciation of life's value, and personal strength, reflecting their personal growth. In contrast, non-participants display a more polarized value system: some values foster development, while others conflict with each other. Summarizing the study, it can be concluded that the negative experiences of war can result in positive transformations, particularly in the re-evaluation of life's value (consistent with PTG theory), relying on basic value orientations. The study's results can be applied to develop psychological support programs aimed at the rehabilitation of combat participants and the promotion of their personal growth.

Ներկայացվել է	24. 03. 2025 թ.
Գրախոսվել է	14. 04. 2025 թ.
Հնդուհվել է տպագրության	26. 11. 2025 թ.

ԵՐԱՃՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

МУЗЫКОВЕДЕНИЕ

MUSIC STUDIES

«Սուլֆեջո» առարկայի դասավանդման խնդիրները և նպատակները մեղ (մանկական երաժշտական դպրոց)-ի մանկավարժական պրակտիկայի ժամանակ

Պապանյան Նելլի

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-272>

Հանգուցային բառեր. ինտոնացիա, երաժշտական լսողություն, հիշողություն, լադատոնայնություն, մետրառիթմ, ինտերվալ, ակկորդ, կլաստեր

Ներածություն

Մանկական երաժշտական դպրոցում Սուլֆեջոն առաջին սիստեմատիկ դասընթացն է երաժշտատեսական առարկաների շարքում, որը աշակերտներին տալիս է կայուն հիմք հետագա երաժշտական զարգացման համար: Սուլֆեջոն գործնական դասընթաց է, որի խնդիրն է սովորողների մոտ ձևավորել գործնական հմտություններ՝ երգեցողություն նոտաներով, թերթից ընթերցում, երաժշտական թելադրություն, լսողական վերլուծություն: Առարկայի կարևոր նպատակներից է համակարգված գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը երաժշտության արտահայտչական համակարգի ընկալման և գործնական կիրառման համար: Մանկավարժի հիմնական խնդիրն է սովորողների երաժշտական ընդունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումն ու դաստիարակումը, գեղեցիկի և հնչյունային աշխարհի նպատակաուղղված հույզային ընկալումը:

Այս հոդվածի նպատակն է օգնել երիտասարդ մանկավարժներին սուլֆեջոյի դասերին մոտենալ ստեղծագործաբար՝ կիրառելով նորագույն մեթոդներ և ուսուցողական տարբեր հնարներ, որոնք դեռևս այդքան էլ լուսաբանված չեն երաժշտամեթոդական գրականության մեջ:

Հիմնական մասը

Շփումը գեղեցիկի հետ զուգակցվում է մարդու հոգևոր ներաշխարհի, իդեալների և համամարդկային արժեքների իմաստավորման հետ: Այդ պատճառով երաժշտական դասերն իրենց նշանակությամբ համընդհանուր գեղագիտական զարգացման կարևորագույն մասն են կազմում: Երաժշտական արվեստի էությունը և ստեղծագործությունների գեղարվեստական իմաստավորումը, արժևորումը տեղի է ունենում երաժշտական կրթության բոլոր օղակներում և բոլոր դասերի ժամանակ: «Սուլֆեջո» առարկայի դասընթացը նպատակաուղղված է երաժշտական լսողության և ավելի լայն իմաստով երաժշտական գիտակցության բոլոր բաղադրիչ-կողմերի համընթաց կոմպլեքսային զարգացման խնդիրն իրագործելուն: Այդ բոլոր կողմերի համակցումը և փոխլրացումը՝ որպես զուգահեռ տարվող մանկավարժական մեթոդական աշխատանք, հիմնարար գերխնդիր է դասավանդման պրոցեսում: Այդ համակցված խնդիրների հանգույցի մեջ կարելի է առանձնացնել ինտոնացիոն լսողության, մետրառիթմի զգացողության, երաժշտական հիշողության, լադայի վերլուծության, ճաշակի, գեղարվեստական-գեղագիտական կողմերը զարգացնելու մեթոդական հնարները: Անկասկած, ինտոնացիոն լսողության դաստիարակությունը ամենից առաջնայինն է իր մեջ ներառված բոլոր մեթոդական միջոցների և ձևերի ամենաբազմազան կիրառմամբ:

Քանի որ ինտոնացիոն լսողության դաստիարակությունը բաժանվում է երկու ինքնուրույն պլանի (առաջինը կարելի է բնութագրել որպես ինստրուկտիվ-նախապատրաստական, որի ենթամասերն են կազմում ինտոնացիոն վարժանքները, կոնկրետացված թեստերը,

երկրորդը կարելի է բնութագրել որպես պրակտիկ-նպատակային, որի ենթամասերն են թերթից ընթերցումը, երաժշտական թելադրության ունկնդրումը և գրառումը, ապա սկսենք նրանց մեթոդաբանության պարզաբանումը փոկալ-ինտոնացիոն կարողությունների զարգացման խնդիրներից: Մեդ-ի «Սոլֆեջո» առարկայի հիմնական մեթոդական խնդիրն է I-ից մինչև III դասարանը լադատոնայնական կառույցի համակարգման օրինաչափությունների լսողական յուրացումը և իմաստավորումը: Այն պետք է գիտակցվի և ընկալվի որպես հիմնականում դիատոնիկ մաժոր և մինոր լադերի կառույց-բլոկ (կարկաս): Նպատակահարմար է դա բացատրել որպես լադի կմախքը (արմատուրա-կարկասը) կազմավորող սյուների (երեք աստիճանների) փոխհարաբերակցում (դրանք են ներքևի տոնիկան որպես I աստիճան, V դոմինանտային աստիճանը, որը բաժանում է լադը 2 տետրախորդների և վերևի տոնիկան, VIII կամ I աստիճանը որպես օկտավային ամբողջականացում): Իսկ I և V աստիճանների միջև հանդես եկող III աստիճանը դիատրիկում է որպես լադի տեսակը տարբերակող, զանազանող աստիճան: Լադի անկայուն աստիճանների հարաբերակցությունը տոնիկայի հետ իմաստավորված կապի բացատրելուց հետո կարելի է բացատրել նաև V աստիճանից ցած գտնվող անկյուն աստիճանների (II-ը, IV-ը) վարընթաց լուծումները և V աստիճանից վեր գտնվող անկյուն աստիճանների (VI-ը, VII-ը) վերընթաց լուծումները: Սակայն բացատրություններով սահմանափակվելն այնքան էլ նպաստավոր չէ ցածր դասարաններում, ուստի խաղերգային տարրերի կիրառումը գրեթե անհրաժեշտ է I-ից մինչև III դասարանների աշակերտների հետ մեթոդական աշխատանքի պրակտիկայում [1]:

20-րդ դարի բոլոր առաջատար դպրոցների «Սոլֆեջո» առարկայի խաղերգային զինանոցից են նախընտրում եմ ենթադրյալ կամ հիպոտետիկ տնակի մոդելը: Այդ մոդելի մեջ լադի I աստիճանը տնակի հիմքն է, իսկ III աստիճանը շքամուտքն է (որը նաև մաժոր և մինոր լադերը տարբերակող աստիճանն է): Մյուս բոլոր աստիճանները տան տարբեր հարկերն են: Քանի որ ուսուցիչը սովորեցնում է աշակերտներին լավ և արագ կողմնորոշվել այդ տնակի մեջ, ապա մաժոր և մինոր լադերի կառուցվածքին համապատասխան հարևան աստիճանների ամբողջատոնային և կիսատոնային հարաբերակցումը լավ է նպաստում աստիճանների տոնային հարաբերությունները լսողությամբ յուրացնելու համար:

Այդ մոդելի մեջ լավ է իմաստավորվում նաև աստիճանների վերընթաց և վարընթաց կարգը հիմքից մինչև տանիքը և հակառակը: Լադի VIII աստիճանը իբրև տանիքը (I աստիճանի օկտավային կրկնությունը վերևում) լավ է ամբողջացնում լադը և որպես տանիք կարծես միախլուսում-շաղկապում է տեսողական-ենթիմաստային և լսողական տպավորությունները լադի ամբողջականության վերաբերյալ: Մեթոդական իմաստով լադի կայուն և անկայուն աստիճանների գիտակցման և լսողությամբ յուրացնելու ունակությունները «տեղ հասցնելու» ավանդական միտումը յուրաքանչյուր կայուն աստիճանի շուրջը «պտտվող» անկյուն աստիճանների լուծման խորը, համակողմանի ըմբռնումն է: Զցանկանալով կրկնել ավանդական մեթոդաբանության մեջ վաղուց ի վեր արմատավորված աշխատանքի ձևերը և սկզբունքները, ես ուզում եմ մատնանշել հետևյալը, որ լադատոնայնության ըմբռնումը ժամանակակից երաժշտության դիրքերից այսօր պարտադրում է որոշ իմաստով մոտենալ այն դասավանդելու խնդիրներին: Ելնելով այդ դիրքերից՝ ժամանակակից լադատոնայնությունը ըմբռնելու, լսողության դաստիարակության խնդիրները որոշ իմաստով այլ են: Իմ կարծիքով, այսօր այլևս հնարավոր չէ բացառել 20-րդ դարի երաժշտության յուրացումը, իմաստավորումը և դրա հետ կապված լսողության զարգացման նոր մեթոդական-մանկավարժական սկզբունքների արմատավորման պրոբլեմը: Այդ պրոբլեմի ամենադժվար կողմը կապվում է ժամանակակից երաժշտության մեջ գերիշխող այսպես կոչված դիտոնանտային տոնայնության յուրացումը ապահովող նոր մեթոդիկայի ստեղծագործական մշակման հետ: Հրատապ եմ համարում այն հարցը, թե ինչպես, օրինակ, սեկունդա ինտերվալը կարող է յուրացվել

միանգամից երկու հարևան աստիճանների միաժամանակյա հնչմամբ: Այսպես. դասատուն դաշնամուրի վրա նվագում է լադի I աստիճանը, իսկ աշակերտը պետք է սովորի նրա հետ միասին երգել լադի II աստիճանը: Դա լավ գիտակցելու համար առարկան դասավադող դասատուն, դիմելով XX-XXI դարերի երաժշտությունից քաղված օրինակներին, պետք է մատչելի և պատկերավոր ձևով բացատրի իր սաներին, որ սուր կամ դիստոնատային հարաբերակցումը հարևան աստիճանների միջև մի դեպքում կարող է հանդես գալ իբրև անկայունության պարպում կամ լուծում (երբ անկայուն աստիճանը լուծվում է հարևան կայուն աստիճանի մեջ), մյուս դեպքում անկայուն սեկունդաների հանդես գալը կարող է լինել որպես ժամանակակից երաժշտության մեջ հաճախ հանդես եկող մեղեդային գծի շերտավորված հաստացում (կլաստեր): Ես կարծում եմ, որ շատ ճկուն ձևով պետք է կարողանալ զուգակցել դասական երաժշտության լադահարմոնիկ ֆունկցիոնալ ակորդիկայի մասնակցությամբ տարբեր (ծրագրով նախատեսված) տոնայնությունների զամանների երգեցողությունը, տարբեր աստիճանների դասական լուծումը, անսովոր կլաստերային նվագակցությամբ երգելու հետ [2]:

Մյուս անկայուն աստիճանի՝ սեպտիմայի յուրացումը կարելի է շատ մատչելի ձևով բացատրել նրանով, որ տոնիկական ակորդը նորագույն երաժշտության մեջ ոչ բոլոր դեպքերում լադի կայուն աստիճանների միաժամանակյա համակցումն է: Տոնիկական ակորդի մեջ սեպտիմայի առկայությունը օրինաչափ է ժամանակակից երաժշտության համար, ուստի I և VII աստիճանների միաժամանակյա «վերադրումը» նույնպես հարկավոր է շուտ մշակել արդեն ցածր դասարանների աշակերտների համար:

Այսպիսով, կլաստերների ընկալման և նրանց վերարտադրման տեխնոլոգիան 1-ից 3-րդ դասարանի աշակերտների համար պետք է մեթոդական իմաստով լավ մշակել: Ես սովորաբար աշխատում եմ, որքան հնարավոր է, շատ դիմել խաղերգային տարրերի գործնական կիրառմանը: Դրա պատճառով մեր փոխաբերական իմաստով տոնայնական մոդել-տնակը կարող է նաև կուբիկ-ռուբիկի նման ծալվել, նոր կառուցվածքային տեսք ստանալ, խոյանալ դեպի վեր կամ հորիզոնական ձևով «փովել» հատակին (այս դեպքում, իհարկե, տնակի բոլոր հարկաբաժինները տեղադրվում են իրար կողքի, նույն հարթության վրա, և դա պատկերավոր իմաստով հենց նմանվում է կլաստերին): Բացի դրանից՝ այդ տնակի մեջ կարող ենք նրա բոլոր հարկերը բարձրանալ և իջնել կամ ոտքով, կամ վերելակով և կամ միացնել I հարկում տեղադրված մոնիտորը և տեսնել բոլոր մյուս հարկերի հեռուստապատկերը: Երբ մենք ոտքով ենք բարձրանում կամ իջնում, դա աստիճանական շարժումն է, վերելակի միջոցով մենք արագընթաց ձևով կարող ենք թռչել տարբեր, հեռու գտնվող աստիճանների վրա: Մոնիտորային խցիկը պահակի առանձնասենյակն է, որտեղից կարելի է լինել միանգամից բոլոր հարկերում:

Մյուս, փոխաբերական իմաստով, ես կլաստերը համեմատում եմ լավ մարզված կրկեսային ակրոբատի հետ, որն իր «շալակն է առել» մյուս բոլոր աստիճանները և ազատ քայլում է արենայում: Անկասկած, մեղ-ի աշակերտների մոտ ժամանակակից լսողությունը կազմավորելու համար հարկավոր է, որքան հնարավոր է, շատ նվազել XX և XXI դարերի երաժշտությունը: Ես առանձնացրել եմ Ս. Պրոկոֆևի «Ալբոմ պատանեկության համար» դաշնամուրային պիեսների ժողովածուն: Սակայն դրա հետ միասին նվագում եմ պիեսներ Ա. Խաչատրյանի «Մանկական ալբոմ» (1-ին և 2-րդ տետր) շարքից, Բ. Բարտոկի «Միկրոկոսմոս» ժողովածուների շարքից, Կ. Օրֆի «Schurlwerk» շարքից, Պ. Հինդեմիտի, Դ. Միյոյի, Հ. Էյսլերի, Ֆ. Պուլենկի, Ի. Մորավիսկու և այլ կոմպոզիտորների գործերը: Հայ երաժշտության մեջ ես նախընտրում եմ Սո. Նադդյանի մանկական պիեսները, սակայն հարկ եմ համարում ցուցադրել նաև Ա. Բաբաջանյանի «6 պատկեր» դաշնամուրային ցիկլի պիեսները, Ա. Հարությունյանի, Է. Բաղդասարյանի, Ս. Մանսուրյանի և ավելի երիտասարդ սերնդի կոմ-

պոզիտորների երկերը: Բոլոր դեպքերում չափազանց կարևոր են համարում լադա-ինտոնացիոն վարժությունները երգել և՛ solo, և՛ միաժամանակ սովորել երգել ու նվագել: Դիսոնանտայնության շեմը հաղթահարելու համար լավ կլինեք, երբ ուսուցիչը, նվագելով տոնիկան առանձին կամ տոնիկական կվինտան, սովորեցնեք աշակերտներին երգել անկայուն աստիճանները: IV և V դասարանների աշակերտների համար անհրաժեշտ են համարում այն վարժանքների հաճախակի կիրառումը, երբ որևէ տոնայնության տոնիկական կվինտային սահմանում բազմակի անգամներ կրկնվող վերընթաց և վարընթաց գամմայակերպ աստիճանական շարժումը զուգակցվում է տարբեր աստիճաններից սկսվող նույնանման հաջորդականության երգեցողությամբ: Այսպիսով, միաժամանակ նվագելը ու երգելը լավ է ներագրում ժամանակակից լադագագողության զարգացման վրա: Գուցե V դասարանի աշակերտների մոտ կարող է ստացվել նաև լադատոնայնական պրոեկցիան, այսինքն՝ տվյալ տոնայնության գամման կարողանալ երկձայն կամ եռաձայն երգել՝ օգտագործելով այդ տոնայնության աստիճանների գամմա-պրոեկցիան՝ սկսած միաժամանակ I, IV, V աստիճաններից: Բոլոր դեպքերում աշակերտների դիսոնանտայնության զգացողությունը հարկավոր է կարողանալ կոփել: Նույնը կարելի է փորձել նաև V և VI դասարանների աշակերտների հետ, երբ ցած հնչող տոնայնությունները (G-dur g-moll, As-dur, A-dur, a-moll, B-dur) միաժամանակ երգվեն (կամ երգվեն և նվագվեն) սկսած I, IV, VII աստիճաններից: Նույնանման ձևով կարելի է երգել սեկվենցիոն բնույթի ինտոնացիոն վարժանքներ՝ օգտագործելով կլաստերային «վերադրումները» [3]:

Միգուցե ես չափից ավելի եմ «շահագործում» ժամանակակից լսողության համար այդչափ անհրաժեշտ կլաստերային ինտոնացիոն փորձի դաստիարակությունը, սակայն համոզված եմ, որ դրանից ավելի էֆեկտիվ մեթոդական աշխատանքի սկզբունք և միջոցների ամբողջականացված համակարգ պարզապես չի կարող գոյություն ունենալ: Մինչև VII դասարանը աշակերտները պետք է լավ իմանան, թե ինչ բան է տոնոիկան և գծայնությունը (լինեալությունը): VI և հատկապես VII դասարանի աշակերտները պետք է պատկերացում ունենան ընդլայնված տոնայնության մասին: Դա նշանակում է, որ աստիճանների քանակը չի կարող լինել միայն 7-ը:

Այս բոլորի կապակցությամբ ցանկանում եմ հատկապես շեշտել այն հանգամանքը, որ դասական լադագագողության և ժամանակակից լադագագողության զուգահեռ դաստիարակությունը պետք է իրագործել չափազանց ճկուն՝ փոխլրացնելով մեկը մյուսով: Առավելապես անհրաժեշտ է, որ մեղ-ը ավարտած աշակերտը ստանա լադատոնայնության զարգացման «ուրվագիծ-համայնապատկերը», այսինքն՝ ամենաընդհանրական ձևով հասկանա, թե ինչպես է զարգացել լադատոնայնությունը:

Հաջորդ հարցը, որ ես կուզենայի լուսաբանել, կապված է թերթից երգելու (ընթերցելու) մշակույթի ճիշտ կազմավորման և զարգացման հետ: Այդ հարցում, ըստ իս, պետք է հետևել ընթերցվող համարների գեղարվեստական արտահայտչականության և բովանդակությունից եկող բնույթի և տրամադրությունների արտահայտման կարողությունների աստիճանական զարգացմանը: Այդ իմաստով սովորած համարը պետք է փորձել կատարել՝ արտահայտելով դինամիկայի, ֆրազավորման յուրահատուկ առանձնահատկությունները: Այստեղ խնդիրն այն է, որ երաժշտական նյութի գեղարվեստական ընկալումը պետք է զարգացնել և խորացնել ոչ միայն մասնագիտական դասերի ժամանակ, այլ նաև «Մոլֆեջո» առարկայի դասերի ընթացքում: Մյուս կողմից անհրաժեշտ է աշակերտների մոտ զարգացնել նյութի մտապահման կարողությունները, տալ նրանց որոշակի ռացիոնալ ցուցումներ, թե ինչպես նրանք կարող են մտապահել սովորվող համարը:

Ինչպե՞ս է հարկավոր առանձնացնել հիմնականը երկրորդականից, ինչի՞նչ վրա է պետք սկզբնապես բնեռել ուշադրությունը՝ տրամաբանորեն վերլուծելով ուսումնասիրվող հա-

մարբ: Դասատուի միջոցով աշակերտը սովորում է անգիր անելու ժամանակ հաշվի առնել կառուցվածքը, կրկնվող հատվածները, սեկվենցիաները, անկայունության վերածը, բնորոշ ինտերվալների լուծումները և այլն: Մետրաթիթմական պարբերականության և կառուցվածքային քառակուսայնության մասին ստացված գիտելիքները նույնպես շատ են նպաստում լավ և արագ մտապահելու խնդիրը հեշտացնելու համար: Այդ հարցի հետ սերտորեն առնչվում է երաժշտական մտածողության զարգացմանը մեծապես նպաստող ունկնդրվող նյութի տրամաբանական վերլուծությունը: Խաղերգային, թեստային-հանելուկային բնույթի ամենաբազմազան առաջադրանքների կիրառումը շատ կարևոր է: Սակայն այսօր ավելի առաջնահերթ խնդիր է երաժշտական նյութի ամբողջական զարգացման օրինաչափությունների և սկզբունքների իմաստավորումը: Անհրաժեշտ է մշտապես ուղղորդել աշակերտի մտայնական ընկալման մեջ ամրագրելու սկզբնավորում-զարգացում-ամփոփում (ընդամենաբացում) եռափուլ ամբողջական զարգացման գաղափարը: Դարձյալ խաղերգային-փոխաբերական իմաստով դա հիմք-սյուն-(խոյակ)-տանիք ամբողջական և ամբողջացնող տրամաբանության իմաստավորումն է: Դա ավելի հիմնարար ձևով աշակերտի գիտակցության մեջ ամրացնելու համար ուսուցիչը պետք է կանոնավոր ձևով բոլոր սովորած և թերթից ընթերցվող համարներում առանձնացնի էքսպոզիցիան կամ թեման՝ անվանելով այն initio: Աշակերտը նույնպես կրկնալի ուսուցչից զանազանել այն, ինչ սկզբնապես է շարադրվում նրանից, ինչը հետագայում դրա հիմքի վրա է զարգանում (կամ շարունակվում) [1]:

Հաջորդ հարցը, որ ես կուզենայի առաջ քաշել, ազգային լադահամակարգի մանրամասն և խորը ուսումնասիրությունն է մեղ-ի «Մուլֆեջո» առարկայի սահմաններում: Այդ կապակցությամբ պետք է ասել, որ ազգային երաժշտության լադահամակարգը /այսպես կոչված ութնաձայնը/ պետք է հիմք դառնա, ուսումնասիրվի և պարզաբանվի մեղ-ի «Մուլֆեջո» առարկայի նոր ծրագրում: Դեռևս պատմական միջնադարի ժամանակաշրջանում ազգային երաժշտական միտքը մշակել և ստուգաբանել է ազգային երաժշտության լադերի կառույցները և նրանց անվանումները: Ինչպես հայտնի է, այդ լադերը կոչվում են ձայն, կողմ և դարձվածք /օրինակ Ա-ձայն, Ա-կողմ, Ա-ձայնի դարձված/: Այսօր մենք ամենուրեք առնչվում ենք այն տխուր փաստի հետ, որ ազգային լադահամակարգի մեջ մոտոդ մի քանի ավանդական լադեր վերանվանվել են և սկսել են կոչվել օտարամուտ /մասնավորապես թուրքական կամ արաբական/ անուններով: Եթե դարավոր ազգային երաժշտական մշակույթը մեզ համար թանկ է, ապա մենք, տոգորված լինելով ազգային նախանձախնդրությամբ, կոչված ենք մոռացության չմատնելու ավանդական անցյալը երաժշտարվեստի մեջ: Դեռ ավելին, մենք պարտավոր ենք անվանել մեր ազգային լադերն այնպես, ինչպես դրանք անվանել է ժամանակին Մեծն Գոմփուտար: Արդյոք «Մուլֆեջո» առարկայի դասավանդման փորձը կարող է հետագայում ազատագրվել բոլոր օտարամուտ շղարշներից և մեծապես կնպաստի երաժշտության մեջ մեր ազգային նեցուկի պահպանմանը: Գուցե ուրույն ազգայինի կորսման մտավախությունը մեզ կստիպի առանցքային նշանակություն տալ «Մուլֆեջո» առարկայի դասավանդման սկզբունքներին՝ փորձելով շաղկապել հին ավանդականը այսօր արմատավորված նորի և նորագույնի հետ:

Նախապես ներդրություն են խնդրում այն բանի համար, որ չեն կարող մեջբերումներ կատարել որևէ հեղինակի գիտամեթոդական աշխատությունից: Պատճառն այն է, որ ես չեմ հանդիպել ինձ հետաքրքրող հարցերի պատասխանները (օրինակ, լադության կլաստերային զարգացման մեթոդիկայի վերաբերյալ չեմ կարդացել որևէ հեղինակի մոտ):

Մետրաթիթմի զգացողության զարգացումը իր մեթոդական խնդիրների իրագործման իմաստով պահանջում է այսօր վերանայել, վերակառուցել պլանային աշխատանքի բնույթն ու սկզբունքները: Չափազանց գործածական և տարածված էր երաժշտական ստեղծագործությունների ժամանակի ընթացքը համեմատել փոխաբերական իմաստով զարկերակի

պարբերական բաբախումների հետ: Սակայն այդ համեմատությունը ավելի շուտ հարաբերական է, բայց ոչ բացարձակ: Ավելի ճիշտ է երաժշտությունը համեմատել տարբեր և որոշակի բարձրություն ունեցող ձայնաշարվածքի ազատ պլաստիկ պարի հետ: Մյուս իմաստով երաժշտությունը կարելի է համեմատել բարձունքում ազատ ճախրող թռչունի հետ: Գուցե դա է պատճառը, որ այսօր չափազանց կարևոր է դպրոցի աշակերտների մոտ սերմանել երաժշտական ժամանակի ռելատիվ ընկալումը: Այդ կարելի է արմատավորել այն բանից հետո, երբ թույլ և ուժեղ մասերի հավասարաչափ զարկերակը գիտակցվի իբրև շարժման ընդհանրական սխեմա: Ուստի պետք է ստույգ ձևով բացատրել, որ տակտերի ուժեղ մասերը չունեն նույնանման ծանրակշռությային շեշտվածություն: Ի՞նչ է դրանից եզրահանգվում: Նախ աշակերտը սովորում է և ընտելանում կոնկրետ ընկալել այն, որ ուժեղ մասերի տարբեր աստիճանի շեշտվածությունը ենթարկվում է ոչ թե զարկերակային մեխանիկայի օրենքներին, այլ երաժշտական շարժման որոշակի ենթիմաստներից բխող էներգետիկայի օրենքներին:

Իմ առաջարկը այն է, որ մետրառիթմիկ կառույցների տարբերակումը շատ կարևոր է տարբեր մետրերի ճկուն անցումները նրբորեն զգալու և վերարտադրելու համար: Օրինակ, ազատ, իմպրովիզացիոն առաջադրանքներից մեկը կարող է լինել այն, որ 2/4 մետրով ընթացող ինտոնացիոն կառույցը հարկավոր է տեղադրել 3/4 մետրի մեջ՝ կիրառելով 1/4 տոնություն ունեցող պատվանները: Որպես տնային առաջադրանք այդ հանձնարարականը պետք է կատարվի մի քանի տարբերակներով: Ստեղծագործական իմպրովիզացիայի մեկ այլ օրինակ կարող է լինել այն հանձնարարությունը, երբ որևէ վարժության նոտագրված օրինակը տրվում է աշակերտին այնպես, որ բոլոր տակտերում չի գրառված դիմական շարժումը: Երաժշտական շարժման բնույթի ճիշտ կռահումը և լավ զգացողությունը պետք է երևա մի քանի իմաստներով: Նախ սեկվենցիոն բնույթի շարժում ունեցող տակտերում աշակերտը պետք է կռահի և պահպանի ելակետային դիմապատկերը: Կադանսային եզրափակման նշանակություն ունեցող տակտերում (երբ գրված են քիչ քանակությամբ հնչյուններ) աշակերտը պետք է տեղադրի խոշոր տոնությունները: Չմոռանա՞ք նշել, որ դիմավորում չունեցող տակտերում գրառված է միայն հնչյունների բարձրությունը: Իմ կարծիքով 4-րդ և 5-րդ դասարանների աշակերտներին արդեն կարելի է հանձնարարել այդպիսի առաջադրանքների կատարումը:

Մի քանի խոսք ուզում եմ ասել աշակերտի ունակությունների և կատարած աշխատանքի գնահատման սկզբունքի մասին: Իմ կարծիքով ավելի նպատակահարմար է կիրառել 20-բալլային գնահատման սանդղակը: Բալլային չափանիշների կատեգորիաները տրվում են ըստ 4 հինգբալլյան սահմանումների: Յուրաքանչյուր հինգբալլյան ենթասանդղակը ներառում է վատ, բավարար, լավ, շատ լավ, գերազանց չափանիշները: Իսկ բալլային նումինացիաները չորսն են՝

1. երաժշտականություն,
2. երաժշտական հիշողություն,
3. երաժշտական մտածողություն,
4. անալիտիկ վերլուծություն:

Այսպիսով, ավարտելով տվյալ գիտամեթոդական ուսումնասիրությունը, շեշտադրում են այն փաստը, որ ոճական ճաշակի զարգացումը, ինտոնացիոն և մետրառիթմիկ լսողության և հիշողության զարգացումը համապարփակ գործընթաց է, որը պետք է համակցված կիրառվի ոչ միայն «Մոլֆեջո» առարկայի դասերին, այլև երգչախմբի, անհատական պարապմունքների (դաշնամուրի, ջութակի, քանոնի, երգեցողության և այլ մասնագիտական ուղղվածության դասարաններում) ժամանակ:

Գրականություն

1. Алексеев Э. Проблемы формирования лада. Москва, 1976.
2. Бочкарев О. Некоторые виды диатонических ладоконструкций в современной музыке // Музыка и современность. Москва: Вып. 7, 1971.
3. Рети А. Ладотональность в современной музыке. Москва, 1986.

Цели и задачи преподавания предмета «Сольфеджо» во время педагогической практики в детских музыкальных школах

Папанян Нелли

Резюме

Ключевые слова: интонация, музыкальный слух, музыкальная память, метроритм, ладотональность, интервал, аккорд, кластер

В статье рассматриваются вопросы преподавания сольфеджио в детской музыкальной школе. Здесь представлены комплексные подходы и методы развития интонационного восприятия, чувства метроритма, музыкальной памяти, слухового воспроизведения услышанного, а также формирование эстетического вкуса и художественного мышления. Особое внимание уделено развитию у школьников чувства национальной ладосистемы, знание ладовой структуры.

Воспитание интонационного слуха можно условно разделить на два кластера:

1. инструктивно-подготовительный – включающий интонационные упражнения и тестирование;
2. практико-целевой – включающий чтение с листа, музыкальный диктант и слуховое восприятие

В статье подчеркивается важность на уроках сольфеджио опоры на национальную ладовую основу, исключая чуждую иностранную терминологию (особенно тюркоязычную). Важным компонентом сольфеджирования является также одновременное сочетание пения и игры на фортепиано. Изучение метроритма должно основываться на звуковысотном восприятии, что будет способствовать развитию релятивного временного восприятия. Для формирования ритмического чувства и навыков творческой импровизации рекомендуется использовать такты с намеренно оставленными ритмическими «пустотами». Большое воспитательное значение имеет также оценка за проделанную учеником работу. Мы предлагаем применять двадцатибалльную систему по четырем номинациям, что наиболее полно отражает успехи каждого ученика по всем показателям сольфеджио.

Goals and Objectives of Teaching “Solfeggio” During Teaching Practice in Children’s Music Schools

Papanyan Nelli

Summary

Key words: intonation, musical ear, memory, tonality, metre, interval, chord, cluster

The article considers the issues of teaching “Solfeggio” in children's music schools. It presents complex approaches and methods for developing intonation perception, a sense of metrorhythm, musical memory, auditory reproduction of what is heard, as well as the formation of aesthetic taste and artistic thinking. Particular attention is paid to the development of a sense of the national modal system in schoolchildren, knowledge of the modal structure.

The development of intonation skills can be conventionally divided into two clusters:

1. Instructional-preparatory – including intonation exercises and testing;
2. Practical-targeted – including sight-reading, musical dictation, and aural perception.

The article emphasizes the importance of relying on the national modal basis in solfeggio lessons, excluding alien foreign terminology (especially Turkic). An important component of solfeggio is also the simultaneous combination of singing and playing the piano.

The study of metrorhythm should be based on pitch perception, which will contribute to the development of relative time perception. To develop a sense of rhythm and skills in creative improvisation, it is recommended to use measures with intentionally left rhythmic “gaps.”

The assessment of the student's work is also of great educational importance. We propose using a twenty-point system in four nominations, which most fully reflects the success of each student in all solfeggio indicators.

Ներկայացվել է 06. 12. 2024 թ.

Գրախոսվել է 05. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

ФИЗКУЛЬТУРА И СПОРТ

PHYSICAL EDUCATION AND SPORTS

Աղապտիվ ֆիզիկական դաստիարակությունը՝ որպես ֆիզիկական վերականգնման և սոցիալական աղապտացիայի միջոց

*Բեմսելյան Սեդա,
Սարգսյան Հովիկ,
Արսենյան Հենրիկ*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-281>

Հանգուցային բառեր. առողջական խանգարում, ֆիզիկական վերականգնում, հարմար-վողականություն, աուտիզմ, գործառույթ, սոցիալական աջակցություն, հոգեվիճակ, շարժո-ղական ընդունակություններ

Նախաբան: Աղապտիվ ֆիզիկական դաստիարակությունը (ԱՖԴ) հաշմանդամություն և առողջական տարբեր խանգարումներ ունեցող մարդկանց ֆիզիկական վերականգնման և սոցիալական հարմարվողականության կարևոր բնագավառ է: Այն ուղղված է ֆիզիկական ակտիվության վերականգնմանը, ֆիզիկական և հոգեհուզական վիճակի բարելավմանը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանը ինտեգրելուն:

Աղապտիվ ֆիզիկական դաստիարակությունը ֆիզիկական դաստիարակության մաս-նագիտացված մոտեցում է, որն ուղղված է հաշմանդամություն ունեցող մարդկանց մոտ շարժողական հմտությունների և ֆիզիկական ակտիվության զարգացմանը: ԱՖԴ հիմնա-կան նպատակը ոչ միայն հիվանդների ֆիզիկական վիճակի և վերականգնողական վիճակի բարելավումն է, այլև նրանց սոցիալական աղապտացումը և հասարակության մեջ ինտե-գրումը:

Ժամանակակից հետազոտությունների համաձայն՝ շարժումը և ֆիզիկական ակտի-վությունը առանցքային դեր են խաղում բուժման գործընթացում՝ օգնելով վերականգնել օրգան համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունները, բարելավել կյանքի որակը և հոգեբանական հարմարվելիությունը:

ԱՖԴ-ներառում է տարբեր մեթոդներ և ծրագրեր, որոնք մշակվում են՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարդու անհատական կարիքներն ու առանձնահատկությունները, ինչը այն դարձնում է վերականգնման ունիվերսալ գործիք [2, 133]:

Ֆիզիկական վերականգնումից բացի՝ հարմարվողական ֆիզիկական կրթությունն օգնում է զարգացնելու սոցիալական հմտությունները, հաղորդակցվելը և միջանձնային հա-րաբերությունների ձևավորումը: Խմբային միջոցառումներին, սպորտային մրցաշարերին կամ ժամանցին մասնակցելը օգնում է հաշմանդամություն ունեցող մարդկանց հաղթահա-րել մեկուսացումը, ձեռք բերելու նոր ընկերներ և բարձրացնելու նրանց ինքնավստահու-թյունը:

Այսպիսով, ԱՖԴ բազմաբնույթ գործընթաց է, որն ընդգրկում է մարդու կյանքի ինչպես ֆիզիկական, բժշկականսաբանական, սոցիալական, այնպես էլ հոգեբանական բնագավառ-ները՝ նրան հնարավորություն տալով դառնալ հասարակության ակտիվ մասնակից:

Ուսումնասիրության նպատակը. Աղապտիվ ֆիզիկական դաստիարակության դասերի միջոցով բարձրացնել հաշմանդամություն ունեցող երեխաների առողջությունը, ֆիզիկական զարգացումը, բարձրացնել ինքնավստահությունը, ստեղծել առողջ միջավայր հասարակական կյանքին ինտեգրվելու համար:

Ուսումնասիրության խնդիրներն են. այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել Աղապտիվ ֆիզիկական դաստիարակությանն ուղղված գիտական և մեթոդական գրականություն,

2. ուսումնասիրել ԱՖԴ հիմնական գործառույթները՝ որպես ֆիզիկական վերականգնման և սոցիալական հարմարվողականության միջոց,

3. ուսումնասիրել «աուտիզմ»-ով ախտորոշված անձանց, ընտրել ֆիզիկական վարժությունների և մեթոդների համակարգ, որն ուղղված կլինի նրանց ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական վիճակի բարելավմանը հասարակության մեջ ինտեգրելու և ներառական միջավայր ստեղծելու համար,

4. կատարել գործնական եզրահանգումներ:

Բովանդակություն: Համաձայն ուսումնասիրությունների՝ ԱՖԴ նպատակները կարելի է առանձնացնել հետևյալ գործառույթներով.

1. **Ֆիզիկական վերականգնում** – ֆիզիկական վիճակի բարելավում, կորսված գործառույթների վերականգնում և նոր շարժողական հմտությունների զարգացում, որն օգնում է բարձրացնել ֆիզիկական ակտիվությունն ու ինքնուրույնության մակարդակը:

2. **Սոցիալական հարմարվողականություն** – օգնել հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրվելու հասարակությանը, զարգացնելու հաղորդակցման հմտությունները, ձևավորելու ինքնավստահություն և ակտիվ կյանքի դիրք:

3. **Հոգեբանական աջակցություն** – ֆիզիկական դաստիարակության միջոցով պայմանների ստեղծում սթրեսից ազատվելու, հուզական վիճակի բարելավման և կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման համար:

4. **Կյանքի որակի բարելավում** – կյանքի ընդհանուր որակի բարելավում, առողջության բարելավում, ցավից, հոգնածությունից և սթրեսից ազատում, ինչը նպաստում է հասարակության ավելի ակտիվ և լիարժեք անդամ լինելուն:

5. **Ինքնօգնության հմտությունների զարգացում.** ուսուցման հմտություններ, որոնք հնարավորություն են տալիս հաշմանդամություն ունեցող մարդկանց ավելի արդյունավետ կերպով հարմարվելու հասարակության կյանքին:

Հարմարվողական ֆիզիկական դաստիարակության սոցիալականացման գործառույթներն իրենց մեջ ընդգրկում են հետևյալը.

1. **Ներառական միջավայրի ստեղծում** – ԱՖԴ նպաստում է հատուկ կարիքներով մարդկանց համար հարմարավետ և անվտանգ տարածքի ստեղծմանը, որտեղ նրանք կարող են ֆիզիկական ակտիվությամբ զբաղվել ուրիշների հետ հավասար հիմունքներով: Սա օգնում է քանդել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպերն ու նախապաշարմունքները:

2. **Հաղորդակցման հմտությունների զարգացում** – Խմբում մարզվելը հսկայական օգուտներ է բերում շփման և փոխազդեցության առումով: Մարդիկ, ովքեր մասնակցում են համատեղ դասընթացներին և մարզական խմբերին, զարգացնում են թիմային աշխատանքի հմտություններ, բարելավում են սոցիալական կապերը և ստեղծում ընկերական հարաբերություններ:

3. **Ինքնավստահության ձևավորում** – Աղապտիվ ֆիզիկական դաստիարակության պարապմունքներին մասնակցելը օգնում է բարձրացնելու ինքնագնահատականը և ինքնավստահությունը: Նույնիսկ մարզական ամենափոքր արդյունքները կարող են հանգեցնել բավարարվածության և մոտիվացիայի:

4. **Սոցիալական հմտությունների զարգացում** – ֆիզիկական դաստիարակության միջոցով մասնակիցները զարգացնում են այնպիսի կարևոր սոցիալական հմտություններ, ինչպիսիք են համագործակցությունը, հարգանքը ուրիշների նկատմամբ, թիմում աշխատելու և իրենց գործողությունների համար պատասխանատվություն կրելու կարողությունը:

5. **Սոցիալական մեկուսացման նվազեցում** - ԱՖԴ-ն օգնում է հաշմանդամություն ունեցող մարդկանց հաղորդակարելու մեկուսացումը, ընդլայնելու իրենց սոցիալական շրջանակը և կապ հաստատելու իրենց հետաքրքրությունները կիսող մարդկանց հետ:

Ներառական միջավայրի ստեղծումը, որտեղ յուրաքանչյուրը կարող է գտնել իրեն հարմար գործունեություն, ոչ միայն բարելավում է ֆիզիկական առողջությունը, այլև նպաստում է սոցիալական արդարությանն ու հավասարությանը:

Այս առումով **ԱՖԴ**-ն կարևոր միջոց է այս գործառույթներն իրականացնելու համար [1, 527]:

Թեմային վերաբերվող գիտական, մասնագիտական գրականությունների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ աղապտիվ ֆիզիկական դաստիարակության և սպորտի կիրառումը ոչ միայն արդյունավետ է, այլ նաև կարելի է համարել ֆիզիկական վերականգնման և սոցիալական հարմարվողականության միակ մեթոդը:

Իհարկե, այս ամենը կարող է իրականություն դառնալ բանիմաց, որակավորված ուսուցիչների և օգնականների առկայությամբ: Այդ իսկ առումով ուսուցիչների շրջանում անհրաժեշտություն է զգացվում պարբերաբար կազմակերպել հատուկ դասընթացներ առողջական տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար [4, 227]:

Համաձայն ուսումնասիրությունների և վիճակագրական տվյալների՝ հասարակության մեջ տարեցտարի ավելանում է «աուտիզմ» ախտորոշված մարդկանց թիվը: Հետևաբար՝ զգալիորեն մեծանում է վերականգնողական արդյունավետ մեթոդական մշակումների և միջոցների ներդրման անհրաժեշտությունը:

Չնայած աղապտիվ ֆիզիկական դաստիարակության ակնհայտ առավելություններին (հարմարվողական ֆիզիկական դաստիարակության դասեր, վերականգնողական գործընթացներ, սոցիալական ինտեգրում, հոգեբանական վճակների հաղթահարում)՝ կան մի շարք խնդիրներ, որոնք կապված են աղապտիվ ֆիզիկական դաստիարակության կազմակերպման և վերականգնողական ծրագրերի ներդրման հետ:

Դրանք ներառում են.

- որակավորում անցած մասնագետների բացակայությունը,
- ծրագրերի անհատականացումը,
- մասնագիտացված սարքավորումների և ենթակառուցվածքների բացակայությունը,
- հասարակության կարծրատիպերն ու նախապաշարմունքները աուտիզմ ունեցող մարդկանց նկատմամբ:

Այս գործոնները խոչընդոտում են ԱՖԴ ծրագրերի լիարժեք զարգացմանը և սահմանափակում ֆիզիկական վարժությունների հասանելիությունը մարդկանց այս կատեգորիայի համար:

Այսպիսով, աղապտիվ ֆիզիկական դաստիարակությունը որպես ֆիզիկական վերականգնման և սոցիալական հարմարվողականության միջոց ուսումնասիրելու արդիականությունը պայմանավորված է աուտիզմով ախտորոշված անձանց հասարակությանը ինտեգրելու, նրանց ֆիզիկական վիճակի բարելավման և ներառական միջավայր ստեղծելու արդյունավետ մոտեցումներ գտնելու անհրաժեշտությամբ:

Այս խնդիրների լուծումը մեզանից պահանջում է համապարփակ մոտեցում՝ ներառյալ տեսական և գործնական հետազոտությունները, ինչպես նաև բժշկության, կրթության, հոգեբանության և սոցիալական գիտությունների ոլորտների մասնագետների ակտիվ փոխհամագործակցությունը:

Հետազոտության նպատակներն են.

1. ուսումնասիրել աղապտիվ ֆիզիկական դաստիարակության ազդեցությունը ֆիզիկական վերականգնման վրա, որոշել, թե ինչպես աղապտիվ ֆիզիկական դաստիարակության միջոցները կարող են բարելավել ֆիզիկական գործառույթները և առողջությունը աուտիզմ ունեցող անհատների մոտ,

2. ուսումնասիրել աղապտիվ ֆիզիկական դաստիարակության դերը սոցիալական

հարմարվողականության մեջ, վերլուծել, թե ինչպես է ադապտիվ ֆիզիկական դաստիարակության պարապմունքներին մասնակցությունն օգնում աուտիզմով տառապող մարդկանց ինտեգրվելու հասարակությանը և զարգացնելու սոցիալական հմտությունները,

3. մշակել գործնական առաջարկներ ֆիզիկական վերականգնման և սոցիալական աշխատանքի մասնագետների համար վերականգնողական ծրագրերում ադապտիվ ֆիզիկական դաստիարակության ներառման վերաբերյալ:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունները ոչ միայն կլիտրացնեն տեսական գիտելիքները ադապտիվ ֆիզիկական դաստիարակության ոլորտում, այլ նաև կձևակերպեն գործնական առաջարկություններ աուտիզմով մարդկանց կյանքի որակի բարելավման համար [3, 234]:

Ֆիզիկական վերականգնման ուղղված վարժությունների ցանկն իր մեջ ներառում է այնպիսի մարմնամարզական կիրառական գործողություններ, ինչպիսիք են.

- քայլերի, վազերի, ցատկերի տեսակներով առանձին շարժումներն ու դրանցով կազմված համալիրները, կոորդինացիոն բնույթի և հավասարակշռության ուղղված վարժությունները,
- կեցվածքի շտկման հատուկ զարգացնող վարժություններ՝ վերին վերջույթների, մեջքի և որովայնի, ստորին վերջույթների մկանախմբերի զարգացման համար: Հարկ է նշել, որ հատուկ ընտրված զարգացնող վարժություններն անհրաժեշտ է անցկացնել կանգնած, նստած, պառկած կեցվածքային դրություններով՝ միաժամանակ ձեռքերի և ստորին վերջույթների տարածական, զսպանակաձև, պտուտային շարժումներով,
- շարժուն խաղեր՝ կազմված թենիսի, բասկետբոլի, ֆուտբոլի տարրերից, ինչպես նաև խաղային էստաֆետներից,
- խմբային զբոսանքներից և էքսկուրսիաներից,
- շարժողական ընդունակությունների համալիր մշակումներ՝ տարիքին և սեռին համապատասխան:

Հիմնականում կիրառվում են ֆիզիկական դաստիարակության մեջ օգտագործվող հիմնական ***մեթոդները***.

1. Անհատական մոտեցում.

- յուրաքանչյուր անձի գործառնությանն հնարավորությունների գնահատում,
- անհատական վերապատրաստման ծրագրերի մշակում՝ հաշվի առնելով առողջական բնութագրերը, ֆիզիկական պատրաստվածությունը և հետաքրքրությունները:

2. Մասնագիտացված վարժությունների սիստեմատիկ կատարումներ. օգտագործելով հատուկ մկանային խմբերի համար նախատեսված վարժություններ, որոնք կարող են հարմարեցվել աուտիզմով տառապող մարդկանց համար:

3. Խաղային և մրցակցային մեթոդներ.

- մոտիվացիայի բարձրացման համար խաղի տարրերի ներմուծում մարզման գործընթացում,
- անհատական սպորտային մրցումների կազմակերպում, որը թույլ է տալիս մասնակիցներին զգալ մրցակցության ոգին ապահով և աջակցող մթնոլորտում:

4. Խմբային դասեր՝ օգտագործելով խմբային տեխնիկա՝ մասնակիցների մեջ աջակցություն և մոտիվացիա ստեղծելու համար: Փոքր խմբերով դասընթացների անցկացում յուրաքանչյուր մասնակցի նկատմամբ ավելի ուշադիր մոտեցման համար:

5. Օժանդակ տեխնոլոգիաների կիրառում.

- ֆիզիկական գործունեությանը մասնակցելու համար հարմարեցված սարքավորումների օգտագործումը,

- SS տեխնոլոգիաների ներդրում առաջընթացի մոնիտորինգի և ծրագրերի հարմարեցման համար:

6. Հոգեբանական աջակցություն.

- ինքնագնահատման և ինքնակարգավորման մեթոդների ուսուցում.

- հոգեբանների և սոցիալական աշխատողների ներգրավում մասնակիցների հուզական վիճակի հետ աշխատելիս.

7. Ինտեգրում վերականգնման այլ տեսակների հետ: Համագործակցություն բժիշկների, ֆիզիկական թերապևտների, լոգոպեդների և այլ մասնագետների հետ՝ վերականգնողական համալիր մոտեցում ապահովելու համար:

8. Մեմինարներ և վարպետության դասեր.

- ՀՖՖ-ի հնարավորությունների և առավելությունների մասին իրազեկվածության բարձրացման նպատակով կրթական միջոցառումների անցկացում,
- ընտանիքների և խնամակալների ուսուցում աուտիզմով մարդկանց աջակցելու և աշխատելու մեթոդների վերաբերյալ:

9. Արդյունավետության գնահատում: Առաջընթացի կանոնավոր ախտորոշում և անհատական ծրագրերի ճշգրտում առավելագույն արդյունավետության համար:

Այս մեթոդների կիրառումը թույլ է տալիս համապարփակ մոտեցում ցուցաբերել ֆիզիկական վերականգնման և սոցիալական ադապտացմանը, որն իր հերթին նպաստում է աուտիզմով մարդկանց կյանքի որակի բարելավմանը: Հարմարվողական ֆիզիկական դաստիարակության ուսումնասիրությունը որպես ֆիզիկական վերականգնման և սոցիալական հարմարվողականության միջոց պահանջում է հետազոտական տարբեր մեթոդների կիրառում [5, 27]:

ԱՐԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԱՊՏԱՑԻԱՑԻ ՄԻՋՈՑ

Ֆիզիկական վերականգնում

ԱՖԴ-ն օգնում է վերականգնելու ֆիզիկական գործառնությունները

Բարելավում է կոորդինացիոն, ուժային, ճկունային, դիմացկունային ընդունակությունները:

Հատուկ մշակված վարժությունների կիրառումը կարող է բավարարել անհատական պահանջմունքները:

Սոցիալական հարմարվելիություն

ԱՖԴ պարապմունքները նպաստում են սոցիալական ինտեգրմանը, մեծացնում են շփման հնարավորությունը, ձեռք է բերում ընկերներ, մեծանում է ինքնավստահությունը:

Սոցիալական ակտիվությունը և սպորտային խմբակներին կանոնավոր մասնակցությունը նպաստում է հասարակության մեջ ինտեգրվելու ձևավորմանը:

Խնդրի լուծման նպատակով անցկացվեցին փորձարարական ուսումնասիրություններ՝ շարժողական ընդունակությունների բացահայտման և գնահատման նպատակով:

Ուսումնասիրություններն անցկացվեցին 2025 թ. փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում՝ Վանաձորի Ա. Ազարյանի անվ. «Կենտրոն» համալիր մրգադպրոց հաճախող, տարբեր խմբակներում ընդգրկված 8-10 տարեկան 8-ական երեխաների մասնակցությամբ (5 պատանի, 3 աղջիկ՝ հիմնական խմբերից և աուտիզմ սպեկտրով), որոնք չունեին մարզական որակավորումներ:

Ուսումնասիրություններն անցկացվեցին դաստակային ուժի, մեկ ոտքին հավասարակշռության պահպանման, ստատիկ դիմացկունության ընդունակությունները որոշելու համար և արդյունքները համեմատվեցին հասակակից, հիմնական խմբում ընդգրկված երեխաների ձևավորած արդյունքների հետ (տե՛ս աղյուսակը):

Համեմատական աղյուսակ

Ցուցանիշներ	Հիմնական խումբ M	Աուտիկ սպեկտոր M	Անփոփոխ միջին տվյալներ M
Դաստակային ուժ (կգ) աջ/ձախ	15,6/14,5	11,7/11,3	13,3/12,1
Մեկ ոտքին հավասարակշռության պահպանման (վրկ.)	8,5	3,1	3,6
Ստատիկ դիմացկունություն (վրկ.)	13,6	12,8	13,2

Հատուկ մշակված մեթոդիկայի կիրառման արդյունքում, որի հիմքը կազմում էին մարմնամարզական կիրառական, կեցվածքի շտկման, շարժուն խաղերի, խմբային էքսկուրսիաների և համալիր շարժողական ընդունակությունների մշակմանը նպաստող համալիր և առանձին գործողությունները, պարզ է դառնում, որ էապես բարելավվում են աուտիզմով երեխաների շարժողական ընդունակությունները:

Ստացված արդյունքներից պարզ է դառնում, որ դաստակային ուժի ցուցանիշները ավելանում են. աջ 1,6 և ձախ դաստակ 0,8 կգ, կամ 85,2 և 77,5 %, մեկ ոտքին հավասարակշռությունը 0,5 վրկ. կամ 42,3 %, ստատիկ դիմացկունությունը 0,4 վրկ.՝ կազմելով հիմնական խմբի համեմատ 97 %:

Եզրահանգումներ: Ուսումնասիրելով գիտական և մեթոդական գրականությունը և մշակելով հարմարվողական ֆիզիկական վարժությունների ծրագիր, այն կիրառելով «աուտիզմ»-ով ախտորոշված երեխաների շրջանում՝ կարելի է հանգել գործնական եզրակացության, որ այն հետևողական, սիստեմատիկ բնույթ կրող մանկավարժական գործընթաց է, որի արդյունքում ամրապնդվում են օրգան համակարգերի ֆունկցիաները, բարելավվում են շարժողական կարողությունները, օգնում են ձեռք բերելու ինքնավստահություն, մեծանում են հաղորդակցման հնարավորությունները:

Մեր կարծիքով կիրառական բնույթի մարմնամարզական և կեցվածքին ուղղված վարժությունները, շարժուն խաղերը, խմբային էքսկուրսիաները կարող են նպաստել հասարակության մեջ հարմարվողական գործընթացներին:

Այս ամենն անհրաժեշտ է իրականացնել մանկավարժների, բուժաշխատողների, հոգեբանների և ծնողների անմիջական մասնակցությամբ:

Չրվանություն

1. Артамонова Л.Л. Лечебная и адаптивно-оздоровительная физическая культура. Москва: Владос-Пресс, 2010,- 627 с.
2. Беспалова Е.П. Адаптивная физическая культура: теория и практика. 2015, - 440 с.
3. Воронин С.М. Особенности личностно-ориентированной физической подготовки. Вестник Костромского государственного университета им. Н.А. Некрасова. Серия: Педагогика, психология, социальная работа, ювенология, социокинетика. 2015, т. 21. № 2, с. 233-235.
4. Геслак Д. Адаптивная физкультура для детей с аутизмом. Методические основы и базовый комплекс упражнений. Рама Паблишинг, 2019.
5. Евсеев С.П. Адаптивная физическая культура: Учебное пособие. Москва: Советский спорт, 2005,- 240 с.

Адаптивная физическая культура как средство физической реабилитации и социальной адаптации

*Бежания Седя,
Саргсян Овик,
Арсения Генрик*

Резюме

Ключевые слова: нарушение здоровья, физическая реабилитация, адаптация, аутизм, функция, социальная поддержка, психическое состояние, двигательные способности

В статье рассматриваются основные функции адаптивной физической культуры, а также значение и роль адаптации для полноценного социального взаимодействия людей с диагнозом аутизм. Также анализируются полезность и основные проблемы адаптивной физической культуры, выявляются ее недостатки и очевидные положительные стороны с учетом мнения специалистов в этой области. Реальные случаи также принимаются во внимание. Адаптивная физическая культура предназначена для обучения лиц с аутизмом и ограниченными возможностями здоровья с учетом особенностей их психофизического развития, индивидуальных возможностей и состояния здоровья, а также при необходимости обеспечения коррекции нарушений развития и социальной адаптации этих лиц. Целью данной статьи является развитие физических возможностей человека с проблемами здоровья, обусловленных двигательными особенностями и использованием духовных сил, высвобождаемых природой, для максимальной самореализации в общественной жизни. В адаптивной физической культуре выделяют следующие компоненты: адаптивная физическая культура, адаптивный спорт и адаптивная физическая реабилитация. В результате исследования мы пришли к выводу, что использование средств адаптивной физической культуры и спорта является эффективным, а в ряде случаев – и единственным возможным методом физической реабилитации и социальной адаптации.

Adaptive Physical Education as a Means of Physical Rehabilitation and Social Adaptation

***Bezhanyan Seda,
Sargsyan Hovik,
Arsenyan Henrik***

Summary

Key words: *health disorder, physical rehabilitation, adaptation, autism, function, social support, mental state, motor abilities*

The article discusses the main functions of adaptive physical education, as well as the importance and role of adaptation for the full social interaction of people with disabilities. The work analyzes the usefulness and main problems of adaptive physical education, reveals its shortcomings and obvious positive aspects, taking into account the opinions of specialists in this field. Real cases are also taken into account. Adaptive physical education is intended for the training of people with disabilities and limited health opportunities considering the peculiarities of their psychophysical development, individual abilities and health status and, if necessary, ensuring the correction of developmental disorders and the social adaptation of these people. The purpose of this article is to develop the physical abilities of a person with health problems, due to the use of motor characteristics and spiritual forces released by nature, for maximum self-realization in social life. Following components are distinguished in adaptive physical education: adaptive physical education, adaptive sports, adaptive physical rehabilitation. As a result of the study, we concluded that the use of adaptive physical education and sports is an effective and in some cases the only possible method of physical rehabilitation and social adaptation.

Ներկայացվել է	14. 02. 2025 թ.
Գրախոսվել է	11. 06. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.

Վնասվածքների առաջացման պատճառները, դրանց հետազոտումը և բուժման ելքերը տարբեր մարզաձևերում

Մարտիրոսյան Անի,
Մարգարյան Հովիկ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-289>

Հանգուցային բառեր. վնասվածք, պատճառ, կանխարգելում, մեթոդ, միջոց, օգնություն, ապահովում

Հետազոտության արդիականությունը: Մարզումների և մրցումների ընթացքում ստացած բարձր բեռնվածությունը, սպորտով վաղ տարիքում զբաղվելը, անհամապատասխան մարզումային մեթոդների կիրառումը և կարգապահության խախտումները կարող են հանգեցնել տարբեր վնասվածքների: Դրանք ոչ միայն բացասաբար են ազդում առողջության վրա և ստիպում դադարեցնել մարզումները, այլև որոշ դեպքերում կարող են հանգեցնել հաշմանդամության:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել վնասվածքների տեսակներն ըստ մարզաձևերի և դրանց առաջացման պատճառները:

Հետազոտության խնդիրը: Պարզել մարզական գործունեության պատճառով վնասվածքներն ըստ մարզաձևերի և դրանց կանխարգելման միջոցները:

Հետազոտության մեթոդներն են՝

- մասնագիտական գրականության, աղբյուրների ուսումնասիրում և վերլուծություն,
- մանկավարժական դիտումներ,
- արխիվային նյութերի վերլուծություն,
- անկետային հարցումներ,
- մաթեմատիկական վիճակագրություն:

Հետազոտության կազմակերպումը: Հետազոտությունն իրականացվել է «Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոնում» և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Հրանտ Շահինյանի անվան ամբիոնում, որը ներառում է մարմնամարզություն, սպորտային պարեր, գեղասահք և շախմատ: Այն անցկացվել է 2021-2022 թվականներին, իսկ հետազոտությանը մասնակցել են 20 մարզիչ-մանկավարժներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը:

Հետազոտությունների ընթացքում ստացվել են որոշակի տվյալներ՝ ըստ տարբեր մարզաձևերում հանդիպող վնասվածքների հաճախականության:

Մենամարտային մարզաձևերից հետազոտության են ենթարկվել սամբոն, ձյուդոն, հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտը և բռնցքամարտը: Օրինակ՝ սամբոյում գերակշռել են ստորին վերջույթների վնասվածքները՝ 50 %, վերին վերջույթների վնասվածքներին բաժին է ընկել 25 %, իրանին՝ 25 %: Ձյուդոյում նույնպես գերակշռել են ստորին վերջույթների վնասվածքները՝ 50 %, վերին վերջույթների վնասվածքներին բաժին է ընկել 12,5 %, իրանին՝ 25 %, գոտկատեղի վնասվածքներինը՝ 12,5 %: Ազատ ոճի ըմբշամարտում գերակշռել են ստորին վերջույթների վնասվածքները՝ 35,7 %, վերին վերջույթների վնասվածքներին բաժին է ընկել 21,4 %, իրանին՝ 14,2 %, գոտկատեղի վնասվածքներինը՝ 28,7 %: Հունահռոմեական ըմբշամարտում նույնպես գերակշռել են ստորին վերջույթների վնասվածքները՝ 28,5 %, վերին վերջույթների վնասվածքներին բաժին է ընկել 42,8 %, գոտկա-

տեղի վնասվածքներին՝ 28,7 %: Բռնցքամարտում առավել գերակշռել են վերին վերջույթների վնասվածքները՝ 50 %, գոտկատեղի վնասվածքներ՝ 40 %, իրանին՝ 10 %: Աթլետիկայում նկատվել է հետևյալ պատկերը՝ վերին վերջույթների վնասվածքները՝ 25 %, ստորին վերջույթների վնասվածքներին բաժին է ընկել 37,5 %, իրանին՝ 6,25 %, գոտկատեղի վնասվածքներինը՝ 31,25 % [4],[5]:

Բարդ կոորդինացիոն մարզաձևերից ուսումնասիրվել են սպորտային մարմնամարզությունը, գեղարվեստական մարմնամարզությունը և սպորտային ակրոբատիկան: Նկատվել է հետևյալ պատկերը՝ սպորտային մարմնամարզությունում ստորին վերջույթների վնասվածքները՝ 32,5 %, վերին վերջույթների վնասվածքները՝ 12,5 %, իրանի վնասվածքները՝ 11 %, գոտկատեղի վնասվածքներինը՝ 44 %: Գեղարվեստական մարմնամարզությունում գերակշռել են ստորին վերջույթների վնասվածքները՝ 54,5 %, վերին վերջույթների վնասվածքները՝ 18,2 %, գոտկատեղի վնասվածքներինը՝ 27,3 %: Իսկ ակրոբատիկայում գերակշռել են գոտկատեղի վնասվածքները՝ 46,2 %, ստորին վերջույթների վնասվածքները՝ 23 %, վերին վերջույթների վնասվածքները՝ 15,4 %, իրանի վնասվածքները՝ 15,4 % [1], [4]:

Խաղային մարզաձևերից ուսումնասիրվել է հանդբոլը, որտեղ գերակշռել են վերջույթների վնասվածքները: Մասնավորապես, վերին վերջույթների վնասվածքները՝ 33,5 %, ստորին վերջույթների վնասվածքները՝ 38 %, իրանի վնասվածքները՝ 4,7 %, գոտկատեղի վնասվածքներինը՝ 23,8 % [1], [4]:

Կատարվել է նաև վիճակագրություն ըստ մարզաձևերի: Ըստ այդ վիճակագրության՝ վնասվածքների քանակով առաջին տեղում են մենապայքարային մարզաձևերը՝

1. մենապայքարային մարզաձևեր – 37,96 %,
2. բարդ կոորդինացիոն մարզաձևեր – 19,44 %,
3. խաղային մարզաձևեր – 18,51 %,
4. ցիկլիկ մարզաձևեր – 14,84 %:

Անկետային հարցումների ընթացքում մարզիչ-մանկավարժների 49 %-ը նշել են, որ ավելի հաճախ վնասվածքները ստացվում են մարզումների ընթացքում: Ըստ այդ հարցումների՝ առավել հաճախ մարմնամարզությունում ստացվում են թեթև և միջին վնասվածքներ: Մարզիչների 70 %-ը նշել են, որ վնասվածքները գերակշռում են մարզման նախապատրաստական ժամանակաշրջանում: Մակայն նրանք չեն հերքել նաև վնասվածքների առաջացման հավանականությունն անմիջական մրցումների ընթացքում: Նրանց 76 %-ը նշել են, որ անմիջական մրցումներն ազդում են մարզիկների վարքագծի վրա, նրանք ավելի հուզված են, ինչից կարող են առաջանալ շարժումների կոորդինացիայի խախտումներ, որն էլ կմեծացնի վնասվածքների առաջացման հավանականությունը: Ընդ որում մարզիչների 80 %-ը նշել են, որ մրցումների ժամանակ վրիպումներն առավել շատ հավանական են: Ըստ նրանց մրցումների ժամանակ վնասվածքները ստացվում են հետևյալ պատճառներով՝

- ուշադրության ապակենտրոնացում,
- հարմարված չեն մրցավայրին,
- հանդիսատեսի առկայություն,
- հոգեբանական անկայուն վիճակ,
- անպատրաստ են մրցումներին,
- մրցումները ճիշտ չեն կազմակերպված,
- մարզիկի փորձի պակաս:

Ըստ մարզիչների՝ վնասվածքներն առավել շատ են մենապայքարային և խաղային մարզաձևերում:

Մանկավարժական դիտումների և զրույցների ընթացքում պարզվել է, որ վնասվածքներն առաջացել են հիմնականում մարզիկի օրգանիզմի թույլ լինելու կամ գերհոգնածության պատճառով, տարբեր օրգան համակարգերի գերհոգնածության պատճառով, մասնավորապես՝ նյարդային համակարգի:

Դեպքերի մեծ մասում վնասվածքների հիմնական պատճառներն են եղել չափազանց մեծ բեռնվածությունը և մրցումների հաճախականությունը: Ֆիքսվել են ինչպես սուր, այնպես էլ քրոնիկ վնասվածքներ, որոնք հիմնականում առաջացել են թույլ տեխնիկական պատրաստվածություն ունեցող մարզիկների մրցումներին մասնակցելու հետևանքով՝ հանգեցնելով նյարդային լարվածության [4], [5]:

Մարզիկների և մարզիչների հետ զրույցների արդյունքում պարզվել է, որ վնասվածքները հաճախ պայմանավորված են եղել նաև մարզիկների սխալ վարքագծով և անուշադրությամբ: Օրինակ՝ մի մարզուհու հետ զրույցի ընթացքում պարզվել է, որ նրա վնասվածքն առաջացել է մարզումից ուշանալու պատճառով, ինչի հետևանքով նա չի հասցրել լիարժեք կատարել նախաՎարժանքը:

Որպեսզի ժամանակին կանխարգելվեն հնարավոր վնասվածքները, անհրաժեշտ է իմանալ դրանց առաջացման պատճառները [1], [2]:

Այդ պատճառներն են՝

1. խախտումներ պարապմունքների կազմակերպման գործընթացում: Դրանք արտահայտվում են, երբ մեկ մարզիչը պարապում է բազմաքանակ մարզիկների հետ կամ մի քանի խմբերի հետ միաժամանակ, ինչով էլ պայմանավորվում է մարզիկների խմբերի մարզումների անկառավարելիությունը, նրանց տեղաբաշխումը, պարապմունքի ոչ ժամանակին սկիզբը և ավարտը:

Այդ պատճառները վերացնելու համար մարզիչը պետք է նախօրոք կազմակերպի յուրաքանչյուր պարապմունքի անցկացումը՝ հաշվի առնելով պարապողների անհատական առանձնահատկությունները, լավագույն մարզիկների հնարավոր օգնությունը և այլն:

2. Խախտումներ ուսուցման գործընթացում, որ ի հայտ են գալիս դիդակտիկայի սկզբունքները չկիրառելու դեպքում: Դա դժվարացնում է վարժության յուրացումը, կարող է բերել մարգագործիքից ընկնելու և վնասվածքի առաջացման, ֆիզիկական և հուզական գերլարվածության և այլ բացասական հետևանքների: Դրանից խուսափելու համար հարկավոր է լավ իմանալ դիդակտիկայի, դաստիարակության և մարզման սկզբունքները և կարողանալ իրականացնել դրանք ուսումնադաստիարակչական գործընթացում:

3. Անկարգապահությունը կարող է արտահայտվել ձախողումների տեսքով, որոնք առաջանում են, երբ վարժությունը դժվար է յուրացվում, ինչպես նաև ուսուցման մեթոդիկայի խախտման, հոգնածության և այլ պատճառներով: Վնասվածքի պատճառ կարող է հանդիսանալ այն, երբ մարզիչն անհատական մոտեցում չի ցուցաբերում մարզիկին մարզումների և մրցումների ժամանակ:

Մարզիչը չպետք է անուշադրության մատնի կարգ ու կանոնի ցանկացած խախտում: Անհրաժեշտ է բացատրել մարմնամարզիկներին կարգապահության նշանակության մասին, ինչպես մարզումների և մրցումների ժամանակ, այնպես էլ կյանքում և աշխատանքային գործունեությունում:

Պարբերաբար անցկացվող դաստիարակչական աշխատանքները ոչ միայն կանխարգելում են վնասվածքների առաջացումը, այլև ձևավորում են մարզումների նկատմամբ գիտակցված և ակտիվ վերաբերմունք, բարձրացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի որակը:

4. Մարզումների վայրի, մարզագործիքների և մարզագույքի անբավարար և անսարք վիճակը, դրանց անհամապատասխանությունը պահանջներին, որոնք անհրաժեշտ են մարմնամարզական պարապմունքների ժամանակ, մարզման վայրի սահմանափակ լինելը, հատակի անհարթությունը, մարզագործիքների ոչ սարքին վիճակը, ներքնակների, ցատկուղու և այլ սարքերի անփութ դասավորությունը և այլն: Այս պատճառների վերացման համար անհրաժեշտ է մարզման վայրի, սարքերի վիճակի և մարզագործիքների ժամանակին ստուգում և անսարքությունների վերացում:

5. Մարգահագուստի և մարգակոշիկի ձևի անհամապատասխանությունը դրսևորվում է նրանում, որ մարգիկները հաճախ գալիս են պարապմունքի անհարմար հագուստով: Մարգահագուստի վրայից խստիվ արգելվում է կրել բազմատեսակ զարդարանքներ, նշաններ, շղթաներ և այլն: Դրանք չի կարելի թողնել մարգահագուստի գրպաններում, քանի որ այդ ամենը վարժությունների կատարման ժամանակ ստեղծում են անհարմարություններ, բերում շարժումների կատարման ճշգրտության խախտման, վնասվածքների ոչ միայն մարգիկի, այլև այն անձի, ով ապահովում և օգնում է:

6. Սանիտարահիգիենիկ պայմանների խախտումներ: Դահլիճի ջերմաստիճանի անհամապատասխանությունն ընդունված նորմերին, վատ բնական և արհեստական լուսավորությունը, անբավարար օդափոխությունը, օդի ավելորդ խոնավությունը կամ չորությունը, մաքրության և կարգ ու կանոնի բացակայությունը դահլիճում, պարապողների անձնական հիգիենայի բացակայությունը:

Այս պատճառները վերացնելու համար անհրաժեշտ է բոլոր սանիտարահիգիենիկ կանոնների խիստ պահպանում, որոնք անհրաժեշտ են մարզումների հաջող անցկացման համար:

7. Պարապողների ֆիզիկական վիճակի բժշկական վերահսկողության պակասը: Անժամանակ և անբավարար պրոֆիլակտիկ բժշկական զննումը, բժշկի խորհուրդն անտեսելը, բուժված վնասվածքից հետո մարգիկների բուժզննության պակասը, մարզումների ընթացքում գերլարվածությունը, առողջական վիճակը, ֆիզիկական բեռնվածության աճը և այլն:

Վնասվածքների պատճառ կարող է դառնալ նաև մարգիկի կամ մարզիչ-մանկավարժի կողմից՝ առանց բժշկի հետ խորհրդակցելու, մարզման ռեժիմի խախտումը, քնի, սննդի ռեժիմի խախտումը և այլն: Այս պատճառների վերացման համար անհրաժեշտ է խիստ հետևել բժշկական հսկողության պահանջներին, որը կատարվում է բուժաշխատողների, ծնողների, ինչպես նաև մարզիչ-մանկավարժների կողմից:

8. Օգնության և ապահովման հնարքների ոչ ճիշտ օգտագործումը և թերագնահատումը՝

- բարդ և վտանգավոր վարժությունների կատարման ժամանակ օգնության և ապահովման անտեսումը,
- ապահովողի կողմից պահանջների չիմացությունը,
- անհրաժեշտ փորձի բացակայությունը և ապահովման հնարքների չիմացությունը, դրանց կազմակերպման թերացումը,
- մարգիկների կողմից ինքնաապահովման հնարքների չիմացությունը:

Մրա հետ կապված մեծ նշանակություն է ստանում օգնության և ապահովման հնարքների ուսուցումն ապագա մարգիկներին:

9. Անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը՝

- մարզագործիքների սխալ տեղադրումը,
- մարգիկների սխալ բաշխումը դահլիճում և մարզագործիքների մոտ,
- մարզագործիքների, առարկաների և մարզասարքերի անսարքությունը,
- մարզագործիքների, ներքնակների սխալ տեղադրումը, հատկապես վայրէջքի տեղերում,
- մարզագործիքները պետք է տեղադրված լինեն պատերից, անշարժ առարկաներից և պարապողների խմբերից բավարար հեռավորության վրա:

Ապահովումը կարող է լինել անհատական և խմբային: Ապահովման այս երկու տեսակներն էլ օգտագործվում են համեմատաբար բարդ ու ռիսկ պահանջող վարժություններին և կապակցություններին ուսուցման նախնական փուլում: Անհատական ապահովումն իրականանում է երկու կամ երեք անձի կողմից: Ընդ որում, ապահովողներից յուրաքանչյուրը գտնվում է որոշակի տեղում և կատարում է անհրաժեշտ գործողություններ: Խմբային ապա-

հովման պարտադիր պայման են ապահովողներից յուրաքանչյուրի հստակ գործողությունները: Խստիվ արգելվում է հույսը դնել մյուս ապահովողի վրա [2]:

Օգնությունն ու ապահովումը սերտորեն շաղկապված են նոր վարժության ուսուցման հետ: Օգնությունը ոչ միայն բացառում է մարզագործիքից ընկնելու հավանականությունը, այլև հանդիսանում է վարժությունների ուսուցման մեթոդական հնարքներից մեկը, օգնում է վարժության տեխնիկայի արագ տիրապետմանը և օգտագործվում է այն դեպքում, երբ մարզիկների մոտ բավարար չափով չէ զարգացած մկանային ուժը, կոորդինացիան, արագաշարժությունը և այլ ընդունակություններ [2], [3]:

Օգնությունը և ապահովումը չի կարելի չարաշահել, քանի որ մարզիկը կարող է կորցնել վստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

Ապահովումն իրականացնելիս անհրաժեշտ է՝

- իմանալ կատարվող վարժության տեխնիկան,
- կարողանալ արագ և ճշգրիտ ընտրել ապահովման տեղը,
- օգտագործել օգնության և ապահովման ճիշտ հնարքներ,
- հաշվի առնել մարզիկների անհատական առանձնահատկությունները (ֆիզիկական, տեխնիկական և հոգեբանական պատրաստությունը, շարժողական ընդունակությունների մշակվածության աստիճանը), ապահովման տեղում հստակ կանգնել՝ որքան հնարավոր է մարզիկին ավելի մոտ, բայց միևնույն ժամանակ չխանգարելով նրան [2], [3]:

Վարժությունների ինքնուրույն կատարման ժամանակ մեծ դեր է խաղում ինքնաապահովումը, որն օգնում է խուսափել վնասվածքներից: Ինքնաապահովումը ճիշտ որոշումներ ընդունելու և ինքնուրույն բարդ իրավիճակներից դուրս գալու մարզիկի կարողությունն է:

Վնասվածքների կանխարգելման և մարզիկների առողջության պահպանման համար մեծ նշանակություն ունեն բժշկական վերահսկողությունն ու ինքնահսկողությունը: Մարզիկները բուժավերականգնողական հիմնարկությանը կից (բժշկա-ֆիզկուլտուրային դիսպանսեր, բժշկական վերահսկողության կաբինետներ, բժշկական կաբինետներ պոլիկլինիկաներում, ուսումնական հաստատություններում) անցնում են խորացված բուժօնություն տարին 1-2 անգամ [5], [6]:

Դրանից բացի՝ ուսումնամարզական պարապմունքներին, մրցումներին և հավաքներին պետք է անցկացվեն բժշկամանկավարժական հետազոտություններ: Դրանք հնարավորություն են տալիս բժշկին և մանկավարժին հետևել մարզիկի առողջական վիճակին և ժամանակին բացահայտել դրանց շեղումները: Ամեն պարապմունքից առաջ մարզիչները պետք է պարզեն մարզիկների տրամադրությունը, ինքնազգացողությունը, պարապելու ցանկությունը [4], [5]:

Չիվանդությունից կամ երկար ժամանակով բացակայությունից հետո մարզիկին անհրաժեշտ է անցնել մանրազնին բուժօնություն և ստանալ թույլտվություն՝ մասնակցելու ուսումնամարզական պարապմունքներին: Այդ դեպքում մարզիչը պետք է ուսումնամարզական աշխատանքի ընթացքում հաշվի առնի բժշկի խորհուրդները: Վնասվածքների կանխարգելման կարևոր պայման է ինքնահսկողությունը: Հատուկ օրագրում գրանցվում են ինքնազգացողությունը, տրամադրությունը, հոգնածության աստիճանը, հասակը, սրտի զարկերի հաճախականությունը, ախտբժակը, քունը, ցավային զգացողությունը: Հաշվի է առնվում նաև աշխատանքի, հանգստի և սննդի ճիշտ ռեժիմը: Վնասվածքների կանխարգելման մեջ զգալի դեր է խաղում աշխատանքը՝ ուղղված բժշկական վերահսկողությանն ու ինքնահսկողությանը: Այս ամենը թույլ է տալիս մարզիչին մեթոդապես ճիշտ կառուցել ուսումնական գործընթացը:

Եզրակացություն

1. Սպորտում վնասվածքների կանխարգելման հարցը միշտ եղել է բժիշկների և մասնագետների ուշադրության կենտրոնում, սակայն ոլորտի մասնագետները դեռևս բավարարչափով տեղեկացված չեն այս հիմնախնդրի վերաբերյալ:

2. Մարզումների ընթացքում անհրաժեշտ է լավատեղյակ լինել վնասվածքների առաջացման հիմնական պատճառների մասին՝ դրանց կանխարգելման նպատակով:

3. Վնասվածքների կանխարգելման համար տարբեր մարզաձևերի մասնագետները կարող են օգտվել մեր կողմից առաջարկված և հետազոտված վնասվածքների տեղաբաշխման տոկոսային սանդղակից:

4. Վնասվածքների բնույթը, տարածվածությունը և դրանց կանխարգելման միջոցառումները որոշվում են տվյալ մարզաձևի առանձնահատկություններով:

5. Վնասվածքներից խուսափելու համար կարևոր է տիրապետել օգնության, ապահովման և ինքնաապահովման հնարքներին:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-289>

Գրականություն

- Արևշատյան Ն., Վնասվածքների կանխարգելումը մարմնամարզության պարապմունքների ժամանակ, «Մարմնամարզություն» գիտամեթոդական հանդես, 10-րդ թողարկում, էջ 39-43, Երևան, 2011:
- Խիզանցյան Ռ. Մ., Մարմնամարզություն, դասագիրք, Երևան, 2009:
- Ղազարյան Ֆ. Գ., Երեխաների մարզական ընդունակությունները և նրանց մշակումը, Երևան, 1985, 76 էջ:
- Добровольский В. К. Профилактика повреждений, патологических состояний и заболеваний при занятиях в спорте, 1976.
- Миронова С. З., Хайфец Л. З. Профилактика и лечение спортивных травм, 1965.
- Миронова С. З., Хайфец Л. З. Профилактика травм в спорте, 1966.

Причины возникновения травм, их исследование и методы лечения в различных видах спорта

*Мартirosյան Անի,
Տարցյան Օւիկ*

Резюме

Ключевые слова: травма, повод, профилактика, метод, способ, обработка, страховка, помощь

Чрезмерные нагрузки во время тренировок и соревнований, раннее начало занятий спортом, неправильные методы подготовки и нарушение норм могут привести к травмам у спортсменов. Это не только ухудшает здоровье и требует временной остановки тренировок, но в отдельных случаях может привести к длительным ограничениям или инвалидности. Легкие и хронические травмы чаще встречаются у спортсменов с недостаточной технической подготовкой, что повышает нагрузку на нервную систему и способствует новым травмам.

Для профилактики травм важно учитывать основные причины их возникновения:

- Нарушения в организации и проведении тренировок.
- Ошибки в обучении технике и отсутствие индивидуального подхода.

3. Использование неисправного инвентаря или оборудования, неровное покрытие пола, неправильное размещение матов и дорожек.
4. Несоответствие спортивной формы и обуви требованиям безопасности.
5. Несоблюдение санитарно-гигиенических норм.
6. Недостаточный контроль за состоянием здоровья спортсменов.
7. Неправильное применение страховки и методов помощи.
8. Нарушение правил техники безопасности.

Эти данные могут быть полезны тренерам для планирования тренировочного процесса и профилактики травм в различных видах спорта.

Causes of Injuries, their Research and Treatment Methods in Various Types of Sports

***Martirosyan Ani
Sargsyan Hovik***

Summary

Key words: *injury, reason, prevention, method, way, treatment, insurance, assistance*

Excessive physical loads during training and competitions, an early start in sports, improper training methods, and the violation of established norms can lead to injuries among athletes. Such injuries not only adversely affect health and necessitate temporary cessation of training but, in some cases, may result in long-term limitations or disability. Minor and chronic injuries are more commonly observed in athletes with insufficient technical preparation, which increases strain on the nervous system and contributes to the development of further injuries.

For effective injury prevention, it is essential to consider the main contributing factors:

1. Deficiencies in the organization and conduct of training sessions.
2. Errors in technical instruction and lack of individualized training approaches.
3. Use of faulty equipment or facilities, uneven flooring, and improper placement of mats and tracks.
4. Inadequate sportswear and footwear that fail to meet safety requirements.
5. Non-compliance with sanitary and hygiene standards.
6. Insufficient monitoring of athletes' health status.
7. Improper use of protective measures and support methods during training.
8. Violations of safety regulations.

These findings can serve as a valuable resource for coaches in planning training programs and implementing strategies to prevent injuries across various sports disciplines.

Ներկայացվել է 17. 03. 2025 թ.
Գրախոսվել է 08. 05. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.

Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները բժշկական քոլեջներում

Նազարյան Վաղինակ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-296>

Հանգուցային բառեր. ֆիզիկական դաստիարակության, պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստություն, մասնագետներ, բուժքույրեր, մանկաբարձուհիներ, դեղագործներ, ֆիզիկական զարգացման հասկանիշներ, շարժողական պատրաստություն, հոգեշարժիչ որակներ

Նախաբան: Միջին մասնագիտական կրթության պետական համակարգը կոչված է բոլոր բնագավառները ապահովելու բարձր որակավորում ունեցող մասնագետներով: Այս գործընթացը պայմանավորված է ապագա մասնագետների ֆիզիկական զարգացման, առողջության և շարժողական պատրաստվածության մակարդակով, ինչպես նաև կախված է կոնկրետ ուսումնական հաստատությունում գիտականորեն հիմնավորված մասնագիտական և ֆիզիկական պատրաստության կազմակերպումից: Հետևաբար ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի կարևոր խնդիր է դառնում սովորողների ապագա աշխատանքային գործունեության ձևերի, միջոցների և մեթոդների նպատակաուղղված օգտագործման գործելակերպի հայտնաբերումը [1; 2; 4; 6; 7]:

Այսօր մանկավարժական և բժշկական դպրոցի առջև դրված արդիական կարևոր խնդիրներից է առողջապահության մասնագետների պատրաստման մակարդակի բարձրացումը: Այս առումով առավել արդիական խնդիր է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, այդ թվում նաև բժշկականի՝ ֆիզիկական դաստիարակության համակարգի և ֆիզիկական պատրաստության աշխատանքային հիմունքների հետագա կատարելագործումը [5.; 9; 10; 11; 12; 13]: Այդ տեսակետից անհրաժեշտ է ֆիզիկական վարժությունների նպատակահարմար համակարգի մշակումը դիտարկել ոչ միայն որպես առողջության վերականգնման միջոց, այլև մասնագիտական աշխատունակությանը և ուսուցման գործընթացի ակտիվացմանը նպաստող գործոն [14; 15; 16; 17]:

Ապագա միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի մշակումը պետք է իրագործել՝ հաշվի առնելով նրա հիմնական նպատակը, աջակցել արդյունավետ մասնագիտական ուսուցմանը, ուսանողուհիների ֆիզիկական դաստիարակության խնդիրները, այլ տիպի ուսումնական հաստատությունների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հիմնադրույթները և բժշկական քոլեջների ֆիզիկական դաստիարակության առարկայի պետական ծրագրերի պահանջները:

Հաշվի առնելով վերը նշվածները՝ Վանաձորի պետական բժշկական քոլեջում անցկացվեց հետազոտություն, որի հիմնական նպատակն էր փորձել հիմնավորել ֆիզիկական դաստիարակության տեղայնացված միջոցների կիրառման հնարավորությունները՝ ելնելով բժշկական քոլեջի՝ ֆիզիկական դաստիարակության գործող ծրագրի գործնական բաժիններից [3]: Այդ նպատակով ընտրվել և տեղայնացվել էին 72 հասուն ֆիզիկական վարժություններ, որոնց հիման վրա էլ մշակվեցին 9 համալիրներ, որոնք պարունակում էին նաև շարժախաղեր (աղ. 2, 3): Հատուկ մշակված պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի փորձարկման համար ձևավորվել էին բուժքույրերի, մանկաբարձուհիների և դեղագործների վեց խմբեր՝ 235 ուսանողուհիների ներգրավմամբ: Հետազոտության ընթացքում համեմատվել են հետևյալ ցուցանիշները (աղ. 4).

- ֆիզիկական զարգացման հատկանիշներ՝ մարմնի հասակ և քաշ, կրծքավանդակի շրջագիծ և թոքերի կենսական տարողություն,
- շարժողական պատրաստվածության վեց ցուցանիշներ՝ մկանային ուժ, ուժային դիմացկունություն, արագաշարժություն, արագաուժային ընդունակություններ, դիմացկունություն, հավասարակշռության պահպանման կարողություն,
- երեք հոգեշարժիչ որակների ցուցանիշներ՝ տրեմոր, տեպինգ թեստ. ուշադրության կենտրոնացում և ընդհանուր աշխատունակություն:

Ակնհայտ է, որ պարապմունքների ընթացքում կիրառված վազքային վարժությունները և շարժաձևադերը նպաստել են բժշկական քոլեջի ուսանողների շնչառական համակարգի ֆունկցիայի ընդլայնմանը: Այստեղից երևում է նաև, որ լավացել են ուսանողուհիների արագաշարժության ընդունակությունները. բուժքույրերի մոտ աճը կազմում է 0,36 վրկ. ($P>0,1\%$), մանկաբարձուհիներինը՝ 0,8 վրկ. ($P>0,1\%$), դեղագործներինը՝ 0,3 ($P>0,1\%$): Գրեթե նույն փոփոխությունները բնորոշ են նաև դիմացկունության ցուցանիշներին (վազք 500 մ): Հատուկ վարժությունների օգտագործումով մանկավարժական ներգործությունների արդյունքում աճեցին ձեռքերի մկանային ուժի ցուցանիշները: Ձախ և աջ դաստակների ուժի ցուցանիշները բուժքույրերի, մանկաբարձուհիների և դեղագործների մոտ հետազոտությունների վերջում աճեցին 2-3 անգամ, որտեղ ($P>0,1\%$): Փորձարկվողների մոտ բարենպաստ փոփոխություններ են բացահայտվել նաև արագաուժային ցուցանիշներում՝ տեղից ցատկի օրինակով, այսպես ցատկերի արդյունքները լավացել են հավաստիորեն ($P>0,1\%$), 16-24 սմ սահմաններում: Գրեթե միանման տեղաշարժեր են դիտվում նաև ստատիկ հավասարակշռությունը պահպանելու կարողությունը հետազոտելիս՝ բացառությամբ դեղագործ ուսանողուհիների: Դա լիովին օրինաչափ է, քանի որ նրանց բնորոշ է աշխատանքային գործողությունների նստակյաց կատարումը:

Հաշվի առնելով ապագայում միջին բուժաշխատողների աշխատանքի մասնագիտական բնույթը՝ հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև նրանց ուժային դիմացկունության դրսևորման հնարավորությունները: Որպես թեստ՝ ընտրված էին՝ կքանիստեր՝ առավելագույն քանակով և կքանիստեր կշռաքարով, որը հավասար է սեփական քաշի 30 %-ին: Այստեղ նույնպես նկատվել է արդյունքների աճ՝ հավաստիության բարձր մակարդակով ($P>1\%$ 0,1%): Հատուկ հետաքրքրություն են առաջացնում բուժքույրերին, մանկաբարձուհիներին և դեղագործներին առավել բնորոշ հոգեշարժիչ որակների ցուցանիշների փոփոխությունները: Հետազոտության գաղափարից և շահերից ելնելով՝ շատ կարևոր է, որ մանկավարժական ներգործությունների ընթացքում՝ պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության ապահովման համար ուսանողուհիների մոտ վիճակագրորեն հավաստի բարելավվել են ($P>1\%$ 0,1%) տրեմորի, շարժումների հաճախականության և ուշադրության կենտրոնացման կարողության ցուցանիշները: Կարելի է եզրակացնել, որ շարժողական պատրաստվածության և հոգեշարժիչ որակների ցուցանիշների դրական տեղաշարժերն իրենց արտացոլումը ստացան նաև ուսանողուհիների աշխատունակության մեծություններում: Այդ ցուցանիշները ևս բարելավվել են, և այդ տարբերությունները վիճակագրորեն հավաստի են:

Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության առավելությունների մասին են վկայում նաև մասնագիտական առարկաների քննությունների արդյունքները: Քոլեջի այն ուսանողուհիները, որոնք անցել էին պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության դասընթաց (1-ին խումբ), ավելի արդյունավետ են հանձնել մասնագիտական առարկաների քննությունները:

Համեմատելով մյուս խմբի ուսանողների քննությունների արդյունքների հետ՝ հետազոտվողների մոտ «գերազանց» և «լավ» գնահատականները կազմում են 40-72,9 %, իսկ մյուսներինը՝ 21,7-58,2 %, իսկ «բավարար» գնահատականները համապատասխանաբար կազմում են 27-60 % և 41,8-78,3 % (աղ.1):

Աղյուսակ 1

Խմբեր	1-ին խումբ			2-րդ խումբ		
	«5»	«4»	«3»	«5»	«4»	«3»
Բուժքույրեր «Քույրական գործի հիմունքներ»	-	53.8 %	46.2 %	-	36.2 %	63.8 %
Մանկաբարձներ «Քույրական գործի հիմունքներ»	26.9 %	46.0 %	27.1 %	24.9 %	33.3 %	41.8 %
Դեղագործներ «Դեղաձևների տեխնոլոգիա»	20.0 %	20.0 %	60.0 %	8.7 %	13.0 %	78.3 %

Եզրակացություն: Այսպիսով՝ հետազոտության արդյունքում հաջողվեց ցույց տալ պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության և ընդհանուր ֆիզիկական պատրաստության միասնության անհրաժեշտությունը, որ պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հիմքը պետք է կազմեն հատուկ ընտրված և տեղայնացված ֆիզիկական վարժությունները, որոնք նպաստում են այն կիրառական հմտությունների ձևավորմանը, որոնք համապատասխանում են տվյալ մասնագիտության մարդու պիտանելիության չափանիշներին, որ պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մշակված ու փորձարկված մեթոդիկան ոչ միայն ուղղորդված բարձրացնում է ապագա մասնագետների շարժողական հնարավորությունները, այլև բարելավում է օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը և աշխատունակությունը: Չէ՞ որ որքան հարուստ և լայն է շարժողական փորձը, որքան կատարյալ է կորոշինացիան, շարժումների ճշգրտությունը և ճարպկությունը, մկանային ճիգերի տարբերակման կարողությունը, այնքան արդյունավետ է ընթանում բուժքույրերի, մանկաբարձուհիների և դեղագործների մասնագիտությունների հետ կապված տարբեր շարժողական հմտությունների ձևավորման գործընթացը: Հետազոտությունները բացահայտեցին, որ բժշկական քոլեջի ֆիզիկական դաստիարակության ուսումնական գործընթացում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հատուկ մեթոդիկայի և ծրագրի կիրառումը նպաստում է կոնկրետ մասնագիտական գործունեության անհրաժեշտ կիրառական շարժողական ընդունակությունների ընդլայնմանը:

Աղյուսակ 2

Համալիր 1

N	Վարժությունների նկարագրում	Բեռնվածության չափավորում	Մեթոդական ցուցումներ
1	Վազք 10-15մ	3-4 անգամ	մաքսիմալ արագությամբ
2	Գետնին նստած, ձեռքերը հետևին՝ կոնքը բարձրացնել և ձկվել (կորանալ)	2-3 մոտեցում	մեծ ամպլիտուդով
3	Մաքրքավազք	3-4x15մ	մաքսիմալ արագությամբ
4	Մարմնամարզական պատի մագլցում	3-4 անգամ	հնարավորինս արագ
5	Վազք՝ տարբեր պտույտներով և ցատկերով	2x30մ	հավասարակշռությունը չկորցնել
6	Բասկետբոլի գնդակի նետումներ պատին 2 մ-ից	2x30-40 վրկ	կատարել արագ

N	Վարժությունների նկարագրում	Բեռնվածության չափավորում	Մեթոդական ցուցումներ
7	Գլորումներ առաջ, հետ	10-12 անգամ	հետևել մարմնի խմբավորմանը
8	Թենիսի գնդակի նետումներ 50 սմ տրամագծով նշագծին 5 մ-ից	5 անգամ կես ուժով	գնդակը չկորցնել
9	Շարժական խաղ		

Աղյուսակ 3

Համալիր 2

N	Վարժությունների նկարագրում	Բեռնվածության չափավորում	Մեթոդական ցուցումներ
1	Քայլը գործիքներով (գնդակ, բուլավա, փայտիկ)	30-40մ	գործիքները չգցել՝ պահպանելով հավասարակշռությունը
2	Վազք 10 մ հանձնարարված ժամանակով	3 փորձ	ժամանակի զգացում
3	Զույգերով կանգնել իրար դիմաց, ձեռքերն առաջ, ավերել միացրած, ձեռքերի ծայրում և ուղղում՝ դիմադրությամբ	2x20-30 վրկ	ցուցաբերել մաքսիմալ ջանքեր
4	Ցատկեր ոտքից ոտք	20-25 հատ	հրվել ուժեղ
5	Գնդակի վարում՝ շրջանցումով և ուղղության փոփոխումով	2x30 մ	աշխատել գնդակը չկորցնել
6	Արագ տեղաշարժում մարմնամարզական գերանի վրայով	3-4 անգամ	հետևել շարժումներին
7	Ցատկեր շարժվող առարկաները տեղ հասցնելով	7-8 փորձ յուրաքանչյուր ոտքով	հրվել ուժեղ
8	Թենիսի գնդակի նետում և բռնում՝ աջ և ձախ ձեռքերով	8-10 անգամ	աշխատել գնդակը չկորցնել
9	Շարժական խաղ		

Հնդհանուր		Փորձարարական	Ստուգողական
մարմնի քաշ, կգ	$X \pm m$	54.77±0.68	55.739±0.77
	σ	7.41	8.32
	t		0.95
	p, %		<5
մարմնի հասակ, սմ	$X \pm m$	157.73±0.57	157.39±0.52
	σ	6.24	5.69
	t		0.44
	p, %		<5
կրծքավանդակի շրջագիծ, սմ	$X \pm m$	85.84±0.43	86.3±0.51
	σ	4.71	5.55
	t		0.69
	p, %		<5
թոքերի կենսական տարողություն, սմ ³	$X \pm m$	297.74±6.84	291.7±6.41
	σ	74.33	69.36
	t		0.64
	p, %		<5
աջ, կգ	$X \pm m$	27.74±0.46	26.44±0.51
	σ	5.02	5.48
	t		1.88
	p, %		<5
ձախ, կգ	$X \pm m$	25.69±0.43	24.81±0.49
	σ	4.65	5.3
	t		1.35
	p, %		<5
աջ կես, կգ	$X \pm m$	21.04±0.48	19.86±0.49
	σ	5.2	5.32
	t		1.73
	p, %		<5
ձախ կես, կգ	$X \pm m$	19.64±0.43	18.91±0.48
	σ	4.65	5.18
	t		1.14
	p, %		<5
տրեմոր, քանակ	$X \pm m$	29.71±0.3	29.27±0.35
	σ	3.29	3.81
	t		0.96
	p, %		<5
տեպինգ թեստ, քանակ	$X \pm m$	65.53±0.64	65.78±0.56
	σ	6.99	6.03
	t		0.29
	p, %		<5

<i>Հնդհանուր</i>		<i>Փորձարարական</i>	<i>Ստուգողական</i>
ուշադրություն, տոկոս	$X \pm m$	55.26±0.95	55.5±1.25
	σ	10.28	13.5
	t		0.15
	p, %		<5
աշխատունակություն, պ/մ	$X \pm m$	16.63±0.22	16.79±0.26
	σ	2.42	2.81
	t		0.47
	p, %		<5
կքանիստ, քանակ	$X \pm m$	74.66±1.47	74.03±1.61
	σ	15.99	17.36
	t		0.29
	p, %		<5
կքանիստ 30 տոկոս, քանակ	$X \pm m$	21.97±0.93	21.37±0.88
	σ	10.14	9.51
	t		0.37
	p, %		<5
հավասարակշռություն, վրկ	$X \pm m$	10.43±0.49	10.53±0.61
	σ	5.29	6.6
	t		0.13
	p, %		<5
վազք 20 մ ընթացքից, վրկ	$X \pm m$	3.66±0.03	3.66±0.02
	σ	0.32	0.26
	t		0
	p, %		<5
հեռացատկ տեղից, սմ	$X \pm m$	156.21±1.71	156.58±1.73
	σ	18.52	18.71
	t		0.15
	p, %		<5
վազք 500 մ, ր	$X \pm m$	2:40.6±0.86	2:41.4±0.92
	σ	9.38	9.91
	t		0.64
	p, %		<5

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-296>

Գրականություն

1. Նազարյան Վ. Ռ., Բժշկական քոլեջների սովորողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան. մեթոդական ձեռնարկ, Վանաձոր, «Արմինֆո», 2009, 68 էջ:
2. Նազարյան Վ. Ռ., Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի հինավորումը բժշկական քոլեջներում, թեկն. ատեն. սեղմագիր, Երևան, 2013, 23 էջ:

3. Օրագիր «Ֆիզիկական կուլտուրա» ամսականի միջին մասնագիտական կրթության «0406 – Քույրական գործ», «0402 – Մանկաբարձական գործ», «0416 – Ատամնատեխնիկական գործ» և «0405 – Դեղագործություն» մասնագիտությունների համար, Վանանահր, 2004, 10 էջ:
4. Абульханова К. А. Педагогика и психология: учебное пособие. Москва: «Совершенство». 1998, 311 с.
5. Андреева Н. В. Особенности профессиограммы среднего медицинского персонала и риски его профессиональной деформации // Медицина и экология, 2015, № 4, с. 102-105.
6. Буш Р. Д. Понхолого-педагогический прогноз эффективности овладения профессионально значимыми навыками: теория и практика ФК, 2007, № 7, с. 70-71.
7. Вишневская Н. Л., Плахова Л. В. Профессиограмма как интегральная модель оценки пригодности персонала для обеспечения безопасности производства // Фундаментальные исследования, 2014, № 8 (часть 4), с. 801-805.
8. Дьяченко А. П. Профессионально-прикладная физическая подготовка студентов-стоматологов. Киев. 1997, 22 с.
9. Злурский В. С. Человек и профессия. Москва: «Знание», 1972, 32 с.
10. Карцев И. Д. Физиологические критерии профессиональной пригодности. Москва: «Медицина», 1977, 213 с.
11. Норина В. Н. Профессиограмма врача // Образовательный портал «Справочник».
12. Рюмина Т. В. Основания проектирования профессиограммы врача, осуществляющего педагогическую деятельность в сфере здравоохранения // Мир науки. Педагогика и психология, 2022, т. 10. №6, с. 1-13.
13. Старостенкова Т. А. Профессиология и образование специалистов фармацевтической отрасли // Психолого-педагогические исследования, 2014, т. 6. № 2, с. 209-218.
14. Старостенкова Т. А. Проблемы подготовки специалистов фармацевтической отрасли: взгляд профессиолога. 2014, с. 109-118.
15. Сысоев В. Н., Будко Д. Ю., Плохотюк Е. Н. Прогнозирование успешности профессиональной деятельности специалистов в сфере оказания фармацевтических услуг // Современные проблемы науки и образования, 2016, № 3, с. 157-163.
16. Ткачев Ф. Т. О профессионально-прикладной физической подготовке студентов-медиков. в сб.: Материалы научной конф. Москва, 1976, с. 21-28.
17. Шеховцова Е. А. Профессиограмма как инструмент формирования п качеств студентов-педагогов. 2021, № 1(73), с. 14-19.

Особенности профессионально-прикладной физической подготовки в медицинских колледжах

Назарян Вагинак

Резюме

***Ключевые слова:** физическое воспитание, профессионально-прикладная физическая подготовка, специалисты, медицинские сестры, акушерки, фармацевты, особенности физического развития, двигательная подготовка, психомоторные качества*

В работе предпринята попытка обоснования того, что разработка методики профессионально-прикладной физической подготовки будущих медицинских кадров среднего звена должна осуществляться с учетом ее основной цели – обеспечения эффективной профессиональной подготовки, решения проблем физического воспитания студенток, урегулирования

основ профессионально-прикладной физической подготовки в других типах образовательных учреждений, соблюдения требований государственных программ по предмету “Физическая культура” в медицинских колледжах. Для этого были отобраны и локализованы 72 специальных физических упражнения, на основе которых разработаны 9 комплексов, включающих также подвижные игры. Для апробации специально разработанной методики профессионально-прикладной физической подготовки было сформировано 6 групп медсестер, акушерок и фармацевтов, в которых приняли участие 235 студенток. В ходе исследования сравнивались следующие показатели:

- параметры физического развития: рост и вес тела, окружность грудной клетки и жизненная емкость легких,
- 6 параметров двигательной готовности: мышечная сила, силовая выносливость, ловкость, быстро-силовые способности, выносливость, способность сохранять равновесие,
- 3 параметра психомоторного качества: тремор, теппинг-тест – концентрация внимания и общая работоспособность.

Features of Professional-Applied Physical Training in Medical Colleges

Nazaryan Vaghinak

Summary

Key words: *physical education, professional-applied physical training, specialists, nurses, midwives, pharmacists, physical development characteristics, movement training, psycho motivational qualities*

The work attempts to substantiate that the development of a methodology for professional-applied physical training of future medical personnel should be implemented taking into account its main goal of supporting effective professional training, the problems of physical education of female students, the fundamentals of professional-applied physical training in other types of educational institutions and the requirements of state programs for the subject of physical education in medical colleges. For this purpose, 72 special physical exercises were selected and localized, on the basis of which 9 complexes were developed, which also included moving games. As a result, 6 groups of nurses, midwives and pharmacists were formed to test the specially developed professional-applied physical training methodology, involving 235 female students. During the study, the following indicators were compared:

- physical development characteristics: body height and weight, chest circumference and vital capacity of the lungs,
- 6 indicators of movement readiness: muscle strength, strength endurance, agility, speed-power abilities, endurance, ability to maintain balance,
- 3 indicators of psychomotor qualities: tremor, tapping test. concentration of attention and general working capacity.

Ներկայացվել է 02.02.2025 թ.
Գրախոսվել է 12.02.2025 թ.
Ընդունվել է տպագրության 26.11.2025 թ.

Արագավազորդների հատուկ դիմացկունության մշակման առանձնահատկությունները

Նազարյան Վաղինակ,
Ալավերդյան Էլլադա,
Դալարյան Էռնա,
Հարությունյան Գոռ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-304>

Հանգուցային բառեր. արագավազոր, դիմացկունություն, մարզում, մկանային համակարգ, շարժողական պատրաստվածության արագավազորող, շարժողական ընդունակություն

Նախաբան: Սպորտում բարձր նվաճումներ ունենալու համար մարզիկին օրգանիզմին ներկայացվում են բավական մեծ պահանջներ: 400 մետր վազքը աթլետիկայի ամենաթժվար տարածություններից մեկն է: Շարժողական պատրաստվածության մակարդակը, վազքի գերազանց տեխնիկան, արագության զարգացման բարձր մակարդակը և հատուկ դիմացկունությունը անփոխարինելի բաղադրիչներ են, որոնց շնորհիվ հնարավոր է մարզական բարձր արդյունքների հասնել տվյալ վազքատարածությունում [1, 4, 6]:

Հատուկ դիմացկունության մշակման հիմքը ընդհանուր դիմացկունությունն է [2, 3]: Առաջին մշակելու համար անհրաժեշտ է օգտագործել մի շարք վարժություններ, որոնք կատարվում են երկարատև և մեծ բեռնվածությամբ: Երկրորդը, այսինքն՝ հատուկ դիմացկունությունը մշակելու համար վարժությունները կատարվում են բարձր արագությամբ, մինչդեռ վազքի ընթացքում երկարության հատվածների կամ արագացումների ընդհանուր երկարությունը պետք է գերազանցի այն տարածությունը, որի վրա մասնագիտանում է վազորդը:

Հատուկ դիմացկունության մշակման ամենակարևոր գործոնը տվյալ հատվածի վրա վազքի արագության բարձրացումն է՝ արագության պահուստ ստեղծելու համար: Սա թույլ է տալիս մարզիկին վազել տարածություն ավելի քիչ ջանքերով և ավելի բարձր միջին արագությամբ:

Հատուկ դիմացկունությունը դիմացկունությունն է կոնկրետ գործունեության նկատմամբ: Այդպիսի դիմացկունության առանձնահատկությունը որոշվում է այս կամ այն մարզական հատուկ վարժությունների բնույթով: Միաժամանակ 400 մետր վազորդի հատուկ դիմացկունության շրջանակներում ընդունված է առանձնացնել հետևյալ դիմացկունությունը՝ ուժ, արագություն և համակարգում: 400 մետր վազորդի արագության դիմացկունությունը առավելագույն կամ գրեթե առավելագույն (ենթաառավելագույն) ինտենսիվությամբ հոգնածությանը դիմակայելու կարողությունն է: Սա նշանակում է, որ ձեռք բերված արագությունը պարբերական բնույթի վարժություններ կատարելիս պահպանվում է՝ չնայած հոգնածությանը: Այս տեսակի դիմացկունության հետ կապված ձեռքբերումները պահանջում են բարձր աերոբիկ և առավելագույն անաերոբ կատարողականություն: Չպետք է մոռանալ, որ անաերոբ հզորության զարգացման հիմքը աերոբային կատարումն է: Ուսումնասնարգումային գործընթացի մարզումները կազմակերպելու և մարզումների ծրագիրը կազմելու համար մարզիչը պետք է հստակեցնի յուրաքանչյուր մարզումը, ոչ միայն տեխնիկատակտիկական, այլև ֆիզիկական հատկանիշների բարելավման առումով [1, 2, 3, 4]:

Ամենից հաճախ մարզումների հիմնական մասը բաղկացած է միայն կրկնվող մեթոդից, երբ վարժությունները կատարվում են որոշակի ընդմիջումից հետո (30 վայրկյան, մեկ րոպե), մինչդեռ բեռնվածության ինտենսիվությունը չի կարգավորվում, և ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության աստիճանը հաճախ որոշվում է միայն մարզման տեսակով և երբեմն մարզիկի ինքնազգացողությամբ:

Իսկ հատուկ, նախապես ծրագրավորված վերականգնողական միջոցառումներ չեն օգտագործվում: Արդյունքում մշակվում է միայն ընդհանուր, այլ ոչ թե հատուկ դիմացկունությունը, որը համապատասխանում է միջին և երկար վազքի առանձնահատկություններին:

Ինտերվալային մեթոդի մարզումների կիրառման բարձր արդյունավետությունը ընդունված է շատ հեղինակների կողմից, բայց նրա որոշ «կոշտությունը» սահմանափակում է կիրառումը պատանիների ուսումնամարզումային գործընթացում:

Միևնույն ժամանակ ենթադրվում է, որ տվյալ մեթոդի կիրառումը համադրելով ինտենսիվության խիստ հսկողությամբ՝ զարկերակի հաշվելու միջոցով, անմիջապես հատվածներից հետո, որոնք անց են կացվում բարձր ինտենսիվությամբ և հանգստի հատվածների վերջում, նույնպես պետք է համադրել սպորտային աշխատունակության վերականգնողական համալիր միջոցների հետ, ինչը կբարձրացնի վագորդների հատուկ դիմացկունությունը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել վագորդների ուսումնադաստիարակչական գործընթացը, որոշել 400 մետր վագորդների հատուկ դիմացկունության մշակման գործընթացում օգտագործվող միջոցների և մեթոդների համալիրները, բացահայտել առաջարկված վարժությունների համալիրի կիրառման արդյունավետությունը հատուկ դիմացկունության մշակման գործընթացում:

Հետազոտության խնդիրները: Ուսումնասիրել գիտամեթոդական գրականությունը հետազոտության թեմայով: Կազմել մարզման միջոցների համալիրներ, որոնք ուղղված են աթլետների հատուկ դիմացկունության մշակմանը, որոնք մասնագիտանում են 400 մ վագորդում:

Հետազոտության մեթոդներ: Որպեսզի լուծվեն առաջադրված խնդիրները, օգտագործվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ գրականության վերլուծություն, թեստավորում, մանկավարժական դիտարկումներ, մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ: Մանկավարժական հետազոտությունները անցկացվել են Վանաձորի աթլետիկայի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոցում 2023-24 թթ.: Հետազոտություններին մասնակցել են 20 աթլետներ՝ 10-տղա, 10-աղջիկ, միջին տարիքը՝ 16.5 տարեկան, մարզման միջին ժամանակը՝ 4.7 տարի:

Բովանդակությունը: Մարդու կարողությունը՝ դիմադրելու աշխատանքի ժամանակ առաջ եկող հոգնածությանը, կոչվում է դիմացկունություն: Դիմացկունության դրսևորման հիմքում ընկած են մկանային գործունեության ապահովման մեխանիզմները (թթվածնահարուստ և թթվածնապակաս հնարավորությունները): Այդ առումով տարբերվում են դիմացկունության դրսևորման ընդհանուր և հատուկ եղանակները (ուժային, արագային, արագաուժային և այլն) [2, 3]: Բոլոր հավասար պայմանների դեպքում դիմացկունության դրսևորումը պայմանավորված է էներգոծախսերով և հոգեկան որակներով: Դիմացկունության մշակման համար օգտակար են բոլոր տեսակի այն վարժությունները, որոնք պահանջում են չափավոր լարվածություն և երկարատևություն:

«Դիմացկունություն» հասկացությունը վաղուց կապված է եղել մարդու ունակության հետ՝ շարունակելու գործունեությունը քիչ թե շատ արդյունավետ կերպով՝ չնայած հոգնածության առաջացմանը [2, 3]:

Աշխատունակության մակարդակի ժամանակավոր իջեցումը՝ պայմանավորված բեռնվածությամբ, ընդունված է անվանել հոգնածություն: Հոգնածությունը կարելի է բաժանել փուլերի.

1. Փոխհատուցվող հոգնածության փուլ. ցանկացած երկարատև աշխատանք որոշակի պահի սկսում է ընթանալ այնպիսի պայմաններում, որոնք պահանջում են ներքին աճող դժվարությունների հաղթահարում և կամքի ուժի բարձրացում, ինչի արդյունքում հնարավոր է լինում պահպանել տվյալ արտաքին չափանիշները և աշխատանքի արդյունավետությունը:

2. Դեկումպենսատորական հոգնածության փուլ. տվյալ փուլում աշխատանքը շարունակվում է, բայց հակառակ բոլոր ճիգերին՝ տեղի է ունենում դրա որակական և քանակական ցուցանիշների մակարդակի իջեցում:

3. Լրիվ հոգնածության փուլ. այսինքն՝ տեղի է ունենում կատարվող աշխատանքից հրաժարում [7, 8, 9]:

Հաստատվել է, որ անձը կարողանում է որոշակի աշխատանք կատարելիս կանխել դրա արդյունավետության անկումը տվյալ ժամանակում՝ չնայած հոգնածության առաջացմանը, ավելին, նա կարողանում է այն շարունակել դեփոխիստուցված հոգնածության փուլում՝ նույնիսկ արդյունավետության նվազմամբ: Սա կախված է օրգանիզմի և անհատականության որոշակի հատկությունների զարգացման աստիճանից:

Համապատասխանաբար ամենալայն իմաստով դիմացկունություն եզրույթ ասելով հասկանում ենք մարդու որակների ֆիզիկական, հոգեկան և բարոյականային համալիրը, որոնք որոշում են նրա կարողությունը դիմակայելու հոգնածությանը որոշակի աշխատանք կատարելու գործընթացում:

Ֆիզիկական «դիմացկունություն» ասելիս հասկանում ենք մարդու ընդունակությունը դիմակայելու ֆիզիկական հոգնածությանը մկանային գործունեություն կատարելու ընթացքում [5, 6, 8]:

Որոշակի ինտենսիվության և ցանկացած բնույթի մկանային գործունեություն իրականացվում է, առավել հաճախ, որոշակի ժամանակահատվածում, որը դիմացկունության չափանիշն է:

Օրինակ կարող են ծառայել ֆիզիկական վարժությունների ցիկլիկ տեսակներ (լող, քայլք, վազք), որոնցում ընդունված է չափել որոշակի տարածության հաղթահարման նվազագույն ժամանակը: Մենամարտերում և սպորտի խաղային տեսակներում չափվում է այն ժամանակը, որի ընթացքում մարզիկը ընդունակ է պահպանել տվյալ արդյունավետության շարժողական գործունեության մակարդակը: Սպորտային մարմնամարզության մեջ, ակրոբատիկայում, գեղասահքում, այսինքն՝ բարդ կոորդինացիոն մարզաձևերում, որոնք պահանջում են շարժումների կատարման ճշգրտություն, դիմացկունության ցուցիչն է գործողության կատարման տեխնիկական ճշտության կայունությունը [2, 3]:

Ընդունված է տարբերակել ընդհանուր և հատուկ դիմացկունությունը: Ընդհանուր դիմացկունությունը մարդու ընդունակությունն է երկարատև ժամանակի ընթացքում մկանային համակարգի համընդհանուր կիրառմամբ՝ կատարելու չափավորված ինտենսիվության աշխատանք: Այլ կերպ՝ այն ընդունված է անվանել աերոբային դիմացկունություն: Երկարատև չափավորված վազքին դիմացող մարդը, նույն արագությամբ ընդունակ է կատարելու այլ աշխատանք (հեծանվավազք, լող և այլն): Գաղտնիք չէ, որ ընդհանուր դիմացկունությունը ֆիզիկական առողջության կարևորագույն բաղադրամասն է. այն կարևոր է օրգանիզմի կենսագործունեության օպտիմիզացիայի գործընթացում: Հենց ընդհանուր դիմացկունությունն է նախադրյալ հանդիսանում հատուկ դիմացկունության մշակման համար [2, 3]:

Հատուկ դիմացկունություն անվանում են դիմացկունություն որոշակի, կոնկրետ շարժողական գործունեության նկատմամբ:

Հատուկ դիմացկունությունը ընդունված է դասակարգել.

1. շարժողական գործողության հատկանիշերով, որի շնորհիվ լուծվում է շարժողական խնդիրը (օրինակ, ցատկային դիմացկունությունը),
2. շարժողական գործունեության հատկանիշերով, որի պայմաններում լուծվում է շարժողական խնդիրը (խաղային դիմացկունությունը),
3. այլ ֆիզիկական հատկանիշերի հետ փոխգործունեությունը, որոնց շնորհիվ կարելի է հասնել շարժողական խնդրի արդյունավետ լուծմանը, օրինակ՝ ուժային, արագային և կոորդինացիոն դիմացկունությունները [2, 3]:

Առավել բարենպաստ տարիքային ժամանակահատվածը դիմացկունության մշակ-

ման համար համարվում է նախադպրոցականից մինչև 30 տարեկանը: Եթե բեռնվածությունը չափավոր ինտենսիվության է, ապա՝ նաև 30 տարեկանից ավել: Ինտենսիվ աճը դիտվում է 15-ից 20 տարեկան տիրույթում [2, 3]:

Արդյունքների վերլուծությունը: Հատուկ դիմացկունության մակարդակի գնահատման նպատակով անց են կացվել հետևյալ թեստերը,

1. վազք՝ 300 մ,
2. վազք՝ 600 մ,
3. վազք 400 մ վերելք (անտառ),
4. կքանիստ ծանրաձողով (20 կգ)՝ 1 րոպե:

Հետազոտության էությունն այն է, որ բացահայտվեն ուսումնամարզական գործընթացի կառուցման ռացիոնալ միջոցները և մեթոդները՝ նպատակ ունենալով մշակել արագավազորդների հատուկ դիմացկունությունը, որոնք մասնագիտանում են 400 մ վազքում:

Ուսումնամարզական գործընթացը կառուցվում է հատուկ դիմացկունության մշակման հատվածային (ինտերվալ) մեթոդի հիմքի վրա՝ կիրառելով մարզվողների վիճակի վերահսկման բժշկամանկավարժական և աշխատունակության վերականգնման միջոցներ:

Խմբերը մարզվում էին շաբաթական 6 անգամ երկուշաբթիից մինչև շաբաթ: Հետազոտությունը անցկացնելիս մեր կողմից օգտագործվել են հետևյալ շաբաթական ցիկլերը:

1. Երկուշաբթի

Կրկնվող վազքեր – 5x200մ-170-180 սրտի զարկ/րոպե: Հանգստի տևողությունը հավասար կլինի սրտի զարկերի վերականգնման տևողությանը՝ 130-140 զարկ/րոպե:

2. Երեքշաբթի

Կրճատվող վազք – 600-500-400-300-200-100 մ: Հատվածների երկարությունը աստիճանաբար նվազում է, իսկ սրտի զարկերակային արագությունը մեծանում է: Հանգստի միջակայքերը և ձևը հաստատուն են կամ փոփոխական:

3. Չորեքշաբթի

Պարապմունքներ մարզասարքերով՝ շրջանային մարզումների մեթոդով.

1. Ծանրաձողով պոկումներ, հրումներ, տարբեր վարժություններ,
2. Ծանրաձողով կքանիստեր, կիսակքանիստեր,
3. ոտնաթաթերով բարձրացում՝ ծանրաձողով.
4. արտանքներ.
5. ոտքի սեղմումը՝ մեջքի վրա պառկած,
6. վարժություններ ազդրի առջևի և հետևի մկանների համար:

Բեռնվածությունը և կրկնությունների քանակը ընտրվում է առանձին՝ յուրաքանչյուր մարզիկի համար:

4. Հիգշաբթի

Կրկնվող վազքեր - 1x600 մ-170-180 զարկ/րոպե,

2x300 մ 200-210 զարկ/ր.,

2x150 մ 210-220 զարկ/ր.:

Հանգիստը՝ մինչև զարկերակը հասնի 120-130 զարկ/րոպե:

5. Ուրբաթ

Փոփոխական վազքեր – 5x200մ/200մ զարկերակային ռեժիմը 180-200 զարկ/րոպե է: Հանգստի ընդմիջումը՝ դանդաղ վազք 200 մ մինչև զարկերակը 140-150 զարկ/րոպե:

6. Շաբաթ

Կրկնվող վազքեր – 10x60 մ, մարզիկը աստիճանաբար մեծացնում է վազքի հատվածների արագությունը (նաև՝ զարկերակային ռեժիմները), հանգստի հատվածի երկարությունը, միջակայքը և ձևը մնում են հաստատուն:

Բժշկամանկավարժական ստուգման ընթացքում կիրառվում էին հետևյալ միջոցները.

1. մարզիկների ընդհանուր ինքնազգացողության գնահատում,
2. սրտի կծկումների հաճախականության և երակային ճնշման կիրառական ստուգումներ:

Վերահսկելով հատուկ դիմացկունության մշակման գործընթացը՝ առավելագույն ուշադրություն է դարձվել գերմարզվածության այնպիսի վիճակների ստեղծմանը, ինչպիսիք են.

1. հարմարվողականության վատթարացումը բարձր ինտենսիվության բեռնվածություններին և միջին հզորության երկար աշխատանքի նկատմամբ:
2. հարմարվողականության վատթարացումը արագառժային բեռնվածությունների նկատմամբ:
3. նյարդային գործունեության գարծնընթացների իջեցում, երբ արգելակայինը գերակայում է գրգիռայինին:

Դիտարկելով մարզիկների վարքագիծը, գործառնությունների փոփոխությունների հստակ դրսևորումը՝ հնարավոր եղավ մի շարք նշաններով դատել ինչպես վագորդի ընդհանուր ֆիզիկական վիճակի, այնպես էլ մարզիկների սպորտային հմտությունների տիրապետման, մասնակի մարզվածության, հատուկ դիմացկունության դրսևորման և գերմարզումների սկզբի մասին: Գնահատվել է հոգնածության աստիճանը, արտաքին հատկանիշներով օրգանիզմի ֆունկցիաների փոփոխությունը պարապմունքներից, մրցումներից կամ առանձին վարժություններ կատարելուց հետո:

Հետազոտությունների կարևոր պայմաններից մեկը՝ մեր կողմից կիրառվող պարամունքների ինտերվալային մեթոդը, համադրումն էր աթլետների վերականգնողական միջոցների համալիրի հետ: Մեր կողմից մշակվել և օգտագործվել են մարզիկների վերականգնումը երաշխավորող խորհուրդներ և աշխատունակության վերականգնման միջոցներ:

Ցավոք, վերականգնման միջոցների ընտրությունը, ինչպիսիք են առույգացնող շփումները, էվկալիպտային և փշատերևային լոզանքները և ուրիշները, որոշվում էր հետազոտության անցկացման վայրի նյութատեխնիկական կահավորման աստիճանով:

Ակնհայտ է, որ պարապմունքների ընթացքում կիրառված վազային վարժությունները բարելավել են աթլետների հատուկ դիմացկունության պատրաստվածության մակարդակները: Աղջիկների խմբում կատարվել են հետևյալ փոփոխությունները. 300 մ վազքում աճը կազմել է 1.74 վրկ., 600 մ վազքում աճը կազմել է 2.8 վրկ.: 400 մ վերելք վազքի թեստավորման ժամանակ արդյունքները բարելավվեցին 5.3 վրկ.: Արդյունքների առավելագույն աճը գրանցվել է «կքանիստ 20 կգ ծանրաձողով 1ր-ում» և աճել 5.2-ով: Ներկայացված տվյալներից երևում է, որ մարզումների մշակված միջոցների սխտեմատիկ օգտագործման դեպքում արդյունքներում տեղի են ունենում դրական փոփոխություններ: Բոլոր ցուցանիշները բարելավվել են, և այդ տարբերությունները վիճակագրորեն հավաստի են ($P < 0.05\%$) (աղ. 1):

Հետազոտության ընթացքում պատանիների խմբում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները: Վազք 300 մ թեստում արդյունքները աճել են 1.02 վրկ., վազք 600 մետր թեստում արդյունքների աճը կազմել է 1.5 վրկ., 400 մ վերելք վազքի թեստում պատանիների արդյունքները բարելավվեցին 3.1 վրկ.: Արդյունքների առավելագույն աճ է գրանցվել «Կքանիստ 20 կգ ծանրաձողով 1 րոպեում» թեստում և աճել 4.5-ով: Տղաների մոտ էլ նույն պատկերն է գրանցվել, բոլոր ցուցանիշները բարելավվել են, և այդ տարբերությունները վիճակագրորեն հավաստի են ($P < 0.05\%$) (աղ. 2):

Համեմատվել են նաև աթլետների 400 մ վազքի «անձնական ռեկորդները» նախքան հետազոտությունը և հետո, որտեղ աղջիկների արդյունքները աճել են 1,76 վրկ., իսկ տղաների մոտ՝ 1.03 վայրկյանով: Երկու դեպքում էլ այդ տարբերությունները վիճակագրորեն հավաստի են ($P < 0.05\%$) (աղ. 1, 2):

Տվյալ մեթոդիկայի կիրառման գործընթացում միշտ չէ, որ հաջողվել է բացահայտել սրտանոթային համակարգի հարմարվողականության բարելավումը դիմացկունության

բեռնվածությունների հանդեպ (ֆունկցիոնալ փորձի տվյալներով): Նախնական զարկերակի և երակային ճնշման տվյալների ցուցանիշները էական տարբերություններ չեն ունեցել: Հետազոտության վերջում նկատելի են դրսևորում աշխատունակության և դիմացկունության աճող հզորության բեռնվածություններին հարմարվելու բավականին ընդգծված տարբերություններ:

Այսպիսով, համակարգված մարզումների ժամանակ, օգտագործելով մի շարք մարզման միջոցների համալիրներ, արդյունքների դրական փոփոխություններ են տեղի ունենում, և հատուկ դիմացկունությունը մեծանում է:

Եզրակացություն: Այսպիսով՝ մարզիկների պատրաստումը բարդ խնդիր է, որը պահանջում է համակարգված մոտեցում՝ հաշվի առնելով բազմաթիվ գործոններ: Դա ուսումնական գործընթացի մեթոդաբանական հիմքերի, կազմակերպչական ձևերի և պայմանների մի շարք է, որոնք օպտիմալ կերպով փոխազդում են միմյանց որոշակի սկզբունքների հիման վրա և ապահովում են մարզիկի պատրաստվածության լավագույն մակարդակը մարզական բարձր նվաճումների համար:

Անցկացված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ մարզիկները, մարզվելով նման մեթոդներով, շատ կարճ ժամանակահատվածում կարողանում են բարելավել իրենց սպորտային արդյունքները: Այդ են վկայում մարզիկների ցուցաբերած արդյունքները միջխմբային, հանրապետական, համահայկական և միջազգային առաջնություններում:

Աղյուսակ 1

Աղջիկներ					
N	Թեստեր	x ± m	x ± m	Տարբերության զննահատումը	
		Նախնական արդյունք	Վերջնական արդյունք	t	P, %
1.	Վազք 300 մ	48.51± 1.42	46.77±1.18	0.94	<0.05
2.	Վազք 600 մ	1,48.87± 2.46	1,46.02±3.76	0.62	<0.05
3.	Վազք 400 մ վերելք (անտառ)	1,27.51±1.84	1,22.21± 1.36	2.32	>0.05
4.	Կքանիստ ծանր ձողով (20 կգ) 1 ր-քանակ	30.4± 1.33	35.6±1.48	2.62	>0.05
5.	Վազք 400 մ	1,05.44±1.56	1,03.68±1.41	0.83	<0.05

Աղյուսակ 2

Տղաներ					
N	Թեստեր	x ± m	x ± m	Տարբերության զննահատումը	
		Նախնական արդյունք	Վերջնական արդյունք	t	p, %
1.	Վազք 300 մ	40.81 ± 0.94	39.79±1.02	0.78	<0.05
2.	Վազք 600 մ	1,32.49 ± 2.19	1,30.99±2.08	0.49	<0.05
3.	Վազք 400 մ վերելք (անտառ)	1,12.7 ± 1.77	1,09.6± 1.32	1.41	<0.05
4.	Կքանիստ ծանր ձողով (20 կգ) 1 ր-քանակ	38.8± 1.67	43.3±3.39	1.19	<0.05
5.	Վազք 400 մ	55.58± 0.54	54.55± 0.85	1.02	<0.05

Ֆրականություն

1. Հայրապետյան Մ. Ս., Աթլետիկա, արագավազք և փոխանցումավազք, Երևան, 2008, 146 էջ:
2. Ղազարյան Ֆ. Գ., Սպորտային պատրաստության տեսություն և մեթոդիկա, Երևան, 2011, 194 էջ:
3. Ղազարյան Ֆ. Գ., Շարժողական ընդունակությունների բանաձև, Երևան, 2015, 129 էջ:
4. Մամաջանյան Վ. Մ., Աթլետիկա, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003, 187 էջ:
5. Попов В. Б. 555 специальных упражнений в подготовке легкоатлетов. Москва: Олимпия Пресс, 2002, - 208 с.
